ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆ

13 APR 2011

ՌՈՒՍԱՀԱՅ

ՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գ.

Տպարան «ՇԻՐԱԿ» Ալէքսանդրապոլ

1910

(100)

JUN 2013
33738-4
64.469
Тип. «Красное знамя». Мос
Шифр
сберкасса
Номер
Класс
(проинсп
ՊԵՏԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ
ՀԱՍՊ-Ամբ ՍՍՀ
ԱՌ ՄԵՍՐՈՊԱՎԱՆ. ՍՈՎՈՆ
8322-56
(16537-58)

891.99-09
Մ-27

ՌՈՒՍԱՀԱՅ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

XIX Դ.

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

III. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՆԻՇՄՈՒՄՆԵՐ

ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒԹԻՒՆ

Մենք կանգնած ենք 70-ական թուականների փառաւոր դարեշրջանի առաջ, որ հայոց կեանքի սակաւաթիւ օազիսներից մէկն է կազմում։ Բայց նրան հասնելու համար հարկաւոր է անցնել մի տխուր և ամայի անապատ։

1858 թ. սկսած մտաւոր շարժումը կանգ առաւ 1865 թ. Դրա հետ միասին հասարակաց տրամադրութիւնը, որ ծովի մակընթացութեան պէս շարունակ բարձրանում էր, իջաւ, և սկսուեց տեղատուութիւն։ Այդ տարտամ դրութիւնը տևեց մինչև 70-ական թուականների սկիզբը։

Ժամանակը ազդեց նախ և առաջ մամուլի վրայ։ Մէկը միւսի ետևից դադարեցին «Կռունկը» և «Հիւսիսափայլը»։ «Մեղու Հայաստանին» թէև 1863 թ. անցաւ Պետրոս Սիմէօնեանի ձեռքը, բայց շարունակում էր իր հին ուղղութիւնը և, յամենայն դէպս, անկարող էր նոր հոսանք մտցնել կեանքի մէջ։ Մսերեանների «Ճռաքաղը» և «Համբաւաբեր Ռուսիոյ»

մի քանի տարի ապրելով՝ ընդհատեցին իրանց գոյութիւնը։ Նոյն վիճակին հասաւ և «Մասեաց Աղաւնին»։

Դադարած լրագիրների տեղը զբաւեցին «Հայկական Աշխարհ», «Գարուն» և «Վաճառական»։ Վերջին երկուսը աննշան օրգաններ էին և կարճատև կեանք ունեցան։

Սպասարիզի վրայ քիչ թէ շատ աչքի ընկնող դեր կատարում էին «Մեղու Հայաստանին» և «Հայկական Աշխարհը»։

«Հայկ. Աշխ.» «Հայկական Աշխարհի» ղեկավարն էր Ստեփանոս Ստեփանէ, որ օժտուած էր բարձրագոյն կրթութեամբ, տաք խառնուածքի տէր և ապագայում պերճախօս քարոզիչ էր։ Յետոյ նա դարձաւ կրօնաւոր և աստիճանաբար բարձրանալով՝ հասաւ եպիսկոպոսական աստիճանին։ Զանազան թեմերում վարում էր հոգևոր պաշտօններ (Թիֆլ., Բագու, Շուշի, Գանձակ)։ գործում էր և մանկավարժական ասպարիզում (Թիֆլիսում առաջին օրիորդաց դպրոցի հիմնադիր, ճեմարանում ուսուցիչ)։ Միևնոյն ժամանակ Ստեփանէի աստանդական կեանքին ուղեկցում էր նրա փայփայած «Հայկական Աշխարհը», որ նա հիմնեց Թիֆլիսում 1864 թ., ցանկանալով նրան դարձնել մի տեսակ շարունակութիւն «Կռունկ» ամսագրի։ Այդ օրգանը ընդհատումներով ապրեց մինչև 1878 թ.։

Խորէն Ստեփանէն իսկապէս շատ բան չունէր ասելու, չնայած նրա յայտարարութեան, թէ «Հայկ. Աշխարհը», իհարկէ, կարող չէ բաւականանալ նրանով («այնով»), ինչ որ կատարեց «Հիւսիսափայլը»։ Նա չունէր Նազարեանի ուժեղ տաղանդը, որ կարողանար նրա գործը նոյն յաջողութեամբ շարունակել։ Նախ՝ վերին աստիճանի աննեբոդամիտ էր դէպի հակառակորդների կարծիքները, մանաւանդ դէպի «Մեղու Հայաստանիի» խմբագիրը և դէպի նրա աշխատակիցները, որոնց մասին նա չէր կարող խօսել առանց վրդովման և վիրաւորանքի։ Ստեփանէն չունէր և գեղեցիկ, կանոնաւոր լեզու և ոճ։ Իսկ ուղղագրութեան մէջ մտցրել էր քմահաճ կանոններ, օր. ա-ից յետոյ գրել վ, յոգնակի—ներ և այլն։ Ահա մի նմուշ նրա լեզուի. «Պ. Սիմէօնեան, հասկացէք վերջապէս, որ դա չէ ըէդակտօրութիւն, հարկավոր է ուղղութիւն մի, բարի նպատակ մի ունենալ, համոզմունք կամ բարի սկիզբներ (principes) և աշխատելու է սիրել տալ ընթերցողին այդ սկիզբներ»։

Ստեփանէին պակասում էր և քննադատական հոտառութիւն և ճաշակ։ Դա երևում է, օրինակ, այն կարծիքից, որ նա յայտնում է Սունդուկեանի «Խաթաբալայի» մասին։ «Այս պիէսը,—գրում նա «Կոյրի զաւակի» ներկայացման առիթով,—բաւական ընդունելութիւն գտաւ, աւելի, քան թէ «Նինոի նշընվիլը», «Խաթաբալա» և սոցա նման բազարային գրուածները»։ Բազարային նա համարում է Սունդուկեանի և Մ. Տէր-Գրիգորեանի գրուածքները։ Մանաւանդ պարսաւում է վերջինիս, որ նա թոյլ է տուել բեմի վրայ արտասանել այնպիսի գռեհիկ խօսքեր, ինչպէս «աւանակ», «ախմախ» և այլն։

Իր օրգանի մէջ նա զետեղում էր և ոտանաւորներ՝ Արսէն Բագրատունի ստորագրութեամբ, բայց նրանց մէջ չկար ոչինչ բանաստեղծական։

Չնայած այս բոլոր թերութիւններին, «Հայկ. Աշխարհը» զուրկ չէր և արժանաւորութիւններից։ Նա աւելի առաջադէմ օրգան էր, քան թէ «Մեղուն», աւելի մարտնչող և հակւած դէպի եւրոպական լուսաւորութիւն։ Ստեփանէն իր գրական և մանկավարժական թերթի նպատակը համարում էր՝ տարածել

հայերի մէջ ընթերցանութիւն, ուսում և գիտութիւն։ «Հայկ. Աշխարհը» միևնոյն ժամանակ բաւականին կենդանի օրգան էր, և նրա մէջ արձագանք էր գտնում հայ իրականութիւնը։ Խմբագիրը հետևում էր ժամանակակից կեանքի երևոյթներին և տպում էր զանազան տեղեկութիւններ, որոնք վերաբերում էին թատրոնին, գրականութեան, մանկավարժական խնդիրներին, գպրոցական կեանքին և այլն։ Այստեղ կարելի էր գտնել բաւական տեղեկութիւններ նաև թիւրքահայերի և պարսկահայերի կեանքից։ Այդ բոլորը նա գետեղում էր «Մեր ներքին գործեր» վերնագրի տակ՝ Հայասէր ստորագրութեամբ։ Անտես չէին առնում նոյնպէս Եւրոպայում տեղի ունեցած աչքի ընկնող երևոյթները։

«Հայկական Աշխարհին» աւելի հետաքրքրութիւն էին ներշնչում Գր. Արծրունու ուսանողական յօդուածները, որ նա ուղարկում էր արտասահմանից, օր. «Աշխատենք», «Ի՞նչ է կնամարդ», «Գրականութիւն չկայ»։

Այսպէս էր մամուլը։

Աննախանձելի պատկեր էր ներկայացնում և գեղարուեստական գրականութիւնը։ Ասպարիզից հեռացել էին բոլոր յայտնի գրողները՝ Նազարեան, Նալբանդեան, Պատկանեան և Շահազիզ։ Հայկական մուսան տարիների ընթացքում մի հատ աչքի ընկնող բանաստեղծական գործ չարտադրեց։ Թատրոնը չունէր իր նախկին հրապոյրը, ներկայացումները կորցրել էին գրաւչութիւն։ Միայն Սունդուկեանն էր, որ իր աշխոյժ պիէսներով երբեմն կենդանութիւն էր տալիս հայոց թատրոնին։

Այս տարտամ դրութիւնն, իհարկէ, առանց պատճառի չէր։

Նախ՝ այն օրէնքը, որ կրկնւում է իւրաքանչիւր ազգի կուլտուրական կեանքում։ Ինչպէս անհատի հոգեկան տրամադրութիւնը երկար ժամանակ կարող չէ մնալ միևնոյն աստիճանի վրայ, այլ շարունակ ենթարկւում է յեղյեղման, մերթ բարձրանում է, մերթ իջնում է, նոյնը տեղի է ունենում և ազգերի կեանքում։ Վերածնութեան շրջանում հայ գործիչների արդիւնաբերող ոյժերը չափազանց լարուած էին։ Այդ լարուած դրութիւնը տևեց եօթ-ութ տարի, որի ընթացքում մի գրական գործ արդէն կատարուած էր. դրան հետևեց մտադադար, յոգնածութիւն։

Այստեղ նշանակութիւն ունէր և մի հանգամանք։ Մեր վերածնութիւնն ինքն ըստ ինքեան քարոզչական ընոյթ ունէր. քարոզում էր հրապարակախօսը, քարոզում էր բանաստեղծը։ Մի քանի տարի շարունակ ծեծւում էին լուսաւորութեան շուրջը պտտւող հարցեր։ Ընթերցողների այն մասը, որոնք ընդունակ էին սեփականելու այդ գաղափարները, արդէն իւրացրել էին, և այնուհետև կրկնել միշտ միևնոյնը՝ ուսում և ուսում՝ բոլորովին աւելորդ էր։ Վերածնութեան գործիչներից շատերը կամ սպառուած էին կամ առայժմ ոչինչ չունէին ասելու։ Նազարեանը «Հիւսիսափայլից» յետոյ գրեթէ ոչինչ չգրեց, և նրա փափագը՝ նոր լրագիր («Լապտեր») հրատարակել—չիրականացաւ։ Նալբանդեանը հանգչում էր գերեզմանում։ Պատկանեանը երկար տարիներ չհրնչեցրեց իր քնարը։ Շահազիզեանի «մուսան մեռաւ» արդէն 1864 թ. յետոյ։ Իսկ Պռօշեանը մի «Սօս և Վարդիթեր տալուց յետոյ տասն և հինգ տարի Զաքարիայի լռութիւն պահպանեց։

Ժամանակը փոխւել էր, ժամանակը պահանջում էր ոչ թէ քարոզներ, այլ գործ։ Այժմ հարկաւոր էր

իրականացնել այն գաղափարները, որոնց արծարծում էին վերածնութեան ռահվիրաները։

Եւ յիրաւի. ամայութեան տարիներում այդ գաղափարները սկսում են իրագործուել։

Պարբերական թերթերի, գրականութեան, թատրոնի նախկին ղեկավարները այժմ սկսել էին առաջ տանել այն գործը, որ ամենից կարևոր էին համարում ազգի լուսաւորութեան համար։ Նազարեան և Շահազիզեան նուիրուել էին մանկավարժութեան Լազարեան ճեմարանում։ Պատկանեանը Նոր Նախիջևանում ուսում և կրթութիւն էր տարածում։ Պռոշեանը թափառում էր հայաբնակ գաւառներում և ամեն տեղ հիմնում էր դպրոցներ։ Միևնոյն ժամանակ Մատթէոս կաթողիկոսի ջանքերով և ժողովրդի աջակցութեամբ շատ տեղերում բացւում էին ուսումնարաններ։ Հայ աղջիկների կրթութիւնը նոյնպէս անհրաժեշտ պահանջ էր դառնում, և հիմնւում էին նաև օրիորդաց վարժարաններ։ Միաժամանակ դպրոցներին կից կամ անկախ բացւում էին գրադարան-ընթերցարաններ։

Այսպէս ուրեմն, թէև այս ամուլ տարիներում ոչ մի ասպարիզում կենդանութիւն չկար, մամուլը իջել էր իր պատշաճ բարձրութիւնից, բանաստեղծները լռել էին և թատրոնը կորցրել էր իր կենսունակութիւնը,—այնուամենայնիւ այդ լուռ ամայութեան մէջ մի գեղեցիկ գործ էր կատարւում,—դրւում էր ժողովրդի լուսաւորութեան հիմնաքարը։

ԴԱՐԵՇՐՋԱՆԻ ԷՈՒԹԻՆԸ

1872 թ. նորից սկսւում է մտաւոր շարժում, որ անմիջապէս կապւած էր «Մշակի» հետ։

Հրապարակախօսութիւնը դառնում է քաղաքակրթութիւն տարածելու զօրաւոր միջոց։ Օրագրութեան նշանակութիւնը, որ վերջին տարիները այնքան ընկել էր, այժմ հասնում է իր արժանի բարձրութեան, և կուլտուրական նուաճումները աւելի խոր են թափանցում ժողովրդի խաւերի մէջ։ 60-ական թուականների կենսունակ ոյժերը կրկին ասպարէզ են գալիս, և հայոց գրական հորիզոնում երևում են նոր լուսատուներ։ Սկսում է բարգաւաճել վէպը, և ստեղծւում է գեղեցիկ վիպական լեզու։

70-ական թուականների նշանաւոր երևոյթներից մէկն էլ այն էր, որ պատմական հանգամանքների շնորհիւ ծնունդ առաւ հայոց հարցը, և դա մեծ զարկ տուեց հայոց ազգային ինքնաճանաչութեան։

Միևնոյն ժամանակ ասպարէզ է գալիս մի երիտասարդ սերունդ, որ ներշնչւելով ազատամիտ գաղափարներով՝ ձգտում է դառնալ հայի կեանքում մի նոր կուլտուրական ոյժ, և միւս կողմից՝ կազմակերպւում է պահպանողական կուսակցութիւն, և այսպիսով մեր մտաւոր կեանքում սկսում են իրար հետ մրցել երկու հակառակ հոսանքներ։

Դարագլխի տաղանդաւոր արտայայտիչն էր հրապարակախօսութեան մէջ Գր. Արծրունին, իսկ գեղարուեստական գրականութեան մէջ՝ Ռաֆֆին։

ԱՐԾՐՈՒՆԻ

Ի. ՄԱՄՈՌ

Արծրունու կեանքը.

Արծրունիները իրանց համարում էին Արծրունեաց իշխանական տոհմի շառաւիղ։ Գրիգոր Արծրունու պապը, Գէորգ աղան, վանեցի գաղթական էր և հաստատուել էր Թիֆլիսում XVIII դ. սկզբում։ Ներսէս Աշտարակեցու առաջնորդութեան օրով Գէորգ աղան նրա ամենամօտ անձերից մէկն էր և ջերմ մասնակցութիւն էր ցոյց տալիս նրա շինարար գործունէութեան մէջ։ Նա ապացուցեց իր ազգասիրութիւնը մի գեղեցիկ գործով։ Ամստերդամ քաղաքում գնելով հայոց տառերի մայրերը՝ բերում է Թիֆլիս, հիմնում է հայոց տպարան և նուիրում նորաբաց Ներսիսեան դպրոցին։ Նա հմուտ էր և հայկաբանութեան մէջ, որի ապացոյցը՝ նրա մի աշխատութիւնը «Դարասատան խրատուց» վերնագրով, որ նա տպեց իր հիմնած տպարանում։

Արծրունու հայրը՝ Երեմեան ստացել էր զինուորական կրթութիւն, ունէր գեներալի աստիճան, քաղաքում վայելում էր բարձր դիրք, և նրանից ամենքը ակնածում էին։ Ցայտնի էր իր խստաբարոյ վարքով, վերին աստիճանի հպարտ, ինքնասած, անմատչելի մարդ էր։

Գրիգոր Արծրունին ծնուել է 1845 թ. Մոսկուայում։ Տասը տարեկան զրկուելով մօրից, իր եղբայր Անդրէասի հետ մեծացաւ հօր ձեռքի տակ։ Երեմեան 1855 թ. իր զաւակների հետ ճանապարհորդեց Եւրոպա և երկու տարուց յետոյ վերադարձաւ հայրենիք։ Արծրունին իր միջնակարգ կրթութիւնը ստացել է Թիֆլիսում։ Հայրը ոչինչ չէր խնայում իր զաւակների կրթութեան համար։ Նրանց հետ պարապում էին գիմնազիայի ընտիր ուսուցիչները, իսկ հայերէն աւանդում էր Պետրոս Սիմէօնեանը։ Գենեբալ Երեմեան պահանջում էր խիստ կարգապահութիւն. նրա յարաբերութիւնները պաշտօնական բնոյթ ունէին, որի շնորհիւ մօրից որբացած մանուկները անշուշտ ծնողական սիրոյ և գուրգուրանքի կարօտ էին զգում։

Արծրունին իր եղբօր հետ օրերն անց էին կացնում մեծ մասամբ հայրենական մեծ, գեղեցիկ պարտիզում, ուր միշտ լինում էր և գեներալ Երեմեան։ Նրանց կղզիացած կեանքի մէջ փոփոխութիւն էր

մանում այն օրերում, երբ նրանց մօտ գալիս էին խաղալու ընկերակից մանուկները։

Արծրունու ընտանիքում տիրապետում էր ռուսերէն և ֆրանսերէն լեզուն։ Մինչև տասներկու տարեկան հասակը Արծրունին գրեթէ չգիտէր իր մայրենի լեզուն։ Առհասարակ նրա կրթութիւնը ազգային ոգով չէր կատարւում, և նա մինչև Պետերբուրգ գնալը մի տեսակ խորթութիւն էր զգում դէպի հայը։

1863 թ. աւարտեց գիմնազիան և մտաւ Մոսկւայի համալսարանի բնագիտական ֆակուլտետը, իսկ հետևեալ տարին փոխադրւեց Պետերբուրգի համալսարանի միևնոյն ճիւղը։ Ահա այստեղ էր, որ Արծրունու մէջ տեղի ունեցաւ յեղաշրջում, և նախկին հայատեացը դարձաւ ազգասէր։ Այդ վերածնութեան համար նա պարտական էր այն մտերմական ժողովներին, որոնք տեղի էին ունենում Կ. Եղեանի տանը, ուր հայ ուսանողները սիրալիր ընդունելութիւն էին գտնում և ընթերցանութեան ու տաք վիճաբանութիւնների մէջ անց էին կացնում մի քանի ուրախ ժամեր։

Արծրունին, իր ընդունակութեան շնորհիւ, շուտով իւրացրեց մայրենի լեզուն, և արդէն 1865 թ. գրեց իր առաջին հայերէն յօդուածը, որի վերնագիրն էր «Բնական գիտութիւնների նշանակութիւնը դաստիարակութեան մէջ»։ Յօդուածը տպւեց «Մեղու Հայաստանի» լրագրում։ Այնուհետև նա շարունակ գրում էր յօդուածներ, որոնք տպւում էին «Հայկ. Աշխարհի» և «Մեղուի» մէջ։

Հիւանդութեան պատճառով Արծրունին թողեց Պետերբուրգը և, բժիշկների խորհրդով, մի քանի ժամանակ ապրեց Ֆրանսիայի Նիցցա քաղաքում, ուր նրա առողջութիւնը վերականգնեց։ Այնուհետև նա

ամբողջովին նւիրւում է գիտութեան։ Ուսումնասիրում էր գլխաւորապէս քաղաքատնտեսական գիտութիւններ։ 1867 թ. նա արդէն Հէյդլբերգի համալսարանի ուսանող էր. աւարտեց 1869 թ. փիլիսոփայութեան դոկտորի աստիճանով։ Արծրունին, իբրև ազատ ունկնդիր, լսում էր նաև նշանաւոր պրոֆեսորների դասախօսութիւնները զանազան համալսարաններում՝ Ցիւրիխի, Ժընևի, Պարիզի և Վիէննայի։ Միևնոյն ժամանակ նա սովորում էր հայոց լեզու նախ Վիէննայի մխիթարեանների մօտ և ապա Վենետիկում՝ հայր Կիւրեղեանի ձեռքի տակ։ Օժտւած բազմակողմանի գիտութեամբ և գործունէութեան ծարաւի, Արծրունին շտապում է դէպի հայրենիք, և 1871 թ. նա արդէն Թիֆլիսում է։

Դեռ ևս արտասահմանում նա յղացել էր հրապարակախօսական օրգան հիմնելու միտքը։ Տեղ հասնելուն պէս՝ նրա առաջին հոգսը եղաւ ձեռք բերել շուտով լրագրի թոյլտւութիւնը։ Մինչև թոյլտւութիւն ստանալը նա պարապ նստած չէր. յօդուածներ էր գրում ռուսաց և հայոց լրագիրներում և «Մշակի» մասին խորհրդակցելու համար հրաւիրում էր բազմամարդ ժողովներ։

1871 թ. վերջում «Մեղու Հայաստանի» լրագրում տպւեց «Մշակի» յայտարարութիւնը, և 1872 թ. Յունւարի 1-ին լոյս տեսաւ № 1։

Սկզբում «Մշակը» շաբաթաթերթ էր. 1876 թ. լոյս էր տեսնում երկու անգամ. 1878 թ. դարձաւ ամենօրեայ (հինգ անգամ)։

Արծրունին իր «Մշակը» պատւով հասցրեց մինչև 1884 թ. Այդ տարին ճակատագրական էր թէ «Մշակի» և թէ նրա խմբագրի համար։ Արծրունու գալերէա կոչւած ընդարձակ տպարանը իր բազմաթիւ խա-

նութներով, թատրոնական շէնքով և պարտիզով պարտքի տեղ աճուրդի հանուեց և մնաց Վրաց Ազնուականների բանկի վրայ։ Մի կողմից այդ մեծ կորուստը, միւս կողմից նիւթական օժանդակութիւնից զրկուելը ստիպեցին Արծրունուն առ ժամանակ դադարեցնել լրագիրը։ Այնուհետև նա ապրում էր Շուէյցարիայում։ Միայն 1886 թ. հնարաւոր եղաւ վերսկսել «Մշակը», որի հրատարակութիւնը ընդհատուեց 1892 թ. վերջում Արծրունու մահով, դեկտ. 19-ին։

Թաղման առթիւ «Մուրճի» խմբագիրը գրեց հետևեալ տողերը. «Թաղումը կատարուեց դեկտ. 27-ին, կիւրակէ օր, մեզանում չեղած փառահեղութեամբ. պսակների թիւը 300-ից անց էր, որ կրում էին ութ դիակառք. յուղակաւորութեան մասնակցեց մի բազմութիւն, որ մեծ փողոցներում հասաւ մի քանի տասնեակ հազար հոգու, որոնց մէջ բազմաթիւ պատգամաւորներ կային ուրիշ քաղաքներից։ Ճառախօսների թիւն էր Վանքի Մայր եկեղեցում երկու, Խոջիվանքի գերեզմանատանը տասնևհինգ հոգի, չը հաշուելով մի տասնեակ ուրիշներին, որոնց հերթ չհասաւ։ Ճառախօսների թուումն էր նաև ամսագրիս խմբագիրը»։

«Մ շ ա կ»

Արծրունին ասպարէզ եկաւ լուրջ նախապատրաստութեամբ։ Նրա ընտանեկան և միջնակարգ կրթութիւնը դրած էր լաւագոյն պայմանների մէջ։ Այնուհետև նա կատարելագործուեց եւրոպական համալսարաններում, լսելով հռչակաւոր պրոֆեսորների դասախօսութիւնները։ Տիրապետելով ռուսաց, գերմանական, ֆրանսերէն լեզուներին, նա հնարաւորութիւն ունեցաւ մօտիկից ծանօթանալու ռուսաց և եւրոպական հարուստ գրականութեան հետ։ Աւարտելուց յետոյ ևս Արծրունին շարունակ հետևում էր Եւրոպայի քաղաքական-գրական կեանքին։ Այս մտաւոր հարուստ պաշարի հետ նա միացրել էր երկաթէ կամք, աննկուն ոգի և հաստատամտութիւն, յատկութիւններ, որ նա ժառանգաբար ստացել էր հօրից և որոնք անհրաժեշտ էին Արծրունու նման մարտնչողի համար։

Դեռ ևս «Մշակի» հրատարակութիւնից առաջ, եօթ տարեայ ժամանակամիջոցում, նա ձեռք էր բերել բաւականաչափ հմտութիւն հրապարակախօսութեան մէջ, աշխատակցելով հայոց և օտար լրագիրներին։ Արտասահմանում գրած մի շարք յօդուածները ցոյց են տալիս, թէ դեռ այն ժամանակ որքան լուրջ խնդիրներ էին զբաղեցնում երիտասարդ ուսանողին։ Նրանց մէջ արդէն նշմարւում էր ապագայ մարտնչողի յարձակողական վերաբերմունքը դէպի ժամանակակից հայ իրականութիւնը և միևնոյն ժամանակ եւրոպական հեղինակների ազդեցութիւնը հայ երիտասարդի վրայ։

Նախորդ շրջանում արդէն մի գրական գործ կատարուած էր։ Հրապարակի վրայ դրուած էին և մեծ մասամբ վճռուած դանդաղ կարևոր խնդիրներ, որոնք վերաբերում էին աշխարհիկ լեզուին, ազգի կրթութեան, եկեղեցուն և այլն։ Արծրունին կոչուած էր՝ մի կողմից՝ շարունակելու «Հիւսիսափայլի» սկսած գործը. նրա դերը պիտի կայանար լուսաւորութեան գաղափարները սահմանափակ շրջանից անց կացնել դէպի ժողովրդական լայն խաւերը, ուր տակաւին իշխում էր տգիտութիւն և խաւար։ Միւս կողմից՝

հարկաւոր էր հրապարակ հանել բազմաթիւ նոր, կենսական խնդիրներ, որոնք նախկին շրջանում բաւականաչափ շեշտուած չէին կամ թողուած էին անուշադիր, օրինակ, ժողովրդի տնտեսական վիճակը և դրա հետ կապուած ուրիշ խնդիրներ։

«Մշակի» ամենակարևոր բաժինը կազմում էին առաջնորդողները, որոնց մէջ արտայայտւում էր Արծրունու ամբողջ աշխարհայեացքը և միաժամանակ նրա հրապարակախօսական ուժեղ տաղանդը։ Առաջնորդողները նա վարում էր վարպետօրէն։

Ցիրաւի, նրա լեզուն աղքատ էր բառերով և նուրբ դարձուածներով, նա յաճախ զիմում էր օտար բառերի օգնութեան, երբ նոյն իսկ կարիք էլ չէր լինում, բայց նա ունէր մի արժանիք—մտքերը արտայայտել պարզ և մատչելի խօսքերով։

Արծրունու առաջնորդողները աչքի էին ընկնում իրանց անսովոր վերնագիրներով, օրինակ. «Երեկ, այսօր և էգուց», «Դուք և մենք», «Մտրակով չը խփես, բան չի գուրս գայ», «Երիտասարդներին խրատ»։ Նա ունէր գրելու իր ուրոյն, զուտ Արծրունական ձևերը՝ կարճ նախադասութիւններ, մտքերի արտայայտութեան մէջ խիստ տրամաբանական հետևողութիւն և իր ասածի էական կէտերը շեշտել կրկնութիւններով։

Արծրունին իբրև հրապարակախօս.

Արծրունու ամբողջ հրապարակախօսական գործունէութեան մէջ խստիւ որոշւում են երկու տարբեր ուղղութիւններ՝ բացասական-քննադատական և ստեղծագործական։ Առաջինը աւելի տիրապետող էր։

Այդ ուղղութիւնները մեզ համար կը պարզեն, երբ մենք հետզհետէ կծանօթանանք Արծրունու հայեացքների հետ և կտեսնենք, թէ ինչ էր նա քանդում, իբրև իր դարն անցկացրած հնութիւն, և ինչ էր կառուցանում դրա փոխարէն։

Նախ և առաջ Արծրունին աշխարհի քաղաքացի է։ Զկայ նրա համար աւելի նսիրական, աւելի սուրբ գաղափար, քան թէ մարդկութիւնը։ Բայց նա համոզուած է, որ մարդկութեան կարելի է ծառայել ծառայելով միայն այն ազգին կամ այն հասարակութեան, որի անդամն ենք։ Արծրունու հակառակորդները նրա մէջ ազգասիրութիւն չէին տեսնում, ուստի նրան անւանում էին կոսմոպոլիտ։ Իսկ նա գրում է իր «Կոսմոպոլիտութիւն» վերնագրով յօդուածը, որի մէջ բացատրում է այդ բառի իմաստը և ապացուցում է, որ նրանք լաւ չեն հասկացել այդ բառը։ Նա ասում է, որ ճշմարիտ կոսմոպոլիտը ունի աչքի առաջ ամբողջ մարդկութեան երջանկութիւնը, բայց նոյն իսկ այդ պատճառով երբէք չէ կարող արհամարհել ազգութիւնը։ Իւրաքանչիւր անհատ պէտք է իր բոլոր ոյժերը նուիրէ իր ազգի բարօրութեան, որովհետև ազգութիւնը ամբողջ մարդկութեան կազմուածքի մի մասն է։ «Օգնել մի ազգութեան, ծառայել մէկին—նշանակում է օգնել և ծառայել ամբողջ մարդկութեանը»։

Կոսմոպոլիտիզմ.

Սրանից հետևում է, որ ազգին ծառայելու համար անհրաժեշտ է իմանալ նրա լեզուն, որովհետև «լեզուն հետևանք է բարոյական առանձնայատկութիւնների, որոնք իրանց կողմից կախուած են մարմնի, տիպի, կազմուածքի յատկութիւններից»։ Մայրենի լեզուն թանկ է մեզ համար ոչ միայն այն պատ-

Լեզու.

Ռուսահայ գրականության պատմ.
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ-ՀԱՅ

ճառով, որ մեր ազգը սիրելի է մեզ համար, այլ գլխաւորապէս այն պատճառով, որ նա բոլոր ուրիշ լեզուներից ամենից յարմարն է մեր ուղեղի մտաւոր աշխատանքի համար։ Մայրենի լեզուով աւելի դիւրին է արտայայտել իր սեփական մտքերը, քան թէ օտար լեզուով։ Հիմնուելով գիտնական Կարլ Ֆոխտի կարծիքների վրայ, Արծրունին ասում է. «Հազիւ է պատահում, որ մարդը օտար լեզուի միջոցով արդիւնաբերէ մի ինքնուրոյն միտք»։ Եթէ ֆրանսիացին չիմանայ ֆրանսերէն, ռուսը ռուսաց լեզուն, իսկ հայը հայերէն, այն ժամանակ ֆրանսիացին կատարեալ ֆրանսիացի չէ, ռուսը կատարեալ ռուս չէ, հայը կատարեալ հայ չէ։ Արծրունու կարծիքով, լեզուի նշանակութիւնը կայանում է միայն նրանում, որ հանդիսանում է իբրև ամենազօրեղ միջոց մարդկային մտքերի փոխանակութեան («Լեզու և կեանք»)։ Գալով հայոց լեզուին, Արծրունին ցանկալի չէ համարում, որ նա բաժանուել է արևելեան և արևմտեան ճիւղերի։ Այդ բաժանումը նա համարում է ազգի քաղաքական բաժանման դժբախտ հետևանք։

Հայերի դերը Փոքր-Ասիայում.

Արծրունին, Նազարեանի նման, մեծ դեր էր յատկացնում հայերին Ասիայի կուլտուրական գործում։ «Քրիստոնէութիւն և մահմեդականութիւն» վերնագրով առաջնորդողում նա գրում է. «Հայերը կարող էին Ռուսաստանի համար ամենահաւատարիմ միջնորդ լինել, նպաստելով այդ պետութեան նպատակներին և կոչման՝ տարածել և մտցնել Փոքր Ասիայում Աւետարանի և եւրոպական կրթութեան լոյսը, ուրեմն և ընդհանուր մարդկային քաղաքակրթութիւն»։ Մի այլ յօդուածում («Հայոց լեզուի դերը Փոքր Ասիայում») Արծրունին հայոց լեզուն համարում է գեղեցիկ միջոց քաղաքակրթութիւն տարածելու

Փոքր Ասիայում, և ապա աւելացնում է. «Զմոռանանք, որ հայերի կոչումն է ամբողջ Փոքր Ասիան քաղաքակրթել»։

Կրօնական խնդիրներ

Կրօնական խնդիրներում Արծրունին համամիտ էր Նազարեանի հետ։ Նա ևս կրօնը համարում է մի վարդապետութիւն, որի հիմքը կազմում է սէր, հաւասարութիւն և մարդու անհատական իրաւունքը։ Նշանակութիւն չտալով արտաքին ծէսերին, նա կոչ է անում հայերին վերադառնալ մաքուր, սկզբնական Լուսաւորչի եկեղեցուն («Վերադառնանք»)։ Մի այլ յօդուածում («Կրօն և ազգութիւն») Արծրունին ազգութիւնը բաժանում է կրօնից։ Հայ լուսաւորչականը, հայ կաթոլիկը, հայ բողոքականը—բոլորը հայեր են։ Հայը, կրօնը փոխելով, մնում է դարձեալ հայ և պահում է իր ազգային յատկութիւնը, լեզուն և սովորութիւնները։ Արծրունին դատապարտում էր կրօնամոլ հայերին, որոնք դառնալով կաթոլիկ, իրանց անուանում են «ֆրանկ» և խորշում են հայութիւնից, դատապարտում էր և նրանց, որոնք բողոքականութիւն ընդունելով՝ իրանց անուանում են «լութերական»։ Նա անխնայ յարձակւում էր միսիոնարների վրայ, որոնք քրիստոնէական լոյս սփռելու պատրուակով մտնում են ժողովրդի մէջ, սերմանում են չար որոմներ և պառակտման պատճառ են դառնում։ Արծրունին, Նազարեանի և Նալբանդեանի նման, հայ հոգևորականներին էր համարում մեղաւոր, որ «եկեղեցուց անդադար անջատւում և թշնամանում են մեր եղբայրները՝ մինը բողոքական դառնում, միւսը՝ կաթոլիկ»։ Մի առաջնորդողում («Հոգևորականութիւն և ժողովուրդ») Արծրունին մեծ զայրոյթով է խօսում հոգևոր պաշտօնեաների բարք ու վարքի մասին և մերկացնում է նրանց արարքները. «Ժողովրդի

փողերը վառնող, խռովութիւն սերմանող, պաշտօնների հետևող, անշարժ ու ոգէտ, լուսաւորութեան ընդդիմադրող, կաշառակեր,..» Արծրունին, իր նախորդ հրապարակախօսների պէս, պահանջում է բարեփոխութիւն՝ եկեղեցու և հոգևոր դասի։ Որպէս զի ժողովուրդը կարողանայ աւելի լաւ ըմբռնել քրիստոնէութեան բուն իմաստը, նա առաջարկում էր Աւետարանը թարգմանել աշխարհաբար։ Նա չէր ընդունում կուսակրօնութիւն՝ իբրև հակառակ բնութեան օրէնքին և յորդորում էր աբեղաներին դուրս գալ խցերից դէպի լոյս աշխարհ, մտնել ժողովրդի մէջ, ժողովրդի հետ միասին ապրել, ուրախանալ և տրրտմել։ Կրթուած հոգևորականներ պատրաստելու համար Արծրունին անհրաժեշտ էր համարում հիմնել միջնակարգ դպրոցներ, իսկ հանրակրթական առարկաների թւում մտցնել և այնպիսիները, որոնք նպաստում են ժողովրդի տնտեսական վիճակի բարւոքման՝ գիւղատնտեսութիւն, առողջաբանութիւն և արհեստ։ Այդպիսի ուսումնարանից դուրս եկած հոգևորականը կամ վարժապետը չի խորշի գիւղից, այլ կապրէ գիւղացիների հետ, ընութեան մօտ. իր սեփական օրինակով և խորհուրդներով աւելի արդիւնաւոր կդարձնէ երկրագործի աշխատանքը և երկրի պտղաբերութիւնը։

Կրթական խնդիրներ

Արծրունին յաճախ կանգ էր առնում ժողովրդի կրթութեան վերաբերեալ խնդիրների վրայ։ Ներկայացնելով գաւառական ուսումնարանների ախուր պատկերը, նրանց մէջ տիրող հին, փտած, միջնադարեան կարգերը, դրա հետ միասին և ժողովրդի աղքատութեան և տգիտութեան աստիճանը, Արծրունին սուրբ պարտականութիւն է դնում երիտասարդութեան վրայ գնալ գաւառը և խուլ ու խաւար

անկիւններում ուսում և լոյս տարածել։

Պատրաստուած վարժապետներ ունենալու համար Արծրունին անհրաժեշտ էր համարում հիմնել ուսուցչանոցներ։ Այդ ժամանակ հրապարակի վրայ դրուած էր ճեմարանի խնդիրը։ Արծրունին հակառակ էր, որ ճեմարանը դառնայ բարձր աստուածաբանական ակադեմիա, որպիսի մտադրութիւն կար էջմիածնում։ Այդ խնդրին նա նայում է երկու յօդուած՝ «Այո կամ ոչ», «Գիւղական քահանայ»։ Նա աշխատում է ապացուցել, որ մեզ բարձր աստուածաբանական ակադեմիա հարկաւոր չէ, որովհետև բարձր աստուածաբանական ուսում ստացողը ժողովրդի պահանջին կարող չէ բաւականութիւն տալ. այդ կարող է անել միայն նա, ով աւարտել է վերոյիշեալ ուսուցչանոցում, այսինքն, սովորել է գիւղատնտեսութիւն և արհեստ։

Կանանց խնդիր.

Արծրունին ջերմ պաշտպան էր կանանց էմանսիպացիայի—կանանց իրաւունքների և հաւասարութեան, որ արդէն վայելում էին կանայք Եւրոպայում և Ամերիկայում։ Բարձրագոյն ուսում, աշխատանք, բարոյական անկախութիւն—պիտի դառնան նաև կանանց սեփականութիւն։ Նրանց առաջ պիտի բացւեն գործունէութեան լայն ասպարէզներ։ Խօսելով մասնաւորապէս հայ կնոջ մասին, Արծրունին չափազանց յուռեսես կարծիքներ է յայտնում։ Հայ աղջիկը իր ընտանիքում ստրուկ է, կրթութիւնից զուրկ. ուստի դառնալով մայր՝ նա չէ կարող կրթել իր զաւակներին. կրթել կարող է միայն կրթուած մայրը։ Արծրունին որոշում է երկու տեսակ ընտանիք։ Մէկը նահապետական, որը թէև սիրում է ազգը և մնում է նրան հաւատարիմ, բայց այդ բոլորը անգիտակցական է. կան և այնպիսի ընտանիքներ, որտեղ ամուսինները անտարբեր են դէպի հայրենակիցների մտաւոր և

նիութական կեանքը, դէպի լեզուն և գրականութիւնը կամ նոյն իսկ արհարմարհում են իրանց ազգութիւնը։ Կանանց անտարբերութիւնը դէպի ազգը ունի իր լուրջ պատճառները։ Հայ աղջիկը կիսակիրթ է, այնքան զարգացած չէ, որ համոզուի, թէ «ամեն մի մարդ պէտք է սիրէ իր ազգը և օգնէ նրան կարողութեան չափ, որովհետև այդ օգտաւէտ է ամբողջ մարդկութեան»։ Այս մտքերը Արծրունին յայտնում է մի առաջնորդողում, որի վերնագիրն է՝ «Ինչի՞ մեր օրիորդները հեռու են հայութիւնից»։ Հայ օրիորդների կրթութիւնը բարձրացնելու համար հարկաւոր է հիմնել բարեկարգ ուսումնարաններ, ուր մայրենի լեզուն իր պատշաճ տեղը պիտի ունենայ։ Արծրունին օգտակար էր համարում երկսեռ դպրոցներ, ուր տղայք ու աղջկերք սովորում են միասին։

Քաղաքակրթիչ գործոններ

Ազգի առաջադիմութեան գործում մեծ դեր են կատարում օրագրութիւնը, գրադարան-ընթերցարաններ, թատրոն, դասախօսութիւններ և այլն։ Արծրունին յաճախ զբաղւում էր այդ խնդիրներով։ Մի առաջնորդողում («Օրագրութեան նշանակութիւնը») նա յայտնում է հետևեալ կարծիքները։ Խմբագիրը չպէտք է բաւականանայ իր ձեռք բերած մտաւոր պաշարով։ Նա պիտի շարունակ առաջադիմէ, պիտի հետևէ մարդկային մտքի զարգացման ընթացքին։ Իւրաքանչիւր լրագիր պիտի ունենայ որոշ ուղղութիւն, որոշ գոյն, նոյնպէս և նպատակ, որին ծառայում է։ Խմբագրից պահանջւում է բազմակողմանի զարգացում ունենալ, նա պիտի լինի «բազմագէտ», որպէս զի առօրեայ, կենդանի հարցեր քննելու ժամանակ իր կարծիքը յայտնէ ամեն տեսակ երևոյթների մասին։ «Այդ պաշտօնը լրացնում է խմբագրութիւնը զանազան մասնագիտական հմտութիւններ ունեցող անդամներով։

Թատրոն.

Արծրունուն զբաղեցնում էր և հայոց թատրոնը։ «Մշակի» մէջ միշտ երևում էին ընդենդիաներ և քննադատական յօդուածներ նոր պիէսների մասին։ Գրում էր մեծ մասամբ Արծրունին Նիոբէ ստորագրութեամբ։ Նրա համակրութիւնը կենցաղագրական կոմեդիայի կողմն էր, գովում էր Սունդուկեանին և Մ. Տէր-Գրիգորեանին։ Իր գրական հայեացքներով նա դաւանում էր այն վարդապետութիւնը, որ ընդունում է «գեղարուեստ կեանքի համար» թէօրիան։ Արծրունին հակառակ չէր պատմական ողբերգութեան. ինչ փաս, եթէ երկու տարբեր ուղղութիւններ իրար հետ մրցեն։ Նա գրում էր և առանձին յօդուածներ, ուր բացատրում էր թատրոնի նշանակութիւնը։ 1879—82 թ. թատերաշրջանում Արծրունին յարձակողական դիրք բռնեց դէպի թատրոնական կոմիտեի գործունէութիւնը, որի մասին կխօսենք իր տեղում։

Տնտեսական խնդիրներ.

Արծրունու ծառայութիւններից մէկն էլ այն էր, որ նա տնտեսական խնդիրը հրապարակ հանեց ամենալայն ծաւալով։ Ժողովրդի տնտեսական վիճակը նա դարձրեց բազմակողմանի ուսումնասիրութեան առարկայ և իր երկարամեայ գործունէութեան ընթացքում շարունակ ծեծում էր այդ հարցը։

Նախ և առաջ Արծրունին բացատրում է, թէ ինչ նշանակութիւն ունի տնտեսական հարցը կուլտուրական գործում։ Քաղաքակրթութիւնը երբէք չէ կարող խոր արմատներ ձգել ժողովրդի մէջ, եթէ նա տնտեսապէս ապահով չէ, ինչպէս հայ ժողովուրդը, որ կանգնած է տնտեսական ստոր աստիճանի վրայ. չգիտէ օգտուել, ինչպէս հարկն է, երկրի հարստութիւնից. հողը մշակում է նախնական ձևով և անծանօթ է եւրոպական կատարելագործուած գործիքներին։

«Փոխատու ընկերութիւններ» վերնագրով յօդուածում Արծրունին ասում է. «Ժողովրդի ստորին, աշխատող դասը, այսինքն գիւղացի երկրագործը և քաղաքացի արհեստաւորը, իւրաքանչիւր հասարակութեան հիմք և տնտեսական ոյժ են կազմում։ Նրանց դրութիւնը բարելաւելով կարելի է բարւոքել և ամբողջ հասարակութեան տնտեսական դրութիւնը»։ Մարդկանց նիւթական վիճակը պէտք է բարւոքել և այն պատճառով, որ շատ յանցանքներ առաջ են գալիս նիւթական կարիքներից («Յանցաւորներ և հասարակութիւն»)։ Նիւթական անապահովութիւնից ծագում են և ուրիշ չարիքներ՝ գաղթականութիւն և պանդխտութիւն։ Հայերը շատ չեն բազմանում շնորհիւ տնտեսական պատճառների և բնութեան պայմանների («Հայերի շատ չբազմանալու պատճառները»)։

Բայց ի՞նչպէս բարձրացնել ժողովրդի տնտեսական դրութիւնը։ Դրա համար Արծրունին առաջարկում էր զանազան միջոցներ։ Նախ փոխատու ընկերութիւններ, որոնց նպատակը պիտի լինի հնարաւորութիւն տալ տեղացի բնակչին 1) գումար փոխ առնել չափաւոր տոկոսով և 2) շահաւէտ կերպով յանձնել իր հաւաքած գումարը։ Փոխատու ընկերութիւնը կունենայ նաև այն օգուտը, որ ժողովուրդը կազատուի վաշխառուների հարստահարութիւնից։ Սովից և բնական պատահարներից ժողովրդի ապրուստն ապահովելու համար Արծրունին օգտաւէտ էր համարում բանալ հասարակական շտեմարաններ։ Տնտեսական առաջադիմութեան նպաստում են նաև հաղորդակցութեան ճանապարհների բարւոք վիճակը, երկրագործական կատարելագործուած ձևերը և այլն։

Վաճառականութիւն

Արծրունին զբաղւում էր և վաճառականութեան վերաբերեալ խնդիրներով։ Վաճառականութեան զարգացումը, նրա կարծիքով, կախուած է երկրի արդիւնաբերութիւնից։ Նա յորդորում էր հայերին շահագործել երկրի հարստութիւնները։ Դրա համար անհրաժեշտ է անձնական նախաձեռնութիւն, որի պակասութիւնը հայերի մէջ ցաւ է պատճառում Արծրունուն։ Նա գուշակում էր, որ օտարների կապիտալները պիտի թափուեն մեր երկիրը և կլանեն մեր հարստութիւնները։ Թէև նա հակառակ չէր օտարների գործունէութեան մեր երկրում, բայց յորդորում էր հայերին պատրաստ լինել նրանց հետ յաջող մրցելու։

Ազգերի համերաշխութիւն.

Արծրունու ծառայութիւններից մէկն էլ այն է, որ նա հրապարակ հանեց ազգերի համերաշխութեան խնդիրը։ Հայերը և վրացիք պէտք է համերաշխ լինեն, որովհետև «Կովկասը թէև զանազան ազգութիւններով է բնակեցրած, որոնք այլ և այլ, մէկ-մէկից տարբեր դաւանութիւնների են պատկանում, բայց իր տեղագրական և աշխարհագրական դրութեան պատճառով դառնում է այդ բոլոր ազգերի համար ընդհանուր հայրենիք և միջոց է տալիս նոցա ձգտելու ընդհանուր համանման օգուտներին»։

Անհատ.

Արծրունին քարոզում էր, ի միջի այլոց, անհատականութիւն։ «Անհատ», «անհատականութիւն» նրա սիրած խօսքերն էին։ Նա յորդորում էր զարգացնել մարդու մէջ անհատական ոյժը թէ ընտանիքում, թէ ուսումնարանում և թշնամի էր այնպիսի անձանց, որոնք խոչընդոտ էին լինում անհատի զարգացման, օր. բռնակալ ծնողներին։ Ով սպանում է մարդու անհատականութիւնը, նա պարտական է մնում մարդկութեան առաջ, որովհետև ուժեղ անհատներից կազմուում է ընտանիք, ուժեղ ընտանիքներից հասարակութիւն և ուժեղ հասարակութիւններից՝ մարդկութիւն։

«Հայոց հարց».

Մինչև Ռուս-Թուրքական պատերազմը «Մշակը» կատարում էր խաղաղ կուլտուրական դեր։ Դեռ ևս չկար հայոց հարց, ազգային խնդիր։ Բայց 1877 թ. Տաճկաստանում տեղի ունեցած պատմական անցքերը մեծ յեղաշրջում առաջացրին հայերի մէջ։ 1872 թ. սկսած մտաւոր շարժումը սկսեց մի առանձին թափով առաջ խաղալ։

Դեռ ևս Ռուս-Թուրքական պատերազմը չսկսած՝ ամիսներ առաջ՝ Բալկանեան թերակղզում սլաւեան ազգերը ազատագրական պատերազմ էին մղում Թուրքաց զօրքերի դէմ՝ ապաւինած մի կարող ուժի, որպիսին է Ռուսաստանը։ Այդ ազգութիւնների համար ծագում էր նոր կեանքի արշալոյս, որին ուշադրաւ սպասում էր Եւրոպան։ Հայերը ևս կարդալով նրանց հերոսական քաջագործութիւնները, վառւում էին բարի նախանձով, թէ ինչո՞ւ իրանք յետ մնան միւս մանր ազգութիւններից։

Այդ հարցին Գր. Արծրունին «Մշակում» նուիրեց մի շարք յօդուածներ, որոնց մէջ աչքի է ընկնում մէկը՝ «Մի՞թէ այժմ էլ հայերի հերթը չէ»։ Այդ ժամանակ Արծրունին այն կարծիքի էր, որ հայերը կարող են ազատուել մահմեդական լծից նոյն ճանապարհով, ինչպէս սլաւեան ազգերը, այն է՝ զէնքով և Ռուսաստանի օգնութեամբ։ Միևնոյն ժամանակ նա դատապարտում էր Պոլսի հայերին, որ նրանք անտարբեր են դէպի ազգի վիճակը, որ սահմանադրութիւնից չկարողացան օգուտ, որ նրանց լրագրութիւնը զբաղուած է կրօնական վէճերով և աննշան խնդիրներով։ Մեղադրում էր, որ նրանք բողոքելու

փոխարէն՝ շնորհակալութիւններ են յայտնում սուլթանին։ Իսկ մի յօդուածում («Կ. Պոլսի Ներսէս պատրիարքի խայտառակ և ամօթալի շրջաբերականը») Արծրունին շանթեր էր արձակում պատրիարքի մի շրջաբերականի առիթով, որով նա յորդորում էր հայերին պաշտպանել Օսմանեան տէրութիւնը։ Սակայն Թիֆլիսի և Կ. Պոլսի հայերը, Ազգային ժողովը, պատրիարքը և ամբողջ մամուլը դէմ էին ուրուէ շարժման հայերի կողմից և այդպիսի շարժում համարում էին վնասակար և ազգակործան։ Հեռաւոր գաւառների իսկական դրութեան անտեղեակ լինելով, շատերը կարծում էին, որ Տաճկաստանում հայ ժողովրդի դրութիւնը այնքան էլ անտանելի չէ։

Բայց երբ 1877 թ. Տաճկ.-Հայաստանում տեղի ունեցած արհաւիրքների աբձագանքը հասաւ Եւրոպա և յուզեց հասարակութեան մտքերը, հայերը ևս ըմբռնեցին նախկին պատրանքից և տեսան, որ իրանց հայ եղբայրների դրութիւնը այնքան էլ նախանձելի չէ։ Կ. Պոլսի Ազգային ժողովը, յանձին Ներսէս պատրիարքի, ներկայացրեց տէրութեան մի յուշագիր (memorandum), ուր յիշած էին հայերի կրած ճնշումները և պահանջ էր դրած, որ սլաւեան ազգերի համար խոստացած վերանորոգութիւնները տարածուեն և ամբողջ տէրութեան մէջ բոլոր քրիստոնեաների վրայ։

Եւրոպական մամուլը ևս զբաղուեց հայկական խնդրով։ Ի՞նչ միջոցներով կարելի էր բարւոքել հայերի դրութիւնը Թուրքիայում։ Ամենքը գալիս էին այն եզրակացութեան, որ միակ միջոցը խաղաղ ճանապարհն է—Ռուսաստանի և եւրոպական տէրութիւնների միջամտութիւնը։

Իրերի փոխած դրութիւնը ազդեց և Արծրունու

հայեացքների վրայ։ «Հայոց խնդիր» վերնագրով առաջնորդողում նա ևս ընդունում է, որ ապստամբելը հայոց բնաւորութեան հակառակ է, որ «հայերը իրանց ձայնը լսելի պիտի դարձնեն Եւրոպային ոչ թէ ապստամբութեամբ, այլ խելքով, մտաւոր զէնքով»։

1878 թ. Բերլինի կոնգրեսում Սան-Ստեֆանոյի 16-րդ յօդւածը ենթարկուեց փոփոխութեան և դարձաւ Բերլինեան դաշնագրի 61-րդ յօդւածը, Հայոց հարց վերնագրով, որի մէջ հայերին խոստացւած էին զանազան բարեփոխութիւններ։

Ներսէս պատրիարքի ջանքերով պատւիրակներ ուղարկուեցին եւրոպական տէրութիւնների հետ բանակցելու հայոց հարցի մասին։ Երբ սուլթանը պահանջեց Ներսէսից, որ շուտով վերադարձնէ պատւիրակներին, քաջարի պատրիարքը պատասխանեց, թէ առաջ թող իրան կախէ և ապա այդ պահանջն անէ։ Արծրունին, որ երբեմն Ներսէսին դաւաճան էր անւանում, այժմ խօսք չէր գտնում նրան ըստ արժանւոյն գովելու։

Թիւրքահայերի կրած աղէտները պատմական դասի նշանակութիւն ունեցան։ Հայերը տեսան, որ վերացական հայրենասիրութիւնը արժէք չունի, այլ նա պիտի երևայ գործով։ Երկու միլիոն ժողովրդի համար դեռ ևս ոչինչ չէր արւած։ Ամեն բան պէտք էր սկսել նորից։

Եւ սկսւեց եռանդուն գործունէութիւն։

Թիւրքայ աղէտեալների համար մէյն Ռուսաստանում հանգանակւեց հարիւր հազար ռուբլի։ Կրթութիւն տարածելու նպատակով հիմնւում էին ընկերութիւններ, որոնք միանալով կազմեցին «Միացեալ ընկերութիւն»։ Երկիրը անձամբ անձին ուսումնասիրելու նպատակով ուղևորւեցին Տաճկաստան Գ. Սրւանձտեան, Միրախորեան, Ալլավերդեան։ Ամեն տեղ զարթնում էր հետաքրքրութիւն դէպի թուրքահայերը, և Թիֆլիսում կարդացւում են մի շարք դասախօսութիւններ։ Արծրունին կարդում է «Տաճկաստանի տնտեսական դրութիւնը», Շիշմանեան (Ծերենց) «Կիլիկիա», Աբ. Յովհաննիսեանը «Եւրոպացի ճանապարհորդների կարծիքները հայերի մասին» և այլն։

1877 թ.—1878 թ. պատմական անցքերի հետեւանքներից մէկն էր արևելեան և արևմտեան հայերի մերձեցումը։ 1879 թ. տեղական ոյժերից և պօլսեցի դերասան-դերասանուհիներից կազմւած խումբը այդ մերձեցման նշաններից մէկն էր։

Արծրունու գործունէութեան գլխաւոր նպատակ-Ընդհանուր հայեացք.
ներից մէկն էր ստեղծել մի կուսակցութիւն, որ պիտի դար իրագործելու կեանքի մէջ նրա քարոզած գաղափարները։ «Մեր կուսակցութիւնները» վերնագրով յօդւածում նա բացատրում է կուսակցութեան նշանակութիւնը և նրա անհրաժեշտութիւնը իւրաքանչիւր ազգի մէջ. իբրև ապացոյց, բերում է օրինակներ եւրոպական տէրութիւններից։

Բայց հասարակութեան ոչ խաւի մէջ նա պիտի որոնէր համախոհ կուսակիցներ։ Հին սերնդի մասին խօսք անգամ չէ կարող լինել, քանի որ Արծրունին «Մշակի» հէնց առաջին համարներից սկսեց իր պատերազմը այդ սերնդի դէմ։ Նրա ազատամիտ գաղափարները այն խնդիրների մասին, որոնք շօշափում էին պահպանողականների սրբազան աւանդութիւնները, առիթ էին տալիս կատաղի բանակռիւների։ Իր յարձակումների մէջ Արծրունին անխնայ էր. մերթ զայրոյթով, մերթ կծու ծաղրով խարազանում էր հակառակորդներին։ Մի շարք առաջնորդողներ (Ո՞ւմն

ենք խաբում», «Մենք ձեզ կմերկացնենք» և այլն) գրված են մեղվականների դեմ խիստ յարձակողական ոգով։ Մի ֆելիեթոնում «Մեղու Հայաստանին» անվանված է «Լու Հայաստանի», լրագիր անշարժական և ոչխարային»։ Արծրունին յարձակողական դիրք էր բռնել և դեպի ուսեալ դասակարգը, դեպի համալսարանականները, որոնց անվանում էր «դիպլոմաւոր»։ Նրանց չէր հաւանում, որովհետև, Արծրունու կարծիքով, նրանք շատ հեռու չէին գնացել հին սերնդից, հայութիւնից օտարացել էին և անտարբեր էին դեպի հասարակական գործունէութիւնը («Երիտասարդներին խրատ», «Էլ չենք հաւատում»)։

Մնում էր միայն այն երիտասարդութիւնը, որը, թէև զուրկ էր բարձրագոյն կրթութիւնից և հազիւ թեմական դպրոց աւարտած կամ աւելի պակաս կրթութեամբ, բայց այսու հանդերձ ընդունակ էր հրապուրելու ազնիւ, առաջադէմ գաղափարներով։

Ահա այդ նորատի երիտասարդութիւնն էր, որ հզօրապէս ենթարկւեց Արծրունու հմայիչ ազդեցութեան։ Դրանք մեծ մասամբ ուսուցիչներ և վարժուհիներ էին և գործում էին գաւառներում։ Դրանք էին, որ խուլ ու խաւար անկիւններում տարածում էին լոյս, դրանք էին կազմում գաւառական թղթակիցների կօնտինգենտը, որոնք հետևում էին ժողովրդական կեանքին և աչքի ընկնող երևոյթները արձանագրում էին թղթակցութիւնների մէջ։ Եւ այսպիսով գաւառական կեանքը իր լաւ ու վատ կողմերով արտայայտւում էր լրագրութեան մէջ, իհարկէ, ոչ առանց կուսակցական գունաւորման։ Թղթակիցների գրածներում պարզ երևում էր Արծրունու յարձակողական ուղղութիւնը։ Նրանք «մտրակում էին» կեղեքիչ վաշխառուներին, տգէտ քահանաներին,

եկեղեցական գումար վատնող երեսփոխներին և այդպիսի չարիքներ։

Արծրունին գնալով աւելի և աւելի հեղինակութիւն էր ձեռք բերում, դրա հետ միասին ուժեղանում էր և նրա կուսակցութիւնը, որի մէջ այժմ մտնում էին համալսարանականներ, ուսանողներ, ընկնակ գրողներ, կանացի սեռը, նոյն իսկ հասարակ դասակարգից մարդիկ։

Մինչև 80-ական թուականների վերջը կրթական և հասարակական հիմնարկութիւնների ղեկը գտնւում էր պահպանողականների ձեռքում։ Բայց 90-ական թուականների սկզբում երիտասարդ կուսակցութիւնը այնքան ուժեղացել էր և իր շարքերում ունէր արդէն այնպիսի յայտնի անուններ, որ հին և նոր սերնդի կռիւը հասարակական տեղեր գրաւելու համար դարձաւ անխուսափելի։ Եւ իրօք։ Ազատամիտ կուսակցութիւնը Արծրունու առաջնորդութեամբ փառաւոր յաղթանակ տարաւ և պահպանողականների ձեռքից խլեց Հրատարակչական ընկերութիւնը։ Այնուհետև սկսեցին նոր սերնդի մի շարք նուաճումները՝ Հոգևոր ճեմարանի, Ներսիսեան և միւս թեմական դպրոցների և այլն։

Նոր սերնդի յաղթանակը, անտարակոյս, Արծրունու գլխաւոր ծառայութիւններից մէկն էր, բայց ինչպէս յայտնի է, ամենափրկարար գաղափարները, աշխարհի սկզբից մինչև այժմ, շատ անգամ ըմբռնւել են սխալ մտքով և պատճառ դարձել մարդկային ամենամեծ աղէտների, ինչպէս, օրինակ, կրօնական պատերազմները։

Մեզանում ևս կուսակցական գաղափարը հետզհետէ իր նշանակութիւնը կորցրեց, և նրա տեղը գրաւեց նեղ-կուսակցական ոգին, որ սկսեց արտա-

յայտնել ոչ միայն լրագրական բանակռիւների, այլ և կեանքի մէջ, օրինակ, դպրոցներում, ուր հակառակ կուսակցութիւնների պայքարը չափազանց վնասակար հետևանքներ էր ունենում դաստիարակչական գործում։

Արծրունու ծառայութիւնները ըստ արժանւոյն գնահատելու համար հարկաւոր է համեմատել նախորդ շրջանը ներկայի հետ։

Մենք արդէն գիտենք, թէ այդ շրջանում ինչպիսի ամայութիւն էր տիրում, որքան ընկած էր լրագրութիւնը, պօէզիան, թատրոնը և առհասարակ հասարակութեան տրամադրութիւնը։ Բայց Արծրունու երևալով՝ տարտամ դրութիւնը միանգամից փոխուեց, տեղի տալով չտեսնուած կենդանութեան։ Արծրունու խրոխտ ձայնը, որ հնչեց «Մշակի» էջերից, սթափեցուցիչ նշանակութիւն ունեցաւ շատերի համար, որոնք թօթափելով իրանց վրայից թմրութիւնը, սկսեցին ականջ դնել նրա խմաստալից քարոզներին։ Արծրունին իր կորովի ձայնով զարթեցնում էր քնածներին և հրաւիրում էր դէպի գործունէութեան ասպարէզ։ Նա կոչ էր անում դէպի աշխատանք, որովհետև եկել էր աշխատելու ժամանակը. դրա հետ միասին աւելանում էր հասարակական գործունէութեան եռանդը։

Արծրունուն պարտական ենք և մի այլ ծառայութեան համար։ Նա մերկացնում էր ժամանակակից հայ իրականութիւնը իր ագեղ կողմերով։ Որքան ազատներ կուտակուել էին ազգի մէջ դարաւոր ստրկութեան և ագիտութեան պատճառով, այդ բոլորը նա մերկացնում էր և անխնայ հարուածում։

Արծրունու շնորհիւ բարձրացաւ նաև մամուլի նշանակութիւնը, և ընթերցողը սկսեց աւելի մեծ

հաւատով վերաբերուել դէպի լրագրական խօսքը։ Նոր ատի երիտասարդութեան այդ հաւատը, որ տածում էին դէպի իրանց պաշտելի ղեկավարը, մեծ ծառայութիւն մատուցեց նոյն իսկ Արծրունուն, խրախուսելով նրան իր հրապարախօսական գործունէութեան մէջ։ Նրա խօսքերը դարձան մի տեսակ պատգամներ նոր սերնդի համար։ Նրա բոլոր գաղափարները դանազան խնդիրների մասին դարձան երիտասարդութեան սեփականութիւն և կազմակերպեցին նոր աշխարհայեացք։

Արծրունին մօտ քսան տարի միահեծան իշխում էր երիտասարդութեան մտքերի վրայ, որի հետևանքը եղաւ այն, որ նա դարձաւ նոր սերնդի կուռքը, և այդ կուռքին նրանք պաշտպանում էին ամենայն մոլեռանդութեամբ։

«Մշակի» շկոլայից 80-ական թուականներին դուրս եկան բազմաթիւ հասարակական գործիչներ և գրողներ՝ Րաֆֆի, Առաքել Բաբախանեան (Լէօ), Մալումեան, Ալ. Քալանթար, Հ. Առաքելեան և այլն։

Ահա ինչ է գրում Րաֆֆին Արծրունու նշանակութեան մասին. «Մշակը» իր մոգական հարուածով միանգամայն շարժեց հասարակական թմրած մարմինը։ Մարդիկ յանկարծ աչքերը բաց արին, սկսեցին մտածել իրանց գործերի մասին, սկսեցին մտածել իրանց պէտքերի վրա։ Լրագիրը դարձաւ հասարակութեան դաստիարակ և միևնոյն ժամանակ նրա ընդհանուր կարիքների արտայայտութիւն։ Իր բոլորովին թարմ, երիտասարդ խմբագրի ղեկավարութեան ներքոյ «Մշակը» հեղեղեց հասարակութիւնը մի նոր, կենդանացուցիչ հոսանքով, որ ամենափոքր ժամանակում արդասաւոր արդիւնք ունեցաւ։ Վաղե-

մի աւանդական ինքնախաբէութեան փոխարէն սկսեց տիրապետել կրիտիկական հայեացքը։ Ինքնաքննութիւն և ինքնաճանաչութիւնը,—ահա այն դրդող և առաջ մղող տեսակէտը, որով սովորեցրեց նա հայ հասարակութեանը մտածել իր պէտքերի և իր թերութիւնների վրայ»։

Որքան էլ տաղանդաւոր համարենք Արծրունուն, իբրև հրապարակախօսի և արդիւնաւոր նրա ծառայութիւնները, այնուամենայնիւ նա ևս ունեցել է իր թերութիւնները, նա ևս գործել է սխալներ։

Նախ՝ ունենալով տաք, կրքոտ խառնուածք, Արծրունին անխնայ և աններողամիտ էր դէպի իր հակառակորդները։ Նրանց երեսին նետում էր այնպիսի ծանր, բարոյապէս ստորացնող խօսքեր, ինչպէս, օրինակ «իդիօտ», «ապուշ»։

Թէև Արծրունին կողմնակից էր բէալական ուղղութեան և ընդհանրապէս գիտէր գնահատել ժամանակակից գրականութեան երևոյթները, օր.՝ Սունդուկեանի «Խաթաբալան», «Պէպօն» և այլն, բայց այստեղ ևս նա երբեմն թոյլ էր տալիս սխալներ կամ հակասութիւններ։ Օրինակ, «Մշակի» մէջ զանազան ժամանակներում յայտնել են բոլորովին տարբեր՝ իբար ժխտող կարծիքներ Աղայեանի մի գրքի մասին. նոյնպէս տարօրինակ էր նրա կարծիքը Ադամեանի մասին, որի մէջ նա, գոնէ սկզբում, չէր կամենում տեսնել տաղանդ։ Իսկ դէպի 90-ական թուականների նորածին շարժումը, որ մի դարագլուխ ստեղծեց հայ բանաստեղծութեան և ընդհանրապէս գրականութեան համար և առաջ քաշեց այնքան շնորհալի անուններ, դէպի այդ գրական նոր, թարմ հոսանքը «Մշակը» բաւական անբարեհաճ, նոյն իսկ թշնամական դիրք բռնեց։ Թէ ինքը Արծրունին և թէ նրա՝

այն ժամանակւայ ամենամօտ աշխատակիցը ոչ միայն չէին խրախուսում սկսած գրական նոր երևոյթները, այլ նոյն իսկ հեգնօրէն էին խօսում «նորագոյն» բանաստեղծների մասին։

Արծրունին ասել է, որ մեծ մարդկանց թոյլատրելի է փոքրիկ սխալներ։ Իսկ մենք կաւելացնենք լատինական առածը՝ errare est humanum։

«ՓՈՐՁ»

Նոյն այս տարիներում Թիֆլիսում հրատարակւում էր «Փորձ» ամսագիրը, որի խմբագիրն էր Աբգար Յովհաննիսեանը։

Աբգար Յովհաննիսեանը բարձրագոյն կրթութիւն ստացել էր Եւրոպայում, տիրապետում էր ռուսաց, գերմաներէն և ֆրանսերէն լեզուներին, Պետերբուրգում յատկապէս ուսումնասիրել էր ֆինանսական գիտութիւնները։ Թիֆլիսում վայելում էր բարձր դիրք, վարում էր զանազան պաշտօններ. եղել է Առևտրական բանկի դիրեկտոր, զանազան ընկերութիւնների անդամ և նախագահ. ջերմ մասնակցութիւն է ունեցել նաև թատրոնական գործի մէջ։

Աբ. Յովհաննիսեանը յայտնի է իր հրատարակչական գործունէութեամբ և իբրև խմբագիր։ Բաֆֆու երկու հատոր «Փունջը», Շիլլերի «Վիլհելմ Տէլը», Պալասանեանի «Քերականութիւնը» նրա հրատարակութիւններն են։ 80-ական թուականներին նա ձեռնարկեց մի խոշոր հրատարակութեան։ Գերմանացի Լէյստի աջակցութեամբ հրատարակեց մի շարք

հատորներ «Armenische Bibliothek» վերնագրով, որի նպատակն էր ծանօթացնել գերմանացիներին հայոց բանաստեղծների և վիպասանների հետ։ Նրա ձեռնարկութիւնն էր և գիտական Ֆինկի գերմաներէն պարբերական թերթը «Հանդէս Հայագիտութեան» վերնագրով։

Բայց Աբ. Յովհաննիսեանի գլխաւոր գործերն են՝ «Փորձ» ամսագիրը և «Արձագանք» շաբաթաթերթը։

«Փորձը» սկսեց 1876 թ. կիսին, սկզբում եռամսեայ և ապա ամսագիր։ Չորս և կէս տարուայ հրատարակութիւնից յետոյ «Փորձը» դադարեց 1881 թ.։ Ամսագրին փոխարինեց «Արձագանք» շաբաթաթերթը, որ 1890 դարձաւ պատկերազարդ, իսկ հետևեալ տարուանից հրատարակւում էր, որպէս օրագիր՝ շաբաթը երեք անգամ։ Դադարեց 1897 թ.

Իր կեանքի վերջին տարիները երկարատև հիւանդութեան պատճառով հեռացած էր գրական և հասարակական ասպարիզից։ Վերջին անգամ բժշկուելու նպատակով արտասահման գնալիս մեռաւ Բաթում քաղաքում (1904 թ.), բայց նրա աճիւնը թաղուեց Թիֆլիսում։

Աբ. Յովհաննիսեանը հրապարակախօսի աչքի ընկնող տաղանդ չունէր, բայց սրամիտ էր և գրում էր ֆելիէտօններ Մախլաս ստորագրութեամբ։ Իր ուղղութեամբ նա հակառակ էր Արծրունու ազատամտութեան և «Արձագանքի» մէջ միշտ գրում էր նրա դէմ։ Ամեն մի առիթից օգտուելով աշխատում էր նրան բռնել հակառակ կարծիքների մէջ, ցոյց տալ նրա սխալները և առհասարակ իջեցնել նրան իր բարձրութիւնից։ Նրա հրապարակախօսական յօդուածներից կարելի է յիշել «Հայոց ազգի կատաղի թշնամիները», որի մէջ նա աչքի առաջ ունի հայ վաճառականին, և նրա մի դասախօսութիւնը՝ «Եւրոպացի ճանապարհորդների կարծիքը հայերի մասին»։ Հրապարակախօսի դերում մենք նրան տեսնում ենք 90-ական թուականներին, երբ նա մի առժամանակ «Արձագանքը» դարձրեց իսկապէս հասարակաց մտքի ղեկավար և ինքն էլ հանդէս եկաւ իբրև մարտնչող և ազգային շահերի պաշտպան։

«Փորձ» ամսագիրը հասարակաց ղեկավարի դեր չէր կատարում։ Նրա արժանիքը կայանում էր միայն նրա հարուստ բովանդակութեան մէջ։ Նա լրացնում էր այն, ինչի համար սուղ էին «Մշակի» էջերը՝ ժամանակակից ինքնուրոյն և թարգմանական գրականութիւնը, պատմական ուսումնասիրութիւնները, քննադատութիւնները և այլն։

«Փորձին» աշխատակցում էին այն ժամանակուայ բոլոր յայտնի գրողները։ Պատկանեանը զետեղում էր իր «Ազատ երգերը» և վէպերը, Պռօշեանը իր «Հայի խնդիրը», «Կուսածաղիկը» և «Շահէնը», Սունդուկեանը իր «Խաթաբալան», Պարոնեանը իր երգիծաբանութիւնները, Բարխուդարեանը կլասիկներից թարգմանած ողբերգութիւնները և այլն։ Բովանդակութիւնը աւելի ևս բազմակողմանի ու հետաքրքրական էին դարձնում Պալասանեանի (Գրիչ) քննադատութիւնները և գիտական հետազօտութիւնները Հայաստանի անցեալից, Երիցեանի պատմական-հնագիտական յօդուածները, Բաֆֆու և Քաջբերունու ճանապարհորդական տպաւորութիւնները, Զմշկեանի թատրոնական յիշողութիւնները և այլն։

Եթէ չլինէր «Փորձ» ամսագիրը, մենք դուցէ չունենայինք մեծ մասը այն գրուածքների, որոնք տպուած են այդ ամսագրում։

ՄԻԻՍ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

Զարմայր Մսերեանը 1879—1882 թ. հրատարակում էր «Փարոս Հայաստանի» վերնագրով պատկերազարդ հանդէսը, որը իր ուղղութեամբ եռադիմական օրգան էր։ Այստեղ տպւում էին ընդարձակ քաղուածքներ Կ. Պոլսի հայոց լրագիրներից, իսկ ռուսահայոց կեանքի մասին շատ սակաւ էին տեղեկութիւնները։

Եթէ կար այստեղ քիչ թէ շատ հետաքրքրական բաժին, դա կենսագրութիւններն էին և պատկերները։ Բանաստեղծական բաժնի մէջ աչքի էին ընկնում Տիգրան Աշոտ, Ջիւան և Կ. Սահրատեան։ Վերջինս ցոյց է տալիս շնորհալի բանաստեղծի նշաններ, բայց զարմանալի է, որ նա անյայտացել է։ Ահա մի նմուշ նրա ինքնուրոյն ոտանաւորից։

«Հեռու երկիր թռաւ, փախաւ
Սիրուն թռչուն մեղանից.
Իմ սիրասուն քոյրն հեռացաւ
Ուրիշ աշխարհ այստեղից։
Շուտով կը գայ կանաչ գարուն.
Եւ թռչունը կը դառնայ.
Բայց ախ... քուրիկն իմ սիրասուն
Երբէք, երբէք յետ չի գայ։

Սա չէ՞ յիշեցնում արդեօք Ալ. Ծատուրեանի «Սոխակ» վերնագրով երգը։

Նրա միւս երգը՝ «Զօրականք Վարդանայ» նոյնպէս վատ չէ և գրուած է մաքուր գրական լեզուով, որով գրում էին 90-ական թ. բանաստեղծները։

Միւս պարբերական թերթերը մասնագիտական էին և կարճատև կեանք ունեցան։ Վ. Բաստամեանի «Դպրոցը» (1874—1876 թ.) և Տէր-Յովհաննիսեանի «Մանկավարժական թերթը» (1788—1880 թ.) ըզբաղւում էին մանկավարժական և դպր. խնդիրներով։

2. ՎԷՊ

Վէպը, գրականութեան այդ կարևոր ճիւղը, մեզանում սկսեց զարգանալ միայն 70-ական թւականներին, երբ մէկը միւսի ետևից ասպարէզ եկան Բաֆֆի, Պռոշեան, Աղայեան, Ծերենց։

Մինչև այդ ժամանակ մենք ունէինք շատ սակաւաթիւ վէպեր։ Թաղիադեանի «Վէպ Վարսենկան», Աբովեանի «Վէրք Հայաստանի», Նալբանդեանի «Մինին խօսք, միւսին հարս», Տէր-Յովհաննիսեանի «Տէր Սարգիս», Պռոշեանի «Սօս և Վարդիթեր» և, վերջապէս, Աղայեանի «Արութիւն և Մանուէլ»— ահա բոլորը։

Այդ վէպերը երևացել են պատահաբար, իրարից անկախ, այնպէս որ վէպը, իբրև գրականութեան ճիւղ, մեզանում գոյութիւն չունէր։

Վէպի բարգաւաճումը սկսւում է 70-ական թւականներին, մի անգամից գրաւելով մեր գրականութեան մէջ իր պատուաւոր տեղը, ցոյց տալով միևնոյն ժամանակ զարմանալի բեղմնաւորութիւն։

Վիպագրութեան մէջ տիրապետում էին մի քանի ուղղութիւններ՝ ըէալիզմ բօմանտիկական խառնուրդով, կենցաղագրական, պատմական և տենդենցիոզ ուղղութիւններ։ Բաֆֆու վէպերի մէջ միացել են գրեթէ այդ բոլոր ուղղութիւնները։

Այս դարեշրջանի ամենատաղանդաւոր և ամենահետաքրքրական վիպասանը Բաֆֆին էր։

Սկսենք նրանից։

ՐԱՖՖԻ

Նրա կեանքը.

Ռաֆֆին (Յակոբ Մելիք-Յակոբեան) ծնուել է 1835 թ. Պարսկաստանի Սալմաստ գաւառի Փայաջուկ գիւղում։ Նրա հայրը վաճառական էր, աշխարհ տեսած մարդ և ուսման յարգը ճանաչող։ Նախնական կրթութիւն Ռաֆֆին ստացել է խալֆայական դպրոցում. իսկ ընտանիքում ունէր մի լաւ դաստիարակչուհի— իր տատը, որի հէքիաթները լսում էր մանկական յափշտակութեամբ։

Առևտրական գործերով հայրը ճանապարհորդում էր զանազան տեղեր, այցելում էր և Ռուսաստան։

1847 թ. Թիֆլիս գնալիս՝ հայրը որդուն տարաւ իր հետ և այնտեղ տուեց ուսման Բէլախեանի պանսիօնը, որ այն ժամանակ ամբողջ քաղաքում լաւ ուսումնարանի համբաւ ունէր։ Այստեղ նա սովորեց մի քանի տարի և 1852 թ. մտաւ գիմնազիա։ Թէև գիմնազիայից չորս հինգ տարուայ ընթացքում չէր կարող դուրս բերել հիմնաւոր գիտութիւն, բայց այդ տարիներում նա ծանօթացաւ Հոմերոսի, Վիրգիլիոսի, Միլտոնի և Ֆենելոնի երկասիրութիւնների հետ մխիթարեանների թարգմանութեամբ։ Բացի այդ՝ նա քիչ թէ շատ ընտելացաւ ռուսաց լեզուին, որ յետոյ մեծ ծառայութիւն մատուցեց նրան՝ մատչելի դարձնելով նրա համար ռուսաց հարուստ գրականութիւնը։

Ռաֆֆու հայրը ծերացած լինելով՝ պահանջ էր զգում մի հաւատարիմ օգնականի, որի մասին յայտնում է որդուն։ Նա ստիպւած էր թողնել գիմնազիան և հօր առևտրական գործերը վարել։ 1857 թ. Ռաֆֆին ուխտաւորների կարաւանի հետ ճանապարհորդութիւն կատարեց Տաճկաստանում, այցելեց Վան, Վարագ, Աղթամար, Մուշ, Ս. Կարապետ։ Այս ճանապարհորդութիւնը մեծ օգուտ տուեց ապագայ վիպասանին, որ ձեռք բերեց տեղագրական և կենցաղագրական բազմաթիւ տեղեկութիւններ։ Առաջին անգամ ծանօթացաւ այն երկրի հետ, ուր տառապում էր մի թշւառ ժողովուրդ։ Իւրաքանչիւր քայլափոխում Ռաֆֆու աչքի առջև ներկայանում էին մայրենի բնութեան գեղեցիկ տեսարանները. աւերւած վանքերը և բերդերը նրա սիրտը լցնում էին հայրենասիրական խանդով։ Այդպիսի տխուր հոգեկան տրամադրութիւնն է թելադրել նրան «Ձայն տուր, ով ծովակը»։ Ռաֆֆու ուղեգրական տպաւորութիւննե-

ը՝ «Աղթամարայ վանք» վերնագրով տպված է 1860 թ. «Հիւսիսափայլի» մէջ։

Առևտրական գործերով Բաֆֆին այցելում էր և Պարսկաստանի քաղաքները՝ Թաւրիզ, Ուրմի, Խոյ, և այսպիսով Պարսկաստանի հետ ևս նա գերազանց ծանօթացաւ։

Վաճառականութիւնը բոլորովին խորթ պարապմունք էր Բաֆֆու համար։ Բարեբախտաբար, նրա գործերը շատ վատ գնացին, մեծ կորուստներ ունեցաւ, և նա վերջ ի վերջոյ թողեց վաճառականութիւնը։ Կարծես ճակատագիրը ձախորդութիւններ էր սփռում նրա առաջ, որպէս զի նա թողնէ իր ատելի պարապմունքը և գնայ իր կոչման յետևից, որ նրան պիտի տանէր փառքի դագաթնակէտը։

1870 թ. մենք նրան տեսնում ենք Թիֆլիսում ծայրայեղ կարիքի մէջ, ուր նա օրւայ պարէնը հայթայթում էր մերթ դասերով մերթ շորեղէնի խանութում տորին ծառայողի պաշտօնով։

Բայց շուտով բախտը ժպտաց Բաֆֆուն։ Երբ Արծրունին «Մշակի» թոյլտուութիւնն ստանալուց յետոյ (1871 թ.) սկսեց գումարել բազմամարդ ժողովներ, Բաֆֆին դարձաւ մշտական յաճախորդներից մէկը։ Իր լրջութեամբ նա իր վրայ դարձրեց երիտասարդ հրապարակախօսի ուշադրութիւնը, և այնուհետև նրանց մէջ հաստատուեց մի ներքին կապ։ Նա դարձաւ «Մշակի» եռանդուն աշխատակիցը և առաջին անգամ «Մշակում» գործ ածեց Բաֆֆի անունը։ «Մշակի» առաջին տարիներում ապրում էին նրա «Ուղևորութիւնները Պարսկաստանում», առաջին պատկերները պարսկահայոց կեանքից, երբեմն նաև ֆեյլիէտոնները (Մելիքզադէ)։

Միևնոյն ժամանակ 1873—1874 թ. լոյս տեսան երկու հատոր ժողովածուներ «Փունջ» վերնագրով, որի մէջ զետեղված են Բաֆֆու անդրանիկ ոտանաւորները և պատմուածքները։

Դեռ չէր եկել այն ժամանակը, որ հայ գրողը կարողանար ապրել իր գրչի աշխատանքով։ Նիւթական միջոցներից զուրկ՝ նա ստիպված էր ապրուստի նոր աղբիւր որոնել։ Եւ ահա 1874 թ. նա ուսուցիչ է Թաւրիզում։ Անկարող լինելով համերաշխ ապրել իր պաշտօնակիցների հետ, նա թողեց Թաւրիզը և 1877 թ. տեղափոխուեց Վերին Ագուլիս դարձեալ ուսուցչական պաշտօնով։ Այստեղ ևս նա երկար չմնաց։ Այդ ժամանակ նեղ կուսակցական ոգին սկսել էր սողոսկել նաև վարժարանները, որի շնորհիւ ուսուցչական խմբերի մէջ ծագում էին կռիւներ։ «Մեղու Հայաստանի» լրագրում երբեմն երևում էին անուանարկու թղթակցութիւններ Բաֆֆու դէմ։

Ճակատագիրը նրան մղում էր դէպի մտաւոր կենտրոնը։ Հայկական սարսափների ազդեցութեան տակ Բաֆֆին գրեց իր «Զալալէդդինը», որ բոլորովին նոր ուղղութիւն մտցրեց հայ վիպագրութեան մէջ և եղաւ անդրանիկը մի շարք նոյնանման վէպերի։ Վէպը տպւեց «Մշակում» 1878 թ. և մի անգամից հռչակեց հեղինակի անունը։ Բաֆֆին վերջապէս գտաւ իր իսկական կոչումը, որին և նուիրեց իր ապագայ աշխատութիւնները։ Այնուհետև նա վերջնականապէս հաստատուեց Թիֆլիսում։ Իր մի շարք վէպերով նա սերտ կապւեց «Մշակի» և Արծրունու հետ։ Շնորհիւ այն մեծ յաջողութեան, որ ունեցան նրա վերջին գրւածքները, այժմ հնարաւորութիւն ունէր ապրելու իր գրական աշխատանքով։ Այնուհետև մէկը միւսի ետևից լոյս տեսան «Ոսկի աքաղա-

ղը», «Խենթը», «Դաւիթ բէկը» և այլն։ Երբ 1884 թ. «Մշակը» ընդհատուեց, Բաֆֆին սկսեց գրել «Արձագանքում», ուր տպուեցին «Սամուէլ», «Ղարիբ մշեցի» և «Խաղ-փուշ»։

Բաֆֆին մեռաւ 1888 թ. ապրիլի 24-ին։ Թաղումը տեղի ունեցաւ Խոջիվանքում ժողովրդական մեծ հանդիսով։ Նրա դամբարանը զարդարուած է մարմարիոնէ սիւնով, որի ծայրին՝ քնար։

Ազդեցութիւններ.

Ինչպէս իւրաքանչիւր հեղինակ, նոյնպէս և Բաֆֆին ենթարկուել է զանազան ազդեցութիւնների։ Ծնուելով Պարսկաստանի մի խաւար անկիւնում, նա իր բնածին ընդունակութեան և ինքնակրթութեան շնորհիւ՝ դարձաւ ազգի նշանաւոր հեղինակներից մէկը։ Ամենից գլխաւորն այստեղ, իհարկէ, Բաֆֆու տաղանդն է, որով նա պարգևատրուած էր վերուստ։ Բայց երկնային պարգևը կանհետանար, եթէ ինքը հեղինակը ահագին աշխատանք չդնէր իր տաղանդի զարգացման վրայ։

Դեռ ևս գիմնազիայում նա կարդացել էր Հոմերոսի, Վիրգիլիոսի, Միլտոնի և Ֆենելոնի պոէմանները։ Հետզհետէ ծանօթացաւ Շէքսպիրի, Շիլլերի, Հիւգօի և միւս բոմանտիկների երկերի հետ։ Ծանօթ էր և ռուսաց ըէալիստական ուղղութեան հեղինակների հետ՝ Գոգոլի, Տուրգենևի և միւսների։

Հայ գործիչներից նրա վրայ ազդել են Նազարեանը իր լուսամիտ քարոզներով և Խրիմեան Հայրիկը իր շինարար գործունէութեամբ և ժողովրդասէր ոգով։ Բայց ոչոքի ազդեցութիւնը այնքան զօրեղ չէ եղել, ինչպէս Արծրունու։

Բաֆֆու մահից յետոյ Արծրունին նրա յիշատակին նուիրեց մի կենսագրական—քննադատական յօդուած, ուր նա հաղորդում է հետաքրքրական տեղեկութիւններ նրա անցեալի մասին և միևնոյն ժամանակ ըստ արժանւոյն գնահատում է նրա տաղանդը։ Այստեղից երևում է, օրինակ, որ մեր վիպասանը Արծրունու յորդորանքով է գրել իր ուղեգրական յօդուածները, որոնք տպւում էին «Մշակի» առաջին տարւայ համարներում։ Նոյնպէս Արծրունու խորհրդով է նա հրաժարուել տպելուց իր առաջին վէպը «Խըլվըլիկ» վերնագրով, որը թէև, Արծրունու կարծիքով, ունեցել է մասնաւոր գեղեցկութիւններ, «անանման նկարագրութիւններ», բայց, իբրև ամբողջութիւն, եղել է անյաջող։ «Այն բոպէից սկսած, գրում է յօդուածի հեղինակը. «Բաֆֆիի վիճակը կապուեց «Մշակի» վիճակի հետ։ Նրա անունը, նրա հռչակը, նրա ժողովրդականութիւնը մեծանում էին, քանի աւելի և աւելի էր ընդարձակւում «Մշակի» գործունութիւնը։ Գրեթէ ոչինչ սիստեմական ուսում չունեցող, ինքնակրթութեամբ զարգացած մարդը՝ մի տեսակ հոտառութեամբ գուշակում էր ժամանակի պահանջը, տպաւորւում էր ժամանակակից հարցերով և արտայայտում էր այդ հարցերը վիպական ձևով։ «Մշակի» խմբագրութեան հետ իր վիճակը կապելուց յետոյ, Բաֆֆիի տաղանդի սահմանները և այդ տաղանդի ձևը հետզհետէ որոշուեցին»։

Արծրունին իր դրոշմը դրել է նաև նրա հայեացքների վրայ և ընդարձակել է նրա մտաւոր հորիզոնը։ Նրա արծարծած ազատամիտ գաղափարների հետքերը նշմարւում են Բաֆֆու երկրորդ շրջանի վէպերի մէջ։

Բաֆֆին ինքն ևս խոստովանում էր Արծրունու

և «Մշակի» ազդեցութիւնը թէ հայկական կեանքի, թէ հայոց գրականութեան և թէ իր սեփական անձի վրայ։ Խօսելով Արծրունու նշանակութեան մասին, ի միջի այլոց ասում է. «Մշակի» ուղղութիւնը խիստ բարերար ազդեցութիւն ունեցաւ և վիպագրութեան վրայ։ Նրա օրերում վիպագրութիւնը աւելի լայն շրջանակի մէջ դրեց իր պատկերները։ Նա աւելի խոր թափանցեց զանազան դասակարգերի բոլոր ծալքերի և բոլոր խաւերի մէջ և երևան հանեց նոր տիպարներ, նոր երևոյթներ։ Քննադատութեան ոգին միացաւ արուեստի գեղեցկութեան հետ, և վիպագրութիւնը աւելի իրական հողի վրայ դրուեցաւ։ «Մշակի» օրով գաւառական բարբառները ընկան, և գրականական լեզուն առաջին անգամ համարձակութիւն ստացաւ վէպի լեզու լինելու»։

Ռաֆֆու վէպերը եւ վէպիկները.

Ռաֆֆու գրական գործունէութիւնը բաժանւում է երկու շրջանի։ Առաջինը սկսւում է 1860 թ., երբ «Հիւսիսափայլի» մէջ տպւեց նրա անդրանիկ աշխատութիւնը «Աղթամարայ վանք» վերնագրով։ Այդ շրջանը տևում է մինչև 1878 թ., երբ լոյս տեսաւ «Ջալալեդդինը», որ նոր ուղղութիւն բերեց իր հետ։ Երկրորդ շրջանը տևում է մինչև հեղինակի վախճանը։

Երկրորդ շրջանում Ռաֆֆին աւելի բեղմնաւոր էր և գրական վաստակները աւելի մշակուած։ Բայց առաջին շրջանը ևս ունի իր հետաքրքրութիւնը և արժանաւորութիւնները։

Առաջին շրջան.

Ռաֆֆու անդրանիկ գրուածքն է «Աղթամարայ վանքը», որ տպւեց «Հիւսիսափայլի» մէջ։ Այստեղ բերուած է հեղինակի խօսակցութիւնը մի վարդապետի հետ։ Դուրս է գալիս, որ դա մի ագէտ և խաւարամիտ վանական է, որ թշնամի էր լուսաւորութեան. հայհոյում է Նազարեանին նրա ազատամտութեան համար, չարախօսում է Խրիմեան Հայրիկին նրա գեղեցիկ ձեռնարկութիւնների համար, ցոյց տալով իր ապիկարութիւնը գնահատելու նրա հիմնած գիւղատնտեսական դպրոցը և տպարանը։ Նա միևնոյն ժամանակ թշնամի է հայ ազգասէրներին և նրանց է համարում պատճառ ժողովրդի թշւառութեան. ուստի քարոզում է հլու հպատակութիւն։ Այդ վարդապետի մէջ Ռաֆֆին մարմնացրել է ամենավատթար վանականի տիպը։

Դրանից յետոյ նա գրում էր ռոմանաւորներ և պատմուածքներ, բայց հնարաւորութիւն չունէր տպելու։ Նրա անունը յայտնւեց սկսած 1872 թ., երբ նա դարձաւ «Մշակի» աշխատակից և լրագրի էջերում սկսեցին երևալ «Ուղեգրութիւնները Պարսկաստանում» և մանր պատկերները պարսկահայոց կեանքից։

«Ուղեգրութիւնների» մէջ Ռաֆֆին նկարագրում է իր մայրենի բնութեան գեղեցիկ տեսարանները և միևնոյն ժամանակ հայ ժողովրդի վիճակը մահմեդական լծի տակ, այն բոլոր հալածանքները, որոնց ենթարկւում էին հայերը պարսիկների ձեռքից։ Պարսկահայերի թշւառ վիճակը, զանազան խանների, բէկերի, ֆարրաշների անիրաւութիւնները, հայ կանանց

ձրի աշխատանքը խաների կալուածներում և դրա հետ կապված առևանգում և բռնաբարություններ, միւս կողմից՝ դրախտանման երկիր՝ ճոխացած բնութեան գեղեցկութիւններով — ահա Բաֆֆու պարսկական պատկերների շարժառիթները։ Այդ գրուածքներում վիպասանը առաջին անգամ բողոքում է ազգի թշնամիների դէմ։

Այժմ ծանօթանանք այդ պատկերների բովանդակութեան հետ։

«Սովը». Հեղինակը պատմում է մի զարհուրելի դէպք, որ պատահում է Պարսկաստանում 1872 թ., երբ սովը սարսափելի չափեր էր ընդունել։ Սպահանում մի պարսկուհի պառաւ մորթում է մի հայ երեխայի և նրա մսով յագեցնում իր դաղանային քաղցը։

«Կուսազրութիւն»։ Այստեղ նկարագրուած է մի այլ չարիք։ Պարսկաստանում մի այսպիսի սովորութիւն կար։ Երբ նահանգի կուսակալը կամենում էր այցելել Շահին, իր հետ տանում էր ընծայ մի գեղեցիկ աղջիկ։ Ներկայ դէպքում զոհը մի նշանած հայ աղջիկ է։

«Մի օրավար հող». Պատկերը բնորոշում է խաների կամայականութիւնը հայերի վերաբերմամբ։ Բէկի յանդուգն որդին իրանց այգում աշխատող հայ կանանցից ընտրում է գեղեցիկ Սօնային և փախցնում։ Քաջարի կինը սպանում է պարսկին և իր երեխայի հետ պատսպարւում հօր տանը։ Այստեղ նրանց կալանաւորում են։

«Գեղեցիկ Վարթիկ». Այստեղ գրեթէ միևնոյն դէպքն է պատահում։ Գիւղացի Հայրապետի ընտանիքը ձրի մշակութիւն էր անում խանի այգում։ Խանի ստահակ որդին առևանգում է սիրուն Վարթիկին։ Բայց քաջ աղջիկը հերոսանում է. նրա խէնջալը խլելով՝ վերջ է տալիս կեանքին և փրկում է իր պատիւը։

«Անբախտ Հոլփսիմէ». Հետաքրքրական է նրանով, որ ցոյց է տալիս, թէ ինչպիսի անտանելի կարգեր էին տիրում պարսից բանտերում, և թէ կաշառքով ինչեր կարելի էր անել։

Բաֆֆին նկարագրում է պարսիկների կեանքը հետևեալ պատմուածքների մէջ. «Բիբի Շարաբանի», «Խազ-փուշ» և «Հարեմ»։

«Բիբի Շարաբանին» մի պատմուածք է արևապաշտների (գաբր) կեանքից։ Պատմողը մի մոգ է, կիսամերկ ծերունի, որ իր գրի մէջ նստած՝ շարունակ կարդում է Զէնդ-Աւեստա սուրբ գիրքը։

«Խազ փուշը» թէև տպուած է երկրորդ շրջանում, 1886 թ. «Արձագանքում», բայց իր բովանդակութեամբ մօտենում է պարսկական պատկերների սերիային, ուստի այժմ և էթ կիսօսենք նրա մասին, և փոքր ինչ աւելի երկար, որովհետև այդ գրուածքը վերոյիշեալ պատմուածքների շարքում կարելի է համարել լաւագոյնը։

Հեղինակը հետևեալ տեղեկութիւններն է տալիս խազփուշների մասին. «Թէհրանում կան թշուառներ, որոնց անուանում են խազ-փուշ (սամոյրենի հագնող)։ Այդ թանկագին մորթին կրում են պարսից ազնուականները կամ շատ հարուստները միայն։ Իսկ աղքատների մի յայտնի հասարակութիւն կայ, որ ոչինչ հագուստ չունի, բացի ցնցոտիներից։ «Խազ-փուշ» կոչելը մի դառն ծաղր է դէպի նրանց վերին աստիճանի թշուառութիւնը։ Խազփուշները իրանք ևս մի առանձին պարծանքով այդ անունով են կոչում ի-

ընց մերկանդամ հասարակութիւնը։ Նրանք ապրում են մուրալով, հագնում են ցնցոտիներ, համարեա կիսամերկ, նոյն իսկ ձմեռուայ սառնամանիքներին քնում են մեծ մասամբ բաղնիքների տաք մոխրակոյտերի մօտ։ Խազփուշները սրամիտ են լինում և սաստիկ հեգնող։ Կեանքի դառնութիւնը նրանց փիլիսոփայ է դարձրել, իսկ անհոգ, ազատ կեանքը—բանաստեղծ... Խազփուշները ազատամիտ են, ճշմարտախօս և գիտեն աներկիւղ յանդիմանել թէ մեծի և թէ փոքրի և թէ նոյն իսկ թագաւորների թերութիւնները։ Նրանց վրէժը շատ անգամ արտայայտւում է նրանով, որ այս կամ այն անձի դէմ յօրինում են ծաղրական երգեր, որոնք շուտով տարածւում են բերանից բերան անցնելով»։

«Խազ-փուշի» բովանդակութիւնը հետևեալն է։ Մի տարի Թէհրանում սաստիկ սով էր տիրում։ Նոյն իսկ փող ունեցողները դժւարանում էին հաց ճարել, ուր մնաց խազփուշների նման աղքատները։ Ցորենավաճառները թագցնում էին իրանց ամբարների ցորենը, որպէս զի յետոյ թանգ վաճառեն։ Նրանք պաշտպանութիւն էին գտնում շուկայի վերահսկիչներից, որոնք այդպիսով նպաստում էին սովի սաստկանալուն։ Շահի մերձաւորները գաղտնի էին պահում նրանից ժողովրդի ազէտալի դրութիւնը։ Եւ ահա խազփուշների մի ահագին, քաղցած բազմութիւն դրոհ է տալիս ցորենավաճառի տան վրայ, սպանում է տիրոջը, նրա դիակի վրայ ազիւռներից բլուր է կանգնեցնում։ Ամբարների դռները խորտակւում են խուժանի առաջ, և ցորենը կողոպտւում է։ Նոյնպիսի վրէժ են առնում և կաշառակեր վերահսկիչներից։ Հետևեալ օրը պարսիկների կիւրակին էր (ուրբաթ)։ Շահը, ըստ սովորութեան, իր կանանցով և շքախմբով պիտի գնար մօտակայ ուխտատեղին աղօթելու։ Երբ նա ձի հեծած՝ անցնում էր փողոցով, խազփուշների բազմութեան հոսանքը կանգ է առնում նրա առաջ ճանապարհի վրայ։ Շահը, որ միշտ ուշադիր էր դէպի այդ թշւառ հասարակութիւնը, ակնարկում է սենեկապետներից մէկին, որ նրանց գոհացնէ։ Այդ ժամանակ մի երիտասարդ խազփուշ սկսում է համարձակ պատմել խազփուշների կատարած ոճիրները և սպասում է Շահի դատաստանին։ Բայց արդարադատ Շահը խազփուշներին ճանաչում է անմեղ և խոստանում է պատժել յանցաւորներին։

Հետաքրքրական սիւժետ, դրամատիզմ, յուսահատ, քաղցած խուժանի սարսափելի վրէժը կեղեքիչներից, Շահի մեծահոգութիւնը և արդար դատաստանը—այս բոլորը նկարագրւած է տաղանդաւոր գրչով։

«Հարևանը» երրորդ գրւածքն է, որի նիւթը վերցրած է պարսկական կեանքից։

Այստեղ հանդէս է գալիս Արևելքը իր մեղկութեամբ և հեշտասէր բարքերով, բոմանտիկական լուսընկայ գիշերներով և սոխակների դայլայլիկներով, երկրային հիւրիներով, որոնց սրտերը հարեմի անմատչելի պարիսպների ետև տրոփում են սիրուց, որի առարկան դրսի աշխարհումն է։

Բաֆֆին նկարագրում է Թէհրանի Շահդաղէի հոյակապ ապարանքը իր գեղեցիկ պարտէզներով՝ հովանաւորւած մշտականաչ ծառերով և ծաղիկներով, որոնց մէջ թագաւորում է վարդը. այս ու այն կողմում ցայտուն շատրւաններ և վճիտ աւազաններ։ Այդ աւազանների մէջ վաղորդեան պահուն և երեկոյեան վերջալուսին լողանում և զարճանում են մերկացած կանայք, որոնք նման էին յաւերժահաց-

բանց մերկանդամ հասարակութիւնը։ Նրանք ապրում են մուրալով, հաղնում են ցնցոտիներ, համարեա կիսամերկ, նոյն իսկ ձմեռայ սառնամանիքներին քնում են մեծ մասամբ բաղնիքների տաք մոխրակոյտերի մօտ։ Խազփուշները սրամիտ են լինում և սաստիկ հեգնող։ Կեանքի դառնութիւնը նրանց փիլիսոփայ է դարձրել, իսկ անհոգ, ազատ կեանքը—բանաստեղծ... Խազփուշները ազատամիտ են, ճշմարտախօս և գիտեն աներկիւղ յանդիմանել թէ մեծի և թէ փոքրի և թէ նոյն իսկ թագաւորների թերութիւնները։ Նրանց վրէժը շատ անգամ արտայայտւում է նրանով, որ այս կամ այն անձի դէմ յօրինում են ծաղրական երգեր, որոնք շուտով տարածւում են բերանից բերան անցնելով»։

«Խազ-փուշի» բովանդակութիւնը հետևեալն է։ Մի տարի Թէհրանում սաստիկ սով էր տիրում։ Նոյն իսկ փող ունեցողները դժւարանում էին հաց ճարել, ուր մնաց խազփուշների նման աղքատները։ Ցորենավաճառները թագցնում էին իրանց ամբարների ցորենը, որպէս զի յետոյ թանգ վաճառեն։ Նրանք պաշտպանութիւն էին գտնում շուկայի վերահսկիչներից, որոնք այդպիսով նպաստում էին սովի սաստկանալուն։ Շահի մերձաւորները գաղտնի էին պահում նրանից ժողովրդի աղէտալի դրութիւնը։ Եւ ահա խազփուշների մի ահագին, քաղցած բազմութիւն գրոհ է տալիս ցորենավաճառի տան վրայ, սպանում է տիրոջը, նրա դիակի վրայ ազիւսներից բլուր է կանգնեցնում։ Ամբարների դռները խորտակւում են խուժանի առաջ, և ցորենը կողոպտւում է։ Նոյնպիսի վրէժ են առնում և կաշառակեր վերահսկիչներից։ Հետևեալ օրը պարսիկների կիւրակին էր (ուրբաթ)։ Շահը, ըստ սովորութեան, իր կանանցով և շքախմբով պիտի գնար մօտակայ ուխտատեղին աղօթելու։ Երբ նա ձի հեծած՝ անցնում էր փողոցով, խազփուշների բազմութեան հոսանքը կանգ է առնում նրա առաջ ճանապարհի վրայ։ Շահը, որ միշտ ուշադիր էր դէպի այդ թշւառ հասարակութիւնը, ակնարկում է սենեկապետներից մէկին, որ նրանց գոհացնէ։ Այդ ժամանակ մի երիտասարդ խազփուշ սկսում է համարձակ պատմել խազփուշների կատարած ոճիրները և սպասում է Շահի դատաստանին։ Բայց արդարադատ Շահը խազփուշներին ճանաչում է անմեղ և խոստանում է պատժել յանցաւորներին։

Հետաքրքրական սիւժետ, դրամատիզմ, յուսահատ, քաղցած խուժանի սարսափելի վրէժը կեղեքիչներից, Շահի մեծահոգութիւնը և արդար դատաստանը—այս բոլորը նկարագրւած է տաղանդաւոր գրչով։

«Հարևանը» երրորդ գրւածքն է, որի նիւթը վերցրած է պարսկական կեանքից։

Այստեղ հանդէս է գալիս Արևելքը իր մեղկութեամբ և հեշտասէր բարքերով, ռոմանտիկական լուսնկայ գիշերներով և սոխակների գայլայլիկներով, երկրային հիւրիներով, որոնց սրտերը հարեմի անմատչելի պարիսպների ետև տրոփում են սիրուց, որի առարկան դրսի աշխարհումն է։

Բաֆֆին նկարագրում է Թէհրանի Շահզադէի հոյակապ ապարանքը իր գեղեցիկ պարտէզներով՝ հովանաւորւած մշտականաչ ծառերով և ծաղիկներով, որոնց մէջ թագաւորում է վարդը. այս ու այն կողմում ցայտուն շատրաններ և վճիտ աւազաններ։ Այդ աւազանների մէջ վաղորդեան պահուն և երեկոյեան վերջալուսին լողանում և զարճանում են մերկացած կանայք, որոնք նման էին յաւերժահարս-

ների։ Հարեմի իշխանը միայնակ նստած է վերնատնում, լուսամուտի հանդէպ, ղէյլանի ծխի անուշ արբեցութեան մէջ, իր փառքի բարձրութիւնից նայում է այդ կախարդական տեսարանին։

Հարեմում տիրում էր խիստ կարգապահութիւն. կանայք գտնւում էին աչալուրջ ներքինիների հսկողութեան ներքոյ։ Անհաւատարմութիւնը պատժւում էր ամենամեծ խստութեամբ։

Չնայած բոլոր զգուշութիւններին, որոնցով շրջապատւած էր այդ երկրային դրախտը, այստեղ ևս բորբոքւում էին կրքեր, վառւում էր արևելեան կրակոտ սէր, տեղի էին ունենում տարփածուների գաղտնի տեսութիւններ, որոնց վերջաբանը լինում էր կամ երջանկութիւն կամ եղերական վախճան։

«Հարեմը» լի է ռոմանտիկական արկածներով։ Շահզադէի կանանոցի զարդն է Զէյնաբ խանումը, որը սակայն հայ ծնողների զաւակ է և մկրտութեան անունը՝ Ալմաստ։ Նրա հայրենիքն է Գիւրջիստանի թագաւորանիստ քաղաքը՝ Թիֆլիս։ Դեռ ևս օրօրոցում ծնողները նշանել էին նրան մի սքանչելի դէմքով պատանու՝ Միխակի հետ։ Նրանց սէրը տաք էր և վառվռուն։ Բայց մի դժբախտ դէպք նրանց անջատում է երկար ժամանակով. նրանք երկուսն էլ գերի են ընկնում պարսից զօրքի ձեռքը, երբ Աղա-Մահմեդ-խանը գրոհ տւեց Թիֆլիսի վրայ, կրակեց քաղաքը, կոտորեց և կողոպտեց բնակիչներին և ահագին քանակութեամբ գերիներ—մանկահասակ աղջիկներ և պատանիներ—քշեց Պարսկաստան։ Ալմաստը բաժին է ընկնում թագաւորի գլխաւոր զօրապետ Շահզադէին։

Չնայած, որ Ալմաստը ապրում էր համարեա դրախտում, միշտ տխուր էր և մաշւում էր իր անմոռանալի Միխակի սիրոյ կարօտից։ Մի քանի տարեայ անջատումից յետոյ բախտը հանդիպեցնում է սիրահարներին—Շահզադէի այգում։ Միխակը նոյնպէս Աղա Մահմեդ-խանի գերիներից էր, նրան ևս մահմեդական էին դարձրել և անունը դրել Քէրիմ-բէկ։ Այժմ նա կառավարիչ էր քաղաքի զօրապետ Սարա-Ասքերի կալւածների և նշանւած էր նրա աղջկայ հետ։

Ալմաստը և Միխակը տեսակցելով այգում, խորին կարօտով գրկախառնւում են, և իրանց ազատութեան համար ծրագիր կազմում։ Ալմաստը իր նպատակին ծառայեցնում է իր խափշիկին և նրա սիրեկանին, նրանց երկուսին էլ խոստանում է ազատութիւն։ Գծագրւած ծրագիրը գեղեցիկ կերպով իրագործւում է։ Միխակը և Ալմաստը ազատւում են գերութիւնից և զանազան արկածներով հասնում են իրանց քաղցր հայրենիքը։

Այժմ ծանօթանանք այն պատմւածքների հետ, որոնց մէջ դուրս են բերւած Թիֆլիսեցոյ բարքերը։ Դրանք են՝ «Ուխտեալ միանձնուհի», «Անմեղ վաճառք», «Տնային փեսայ»։

«Ուխտեալ միանձնուհի».

Միանձնուհին մի կենսուրախ, չնաշխարհիկ էակ էր, որ ծնւած էր երջանկութեան համար։ Ներշնչւած ուսուցչի ջերմ սիրով, նա տենչում էր միանալ և ձուլւել նրա հետ։ Բայց անագորոյն ծնողները նրան փակում են կուսանոցի մռայլ խցի մէջ, ուր նա իր սիրեցեալի կարօտից հալ ու մաշ լինելով՝ թառամում է, ինչպէս ծաղիկ՝ զրկւած արևից և լոյսից։ Այդ հոյակապ կեանքը խորտակում են անգութ ծնողները։ Հայրը նախկին հասարակ ծառայող էր, գողերի և աւազակների ընկեր, հարստացել էր կաշառքով, վաշխառութեամբ և աղքատների վերջին կոպէկները

խլելով։ Նրա կինը նշանաւոր գերդաստանների շրջանում երևելի միջնորդի դեր էր կատարում և առատ հունձեր ժողովում։ Երկուսն էլ կեղծաւոր փարիսեցիներ էին։ Մայրը ծննդաբերութեան դժուար րոպէին ուխտ է անում Աստծուն՝ եթէ ծնունդը արու լինի, նրան մի վանքում նուիրել ճգնաւորութեան, իսկ եթէ աղջիկ, ընծայել կուսանոցին, որ սուրբ Աստուածածնի աղախինը դառնայ։ Զնայած այդ ամուսինների կեղտոտ անցեալին, այնուամենայնիւ նրանք բարեպաշտ քրիստոնեաների համբաւ ունէին, որովհետև իրանց միակ աղջկան նուիրեցին Աստծուն և, բացի այդ, սրբութեամբ կատարում էին արտաքին ծէսերը՝ պաս, ծոմապահութիւն, աղօթք։ Սակայն շատերը չը գիտէին, որ նրանց արտաքին բարեպաշտութեան քօղի ներքոյ ինչպիսի փարիսեցիութիւն էր թաղնուած. չգիտէին, որ նրանք խլում էին աղքատների վերջին կոպէկը և այդ փողով մոմեր վառում սուրբ պատկերների առաջ։

Քարասիրտ ծնողներին յայտնի էր իրանց դատեր հիւանդութեան պատճառը, բայց դա նրանց գութը չէր շարժում։ Բժիշկը նրանց առաջարկում է հիւանդ աղջկան հեռացնել կուսանոցից, իբրև նրա փրկութեան միակ միջոց, այդ ևս չէ ազդում, և թշուառ աղջիկը մեռնում է իր պաշտելի ուսուցչի գրկում։

«Անմեղ վաճառք»-ի մէջ Բաֆֆին ներկայացնում է որոշ դասակարգի բարոյական պատկերը յանձին բօշա Առաքելի, որ քաղաքի ամենահարուստներից էր, բայց իր բնաւորութեամբ փուչ և անպիտան մարդ էր։ Իր տները և կարողութիւնը ձեռք էր բերել կեղծ սնանկութեամբ և վաշխառուական տոկոսներով։ Իր զեղխ կեանքի համար ոչինչ չէր խնայում, իսկ բարեգործութիւնը նրան օտար էր։

Աղքատի թաղման համար դիմողները մերժում են ստանում։ Ծառային արտաքսում և ոռճիկը կտրում է մի առարկայ կոտրելու համար։ Երեխայի ձեռքից խլում է փողոցում հաւաքած փայտի կտորները, որով նա պիտի տաքացնէր իրանց ցուրտ խրճիթը։

Միևնոյն ժամանակ նա բռնակալ էր իր գերդաստանում։ Մի կին ունէր նա, որ իր առաքինութեամբ ամենքից յարգւած էր. միակ անձը, որ նրան ատում և հալածում էր, նրա անարժան ամուսինն էր։ Բայց այդ բոլորը չէ։ Բօշա Առաքելը վերին աստիճանի վաւաշոտ մարդ էր և իր հեշտասիրութեան զոհում է մի մանկահասակ կոյս։

Գարշելի կաւատի միջոցով հանում է իր պիղծ նպատակին, բայց այդպիսով կործանում է մի ամբողջ ընտանիք։ Հիւանդ մայրը մեռնում է խղճի խայթոցից, որ ստիպւած ծայրայեղ կարիքից՝ վաճառեց անմեղ աղջկան. աղջիկը վերջ է տալիս կեանքին Կուր գետում. անտէր մանկանը սպասում էր կորուստ։

Բաֆֆին կարծես ուզում է ասել իր այս պատմւածքով, թէ ահա ուր է հասցնում մեծ հարստութիւնը, եթէ նա գտնւում է փուչ մարդկանց ձեռքում, և ուր ծայրայեղ կարիքը, որի ճիրանների մէջ տանջւում են խեղճերը։ Երկուսն էլ տանում են դէպի անբարոյականութիւն։

Այստեղ Բաֆֆին դուրս է բերում իրականութիւնը իր բոլոր մերկութեամբ և որոշ մտքով Զօլայի հետևող է։ Նոյն ոգով են գրւած և երկու ուրիշ վէպեր՝ «Զահրումար» և «Մինն այսպէս, միւսը այնպէս», որոնց մէջ հեղինակը ներկայացնում է Թիֆլիսի հասարակութեան այն միջավայրը, ուր տիրում է զեղխութիւն, զարգութիւնների անյագ ծարաւ, շռայլ կենցաղ, օտարամոլութիւն։ Սակայն դը-

բանց վրայ մենք աւելորդ ենք համարում երկար կանգ առնել, քանի որ ինքը հեղինակն էլ իր կենդանութեան օրով արժանի չհամարեց տպել. «Զարհուսմարը» լոյս տեսաւ նրա մահից յետոյ։ Զարմէ խօսել և այն գրուածքների մասին, որոնք անձնական կրքով տոգորուած՝ մի մի պարսաւագիրներ են։ Օրինակ, «Քաւատոր», ուր նա ծաղրում է «Մեղու Հայաստանի» խմբագրին և նրա աշխատակիցներին, «Թաթոսները», որի մէջ նա տալիս է հայ ուսանողութեան միակողմանի նկարագիրը, «Ես ֆէլիէտօնիստ չեմ», ուր նա իր հին հաշիւներն է տեսնում ազուլեցոյ հետ։ Այս բոլորը աւելորդ անդամ ապացուցում է, թէ որքան ուժեղ էր կիրքը նոյն իսկ մեր աչքի ընկնող հեղինակների մէջ։

Ամփոփելով առաջին շրջանը, մենք գալիս ենք հետևեալ եզրակացութեան։ Բաֆֆին այդ տարիներում իրականութիւնը միացնում էր բոմանտիկական ուղղութեան հետ։ Այդ ժամանակ նա ծառայում էր աւելի գեղարուեստին, քան թէ իր սեփական միտումներին։ Միևնոյն ժամանակ նա յայտնագործում էր արդէն իր տաղանդի նշանները՝ հարուստ բովանդակութիւն, նիւթերի գեղարուեստական մշակութիւն և մի լեզու, որ թէև սկզբում ներկայացնում էր խառնուրդ զանազան ձևերի, բայց հետզհետէ կոկելով դարձաւ մի գեղեցիկ վիպական լեզու։

Երկրորդ շրջան.

Այժմ Բաֆֆին թողնում է մանր պատմուածքները և սկսում է գրել խոշոր վէպեր։ Միևնոյն ժամանակ մտցնում է նոր, տենդենցիոզ ուղղութիւն, որ

այնուհետև սկսում է տիրապետել։ Այժմ նրա վէպերի գլխաւոր շարժառիթը կազմում են Ռուս-տաճկական պատերազմի անցքերը, որոնք առաջ բերեցին Հայոց հարցը։ 1878 թ. մի նշանաւոր տարեթիւ էր, որովհետև առաջին անգամ ամենացայտուն կերպով հրապարակ հանուեց ազգային խնդիրը և իր վրայ դարձրեց եւրոպացոյ ուշադրութիւնը։ Ինքն ըստ ինքեան ծագում էր հարց՝ մինչև ե՞րբ պիտի շարունակուի հայ ազգի տառապանքը և ի՞նչ կարելի էր անել նրա թշուառ կացութեանը վերջ տալու համար։

Ահա ի՞նչպիսի հարցեր դարձան Բաֆֆու մտատանջութեան առարկայ և ամբողջովին յափշտակեցին նրա էութիւնը։

Բաֆֆին քաջ ծանօթ էր Հայաստանի անցեալին և ներկայ վիճակին. գիտէր նրա թշուառութեան բուն պատճառները։ Այժմ նրան զբաղեցնում էր մի կարևոր խնդիր. ի՞նչ միջոցներով կարելի էր ստեղծել ազգի համար ապահովութիւն և ինքնակրթութեան նպաստաւոր պայմաններ։ Դրանց պատասխանը Բաֆֆին տալիս է մի շարք աշխատութիւնների մէջ։

«Ջալալէդդին».

«Ջալալէդդինով» սկսւում է այն տրիլոգիան, որ հռչակեց Բաֆֆու անունը։

Վէպի հիմքում դրուած են մի քանի միջադէպեր վերջին Ռուս-տաճկական պատերազմից-Պարսկաստանի սահմանակից Աղբակ գաւառում տեղի ունեցած բարբարոսութիւնները, որոնց գրդիչն էր քրդերի կրօնապետ Շեյխ-Իբադուլլահը, իսկ կատար ածողը՝ Շեյխ-Ջալալէդդինը, որ մի կատաղի բազմութեան

հոգևոր պետ և զօրավար էր։ Աղբակի դաշտերից մէկում՝ իր բանակի առաջ՝ թամքերից կազմուած ամբիոնի վրայ բարձրանալով և կարմիր դրօշակը բռնած, նա սկսում է իր քաջալերական, զրգռիչ ճառը, որը ելեկտրական ուժի ներգործութիւն է ունենում տասնեակ հազար զինուած խուժանի վրայ։ Մահմեդի և նրա յաջորդների անունով օրհնելով իսլամի հաւատացեալներին, նա կոչ է անում դէպի պատերազմ կրօնի թշնամիների դէմ։ «Նրանց կայքը, կեանքը, ընտանիքը, և ամեն ինչ, որ պատկանում է անհաւատներին, Աստուած մատնում է ձեր ձեռքը։ Յափշտակեցէք, կողոպտեցէք, այրեցէք և կոտորեցէք, որքանով կլիանայ ձեր սիրտը։ Աւարը և իր կրօնի թշնամիների արիւնը Աստուած հալալ է անում սուրբ պատերազմի զինուորներին»։ Քաջալերելով զօրքին, Շէյխը միևնոյն ժամանակ խոստանում էր առատ վարձատրութիւն՝ ընկածներին Մահմեդի խոստացած դրախտը, կենդանի մնացածներին՝ աւարից հարուստ բաժին։ Մոլեռանդ քարոզչի ազդեցութեան տակ բորբոքւում են հօրդայի գազանային բնազդները և քրիստոնեաների արեան ծարաւը։

Մի այդպիսի կատաղի, անհամբեր բազմութիւն Շէյխ-Զալալէդդինի առաջնորդութեամբ գրոհ է տալիս Աղբակի գիւղերի վրայ։ Փոթորկի նման անցնելով մի ծայրից մինչև միւսը, նրանք թողնում են իրանց ետևից արիւն և աւեր։ Զալալէդդինի արշաւանքը Բաֆֆին համեմատում է մի սարսափելի հեղեղի հետ, որ մի անգամով չէ վերջանում, որ գալիս է, յետոյ ընդհատւում է, և կրկին կատաղի հեղեղը սաստկանում է նոր և նոր յորձանքով։

Աննկարագրելի են քրդերի բարբարոսութիւնները։ Քսան և չորս հայ գիւղեր պլպլում էին բոցերի

մէջ. ամեն տեղ սփռում էին կոտորած և աւեր։ Մոլեռանդութիւնը դրանով չէր բաւականանում։ Նրանք պղծում էին քրիստոնէական սրբութիւնները և կողոպտում թանկագին անօթները։ Բայց այն, ինչ որ տեղի ունեցաւ Բարդուղիմէոս առաքեալի վանքում, վեր է ամեն մի նկարագրութիւնից։ «Գեղեցիկ տաճարը, որ Լուսաւորչի դարից էր հասել, բոլորովին մերկացել էր իր փառահեղ զարդարանքից. նրա հոյակապ կամարների ներքոյ տիրում էր դատարկութիւն միայն. ոչ խաչեր, ոչ զրքեր, ոչ պատկերներ, ոչ ջահեր, ոչինչ չէր երևում. սուրբ սեղանը ներկայացնում էր սպանդանոցի նման մի բան, որ շաղախուած էր արիւնով... Տաճարի մի կողմում կապած են ձիաներ, միւս կողմում բորբոքւում է խարոյկը։ Կրբակի մէջ քրդերը տաքացնում են շամփուրներ և պղնձէ թասեր։ Կարմրած շամփուրներով դահիճները խաչաձև դաղում էին գերիների կուրծքը և մարմնի միւս մասերը, որով դժոխային տանջանքներ պատճառում նրանց, խոր հառաչանքներ խլելով նրանց կրծքից. պղնձէ թասերով պսակում են քահանայի գլուխը»։ Այդ վայրագութիւնից առաջ նրանք սպանել էին Բարդուղիմէոսի վանահայր Եղիազարին, որը ժողովրդի կողմից գնացել էր Շէյխի բանակը գթութիւն հայցելու։

Այն ժողովուրդը, որի գլխին կատարւում էին այդ բարբարոսութիւնները, առանց դիմադրութեան, ոչխարների պէս խոնարհում էր իր գլուխը քրդական սրի տակ. նրա միակ զէնքը լացն էր և աղաչանքը, բայց այդ ևս չէր օգնում։ Ամենքը զգում էին իրանց անզօր կուելու արիւնռուշտ թշնամու դէմ։

Սակայն Բաֆֆին չէր կարող հաշտուել այդ սարսափելի իրականութեան հետ։ Նրա հոգին վրդովւում

էր, տեսնելով, որ մի ամբողջ ժողովուրդ նահատակ-
ւում է գազանաբարոյ ցեղերի ձեռքով՝ անձայն և
անբարբառ։ Եւ ահա նա վճռում է՝ գոնէ իր երևա-
կայութեան մէջ՝ աւազակային խմբերի դէմ կանգնե-
ցնել մի ընդդիմադիր ոյժ յանձին Սարհատի։ Եւ այս-
պիսով ծնունդ է առնում առաջին հերոսը Բաֆֆու
գաղափարական գործիչների շարքում։

Սարհատ

Սարհատը դեռ ևս մանկական հասակում աչքի
էր ընկնում իր ըմբոստ բնաւորութեամբ, որի համար
և արտաքսւեց հայրենական տնից. հայրենակիցների
մէջ ևս ընդունելութիւն չգտաւ։ Ուստի և ինքն էլ
երես դարձրեց ամենքից, գնաց դարձաւ նախ արկա-
ծախնդիր թափառական, իսկ յետոյ աւազակ, որպէս
զի այդպիսով իր վրէժն առնէ վատթար մարդկան-
ցից։ Տասը տարի հեռացած էր հայրենիքից։ Նա իր
ձեռքի տակ ունէր մի խումբ, որ բաղկացած էր
տասներկու հոգուց։ Նրանց մէջ կային սասունցիք,
զէյթունցիք, շատախեցիք և դիարբէքիրցիք։ Նրանց
մէջ կար մի քահանայ (Դալի-Բաբա) և մի վարժա-
պետ (Քիթաբ-Դալիսի)։ Սարհատի խումբը կազմւած
էր քրդի կերպարանքով և գործում էր քրդի ա-
նունով, որպէս զի հայերին վնաս չհասնի։ Երբ Սահ-
րատին հասաւ Ջալալէդդինի արշաւանքի լուրը, խ-
կոյն իր ընկերներով Դիարբէքիրից շտապեց դէպի
Աղբակ։ Նա եկաւ փրկելու ոչ իր հայրենիքը. ոչ, դա
իր ոյժից վեր էր։ Նա ինքն էլ սպասում էր գալիք
աղէտին, աչքի առաջ ունենալով հայի երկչոտու-
թիւնը։

Նա եկաւ փրկելու մէկի կեանքը։ Դա գեղեցիկ
Ասլին էր, նրա սիրուհին։ Եւ ահա նա իր քայլերն
ուղղում է դէպի հայրենի գիւղը։ Ճանապարհին նա
ականատես է զարհուրելի տեսարանների։ Ահա քուրդ

ձիաւորներ, որոնց նիզակներից կախւած էին սպան-
ւած կանանց պատառոտած շորերի ծուէները։ Ահա
կոտորածից փախչող ընտանիքներ։ Մի գիւղացի իր
կնոջ հետ. նա տանում է զրկումը սեղմած մի փոք-
րիկ երեխայ. արիւնը նրա ճակատից թափւում էր
երեսի վրայ, և այնտեղից կաթկաթում էր երեխայի
գլխին։ Նրա կողքին գնում էր կինը և ձեռքից բռնած
տանում էր մի փոքրիկ աղջիկ։ Ամուսինները բոլո-
րովին ուժասպառ՝ հազիւ կարողանում էին քայլել։
Բայց պիտի շտապեն, որ քրդի գնդակը չհասնի։
Սարհատի աչքի առաջ բացւում են նոր և նոր տե-
սարաններ։ Ահա հեռու՝ հորիզոնում պլպլում են հրը-
դեհւած գիւղեր, վերևում երկինքը շառագունել է
նրանց բոցից։ Միւս կողմից երևում են ձողերի վը-
րայ շամփրած մարմիններ։ Դրանք հայ հոգևորական-
ների մարմիններ են։

Սարհատը արդէն իր ծննդավայրումն է և կանգ-
նած է հայրենի տան առաջ, ուր նա թողել էր իր
ընտանիքը։ Այժմ այնտեղ գերեզմանային լռութիւն
էր տիրում։ Սակայն նրա ականջին հասնում է մի
խուլ մնքոց։ Շտապում է դէպի ձայնը—նրա առաջ
վիրաւոր հայրը։ Ծերունին ուզում է վերջին անգամ
սեղմել որդուն, բայց որդին քար էր կտրել, և լսւում
են միայն նրա անէծքները. «Հայր, դու արժանի ես
այդ վախճանին, որ դու ինքդ պատրաստեցիր. դու
միշտ քարոզում էիր հլու հպատակութիւն, այժմ վա-
յելիր քո սարկական քարոզի պտուղը»։

Իր ծննդավայրին հասած աղէտների մանրամաս-
նութիւնները նա իմանում է քուրդ հովից։ Մատա-
ին յաջողւում է կոտորածից ազատել Սարհատի եղ-
բօրը և քոյրերին։ Այդ հաւատարիմ քուրդը դժւար
դէպքերում միշտ օգնութեան էր հասնում իր տիրոջը։

Վերջինս նրա միջոցով կանչում է ընկերներին Սախկալ-Թուլթանի մօտ, ուր անակնկալ յարձակումով ջարդ են տալիս քրդերին և հայ գերիներին ազատում։ Սարհատի խումբը երկրորդ յաղթանակը տանում է ս. Բարդուղիմէոս առաքեալի վանքում։ Նրա վերջին գործը Զալալէդդինի բանակի հետ էր, որ իջևանել էր Ղանլի-Դարա ձորում (Արիւնոտ ձոր)։ Այդ ժամանակ պատերազմը վերջացել էր. Զալալէդդինի զօրքից մնացել էին միայն խղճուկ բեկորներ։ Այժմ ևս քուրդ հովիւը օգնութեան է հասնում։ Սպանելով փաշայի սուրհանդակին, խլում է կարևոր նամակը և անձամբ հասցնում Շէյխին։ Այստեղ իմանում է, որ Սարհատի եղբայրը, քոյրերը և Ասլին գտնուում են Շէյխի բանակում։

Երբ Սարհատն իր խմբով մօտենում է Ղանլի-Դարային, նրանց առաջ ներկայանում է հետևեալ տեսարանը։ Մի կողմում թմբուկներ և զուռնաներ էին ածում, միւս կողմում պար էին ածում մերկացրած կանանց։ Ողորմելի արարածները յանձն էին առել այդ խայտառակ պարահանդէսը իրանց գերիչների ստիպմամբ։ Ամօթը, անպատուութիւնը նրանց հասցրել էր կատաղի խելագարութեան։ Սակայն կանանց սևով անարգած պատիւը և տանջանքները չէին մեղմացնում, այլ աւելի բորբոքում էին գերիչների վայրենի կրքերը։

Այդ քսմնելի տեսարանին ականատես էր Սարհատը իր ընկերներով։ Ջնայած, որ կռիւը Շէյխի բանակի հետ էր և Ասլու ու քոյրերի կեանքը ենթարկուում էր վտանգի, Սարհատը իր անձնականը զոհում է և յանուն անպատուած կանանց հրամայում է վրայ տալ։ Անակնկալ յարձակումը տեղի է ունենում կայծակի արագութեամբ։ Անմիջապէս հանդչում

են ջահերը, և ընդհանուր խաւարի մէջ սկսւում է սարսափելի կոտորած։ Քրդերը ահագին թւով զոհեր են տալիս. բայց և այնպէս Սարհատի խումբն էլ գրեթէ ոչնչանում է։ Ընկերներից մնում են երեքը, այն էլ վիրաւոր։ Սարհատը ևս ծանր վիրաւորուում է, բայց նրան իր սիրելիների հետ ազատում է Մըսոցն։ Հովվի վրանում, որ գտնուում էր Սիփան լեռան ստորոտում, մի փոքրիկ վտակի կանաչազարդ եզերքին, շրջապատուած իր հարազատների հոգացութեամբ՝ մեռնում է քաջ հերոսը։

«Զալալէդդինի» հիմքում դրուած է պատմական իրողութիւն։ Շէյխ-Զալալէդդինի արշաւանքը, նրա հրոսակների ասպատակութիւնները և բոլոր վայրագութիւնը, միւս կողմից՝ հայերի կրած տառապանքը, մարտիրոսութիւնը և հազարաւոր փախստականների դաղթը—այդ բոլորը վերցրած է իրականութիւնից։ Բայց դրանից դուրս այստեղ կայ շատ բան, որ ծընունդ է առել հեղինակի երևակայութեան մէջ։ Որքան յայտնի է, Զալալէդդինի արշաւանքի ժամանակ հայերի կողմից ոչ մի դիմադրութիւն չէ եղած, և ուրեմն Սարհատն իր ընկերներով և նրանց կռիւները քրդերի և Շէյխի բանակի հետ տեղի չեն ունեցել։ Սակայն Բաֆֆին ցանկալի և անհրաժեշտ էր համարում Սարհատի նման հերոսներ, և ահա իր գաղափարները մարմնացնելու և իրական դարձնելու համար, ստեղծում է իդէալական անձնաւորութիւններ։ Սարհատը հանդիսանում է որպէս հեղինակի մտքերի թարգման և որպէս նախատիպ մի շարք գաղափարական հերոսների, որոնց հանդիպում ենք «Խենթի» և «Կայծերի» մէջ։

«Խենթ».

Առաջին էջերում արդէն մենք ներկայ ենք Ռուս-թուրքական պատերազմի մի հետաքրքրական մոմենտին, երբ Բայազէտը պաշարած էր թուրքաց զօրքով և խառնիճաղանճ բազմութեամբ։ Քաղաքը դարձել էր գեհենն, հայոց թաղերում տեղի էր ունենում կոտորած և կողոպուտ։ Միջնաբերդում ամրացել էին սակաւաթիւ զինուորներ և նոյնքան հայ-թուրք կամաւորներ։ Դրութիւնը անտանելի էր. իւրաքանչիւր տակառ ջուրը մի քանի զոհեր էր խլում։ Միակ ելքն էր՝ դիմել դրսի օգնութեան։ Զինուորական խորհուրդը վճռում է բերդի անել դրութեան մասին տեղեկացնել գեներալ Տէր-Ղուկասովին։ Այդ վտանգաւոր յանձնարարութիւնը կատարում է մի քաջ երիտասարդ, որ քրդի կերպարանքով և խենթի դեր կատարելով՝ յաջողութեամբ անցնում է թշնամու բանակը։ Իր առաքելութիւնը կատարելուց յետոյ գնում է մէկի կեանքը փրկելու։ Այդ հերոսը Վարդանն էր, որ յայտնի էր «Խենթ» անունով, իսկ նա, որի կեանքը փրկել էր ուզում, տանուտէր Խաչօի զեղեցիկ դուստր Լալան էր։ Պատերազմից առաջ Վարդանը ապրում էր Խաչօի կեցած գիւղում և վայելում էր Լալայի սէրը։ Ոչինչ չէր կարող խորտակել նրանց սէրը, բացի միայն տարերային ոյժից։

Իր առաքելութիւնը յաջողութեամբ պսակելով, Վարդանը գնում է այն գիւղը, ուր ապրում էր նրա ընտրեալը։ Բայց նրա առջև բացւում է մի տխուր տեսարան։ Այն հովիտը, ուր մի քանի շաբաթ առաջ եռում էր ուրախ կեանք, այժմ դարձել էր «սգաւոր անապատ»։

Խաչօի քուրդ հովիւներից նա իմանում է կոտորածի մանրամասնութիւնները։ Երբ պատերազմը վերջացաւ և ռուսաց զօրքը յետ դարձաւ Ռուսաստան, Ալաշկերտը մնաց նորից Թիւրքիայի իշխանութեան ներքոյ և դարձաւ բարբարոսութիւնների ասպարէզ. ժողովրդի մի մասը կոտորուեց, միւս մասը գերի տարուեց, և հազարաւոր ընտանիքներ գաղթեցին Ռուսաստան։ Նրանց մէջ կարող էր լինել և Խաչօի ընտանիքը։ Եւ ահա Վարդանը Վաղարշապատումն է, որտեղում է իր թանկագին կորուստը։ Որոնում է, բայց գտնում է միայն նրա թարմ հողագամբարանը։ Մերթ դրկելով, մերթ համբուրելով այդ սրբավայրը՝ նա մրմնջում էր մի քաղցր անուն։ Եւ ահա սրտամորմոք և տանջւած՝ նա ընկղմւում է երազային աշխարհը։ Նրա աչքին երևում է Ալաշկերտը բոլորովին կերպարանափոխւած։ Աւերակ և անապատ դարձած գիւղը այժմ վերանորոգւած՝ մի դրախտ էր դարձել։ Ողորմելի գետնափոր խրճիթների տեղ՝ կառուցւած էին ձիւնի պէս սպիտակ քարաշէն տներ, շրջապատւած գեղեցիկ պարտէզներով։ Լայն և ուղիղ փողոցները հովանաւորւած էին մշտականաչ ծառերով, որոնց մօտով վազում էին բիւրեղի նման յստակ առուները։ Եւ այսպէս ամեն ինչ կրում էր զարգացած քաղաքակրթութեան դրոշմ։ Գիւղացոյց կենցաղը, սովորութիւնները, բարքերը, եկեղեցական արարողութիւնները, դպրոցական կրթութիւնը, ներքին կառավարութիւնը—բոլորը յիշեցնում էր եւրոպական բարեկիրթ վիճակ։ Այստեղ այժմ աշխատանքը օրհնւած էր, վաստակը չէր յափշտակւում անզութ հարստահարչի ձեռքով։ Նոյն իսկ քրդերի անունը մոռացտահարչի ձեռքով։ Նոյն իսկ քրդերի անունը մոռացուել էր և նրանք յիշատակւում էին միայն պատմու-

թեան մէջ, իբրև «երկաթէ դարի» բարբարոսներ։

Վարդանի երազը միևնոյն ժամանակ հեղինակի երազն է. վերանորոգուած Ալաշկերտը նրա իդեալական գիւղն է։

«Խենթի» կենցաղագրական արժանիքը

«Խենթի» մէջ ընթերցողը նախ և առաջ ծանօթանում է Ալաշկերտի հայ ժողովրդի հետ։ Բաֆֆին մեր առաջ ներկայացնում է հայ գիւղերից մէկը, որ աչքի էր ընկնում իր գեղեցիկ դիրքով, գտնւում էր հովտի մէջ, «ուր բնութիւնը չէր խնայած այն բոլոր նկարները, ինչ որ պէտք էին նրան գեղազարդելու համար»։ Գիւղի բոլոր տներից թէ իր մեծութեամբ և թէ իր հարստութեամբ որոշւում էր տանուտէր Խաչօի բնակարանը, ուր ապրում էր մի մեծ նահապետական ընտանիք՝ վեց ամուսնացած որդիներով, հարսներով, թոռներով։ «Խաչօն իր աչքի առջև տեսնում էր մի քանի սերունդ, որ ապրում էին միասին, որ կազմում էին մի փոքրիկ աշխարհ»։

Աստծոյ օրհնութիւնը անթիւ բարիքներ էր թափել այդ օջախի վրայ։ Այս տնից ամեն առաւօտ քշում էին դէպի նախիրը հարիւրի չափ կովեր, գոմէշներ, եզներ և ձիաներ. այս տանն էին պատկանում նաև հազարի չափ ոչխարներ։ Այս տանն էին պատկանում գեղեցիկ ջրաղացը, ձէթի գործարանը, ընդարձակ արօտատեղերը և վարելահողերը։ Ընտանիքի բոլոր անդամները, բացի մանուկներից, աշխատում էին, որի շնորհիւ տանուտէր Խաչօի ամբարները լիքն էին լինում ցորենով, խլորով, ձէթով և գինով։ Ամբողջ ընտանիքը ապրում էր նախնական պարզութեան մէջ, միևնոյն յարկի տակ և միևնոյն սեղանակում։ Այստեղ պատրաստում էին կերակուր, այստեղ ուտում և քնում էին։ Այստեղ խառնւած էին երեխաների հետ հորթեր, ուլեր և հաւեր։

Կատարեալ Նոյի տապան։

Տանուտէր Խաչօի տան բարիքը վայելում էր ոչ միայն բազմամարդ գերդաստանը, այլ նրա դռները բաց էին միշտ նաև հիւրերի առաջ։ Քրդերի ցեղապետ Ֆաթթահ-բէկը իր բազմաթիւ շքախմբով նրա մշտական հիւրն էր և միշտ վերադառնում էր թանկագին ընծաներով. մշտական հիւրերից էր և միւս հարստահարիչը, հռչակաւոր Թոմաս էֆենդին։ Բայց և այնպէս Խաչօի հարստութիւնը չէր սպառւում, և ամբարները դարձեալ լիքն էին։

Գիւղական դէմքեր. Տանուտէր Խաչօ.

Գիւղական դէմքերի մէջ աչքի է ընկնում տանուտէր Խաչօն, գերդաստանի նահապետը։ Նա իր անհամար հարստութիւնը դիզել էր իր սեփական և իր որդոց աշխատանքով։ Զառամեալ հասակում տակաւին առոյգ ծերունի էր և պահպանել էր իր առողջ դատողութիւնը։ Զավաղանց բարի, հիւրասէր գիւղացի էր, և սեղանը բաց էր ամենքի առաջ։ Նախանձախնդիր լինելով իր արժանապատուութեան, նա սակայն կարող անձանց առաջ ցոյց էր տալիս իր տարիքին ոչ այնքան վայել խոնարհութիւն և հլու հպատակութեամբ, անտարտունջ կատարում էր նրանց անարդար պահանջները։ Այդպէս էր վարւում, օրինակ, Ֆաթթահ-բէկի նման աւազակապետի և Թոմաս էֆենդու նման կեղեքիչի հետ։ Սակայն այդ չափազանց մեծ զգուշութիւնը, որ հասնում էր երկչոտութեան և որ ժողովուրդը համարում էր «խոհեմութիւն», իրօք տանուտէր Խաչօի բնածին յատկութիւնը չէր, այլ զարգացել էր նրա մէջ շնորհիւ այն հանգամանքի, որ միշտ կախւած է եղել ուժեղ անձերից, որոնք բացի իրանց քմահաճոյքից ուրիշ օրէնք չեն ճանաչում։ Այդ խոնարհութիւնը առաւելապէս մի քաղաքականութիւն էր, որ նրա ձեռքին ծառա-

յում էր, որպէս միակ միջոց իր գերդաստանի կեանքը և իր ստացուածքը ապահով պահելու ամեն պատահարներից։ Սակայն այդ զառամեալ ծերունու մէջ գեղեցիկ յատկութիւնները երևան էին գալիս դժբախտութիւնների ժամանակ։ Երբ նա Թոմաս էֆենդուն դեռ էս լաւ չէր ճանաչում, պատրաստ էր իր մանկահասակ աղջկան տալ նրան կնութեան, չնայած նրա տարիքին. այդպիսով նա կարող էր ձեռք բերել մի կարող հովանաւոր։ Բայց յետոյ, երբ նրա առաջ բացուեց այդ անբարոյական մարդու խաւար անցեալը, նա ոչ միայն մերժում է, այլ թողնելով վախը՝ սկսում է մերկացնել նրա գարշելի արարքները և բանտ նստելով՝ ըմպում է դառնութեան բաժակը։

Խաչօի որդիքը

Խաչօի ամենաարժանի զաւակն էր Հայրապետը։ Երբ նա իմանում է Ֆաթթահ-բէկի չար դիտաւորութիւնը՝ փախցնել Լալային՝ զայրացած կշտամբում է հայերի երկչոտութիւնը. «Մենք վատակում ենք, նրանք ուտում են... մենք գեղեցիկ աղջիկներ ենք հասցնում, նրանք են վայելում մեր աղջիկների սէրը»։ Նրա հետ համաձայն է միւս եղբայրը, ուստի առաջարկում է եղբայրներին միանալ և, յարձակման դէպքում, կռուել Ֆաթթահ-բէկի հետ։ Սակայն այդպէս չէին մտածում միւս երկու եղբայրները։ Նրանցից մէկը ասում է. «Մէկ քոյր ունենք, թող չլինի. դա մեծ ցաւ չէ։ Ինչու մեր գլուխը պէտք է մահի տանք նրա համար»։

Հայրապետը, որ վեց եղբայրներից ամենազարգացածը և աշխարհ տեսած մարդ էր, Սալմանի նման գործիչներին համակրող, իր գաղափարակից եղբօր հետ ձերբակալուում է, Թոմաս էֆենդու ցուցմունքով, և երկուսն էլ նահատակուում են բանտում։

Թոմաս էֆենտի

Բացասական տիպերի մէջ ամենից յաջողուած է Թոմաս էֆենդին, որ պետական հարկահան է (մուլթէզիմ)։ Տէրութեան վճարած կապալադրամը նա կորզում էր ժողովրդից կրկնապատիկ և եռապատիկ աւելի։ Ամբողջ շաբաթներով մնալով տանուտէր Խաչօի տանը, վայելում էր նրա բարիքները։ Իր դիրքը մեծացնելու համար նա դիմում էր ամենատոր միջոցների։ Պարծենում էր, որ Բօսֆորի ափերում հարուստ պալատներ ունի, որ Ներսէս պատրիարքը և Նուբար փաշան նրա մտերիմ բարեկամներն են։ Նա ինքը հոգով թուրք էր և հայ ազգասէրների թշնամին. նրանց դէմ գործում էր մատնութեամբ և դաւադրութիւններով։ Սալմանը, տանուտէր Խաչօն իր երկու զաւակներով նրա զոհերն են։

Միևնոյն ժամանակ Թոմաս էֆենդին մի անբարոյական, հեշտասէր արարած է։ Գիւղացու խաղաղ յարկի տակ գիշերները օրգիաներ սարքել, պար ածել պատանիներին և մանկահասակ աղջիկներին, արատաւորել արհեստաւորի քրոջը նրա բացակայութեամբ—այս բոլորը նրա սովորական զբաղմունքներն են։ Մի քանի անգամ ամուսնացած, արդէն ծերութեան շէմին, վճռում է տիրանալ տանուտէր Խաչօի գեղեցիկ աղջկան՝ Վարդանի նշանածին։ Երբ հօրից մերժուում է, նա դիմում է իր սովորական զէնքին՝ մատնութեան և զառամեալ ծերունուն իր երկու զաւակներով մաշել է տալիս բանտերում։

Սակայն այդ հրէշին հեղինակը դարձնում է հրեշտակ, դնելով նրան սիրահար պատանու դերում։ Նրա սէրը, ինչպէս ասում է Բաֆֆին, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ անասնային ընազդ։ Ուրեմն ինչպէս կարող էր նա այդ աստիճան բորբոքել կուսական սի-

ռով, որ մերժումը նրա մէջ յարուցեր բարոյական վերածնութիւն, խղճի խայթոց և նոյն իսկ ինքնասպանութիւն։ Դա հոգեբանական սխալ է հեղինակի կողմից։

Բացասական տիպերից է և ընչասէր Տէր-Մարուքը, որ Ալաշկերտի կոտորածից յետոյ գաղթականների խմբի հետ գալով Վաղարշապատ, տակաւին չէր մոռանում իր ապառիկները։

Գաղափարական գործիչներ

Բացասական տիպերին հակադրւած են գաղափարական գործիչներ, որոնք միևնոյն ժամանակ արտայայտում են հեղինակի սուբիեկտիւ կարծիքները։

Վարդան

Վարդանը իր առաջին քայլից արդէն ցոյց է տալիս անձնազոհութիւն. մահն աչքի առաջ՝ մոռանալով այն, ինչ որ ամենից թանդ էր նրա համար, գնում է կատարելու իր առաքելութիւնը։ Միևնոյն ժամանակ համարձակ, քաջ երիտասարդ է. Թոմաս էֆենդուն անւանում է «ամբողջ գաւառի աւազակ»։ Իսկ նրա ընկերասիրութիւնը սահման չունի։ Սալմանին պահապան զինւորների ձեռքից ազատելու համար իր կեանքը վտանգի է ենթարկում։ «Ընկերի սէրը յաղթում է կնոջ սէրին»։

Դուդուկջեան

Երկրորդ անձնաւորութիւնը նիհար, գունատ, աղքատիկ հագուստով երիտասարդ է և խորհրդաւոր անձնաւորութիւն։ Բայց հետզհետէ պարզւում է նրա անցեալը։ Նրա իսկական անունը Սալման էր, մահմեդականութիւն ընդունած հայ կաթոլիկի որդի։ Կրթութիւն ստացաւ մխիթարեանների ձեռքի տակ, բայց հիմնաւոր գիտութիւն չսովորեց։ Երբեմն ապրում էր Պարիզում՝ անձնատուր եղած փուչ զւարճութիւնների։ Անապասելի կերպով նրա մէջ տեղի է ունենում յեղաշրջում. արևելեան հարցի տաք ժամանակ թողնում է Պարիզի զւարճութիւնները, իր

սիրուհուն և ուղևորւում է Պոլիս, այնտեղից Հայաստան, ուր նա հանդիսանում է քարոզչի դերում։

Սալմանը բոլորովին անպատրաստ էր իր կոչման համար, ժողովրդի լեզուն չգիտէր, ուստի նրա քարոզները ինքնապաշտպանութեան մասին, նրա բողոքը ճնշումների դէմ, նրա յանդիմանութիւնը հայերի անտարբերութեան դէմ—մնում էին ձայն բարբառոյ յանապատի։ Շրջապատողները իսկոյն հասկանում են նրա անփորձութիւնը։ Վարդանը ասում է. «Բարեկամ, ձեր լեզուն անհասկանալի է. դուք հազիւ թէ կարողանաք այստեղ մի գործ շինել»։ Իսկ տանուտէր Խաչօն ասում է. «Հիմա, որդի, հողը պատրաստ չէ։ Մի օրւայ մէջ մի այդպիսի մեծ փոփոխութիւն չէ կարող կատարւել։ Դուք, պոլսեցիքդ, պէտք է վաղ սկսէիք այդ գործը»։

Սալմանը դառնադին փորձերից համոզւում է, որ, յիրաւի, ինքը անպատրաստ է իր կոչման ծառայելու և իրան համարում է մի Դոն-Կիխոտ։ Այնուհետև սկսում է կշտամբել պոլսեցիներին, որ նրանք մինչև այժմ ոչինչ չեն արել։ «Մենք ունէինք պատրիարք, ազգային երեսփոխանական ժողով, ուսեալ երիտասարդութիւն, տպագրութիւն, դպրոցներ, թատրոն, հարստութիւն—և ոչինչ չկարողացանք անել»։ Սակայն նա չէ վհատում և հաւատում է ապագային. «Ես և դուցէ իմ բոլոր համախոհներս կընկնենք, բայց մեր անկումը ճանապարհ կբաց անէ մեր հետևողների առջև... նրանք կանցնեն մեր դիակների վրայով»։

Սալմանն այնքան միամիտ էր, որ մտնում էր անխտիր ամեն մի գիւղ. բաժանում էր տետրակներ, որոնց բովանդակութիւնը ոչ ոք չէր հասկանում և միայն շատերի ծիծաղն էր շարժում։ Մի թրքական

գիւղում մինչև անգամ ծեծ է ուտում և գալիս է տուն «ոտից ցգլուխ ցեխոտուած»։ Նրա վախճանն էլ ողբերգական էր։

Նրան հակադրուած է Մելիք-Մանսուրը, որ փորձառու, եփուած մարդ էր, լաւ ճանաչում էր ժողովուրդը և ծպտեալ մանրավաճառի դիմակի տակ առաջ էր տանում իր գործը։

«Խենթի» արժանիքը

«Խենթի» արտակարգ յաջողութիւնը կարելի է բացատրել նրա մի քանի աչքի ընկնող արժանաւորութիւններով։ Բովանդակութիւնը շատ ժամանակակից էր և համապատասխան հասարակաց տրամադրութեան։ Ցաճկահայաստանում տեղի ունեցած այն բոլոր արհաւիրքները, որոնց մասին ընթերցողները կարդում էին լրագրութեան մէջ սոսկ տեղեկութիւններ, տեսնում էին կենդանացած վիպասանի գեղեցիկ նկարագրութեան մէջ։ Ընթերցող հասարակութեան, մանաւանդ երիտասարդ սերնդին, գրաւում էին և այն գաղափարական անձնաւորութիւնները, որոնց ստեղծել էր հեղինակի երևակայութիւնը։

Մեծամասնութիւնը հաւատում էր, որ իրօք եղել էն Վարդան, Դուդուկջեան, Մելիք-Մանսուր, ոգևորւում և քաջալերութիւն էին դտնում նրանց գործունէութեան և քարոզների մէջ։

Բաֆֆու նպատակն էլ կայանում էր նրանում, որ նոր սերնդին տայ քաջութեան օրինակներ։

Այդ տենդենցը Բաֆֆին անց է կացնում և իր «Կայծերի» մէջ։

«Կայծեր»։

Ահա մեր վիպասանի ամենախոշոր աշխատութիւնը, որ ամփոփուած է երկու պատկառելի հատորների մէջ և դեռ էլի անաւարտ է։ Ոչ միայն իր ծաւալով, այլ և բովանդակութեամբ բոլոր միւս վաստակներից աւելի բարդ և հարուստ է։ Այստեղ հանդէս է գալիս Բաֆֆին իր ամբողջ տաղանդի ոյժով և բոլոր պակասութիւններով։ Միևնոյն ժամանակ ոչ մի գրուածքում նա այն աստիճան ցայտուն կերպով չէ արտայայտում իր դաւանանքը և իր գեղարուեստական նշանաբանը։

«Կայծերի» բովանդակութիւնը.

Պատմողը վէպի անձերից մէկն է (Ֆարհատ)։ Նա սկսում է իր մանկութիւնից, մանրամասն նկարագրում է իր ընտանիքի ծայրայեղ չքաւորութիւնը և հարկահաններից կրած ճնշումները։ Ֆարհատը տովորում էր տէր-Թոդիկի ուսումնարանում, որ յայտնի էր իր բթացնող ուղղութեամբ։ Նրա երեք ընկերները—Կարօ, Սագօ, Ասլան—աչքի էին ընկնում իրանց աշխոյժ բնաւորութեամբ։ Նրանք չկարողացան դիմանալ տէր-Թոդիկեան անտանելի ռէժիմին, մի գեղեցիկ օր թողեցին այդ «դժոխքը» և գիւղից դուրս սկսեցին վարել թափառական կեանք։

Այդ պատանիներին հովանաւորում էր մի խորհրդաւոր անձնաւորութիւն, որին կոչում էին Որսորդ Աւօ։ Մի քանի տարի առաջ, մի սաստիկ ձմերային եղանակում, յայտնւեց նա Սալմաստի մի քաղաքում, որպէս փախստական։ Նրա ընտանիքը կազմում էին՝ դուստրը (Մարօ), վիթխարի ծառան (Մհէ), որդեգիր Հասօն և մի տնտեսուհի կին։ Ո՞վքեր էին դրանք և ո՞րտեղից եկան—յայտնի չէր։ Հետզհետէ

միայն պարզւում է այդ խորհրդաւոր մարդու անցեալը։ Յայտնւում է, որ Աւօի իսկական անունը եղել է Մելիք-Միսաք, որ նա հասարակ մարդ չէր, այլ ծագում էր Ռշտունեաց տոհմից, եղել է Սասունի և Մոգաց երկրի զօրաւոր Մելիքը և ունեցել է իր սեփական ամրոցը։ Հայ տանուտէրները դաւաճանօրէն յանձնում են նրան մի քուրդ իշխանի ձեռքը, որ կրակ է տալիս նրա դղեակը և սրի անցկացնում ընտանիքը։ Վիրաւոր Մելիքին ազատում է հաւատարիմ Մհէն և իր հզօր ուսերի վրայ բարձած տեղափոխում է Պարսկաստան, ուր նա ապրում էր անյայտութեան մէջ Որսորդ Աւօ անունով։

Ամենից առաջ Աւօի ազդեցութեան ենթարկւում է Կարօն։ Նա խորհուրդ է տալիս թողնել «դժոխքը», ինչպէս անւանում էր տէր-Թոդիկի դպրոցը, և սովորել արհեստ։ Կարօին հետևում են միւս երկու ընկերները՝ Սագօն և Ասլանը։ Որսորդ Աւօն մտադիր էր նրանցից պատրաստել ապագայ գործիչներ իր վեհ նպատակների համար։ Բայց նախ և առաջ հարկաւոր էր նրանց ուսում տալ։ Բարեբախտաբար այդ ժամանակ Սալմաստով անցնում էր մի ամերիկացի տուրիստ, որին կոչում էին միստրը Ֆիշեր։ Որսորդ Աւօի թախանձանքով գիտնական ճամբորդը համաձայնում է վերցնել պատանիներին իր հետ։ Ամերիկայում նրանց կրթութիւնը դրւում է դերազանց պայմանների մէջ։

Աւարտելով ուսումը, Կարօն և Սագօն վերադառնում են հայրենիք Հնդկաստանի վրայով և զանազան արկածներով, իսկ Ասլանը մի տարի աւելի է մնում։ Որսորդ Աւօն հէնց նրանց էր սպասում։ Նրանցից կազմում է իր մտածած խմբի սաղմը։ Երբ առաջին անգամ լուսնկայ գիշերով ժողով է գումարւում քաղաքից դուրս մի խորհրդաւոր մինարէթում, այնտեղ, բացի տէր-Թոդիկեան նախկին սաներից, երևում են Զալլադը և Մուրադը («Խաչագողի յիշ.»), Ֆարհատը, որ Կարօի խորհրդով վերջապէս թողել էր «դժոխքը» և նրանց հետ միացել. խմբի մէջ կային մի հայ բոշա պառաւ (Սուսաննա) և մանկահասակ աղջիկ, նրա թոռը և Կարօի աղջիկը։

Նորակազմ խմբի առաջին գործը լինում է ընդհարում քրդերի հետ, որոնցից խլում են հայ գիւղացիներից յափշտակւած խաշները և վերադարձնում տէրերին։ Այնուհետև այլևս այդպիսի դէպք չէ պատահում։ Խումբը նւիրւում է խաղաղ կուլտուրական գործունէութեան, նպատակ դնելով իր առաջ՝ լուսաւորել ժողովուրդը, պատրաստել նրան ազատ և երջանիկ կեանքի համար։ Մի անգամ նրանք ժողովւում են Ս. Բարդուղիմէոս առաքեալի վանքում, ուր տեղի է ունենում մտքերի փոխանակութիւն, կազմում են ծրագիրներ, յետոյ ցրւում իւրաքանչիւրը մի կողմ։

Երկար ժամանակ ասպարիզի վրայ մնում է Ասլանը իր անբաժան Ֆարհատի հետ։ Ճանապարհին պատահում են ծանօթ դէմքեր, որոնք իրանց անւանում են «նրանցից», տեղի է ունենում միմեանց մէջ մտքերի փոխանակութիւն։ Վան հասնելուց առաջ Ասլանը օթևանում է մի քահանայի տանը (Դալիբէշիշ), որը մօտ տասը գիւղեր իր պաշտպանութեան տակ էր պահում։ Նոյն երեկոյեան հասնում են Վան, որով աւարտւում է վէպի առաջին մասը։

«Կայծերի» երկրորդ մասում վիպական մասը հետզհետէ տեղի է տալիս ճանապարհորդական նկարագրութիւններին։ Ասլանը բաւական երկար ժամանակ մնում է Վանում եւրոպացի բժիշկ դոկտոր Ռիս-

մանի դիմակի տակ։ Նա իր առաջին պարտքն է համարում այցելութիւններ անել նահանգապետ փաշային և հայոց առաջնորդին։ Երկուսի վրայ ևս դերազանց տպաւորութիւն է թողնում։ Վանի կուսակալը մինչև անգամ ամեն տեսակ դիւրութիւններ է տալիս, որ նա կարողանայ դիտել և ուսումնասիրել Վանայ բերդի հնութիւնները։ Բայց շուտով, մի մատնութեան պատճառով, Ասլանը վտանգի մէջ է ընկնում։ Փաշան նրա վրայ նշանակում է գաղտնի հսկողութիւն։ Նրա դէմ կազմուում է դաւադրութիւն, որպէս զի ծուղակի մէջ ձգեն։ Հայոց առաջնորդը փառաւոր ընթրիք է պատրաստում և հրաւիրում է քաղաքի բարձրաստիճան անձանց՝ նահանգապետ փաշային, ոստիկանապետին, հայ երևելիներին։ Այնտեղ պատուաւոր տեղ ունէր և Ասլանը։ Սակայն նա յաջողութեամբ ազատուում է ծուղակից և մինչև անգամ ձեռք է բերում փաշայի համակրութիւնը, որ նրա ճանապարհորդութիւնը դիւրացնելու համար տալիս է նրան զափթիաներ և մի արաբական նժոյգ իր փառաւոր ասպաղէնքով։

Վանից դուրս գալով, Ասլանը միանում է մի մեծ կարաւանի հետ, ուր նա պատահում է նաև Զալլադին և Մուրադին։ Իր ճանապարհին նա ստանում էր միշտ նոր և նոր տպաւորութիւններ։ Ռշտունեաց մի գիւղում տեսնում է Կարօի հետ, որ այնտեղ ուսուցչութիւն էր անում։

Վայելելով լեռնականների հիւրասիրութիւնը, Ասլանը շարունակում է ճանապարհը։ Բաֆֆին իր հերոսին ման է ածում Վանայ եզերքի շրջակայ գիւղերում և քաղաքներում, հանդէս է բերում նոր տեսարաններ, նոր տիպեր։ Բաղէշում (Բիթլիս) բուն էր դրել բողոքականութիւնը, իսկ կաթոլիկութիւնը տա-

բաժնած էր գլխաւորապէս Տարօնում։ Ասլանը ցոյց է տալիս Ֆարհատին, ի միջի այլոց, Աստղաբերդը, որ Աւօի ժառանգական ամրոցն էր իր տխուր անցեալով։ «Կայծերի» երկրորդ հատորի վերջում մենք տեսնում ենք Ասլանին Առաքելոց վանքում, ուր հոգևոր կոչում ստացած՝ ապրում էր Համբը («Խաչագ. յիշատակ—ից») և պարապում էր գրականութեամբ։ Ասլանը յանձնում է նրան Ֆարհատի դաստիարակութիւնը և ինքը մեկնում է Հնդկաստան։

Այստեղ ընդհատուում է պատմութիւնը։

«Կայծերի» մէջ կայ երկու աշխարհ՝ իրական և երևակայական։ Ծանօթանանք նախ իրական աշխարհի հետ։

Իրական աշխարհ.

Դա Տաճկահայաստանն է իր ճոխ բնութեամբ։ Հայութեան գլխաւոր կենտրոնները՝ Վասպուրական, Տարօն, Սալմաստ փռուած են մեր առաջ։ Բաֆֆու գրչի տակ կենդանանում են մայրենի բնութեան մէկը միւսից սիրուն տեսարանները։ Մենք տեսնում ենք Սալմաստը, որի հունձը և բերքը պատկանում են ոչ թէ քրտինք թափող մշակին, այլ ձրիակեր աղաներին։ Տեսնում ենք Վանը իր կանաչ Այգեստանով, իր լայն փողոցներով, որոնց աջ և ձախ կողմից վազում են առուներ՝ հովանաւորուած ուռենի և բարդի ծառերով,—բայց այդ դրախտում հայի կեանքը շարունակ վտանգի մէջ է։ Ահա Ռշտունիքը իր կենսարար օդով, խորունկ ձորերով, բարձրաբերձ լեռներով, ուր ապրում է մի քաջարի ժողովուրդ, որ արծուի նման անմատչելի է թշնամուն։ Եւ այսպէս մի շարք սիրուն տեսարաններ գալիս անցնում են աչքի առաջ՝ Մուշի ընդարձակ դաշտավայրը, Վանայ ծովը իր կանաչազարդ ափերով, սքանչելի Վարագը

իր ծաղկեալ վիճակում, Կոուց անապատը իր մռայլ ճգնաւորներով։

Բաֆֆու ուշադրութիւնից չեն վրիպում նաև պատմական յիշատակարանները՝ Ոստանի, Աստղաբերդի աւերակները, բազմաթիւ բերդեր, եկեղեցիներ, վանքեր, որոնք պատահում են գրեթէ իւրաքանչիւր քայլափոխում։ Հեղինակը իւրաքանչիւրի մասին տալիս է մանրամասն տեղեկութիւններ, չէ մոռանում յիշատակել նաև ժողովրդական աւանդութիւնները։

Իրական աշխարհը դրանով չէ սահմանափակւում։ «Կայծերի» մէջ ներկայ են բոլոր դասակարգերի ներկայացուցիչները և զանազան պարապմունքների մարդիկ՝ պետական պաշտօնեաներ, առաջնորդ, քահանայ, վարժապետ, երկրագործ, արհեստաւոր, վաճառական և այլն։ Բաֆֆին տալիս է մի շարք գեղարուեստական պատկերներ ժողովրդական և ընտանեկան կեանքից։

Կուզէք իմանալ, օրինակ, ինչպիսի առաջնորդ է նստած Վանում։—Մտէք նրա դահլիճը, աչքի անցկացրէք շրջապատող ճոխութիւնը, սրբազանի սև ատլասէ կամ ծիրանագոյն վարագոյն՝ զարդարւած Օսմանեան ադամանդեայ շքանշանով. ներկայ եղէք նրա ընթրիքին, լսեցէք նրա մտերմական զրոյցը փաշայի հետ։ Ահա և կուսակալը։ Ժողովրդի տրտունջը նրան չէ հասնում։ Եւրոպացի հիւրի առաջ ինչպէս է գովում իր ստանձնած երկիրը։ Ժողովուրդը գոհ է, և ամեն տեղ տիրում է անդորրութիւն։ Բաֆֆին ընթերցողին ման է ածում ամեն տեղ և ցոյց է տալիս մէկը միւսից հետաքրքրական տիպեր և տեսարաններ։ Մենք զարմանքով տեսնում

ենք, որ լուսաւոր դարում ևս գոյութիւն ունեն միջնադարեան ճգնաւորներ, ինչպէս Կոուց անապատի վանականները։ Մենք որոշ դաղափար ենք կազմում դաւառական պանդոկների հասարակութեան մասին, կարդալով Թէոս ախպօր սրճատան նկարագիրը։ Իսկ եթէ ուզում ենք իմանալ, ինչ արժէք ունի հայի կեանքը այդ բարբարոս երկրում, պէտք է յիշել Ֆարհատի հօրը, որի գլուխը թռցնում են գրազով։ Բաֆֆին տալիս է նաև հարևան ցեղերի բնաւորութեան և նիստ ու կացի ճշգրիտ նկարագրութիւնը։

«Կայծերի» մէջ Բաֆֆուն զբաղեցնում են երկու կարևոր խնդիրներ՝ մէկը ազգի թշւառութեան պատճառը, միւսը՝ նրան ազատելու միջոցը։ Իր կարծիքներն այդ խնդիրների մասին Բաֆֆին յայտնում է Կարօի և Ասլանի բերանով։ Ընկերական ընթրիքի ժամանակ Կարօն ասում է մի ճառ, որի մէջ նկարագրում է ազգի դժբախտութիւնը և բացատրում է նրա պատճառը։ Պատճառը՝ ասում է նա—ժողովրդի ծուլութիւնը չէ։ «Այդ ժողովուրդը ծոյլ չէ։ Նա անդադար աշխատում է, աշխատում է աւելի, քան թէ կներէր մարդի այժը։ Նրա կինը, նրա փոքրիկ երեխաներն անդամ գործակից են լինում գերդաստանի հօր աշխատութեան»... Զնայած դրան, ժողովուրդը ապրում է դարձեալ դաւն, ցաւալի աղքատութեան մէջ։ Դրա պատճառը Կարօն դտնում է նրա մէջ, որ ժողովուրդը ապրում է այն հողի վրայ, որ թէև մի ժամանակ պատկանում էր իր նախնիքներին, այժմ դարձել է Թուրքի սեփականութիւն։ Պէտք է աւելացնել նաև բազմաթիւ հարկերը, որ նա վճարում է ազային։ Դա ծնում է մի այլ չարիք։ Մեր ժողովուրդը իր հայրենի հողի վրայ մնունդ չդտնելով, գաղթում է և օտար երկիրներում է բախտը որոնում։ Կա-

Երևակայական աշխարհ

բոն ցաւում է, որ թէ ընտանիքը և թէ դպրոցը հաստատում են մեր մէջ սարկութիւն, որովհետև վարժապետը աշխարհային կեանքը համարում է ունայն և անցաւոր։ Մի ուրիշ անգամ նոյն ոգով խօսում է Ասլանը «Ասլանի դատողութիւնները» վերնագրով գլխում։ Նա ևս գտնում է, որ հայերը դարևոր հարատահարութիւնների տակ ճնշելով մինչ այն աստիճան հոգով մաբմնով թուլացած են, որ շատ բնական են գտնում իրանց վիճակի բոլոր դառնութիւնները... Մի ձեռք, մի զօրեղ ձեռք պէտք է, որ դրանց բարձրացնէ ընկած դրութիւնից և կանգնեցնէ մարդկային ազատ իրաւունքի վրայ։ Այդպիսի մի զօրեղ ոյժ Ասլանը չէ գտնում ոչ վաճառականական դասակարգի, ոչ եկեղեցականների և ոչ էլ երիտասարդութեան մէջ։ Եկեղեցականը, որ ազգի մէջ էլ լինի, միշտ ընդդէմ է մարդկային անհատական ազատութեան։ Եկեղեցականը միշտ ընդդէմ է ազգայնութեան գաղափարին. նա ճանաչում է ազգը միայն կրօնի անունով։ Ոչ դրամատէրերը, ոչ եկեղեցականները կարող չեն բարձրացնել ազգը ընկած դրութիւնից։ Այդ կարող էր անել թարմ երիտասարդութիւնը, բայց դժբախտաբար, մենք երիտասարդութիւն չունենք։ Ասլանը այնուամենայնիւ իր յոյսը չէ կորցնում. յոյսը դնում է ամբոխի վրայ, որը թէև անմշակ, բայց մեծ զօրութիւն է ներկայացնում. միւս կողմից՝ երկրի բնութեան վրայ. «Վան-Ծոսպը իր անմատչելի լեռներով, իր անդնդախոր ձորերով և իր նեղ փապարներով մի հսկայական ամրոց է. այստեղ շատ դժուարութեամբ կարող է մուտք գործել օտար ինքնակոչ հիւրը»։

Եւ ահա Բաֆֆին իր այդ նուիրական գաղափարներն իրագործելու համար ստեղծում է իդէալական

հերոսներ։ Այդպիսի անձնաւորութիւններն են՝ Որսորդ Աւօ, Ասլան, Կարօ. Սագօ և այլն։

Խումբը ձգտում է իրագործելու մի ընդհանուր նպատակ—զարթեցնել ժողովրդի թմրած ոյժերը, կայծեր վառել սառած սրտերում։ Այդ նպատակին հետևելով՝ իւրաքանչիւր անդամ գործում է ազատ, իւրաքանչիւր անդամ ընտրում է իր սիրած ասպարէզը։

Կարօն ուսուցիչ է Ռշտունեաց գիւղում, ուր մեծ ազդեցութիւն ունի գիւղացոց վրայ և վայելում է նրանց յարգանքը։ Սագօն Վանայ սրճատան մուսուլցի վաճառական է և յայտնի է Խօջա-Թորոս անունով։ Ջալլադը բողոքական է և կշտամբում է բողոքականներին նրանց ազգատեաց քարոզների համար. նոյնը անում է կաթոլիկ Արփիարը կաթոլիկների վերաբերմամբ։ Ասլանը շարունակ զբաղուած է հետազօտութիւններով. վերցնում է Վանայ բերդի յատակագիծը, քննում է Վանայ լիճը նաւագնացութեան տեսակէտից, յարաբերութիւններ է սկսում բարձրաստիճան անձանց հետ։

Խմբի գործունէութեանը մասնակցում էր և կանացի սեռը—Աւօի դուստր Մարօն, Կարօի աղջիկ Հիւբբին, նրա տատը՝ Սուսաննան։ Հիւբբին շարունակ թափառում էր՝ ձեռքում բռնած կախարդական գաւազան օձի գլխով, որ նամակների պահարան էր։

Ընկերութեան ազդեցութիւնը հետզհետէ աւելի և աւելի ծաւալւում էր։ Խմբի նպատակներից մէկն էր նաև դաշինք հաստատել դրացի ցեղերի հետ։ Կարօն բարեկամացել էր ասորոց պատրիարք Մար-Շիմոնի հետ, Աւօն եզիդիների ցեղապետի հետ, Ասլանը աշխատում էր աղքատացած քուրդ ազնուականներին իր կողմը գրաւել։

Այդ գործիչները յաճախ փոխում էին իրանց կերպարանքը։ Ասլանը մերթ անապատական ճգնաւոր է, մերթ եւրոպացի բժշկապետ։ Քամելէոնութիւնը ինքնապաշտպանութեան գլխաւոր միջոցներից մէկն էր։

Ահա Բաֆֆու ստեղծած գեղեցիկ, բոմանտիկական աշխարհը, որ լի է խորհրդաւորութեամբ։ Խորհրդաւոր է Որսորդ Աւօի անցեալը, խորհրդաւոր է Կարօի ամուսնութիւնը գնչուհու հետ, խորհրդաւոր է անապատական ճգնաւորը ս. Տիրամօր վանքում ժողովրդական տօնախմբութեան հանդիսին։ Խորհրդաւոր է և խմբի առաջին ժողովը, որ տեղի է ունենում կիսաւեր մինարէթում լուսնկայ գիշերը՝ խորին լռութեան մէջ։ Բացի դրանից, այդ աշխարհը նշանաւոր է իր արտասովոր երևոյթներով և արկածներով։ Կարօն և ընկերները, ուսումն աւարտելուց յետոյ, փոխանակ շտապելու իրանց հայրենիք և անմիջապէս ձեռնարկելու օգտաւէտ գործի, երկար ժամանակ մնում են Հնդկաստանում, կազմում են հայկական մեծ գաղթավայր հիմնելու ֆանտաստիկ ծրագիր, որ, իհարկէ, շուտով օդն է ցնդում։ Բախտը հասցնում է մի բարերարի՝ յանձին ամերիկացի տուրիստի՝ ուղիղ այն վայրկեանին, երբ Որսորդ Աւօն կանգնած էր մի անլուծելի խնդրի առաջ՝ ինչ միջոցներով յաջողեցնել տէր-Թոդիկեան տների բարձր կրթութիւնը։ Մի անգամ Ասլանը այնպիսի ծուղակի մէջ է ընկում, որ նրան կարող էր փրկել միայն պատահականութիւնը։ Ասլանին փրկիչ հանդիսանում է Վանայ ոսոիկանապետի ամուսինը, որ հայ քահանայի աղջիկ էր և համակրութիւնից դրդուած, տալիս է Ասլանին կարդալու մատնութեան նամակը, որի մէջ խառն էր և տէր-Թոդիկի մասը։

Առհասարակ պատահականութիւնը, անսովոր, բացառիկ դէպքերը, երբեմն նոյն իսկ անհաւատալին որոշ դեր են կատարում թէ «Կայծերում» և թէ միւս գրուածքների մէջ։ Սակայն այդպիսի հանգամանքներ ամենևին նշանակութիւն չունէին ընթերցողների համար։ Հնդհակառակը, շատերին դրաւում էր այդ խորհրդաւորութիւնը, այդ բացառիկ, անակնկալ դէպքերը։

«Կայծերը» Բաֆֆին չվերջացրեց, և դժուար էր աւարտել այդպիսի բարդ և խճողուած գործ։ Սակայն նրա մահից յետոյ դուրս եկաւ «Կայծերի վերջը» վերնագրով մի փոքրիկ գրքոյկ, որի բովանդակութիւնը յիշեցնում է Վարդանի երազը։ Այստեղ հանդէս է բերուած Թուրքահայաստանի ապագայ վիճակը։ Երկիրը խաղաղել է, սկսած է կուլտուրական աշխատանք։ Բարբարոսութիւններ այլ ևս չկան, քրդերը ծառայում են հայերի մօտ։

Իրական վէպեր

Տենդենցիոզ վէպերի հետ միաժամանակ Բաֆֆին գրում էր իրական վէպեր՝ «Խաչագողի յիշատակարանը», «Ոսկի աքաղաղ», «Ղարիբ մշեցի»։

«Խաչագողի յիշատակարանը»։

Գրքի սկզբում Բաֆֆին բացատրում է, թէ ինչ է խաչագողը։

Պարսկաստանի Սալմաստ գաւառում կայ մի բաւականին մեծ գիւղ, որ կոչւում է Սաւրա և համարւում է խաչագողների որջ։ Նրանց սովորութիւնն է թողնել տուն ու տեղ, ընտանիք, օտար երկրնե-

ռում տարիներ թափառել, ամեն անաղնիւ և սուր միջոցներով, նոյն իսկ արիւնհեղութեան առաջ կանգ չառնելով, դիզել հարստութիւն, որը նրանց կեանքի գլխաւոր նպատակն է։ Այդ զզուելի պրօֆեսեան խաչագողների մէջ զարգացրել է ամենավատթար հակումներ։ Խաչագողը վերին աստիճանի խորամանկ, ճարպիկ և խաբեբայ է։ Չկայ արգելք, որ նրան կարողանայ խոչնդոտ հանդիսանալ, չկայ մի այնպիսի դժուար գրութիւն, որից նա չկարողանայ դուրս գալ և սատանայի պէս անհերևոյթանալ։ Ոչ ոք խաչագողի պէս չէ կարող փոխել իր կերպարանքը, շորը, կրօնը, լեզուն, մինչև անգամ բնաւորութիւնը. նայած թէ ով է խօսակիցը՝ ազնուական, ռամիկ թէ ուսումնական։ Գիտէ յարմարուել իւրաքանչիւր մարդու կարծիքներին և տրամադրութեան։ Խաչագողը նայում է տիեզերքի վրայ զուտ անձնապաշտական տեսակէտից, այսինքն, որ նա հունձի արտ է. չէ ցանում, բայց հնձում է։ Խաչագողները մեծ մասամբ մեռնում են օտարութեան մէջ։

Համառօտ բովանդակ.

Վէպը իր ժամանակին մեծ հետաքրքրութիւն շարժեց ընթերցող հասարակութեան մէջ թէ իր արկածալից բովանդակութեամբ և թէ իր նոր տիպով, որպիսին հանդիսանում էր խաչագողը։

Վէպի գլխաւոր անձը՝ քաւոր Պետրոսը թողնում է իր հայրենիքը, անցնում է սահմանը և իր սխրագործութիւնների ասպարէզ ընտրում է հիւսիսային Կովկասը և Ռուսաստանը։ Իր բոլոր սատանայական հնարները գործ դնելով, չկանգնելով նոյն իսկ յանցանքների առաջ, նա ձեռք է բերում բաւական մեծ հարստութիւն։ Իր բաղդախնդրական արկածների մէջ նա միշտ յաջողութիւն էր գտնում։ Բայց ագահութիւնը նրան կուրացնում է, և նա վերջ ի վերջոյ

ազէսի պէս երկու ոտով ընկնում է թակարդ։ Շատ հարստանալու տենչը նրան ձգում է դրամանենգ ընկերների որջը, որ շատ շուտով կալանաւորւում է ամբողջ կազմով, նրանց թւում և քաւոր Պետրոսը։ Բոլորեքեան դատապարտւում են տաժանակիր աշխատանքների։ Բայց այս անգամ էլ հռչակաւոր խաչագողին յաջողւում է ազատւել բանտից։ Այնուհետև նա վճռում է չհեռանալ Սիբիրից, մինչև չազատէ իր ընկերներին։ Այդ էս նրան յաջողւում է։

Խաչագողի տիպը

Խաչագողի տիպը դուրս է բերուած շատ յաջող, գուցէ փոքր ինչ չափազանցացրած։ Քաւոր Պետրոսը կենդանի կանգնած է մեր առաջ իր խորամանկ աչքերով և սատանայական ժպիտով։ Իր կեանքի միակ նպատակը դարձնելով արծաթը և ոսկին, նա կանգ չէ առնում ոչ մի խոչնդոտի առաջ։ Նա իր ձեռքի գործիք է դարձրել Մուրադին, որը նրա ցուցմունքով մի քանի ոճիրներ է գործում։ Ոչ ոք չունի նրա ճարպիկութիւնը և հնարագիտութիւնը։ Իր հետ վերցրած իրեղէնները ազատում է մաքսից, թագցնելով համեստի մէջ։ Բանտից ազատւում է՝ իր անունը գրել տալով մեռելների ցուցակում։ Ոչ ոք չգիտէ նրա պէս մարգկային թոյլ կողմերը և ոչ ոք չէ կարող նրա պէս օգտւել այդ թոյլ կողմերից։ Գիտէ հարստահարել մէկի ագիտութիւնը, միւսի կրօնամոլութիւնը, երրորդի միամտութիւնը, և այսպէս ամենքի հետ։ Քաւոր Պետրոսը միևնոյն ժամանակ երևելի քամելէոն է. այսօր նա թուրք հաջի է, վաղը մանրավաճառ. մի տեղ արջ պար ածող է, մի այլ տեղ խորասանցի վաճառական։ Նա մերթ Երուսաղէմի պատուիրակ աբեղայ է, մերթ մուրացկան, մերթ յոյն քահանայ, մերթ դրամանենգ։

Քաւոր Պետրոսը յաջող տիպ է, իբրև բացառա-

կան անձնաւորութիւն, իբրև խաչագողի իսկական տիպ։ Բայց Բաֆֆին նրա մէջ մտցնում է երկրութիւն, որով աղճատւում է խաչագողի տիպը։ «Քաւոր Պետրոսը, ասում է հեղինակը, այն տեսակ առասպելական արարածներից էր, որ ընդունակ էր հրեշտակից սատանայ դառնալ, իսկ սատանայից հրեշտակ»։ Նա համոզւած չարագործ է. իր յանցանքներն արդարացնում է Կարլ Մօորի սոփէստութեամբ. «Մենք կողոպտում ենք ժլատ հարուստներից, իսկ աղքատներին պէտք է օգնել»։ Բայց ինչումն է կայանում նրա օգնութիւնը—նրանում, որ իր ոճիրներով ձեռք բերած գումարից երբեմն բաժին է հանում կարօտեալներին։ Բաֆֆին աւելի ևս բարձրացնում է քաւոր Պետրոսին, դարձնելով նրան անձնուէր ընկեր, որովհետև նա նպաստում է իր աքսորւած ընկերների ազատութեան թէ իր խորամանկ միջոցներով թէ իր ունեցած դրամով և թէ արժէթղթերով։ Իսկ «Կայծերի» մէջ քաւոր Պետրոսը արդէն ազգասէր է։

Բաֆֆին այդպէս է վարւել և Թոմաս էֆենդու հետ՝ սատանային դարձրել է հրեշտակ։ Բայց դրանք հոգեբանական սխալներ են։

«Խաչագողի յիշատակարանի» նշանակութիւնը կայանում է նրանում, որ Բաֆֆին ներկայացրեց մի ամբողջ հասարակութիւն, որ բուն էր դրել Պարսկաստանում, և իր համար հարստանալու միջոց ընտրել ամենակեղտոտ ճանապարհներ. մի հասարակութիւն, որի միջից միայն կարող է ծնունդ առնել քաւոր Պետրոսի նման խաչագողը, որի անունով կնքում էին փուչ մարդկանց։ Խաչագողները արատ էին բերում նոյն իսկ հայ ազգին։

«Ոսկի աքաղաղ»։

Աւելի յաջող է «Ոսկի աքաղաղը»։ Այստեղ Բաֆֆին կանգնած է ռէալական հողի վրայ և գործ ունի հայ իրականութեան հետ։ Մասիսեանը, վէպի հերոսը, Բաֆֆու ստեղծած բացասական տիպերի մէջ ամենայաջողն է, որովհետև նրա մէջ չկայ ոչինչ երկրութիւն, նրա բնաւորութիւնը և հայեացքները շատ պարզ և որոշ են. ամբողջ կեանքում նա իրան չէ դաւաճանում, միշտ մնում է իրան հաւատարիմ։

Մասիսեանը դաւառական քաղաքի ամենահարուստ վաճառականն էր։ Ունէր մի զարմանալի խանութ, ուր ամեն բան կարելի էր գտնել, բացի «ծիծեռնակի կաթից»։ Ունէր ընդարձակ տուն, այգի, կալւածներ։ Նրա գլխաւոր առևտուրը Մօսկւայի հետ էր, ուր ապրում էր նրա կառավարիչը։

Մասիսեանը կեանքի բովի մէջ եփւած, որոշ աշխարհայեացքի տէր և խիստ ու դաժան ծերունի էր։ Բացի սովորական միջոցներից՝ սուտ երդում, խաբեբայութիւն և այլն, Մասիսեանի հարստանալուն նպաստում էր և վաշխառութիւնը։ Ահագին տոկոսներով ճնշում, հարստահարում էր մանաւանդ գիւղացիներին։ Վայ այն պարտապանին, որ չկարողացաւ վճարել իր պարտքը։ Այդպիսիների համար կար դատաստան և բանտ։

Սակայն ինչի համար էր Մասիսեանը խեղճ գեղջուկների քրտնաջան աշխատանքի գնով այնքան փող դիզում։ Արդեօք լա՞ւ ապրելու, կեանք վայելելու համար։ Բնա՞ ոչ։

Մտէք նրա տունը և աչքի անցկացրէք ձեր չորս կողմը,—և ձեզ պիտի թւայ, որ գտնւում էք մի աղքատի խրճիթում,—ամեն ինչ հնացած, փտած և

մաշված, ամեն տեղ կեղտոտություն։ Նրա տունը թէև ընդարձակ, բայց կիսաւեր ամրոցի էր նման. այս ու այն կողմում աւերմունք, փլատակներ և անխնամ թողած շինուածքներ։ Նոյն բարձիթողի արած վիճակում էր և պարտէզը։ Ընդարձակ բակը հովանաւորուած էր դարևոր թթենիներով, որոնց միջուկը բոլորովին փտել և դուրս էր թափուել, իսկ ծառերը իրանց պատառուած փորով ստացել էին հրէշաւոր կերպարանք։ Բոլոր միւս ծառերը՝ ծերացած ուռիներ, կիսաչոր ծիրանիներ, խաղողի որդը—իրար խառնուել, փաթաթուել էին։ Ամեն ինչ բուսել, աճել, մեծացել էր իր վայրենի համարձակութեան մէջ, և կարծես ադամորդու ձեռք այդ ծառատունկին բնաւ չէր դիպել։

Մասիսեանի պարտէզը նկարագրելիս Բաֆֆին հաւանօրէն աչքի առաջ ունեցել էր Պլուշկինի այդու նկարագիրը, որովհետև Գօգոլը ևս շեշտում է անխնամ թողած ծառերը և նրանց վայրենի աճումը։

Ահա այսպիսի պայմանների մէջ էր ապրում հարուստ վաճառականը։ Պարզ է, որ Մասիսեանը ամենևին լաւ ապրուստի համար չէր փող դիզում. այլ դա փողի պաշտամունք էր, երկրպագութիւն Մամոնային, որ նրա մէջ ծնեցրել էր և մի ուրիշ արատ՝ ագահութիւն։ Սակայն Մասիսեանի ժլատութիւնը չէր հասնում այն աստիճանի կծծիութեան, ինչպէս այդ տեսնում ենք Գօգոլի ժլատի մէջ։ Մասիսեանի մէջ կար հիւրասիրութիւն, որից զուրկ էր Պլուշկինը։ Բայց իր փողասիրութեամբ Հարպագոնից էլ յետ չէր մնայ։ Այդ կիրքը նրա մէջ մեռցրել էր ամեն մի մարդկային զգացում՝ և՛ ամուսնական սէր և՛ ծնողական գորով։

Մասիսեանը միևնոյն ժամանակ անձնպաշտ էր,

անսահման էգոիստ և երկրպագու ոյժի։ Աշխարհը, նրա կարծիքով, դմակ է, իսկ մարդը՝ դանակ. «Կըտրիր, որքան կարող ես»։ Ամեն բան գնահատում էր շահի տեսակէտից։ Ինչից շահ չկայ, փնասակար է։ Որդու ուսումից շահ չկայ. ուսումը փնասակար է։

Իր ընտանիքում Մասիսեանը կատարեալ բռնակալ էր, «հրէշ», ինչպէս նրան անուանում է հեղինակը։ Այստեղ թագաւորում էր միայն նրա կամքը... Բոլոր տանեցիք՝ ամուսին և զաւակներ՝ նրա հլու հպատակներն էին։ «Պէտք է ուտէին, ինչ որ նա սիրում էր. պէտք է խօսէին, ինչ որ նա սիրում էր խօսել. պէտք է քնէին, երբ նա քնում էր. պէտք է վեր կենային, երբ նա վեր էր կենում»... Երբ ընտանիքում մէկը հիւանդանում էր, նա չէր թողնում բժիշկ հրաւիրել, որքան էլ ծանր լինէր հիւանդութիւնը, որովհետև մահը գրած է մարդու ճակատին։ Զէ որ ինքն էլ հիւանդանում է, բայց լաւանում է առանց բժշկի։

Մասիսեանը անտանելի էր իբրև ամուսին։ Նրա կինը ոչ թէ նրա ընկերն էր, այլ մի աղախին, որի պարտականութիւնն է միայն եփել, կարել, լուանալ։ Նրա առևտրական գործերի մասին կինը ոչ մի գաղափար չունէր. չգիտէր, ինչ ունի մարդը, ինչ չունի։

Թէ ինչպիսի հայր էր Մասիսեանը, այդ երևում է նրա վերաբերմունքից դէպի զաւակները։ Նրա առաջնեկ աղջիկը հօր հալածանքից յուսահատած՝ վերջ է տալիս կեանքին՝ կախուելով փայտանոցի առաստաղից։ Միւս աղջիկը, յոյսը կտրելով, թէ հայրը երբ և իցէ կմտածէ իրան մարդու տալու մասին, փախչում է խանութի մի գործակատարի հետ։ Տանը մնացած միւս աղջիկները մի հատ քաղցր խօսք չէին լսել հօրից։ Իսկ որդին, գիմնազիան աւարտելուց յետ

տոյ, միջոց չունենալով ուսումը շարունակել, որովհետև հայրը չէր օգնում, պարապ նստել էր տանը։

Սակայն Մասիսեանը արդարացնում է ժողովրդական առածը՝ թէ «տանը սատանայ, դուրսը քահանայ»։ Ուսմից ակնկալութիւն ունէր, նրա հետ շատ քաղցը էր վարում, շողոքորթում էր և գովում նրա ծնողներին ու պապերին։

Վէպի միւս անձերի մէջ աչքի են ընկնում Ստեփանը, Մասիսեանի որդին, և Միքայէլը, նրա գործակատարը։ Երկուսն էլ իդէալացրած են։

Ստեփան. Դեռ ևս աշակերտական նստարանի վրայ որդին բողոքում էր հօր անիրաւութիւնների դէմ։ Յոյսը կտրած հօր օգնութիւնից և ապաւինելով իր սեփական աշխատանքին, նա ուղևորւում է Մոսկվա, մտնում է համալսարան, որ աւարտում է մի քանի տարուց յետոյ։ Մի օր լուր է ստանում, թէ հայրը վախճանուել է և գործակատարները կողոպտել են նրա հարստութիւնը։ Ստեփանը չէ շտապում գնալ հայրենիք և իր ընտանիքի քայքայուած վիճակը բարւոքել. այդ բոլորը նա թողնում է Միքայէլին, իսկ ինքը գնում է արտասահման՝ հայկական խնդիրն արծարծելու։ Դա, իհարկէ, իդէալական քայլ էր Ստեփանի կողմից։ Բայց բանը նրանումն է, որ այն ժամանակւայ դաւառական դպրոցը, ընկերական շրջանը և ընտանիքը չունէին այնպիսի կրթիչ ոյժ, որ կարողանային պատրաստել Ստեփանի նման իդէալիստներ։

Միքայէլ. Միքայէլի պատկերը Բաֆֆին նկարագրել է նոյնպէս համակրելի գծերով։ Դա մի աչքաբաց գիւղացի տղայ էր, որին Մասիսեանը առաջին անգամ տեսնելուն պէս՝ հաւանում է և հօրեղբօրից խլելով՝ դարձնում է իր խանութի և տան ծառան։ Միքայէլը

իր ընդունակութիւնների շնորհիւ, արագ բարձրացաւ։ Հասարակ ծառայից դարձաւ խանութի առաջին գործակատարը և իր ընկերների նախանձը շարժեց։ Նոյն իսկ Մասիսեանը այնքան հաւատ է ընծայում նրան, որ նրան յանձնում է իր առևտրական գործերը Մոսկվայում։ Այնտեղ էր և Ստեփանը, որի խորհրդով Միքայէլը սկսում է յաճախել Առևտրական դպրոցը և սովորել առևտրական գիտութիւններ։ Մի խօսքով, նա դառնում է մի բարեկիրթ, ինտելիգենտ երիտասարդ։ Մասիսեանի մահից յետոյ նրա առևտրական խանգարուած գործերը կարգի է բերում, ընտանիքի մէջ մտցնում է սէր և խաղաղութիւն և ինքն էլ դառնում է այդ տան իսկական «ոսկի աքաղաղը»։

Աւելորդ չեմ համարում այստեղ յիշել և «Ղաւսիր մշեցին», որի մէջ Բաֆֆին դուրս է բերում մշեցի պանդուխտների չարքաշ կեանքը Կ. Պոլսում։ Հեղինակը այդ վէպը գրել է իր լսածի և կարդացած տեղեկութիւնների հիման վրայ, իսկ ինքը չէ տեսել Պոլիսը, ուստի վէպի արժէքը դրանով նւազում է։

Պատմական վէպեր.

«Սամուէլի» յառաջաբանում Բաֆֆին պատմական վէպի նշանակութիւնը որոշում է հետևեալ կերպով. «Պատմական վէպը մի ժողովրդի պատմական կեանքի նկարագիրն է։ Նա պատկերացնում է իր մէջ, թէ որպէս ապրել է և որպէս գործել մի ժողովուրդ. պատկերացնում է նրա բարքը, սովորութիւնները, պատկերացնում է մտաւոր և բարոյական յատկութիւնները»։

Ուղիղ հայեացք։ Ցիրաւի, պատմական վէպի մէջ ամենից կարևորը ոչ այնքան անցքերն են, օրինակ, պատերազմը, որքան դարեշրջանի ոգին, ժողովրդի կեանքը։

Բաֆֆին ինքը գիտակցում էր, որ չկայ աւելի դժուար բան, քան գրել պատմական վէպ հայոց անցեալից, քանի որ մեր պատմագիրները, տարաբախտաբար, զլացել են, պատերազմների մանրամասն նկարագրութեան հետ, տալ նաև ժամանակակից կեանքի պատկերը, զանազան դասակարգերի կենցաղը, նիստ ու կացը, սովորութիւնները և այլն, և չեն հետևել յունաց և հռոմայեցոց երևելի պատմաբաններին։

Չնայած այդպիսի աննպաստ պայմաններին, որոնց մէջ դրւած է հայ հեղինակը, Բաֆֆին այնուամենայնիւ բարեխղճաբար ժողովել, ուսումնասիրել է այն բոլորը, ինչ որ կարող էր գէթ մի աղօտ լոյս սփռել հեղինակին զբաղեցնող խնդրի վրայ։ Եւ պէտք է ասել, որ նա պատկառելի հմտութիւն է ցոյց տալիս մանաւանդ «Սամուէլի» մէջ։

Սակայն անկախ պատմական ճշտութիւնից, Բաֆֆին պատմական վէպերում ևս անկարող է խոպառ անջատուել իր ես-ից, իր սեփական կարծիքներից. նրա սուբիեկտիւ հայեացքները արտայայտւում են այս կամ այն հերոսի դատողութեան կամ ճառերի մէջ, ինչպէս կտեսնենք պատմական վէպերի վերլուծման ժամանակ։

«Դաւիթ բէկ»։

Վէպի առաջին գլխում Բաֆֆին տալիս է հետևեալ տեղեկութիւնները հայ մելիքութեան մասին. «Մինչև 1722 թ., այսինքն Դաւիթ բէկի յայտնուելը, հայոց մելիքները տակաւին պահպանել էին իրանց նշանակութիւնը։ Նրանք ունէին ամրոցներ, ժառանգաբար իշխում էին ժողովրդի մի մասի վրայ, կապում էին դաշնագրութիւններ երբեմն պարսից, երբեմն թուրքաց ներկայացուցիչների հետ, մասնակցում էին նրանց պատերազմներին և, որպէս մի տեսակ վասալական իշխաններ, մի մասնաւոր հարկ էին վճարում այն պետութիւններին, որոնք փոփոխակի տիրում էին Հայաստանին։ Սիւնեաց աշխարհը (Զանգեզուրը) պէտք է առաջինը համարել, ուր մելիքները մինչև ռուսաց տիրապետութեան ժամանակը (1813 թ.) պահպանեցին իրանց գոյութիւնը։ Առանց պատճառի չէր։ Երկրի բնական դիրքը՝ լեռները և անտառները՝ նպաստում էին ժողովրդի մէջ վաղեմի քաջութեան ոգու պահպանելուն։ Ցաւալին այն է, որ հայոց մելիքները մի ընդհանուր կապ չունէին միմեանց հետ։ Շահերի տարբերութիւնը շատ անգամ առիթ էր տալիս նրանց մէջ թշնամական յարաբերութիւնների։ Այդ պատճառով նրանք չէին միանում, որ կազմէին մի ընդհանուր միութիւն և պատերազմէին հայրենիքի ընդհանուր թշնամու դէմ... Մելիքի ձեռքով էր հաւաքւում տուրքը և ամեն հարկեր, որ պէտք է վճարէին խանին։ Մելիքն էր վճռում իր ժողովրդի ամեն տեսակ դատեր և վէճեր»։

Ծանօթանանք նախ վէպի բովանդակութեան հետ։

Բովանդակութիւն.

1722 թ. լեզգիների ահագին բազմութիւն՝ միացած Կովկասեան լեռնաբնակ ցեղերի հետ՝ արշաւանք գործեցին Աղուանից և Սիւնեաց երկիրները, ասպատակեցին Նուխու, Շամախու և Գանձակի գիւղօրայք և յափշտակեցին բազմաթիւ գերիներ հայոց աղջիկներից, պատանիներից և մանկահասակ կանանցից։ Տեղացին մահմեդականներն իրանք էլ մի կողմից սկսեցին կողոպտել հայերին։ Հայերի դիմադրութիւնը սաիպեց աւազակներին մաքրել երկիրը։ Բայց լեզգիները սարսափելի հետքեր թողեցին։

Կար մի երիտասարդ, որ չէր կարող մոռանալ այս գազանութիւնները։ Դա Գենուազի իշխան Ստեփաննոս Շահումեանն էր։ Նա գրգռում էր մելիքներին միանալ, հզօր ոյժ կազմել թշնամիների դէմ, բայց միութիւն չէր կայանում։ Այդպիսի մի հաւաքող, կազմակերպող ոյժ նա տեսնում էր Դաւիթ բէկի մէջ, որին և դիմում է նամակով։

Այդ ժամանակ Դաւիթ բէկը Վրաստանում էր գտնւում։ Վրաց Շահնաւազ իշխանի քաջ զօրավարներից մէկն էր, տէրութեան երկրորդ անձը և իշխանի աղջկայ՝ Թամարի սիրելին։ Ստացել էր թաւառութիւն, ունէր կալւածներ և ճորտեր։

Ստանալով Շահումեանի նամակը, որի մէջ նա մռայլ գոյներով նկարագրում էր հայրենիքի տառապանքը, թշնամու բարբարոսութիւնները, երկու մելիքների դաւաճանութիւնը, և միևնոյն ժամանակ կոչ էր անում ժողովրդի բերանով շտապել հայրենիք և գործի գլուխ անցնել, Դաւիթ բէկը թողնում է իր վայելած դիրքը և պատիւը, իր գեղեցիկ Թամարին և 1722 թ. ուղևորւում է Սիւնեաց աշխարհ՝ իր հայրենիքը։ Նրա հետ միանում են և այն հայերը, որոնք գտնւում էին վրաց ծառայութեան մէջ՝ Մխի-

թար սպարապետ, Բայինդուր իշխան, ընդամենը 40 անձինք։

Դաւիթ բէկը արդէն իր հայրենիքումն է։ Տեղի է ունենում բացատրութիւն երկու բարեկամների մէջ։ Ստեփան Շահումեանը անկեղծ խոստովանում է, որ ժողովրդական հանրագիրը կեղծած էր և թէ նա այդ արել է այն նպատակով, որ Դաւիթ բէկը անպատճառ գայ։ Դաւիթ բէկին սկզբում տիրում է հիասթափութիւն, թէ ինչու խաբեց, բայց յետոյ վճռում է անմիջապէս գործի գլուխ անցնել։

Ժողովրդի մէջ հեղինակութիւն ձեռք բերելու նպատակով, հայ զօրավարները վճռում են յարձակում գործել Կարս-չօղու կոչւած վայրենի ցեղի վրայ։ Դաւիթ բէկը Վրաստանից եկած քառասուն կարիճներով ջարդում են այդ ցեղը Ուշ-Թէփէի մօտ։ Լուրը սարսափի մէջ է ձգում Սիսիանի թուրքերին, որոնք թողնելով իրանց գիւղերը՝ փախչում են լեռները։ Իսկ տեղացի հայերը, իմանալով բէկի փառաւոր յաղթութիւնը, հաւաքւում են նրա դրօշակի տակ։ Այժմ Դաւիթ բէկը արդէն իր ձեռքի տակ ունէր 500 ձիաւոր, բոլորը ամենաընտիր տղամարդիկ։ Այնուհետև հայերը մէկը միւսի հետևից մի քանի յաղթութիւններ են տանում, որի շնորհիւ ժողովրդի բոլոր խաւերում տարածւում է Դաւիթ բէկի՝ իբրև քաջ զօրավարի՝ համբաւը։

Ազատագրական շարժումը գնալով ընդհանրանում էր։ Բոլոր դասակարգերը ջերմ մասնակցութիւն էին ցոյց տալիս։ Մելիքները միանում են, բացի Մելիք-Ֆրանգիւլ և Դաւիթ Ուրացող մելիքներից։ Հոգևորականութիւնը նոյնպէս անգործ չէր։ Եկեղեցական անձերը, ոսկին ու արծաթը հալում էին պատերազմական պիտոյքների համար։ Տաթևի վանքի Ներսէս

որբազանը ազգի ներկայացուցիչներին հրաւիրում է ժողով և Վարդանանց տօնի օրը՝ Վարդան Մամիկոնեանի դագաղի առաջ՝ ասում է մի վառվռուն ճառ, որի մէջ կոչ էր անում ժողովրդին դէպի սուրբ գործը։ Ճառին հետևում է երդման հանդիսաւոր ուխտը։ Ոգևորուած էին և հայուհիները, որոնք իրանց թանկագին զարդերը նուիրում էին ընդհանուր գործին։ Իսկ բուն ժողովուրդը տալիս էր բազմաթիւ կամաւորներ. այնպէս որ Դաւիթ բէկի դրօշակի տակ հաւաքուած զօրքերի թիւը հասնում էր 8000-ի։

Պատերազմական գործողութիւնների գլխաւոր կենտրոնը Տաթևի վանքն էր իր անառիկ դիրքով և ամրութիւններով։ Դաւիթ բէկը բոլոր գնդերի սպարապետ նշանակեց Մխիթարին, իսկ իրան վերապահեց ընդհանուր հրամանատարութիւն։ Իր բոլոր ոյժերը նա բաժանել էր երկու գլխաւոր մասերի։ Առաջին մասը կոչւում էր տիրապետող, միւսը կազմուած էր բազմաթիւ մանր խմբերից, իւրաքանչիւրի մէջ յիսունից ոչ աւելի զինուորներ, որոնց նպատակը պիտի լինէր պարտիզանական կռիւ մղել թշնամու հետ անակնկալ յարձակումներով։ Խմբապետները գլխաւորապէս այն անձինք էին, որոնց բէկը բերել էր իր հետ Վրաստանից։

Հայերը տանում էին յաղթութիւն յաղթութեան ետևից։ Դաւիթ Ուրացողը, որ Ֆաթալի խանի աջն էին էր, հայերի հետ ունեցած կռուում զերի է ընկնում և հրամանատարի ներկայութեամբ գլխատւում է։ Նոյնպէս եղեռնական վախճան ունեցաւ նրա որդին՝ Շահ-Կուլի անունով, որին սպանում է մի վրէժխնդիր տաթևացի գեղջկուհի, և այսպիսով ամբողջ Տաթևի վիճակը ազատւում է երկու մեծ չարագործներից։

Հետևեալ նշանաւոր յաղթութիւնն էր Զևու բերդի առումը, որ գտնւում էր Ասլամազ-Կուլի-խանի իշխանութեան ներքոյ։ Հայերի յաղթութեան մէջ մեծ դեր էր կատարում մի գինեվաճառ այրի կին, որ եղել է երբեմն Տաթևի վանքի Խորէն վարդապետի սիրուհին։ Ահա այդ աբեղան ընկերակցութեամբ Շահումեանի և երկու ուրիշ ընկերների ծպտեալ մտնում են բերդը և գինեվաճառ Սօնայի հետ կազմում են մի սարսափելի դաւադրութիւն, որի հետևանքը լինում է այն, որ բերդի զինարանի բանալիները ընկնում են հայերի ձեռքը, որոնք զինւում են. սկսւում է կոտորած, հրդեհւում են տներ, որոնց թւում նաև Ասլամազ-Կուլի-խանի պալատը։ Տեսնելով, որ իր հարեմը կարող է ընկնել պիղծ գեաւուրների ձեռքը, նա պայթեցնում է ամբողջ կանանոցը, որ սոսկալի բոմբիւնով բարձրանում, ցնդում է օդում։ Զևուն ընկնում է հայերի ձեռքը։ Այնուհետև Դաւիթ բէկը դարձեալ մի խոշոր յաղթութիւն է տանում, այս անգամ գործ ունենալով Ֆաթալի-խանի և դաւաճան Մելիք-Ֆրանգիւլի հետ։ Վերջինս կամենում է հայոց զօրքը ձգել ծուղակի մէջ և դիմում է հետևեալ միջոցին։ Նախ՝ իր զղջման մի թուղթ է ուղարկում հայոց զօրապետին, յետոյ ինքն էլ անձամբ ներկայանում է Թորոս իշխանին և ըսկսում է հաւատացնել, որ այժմ միանում է հայերի հետ Ֆաթալի-խանի դէմ կռուելու։ Իսկ երբ սկսւում է կռիւը, դաւաճանի դիմակն ընկնում է։ Հայոց զօրքերը անհամեմատ աւելի սակաւ էին, քան թշնամու զօրութիւնը, բայց կռւում էին զարմանալի հերոսութեամբ։ Երբ երեկոյեան պահուն պարսիկները ջարդուած փախչում էին և հայերը հալածում, այդ միջո-

ցին հանում է Մելիք-Ֆրանգիլը, միևնոյն ժամանակ յետ են դառնում փախչողները, հայերն ընկնում են երկու կրակի մէջ,—սկսւում է սարսափելի կոտորածը։ Ընկնում է Թորոս իշխանը, որ հաւատացել էր դաւաճան մելիքի զղջման, վիրաւորւում են հայ զօրաւորներից մի քանիսը, վերք է ստանում Ֆաթալի-խանը, գերի է ընկնում Ստեփաննոս Շահումեանը։ Սակայն Մելիք-Ֆրանգիլը իր արժանի պատիժը ստացաւ։ Երբ կռւից յետոյ, հրճւելով Թորոս իշխանի մահով, վերադառնում էր հայրենի օջախը, սպանւում է գերութիւնից ազատւած Շահումեանի գնդակով։

Այնուհետև առ ժամանակ խաղաղւում է աշխարհը։ Իշխան Ստեփաննոս Շահումեանը և նրա սիրածը գտել էին իրար, հասել էին իրանց փափագին։ Նրանց սպասում էր անհուն երջանկութիւն։

Բաֆֆին աւարտում է իր վէպը այն միջոցին, երբ Դաւիթ բէկը դեռ չէր հեռացել պատերազմական ասպարիզից, երբ դեռ շատ գործեր ունէր կատարելու։ Նա տալիս է միայն Սիւնեաց հերոսի յետագայ յաղթութիւնների համառօտ նկարագիրը։

«Դաւիթ բէկը» պատմ. տեսակէտից.

Ինչպէս մեզ յայտնի է, պատմական վէպի մէջ կարևորը ոչ այնքան պատերազմներն են, որքան ժամանակակից կեանքը, ժամանակի ոգին։ Մենք կուզէինք տեսնել, օրինակ, թէ ինչպէս էին ապրում մելիքները իրանց ամրոցներում. նրանց կենցաղը, նրանց ընտանեկան յարաբերութիւնները, գաւակների կրթութիւնը։ Կուզէինք տեսնել, թէ ինչպէս էր ապրում հայ գեղջուկը իր խրճիթում. գոհ էր իր վիճակից, ումից էր գանգատւում, ով էր նրան ճնշողը և հարստահարողը։ Այդ բոլորը կարելի էր ներկայացնել գեղարւեստական պատկերների մէջ, որոնց

մէջ հանդէս կգար Սիւնիքը իր բնակիչներով։ Հետաքրքրական կլինէր, օրինակ, տեսնել, թէ Դաւիթ բէկի երևալը և սկսւած ազատագրական շարժումը ինչպիսի տրամադրութիւն և ինչ յոյսեր էին զարթեցրել ազգաբնակութեան մէջ։ Դրա համար բաւական էր նկարագրել մի ժողովրդական հանդէս կամ գիւղական տեսարան։ Ամբողջ վէպի մէջ կայ միայն մի այդպիսի պատկեր։ Դաւիթ Ուրացողի որդին, վիրաւորւած կռւի մէջ, փախչում է թշնամու հետամտութիւնից և ապաստան է գտնում մի տաթևացու խրճիթում, որտեղ նրան սպանում է տանտիկինը՝ զրդւած վրէժխնդրութիւնից։

Սակայն Բաֆֆին գրքի առաջին մասում գերազանց ծանօթութիւն է ցոյց տալիս պարսիկների բնաւորութեան, նիստ ու կացին։ Խանի պալատը, հարեմը, հարեմական կեանքի բոլոր գաղտնիքները գերազանց ծանօթ են վիպասանին։ Եւ նա այդ բոլորը ներկայացնում է մի շարք պատկերների մէջ։ Նոյնչափ հիմնաւոր տեղեկութիւններ է տալիս գրքի երկրորդ մասում վրաց ժողովրդի մասին։ Մեր առջև հանդէս են գալիս իշխանական դասակարգի ներկայացուցիչները իրանց ցեղական բնաւորութեամբ և սովորութիւններով։ Տեղեկութիւններ տալիս է նաև ճորտերի մասին։ Վրաց ժողովրդական մի հանդէսը նկարագրւած է ամենայն մանրամասնութեամբ և պահպանւած է ցեղային կոլորիտը։

Ինչով բացատրել, որ Բաֆֆին «Խենթի» և «Կայծերի» մէջ տւել է մի շարք գեղարւեստական պատկերներ ժողովրդական կեանքից, «Դաւիթ բէկի» մէջ զլացել է այդ անել։

Հարցը կպարզւի, եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ Բաֆֆին շատ մօտ ծանօթ էր այն

երկրին և ժողովրդին, որոնց մասին նա գրում էր «Խենթի» և «Կայծերի» մէջ։ Ահա ինչու այդ գրուածքների մէջ այնքան մեծ տեղ է բռնում կենցաղագրութիւնը։ Այստեղ Բաֆֆին հարազատ հողի վրայ է կանգնած, ամեն ինչ նկարագրում է վստահութեամբ, մինչդեռ ժամանակ մնում է հաւատարիմ իրականութեան։ Սակայն նա չէ ապրել Սիւնեաց աշխարհում, չէ շփուել ժողովրդի հետ, անմիջապէս չէ դիտել նրա ընտանեկան և համայնական կեանքը։ Իսկ ճանապարհորդել է Սիւնիքում այն ժամանակ (1881 թ.), երբ արդէն ապուած էին վէպի երկու մասերը։ Եթէ այդ ճանապարհորդութիւնը մի օգուտ տուեց Բաֆֆուն, դա այն է, որ նա ուղղեց մի քանի պատմական և աշխարհագրական սխալներ, որոնք սպրտել էին վէպի երրորդ մասի 47—50 էջերի վրայ։

Քանի որ Բաֆֆին լաւ չէր ճանաչում Սիւնեաց երկրի ժողովուրդը, հասկանալի է, թէ ինչպիսի դժուարութիւն պիտի զգար նկարագրելու, դիցուք, սիւնեցու մի ընտանիք այնպէս, ինչպէս նկարագրել է, օրինակ, տանուտէր Խաչօի ընտանիքը։

Հեղինակի երևակայութիւնը կենցաղագրութեան մէջ անզօր է. հասկանալի է, թէ ինչու Բաֆֆին խուսափել է կենցաղագրական պատկերներից։

Վէպի մէջ կան, իհարկէ, պատմական փաստեր։

Այստեղ պատմական կարելի է համարել Դաւիթ բէկը և նրա յաղթական կռիւները, պատմական են միաբան և դաւաճան մելիքները, Ֆաթալի խանը և ուրիշ անձնաւորութիւններ, որոնք մատակցել էին հայ-պարսկական ընդհարումներին։ Պատմական են և այդ կռիւները, թէև

թէև նրանց մանրամասնութիւնների մէջ անշուշտ մեծ դեր է կատարել Բաֆֆու ստեղծագործութիւնը։ Նոյնպէս և հեղինակի սուբիէկտիւ հայեացքը այստեղ մեծ դեր է կատարել. դա երևում է, օրինակ, Ներսէս սրբազանի ճառի մէջ, որ նա արտասանեց Վարդանանց տօնին տագին բազմութեան առաջ։ Ճառը պարունակում էր իր մէջ այնպիսի հանճարեղ մտքեր կանանց էմանսիպացիայի, մարդկային հաւասարութեան և նման խնդիրների մասին, որ կասկածի տեղ չէ մնում, թէ այդ մտքերը նորագոյն ժամանակների արդիւնք են և որ նրանք չէին կարող ծագել XVIII դ. մտաւոր խաւարում Սիւնեաց լեռներում։ Հազիւ թէ այդ ժամանակ մենք ունենայինք Ներսէսի պէս լուսաւորուած հոգևորականներ։ «Երբ կինը խառնւում է գործի մէջ, դա նրա յաջողութեան ամենապարզ նշանն է», ոգևորուած բացականչում է սրբազանը։ «Սեփականութեան իրաւունքը սուրբ է Աստուծոյ համար»,—յայտարարում է մի այլ ճշմարտութիւն։ Անտարակոյս, Ներսէս արքեպիսկոպոսի բերանով խօսում է ինքը հեղինակը։

«Դաւիթ բէկի» արժանաւորութիւնները

Չնայած այս բոլոր պակասութիւններին, որոնց մատնացոյց արինք, «Դաւիթ բէկը» ունի անգնահատելի արժանաւորութիւններ։

Նախ, այն սիւժէտը, որ ընտրել է Բաֆֆին,—ազգային շարժումը Սիւնիքում 18-րդ դարի առաջին քառորդում,—ինքն ըստ ինքեան հետաքրքրական է։ Դրան աւելացրեք հեղինակի հմայիչ տաղանդը պատմելու մէջ, նրա հմուտ գրիչը պատմութիւնը համեմելու բոմանտիկական արկածներով և նկարելու բնութեան գեղեցիկ տեսարաններ։

Բայց դա արտաքին կողմն է միայն։ «Դաւիթ բէկը» թէև պատմական վէպ է, բայց իր էութեամբ,

ներքին իմաստով պատկանում է «Խենթի» և «Կայծերի» սերիային, որտեղ առաջնակարգ տեղ է բռնում գաղափարը, հեղինակի տենդենցը։

Բաֆֆին մնում է հաւատարիմ այն կարծիքին բանաստեղծութեան նշանակութեան մասին, որ նա յայտնել է «Կայծերի մէջ», այն է՝ բանաստեղծութեան նպատակը պիտի լինի տալ ժողովրդին իդէալներ, որոնց մարմնացնելու համար հեղինակը իրաւունք ունի ստեղծել իր ցանկացած հերոսներին։ Այստեղ հեղինակի ցանկացած հերոսներն են՝ Դաւիթ բէկը, Ստ. Շահումեանը, Ներսէս սրբազանը և այլն։ Այդ հերոսներին թէև Բաֆֆին չէ ստեղծել, բայց նրանց սիրել է և նրանց բերանով յայտնել է իր մտքերը։

Ինչպէս միշտ, այժմ ևս Բաֆֆուն աւելի յաջողել են բացասական անձնաւորութիւնները՝ Մելիք-Ֆրանգիւլը և Դաւիթ Ուրացողը, որոնք հակադրւած են համակրելի անձնաւորութիւններին, ինչպէս օրինակ, Դաւիթ բէկը, Թորոս իշխանը և այլն։

Մելիք-Ֆրանգիւլ· Դաւիթ Ուրացող

Երկուսն էլ հագնւած էին պարսիկ աւազների ձևով, մօրուքները և ձեռները ներկւած էին հինայով, խօսում էին պարսկերէն։ Երկուսն էլ փառասէր էին և իրանց նպատակներին հասնելու համար կանգ չէին առնում ոչ մի խոչնդոտի առաջ։

Մելիք-Ֆրանգիւլի առաջնորդութեամբ էր, որ Ֆաթալի խանը իր հրոսակներով գրոհ աւեց Գենուազի սահմանները, որի մելիքը, իշխան Վրթանէսը, անպատրաստ էր և ընկաւ կռւի մէջ։ Շահումեանի տոհմը բնաջինջ եղաւ, և այդ իշխանական տոհմից մնաց միայն պատանի Ստեփաննոսը, որ գերի ընկաւ խանի ձեռքը։ Մելիք-Ֆրանգիւլը սկսում է գործ դնել իր բոլոր սատանայական հնարագիտութիւնները

Շահումեանի հայրենական ժառանգութեան տիրանալու համար։ Թորոսը պիտի դար Ֆաթալի խանի մօտ թանկագին ընծաներով ազատելու գերիներին, որոնց թւում էր և Ստ. Շահումեանը։ Մելիք-Ֆրանգիւլը միացած միւս դաւաճանի հետ՝ խորամանկ միջոցներով աշխատում էին համոզել Ֆաթալի խանին, որ մերժէ Թորոս իշխանին և գերիներին չազատէ։ Բայց իշխանի բերած հազւագիւտ ընծաները, «փէշքէշները», շլացնում են խանին, և ճոխ, ուրախ ճաշկերոյթը պսակւում է գերիների ազատութեամբ։ Ազատւում է և Շահումեանների տոհմի վերջին շառաւիղը՝ Ստեփաննոսը։ Կարելի է երևակայել Ֆրանգիւլի կատաղութիւնը, երբ նրա դաւադրութիւնը չէ յաջողւում։ Իր նպատակին հասնելու համար նա ընդունում է մահմեդականութիւն։ Իսկ թէ ինչպիսի փարիսեցիութեամբ խաբեց Թորոս իշխանին և հայոց զօրքը ծուղակի մէջ ձգեց, այդ արդէն յայտնի է ընթերցողին։

Մելիք-Ֆրանգիւլից յետ չէր մնում Դաւիթ Ուրացողը։ Տաթևի մելիքութիւնը ձեռք բերելու համար մի շարք ոճիրներ է գործում։ Այդ բաւական չէր։ Ընդունում է մահմեդականութիւն, թուրքի անունով իրան կոչում է Բաղր, իր մանկահասակ աղջկան՝ Մարիամին, որ Շահումեան Ստեփաննոսի նշանածն էր, տալիս է Ֆաթալի խանին, որպէս կաշառք։ Ոճրագործութեամբ և կեղտոտ միջոցներով ձեռք է բերում Տաթևի մելիքութիւնը և Տաթևի հայ ժողովրդի համար դառնում է պատուհաս։ Հարստահարում, կողոպտում էր, ծանրաբեռնում էր ժողովուրդը տուրքերով, հարկեր վերցնում էր երեքպատիկ, չորեքպատիկ աւելի, քան թէ պարտաւոր էին։ Ով անկարող էր վճարել, ծախում էր տնային կարասիքը, անա-

սունները, իսկ եթէ այդ էլ չէր բաւում, վաճառում էր նրանց դաւակներին, որոնց դարձնում էին մահմեդական։ Տաթեւացոց տրտունջը և գանգատները տեղ չէին հասնում, և բոլորովին յուսահատուած, անտանելի դրութեան վերջ տալու համար, ժողովրդից մի մեծ խումբ նաֆթով այրում է իրան մահմեդական իշխանի դրան առջև։

«Սամուէլ»

Բաֆֆին իր ոչ մի գրուածքը այնպիսի խնամքով չէ մշակել, ինչպէս «Սամուէլը»։ Այստեղ ամեն բանի մէջ երևում է նատակեաց, տոկուն աշխատանքի դրոշմ։ Հեղինակը իր ձեռքի տակ ունեցել է Փաւստոս Բիւզանդացին, որից յաճախ վկայութիւններ է բերում վէպի մէջ, նոյնպէս և շատ ուրիշ նիւթեր։ Դրան ապացոյց կարող է ծառայել նրա պատմական հմտութիւնը, բազմաթիւ հնագիտական, տեղագրական և տոհմագրական տեղեկութիւնները։

Բաֆֆին «Սամուէլի» յառաջաբանում այսպէս է բացատրում վէպի շարժառիթը. «Խրախուսելով այն գաղափարով, թէ որքան մեծ կրթողական ազդեցութիւն ունի պատմական վէպը ընթերցողի համար, երբ նա տեսնում է իր նախնեաց մեծագործութիւնները և աշխատում է հետևել նրանց առաքինութիւններին, տեսնում է և նրանց մոլութիւնները, աշխատում է հեռու պահել իրան նրանց կատարած սխալներից,—այդ միտքը քաջալերեց ինձ»։

Բովանդակութիւն.

IV դարի երկրորդ կիսում (364—400 թ.) Հայաստանը մի այսպիսի դրութիւն էր ներկայացնում։

Պարսից Շապուհ թագաւորը վճռել էր բնաջինջ

անել Հայաստանից քրիստոնէութիւնը և նրա փոխարէն մացնել կրակապաշտութիւն կամ Մազդէզանց օրէնք, դրա հետ միասին նաև պարսից լեզուն և սովորութիւնները։ Նրա նպատակն էր հայերին ձուլել պարսիկների հետ և աշխարհից ջնջել հայ անունը։ Բայց շուտով համոզուեց, որ այնքան էլ հեշտ չէ ամբողջ ազգ կլանել։ Շապուհը չգիտէր, թէ հայ ազգը որքան ամուր է իր կրօնի մէջ։ Նա կարծում էր, որ իր նպատակների գլխաւոր խոչնդոտներն են Արշակ Բ. թագաւորը և նախարարները։ Արշակ թագաւորին հրաւիրում է մայրաքաղաք Տիզբոն և նենգաբար կալանաւորում և բանտարկում է Անոյշ բերդաբար կալանաւորում և բանտարկում է Անոյշ բերդում։ Նոյնպէս նենգաբար սպանում է հայոց սպարապետ Վասակ Մամիկոնեանին և նրա պաճուճաբապետ Վասակ Մամիկոնեանին և նրա պատանքը դնում է Արշակի առաջ, որպէս զի նրա սրտից երկիւղը չհեռանայ։ Նա իր կողմն է գրաւում Վասպուրականի իշխան Մերուժան Արծրունուն և Տարօնի իշխան Վահան Մամիկոնեանին, որոնք երկու ամենահզօր նախարարութիւնների ներկայացուցիչներն էին։ Նրանց հետ իր կապերն ամրապնդելու համար, Շապուհը Մերուժանին խոստանում է Հայոց թագաւորութիւնը և իր քրոջ Որմիզդուխտին, իսկ Վահանին սպարապետութիւն և միւս քրոջը կնութեան։ Շապուհի ծրագրի մէջ մտնում էր՝ նախ դաւաճան նախարարների հետ ուղարկել Հայաստան մոգերի առաքելութիւն, որպէս զի եկեղեցիների փոխարէն հիմնեն տաճարներ, յետոյ ամեն տեղ բաց անել պարսկական դպրոցներ և նախարարների դաւակներին դաստիարակել պարսկական ոգով։ Բացի այդ, հրամայած էր կալանաւորել նախարարներին առանձին բանտերում։ Նրա նպատակն էր այդպիսով ջնջել հայոց ոյժերը։

Հայաստանը մնացել էր բոլորովին անտէր և անպաշտպան։ Արշակ թագաւորը տաւայտում էր Անոյշ բերդում։ Հայոց թագաժառանգ Պապը իր կնոջ և որդիների հետ պատանդ էր Բիւզանդիայի Վալէս կայսեր մօտ։ Հայաստանի քահանայապետ Ներսէս Մեծը աքսորւած էր Պատմոս կղզում դարձեալ նոյն կայսեր հրամանով։

Երբ Սամուէլը իմանում է Շապուհի հրէշաւոր ծրագիրները և Մերուժանի ու իր հօր դաւաճանութիւնը, իսկոյն լուրը յայտնում է իր հօրեղբօր որդուն՝ Մուշեղ Մամիկոնեանին։ Աշտիշատի վանքի խցում գումարւում է ժողով, որին ներկայ էին, բացի հրաւիրողներից, նաև Ներսէս Մեծի որդի՝ Սահակ Պարթեւը և Մեսրոպը։ Ամենքը համոզւած էին, որ պատերազմն անխուսափելի է, և վճռում են անմիջապէս պատրաստութիւններ տեսնել։ Բարեբախտաբար, այդ ժամանակ մի քանի նախարարների մէջ դեռ վառ էր հայրենասիրական ոգին, և Շապուհի հրէշաւոր ծրագիրների դէմ կանգնեց նրանց միաբան զօրութիւնը։ Մուշեղ Մամիկոնեանը ընտրւում է ընդհանուր հրամանատար, և նրա շուրջը խմբւում են Սամուէլը, Ռշտունեաց իշխան Գարեգինը և ուրիշները։ Գործողութիւնների կենտրոնատեղին ընտրւում է Արտագերս ամրոցը, որ գտնւում էր Փառանձեմ թագուհու ձեռքի տակ։

Հայաստանի գլխին փոթորիկը ճայթում է սպասածից վաղ։ Մերուժան Արծրունին և Մամիկոնեանը պարսից զօրքերի գլուխ անցած՝ գրոհ են տալիս Հայաստան, ամեն տեղ սփռելով կոտորած և աւեր։ Պաշարում են Ռշտունեաց իշխանի ամրոցը, որ կանգնած էր Աղթամարայ կղզու ապառաժների վրայ։ Յարձակումը տեղի է ունենում գիշերով։ Ռշտունեաց իշխանի բացակայութեան պատճառով, պարսից զօրքը, առանձին դիմադրութեան չհանդիպելով, վերցնում է բերդը, սկսում է կողոպուտ ու կոտորած, և գերի է վերցնում տիկին Համազասպուհին։ Ռշտունցի քաջ լեռնականները սասունցիների հետ միացած՝ անակնկալ յարձակումով ջարդում են պարսիկներին և հալածում մինչև Վանայ բերդը, ուր նրանք պատսպարւում են։ Նոյն գիշեր լեռնականները իրանց Գարեգին իշխանի և օրիորդ Աշխէնի առաջնորդութեամբ վերցնում են Վանայ բերդը, և նորից ջարդում են թշնամուն։ Դաւաճանները սարսափահար և ամօթապարտ փախուստի են դիմում, իսկ նրանցից մէկը, Վահան Մամիկոնեանը, իր քրոջը՝ Համազասպուհուն վաղօրօք կախ է տալիս աշտարակի բարձրութիւնից։

Երբ Շապուհն իմանում է իր զօրավարների ամօթալի պարտութիւնը, վճռում է անձամբ անցնել զօրքի գլուխ և մեծ արշաւանք կատարել դէպի Հայաստան։ «Նա գալիս էր, գրում է Բաֆֆին, որպէս մի մրրկածուփ հեղեղ, ամեն ինչ ողողելու, ամեն ինչ ոչնչացնելու համար։ Որտեղից և անցնում էր, իր ետևից թողնում էր աւերակներ, տխուր անապատ և ամայութիւն։ Քաղաքներն ու աւանները կրակի ճարակ էին դառնում, իսկ փախչելու անկարող բնակիչները գերւում էին։ Նրան առաջնորդում էին Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնեանը»։ Արտագերս բերդը պաշարելու նախընթաց օրը Շապուհի հրամանով Զարեհաւանում կատարւեցին գազանային եղեռնագործութիւններ, որոնց ենթարկւում էին չափահաս և անչափահաս գերիներին՝ մանկահասակ օրիորդներին, կանանց, նոյն իսկ մանուկներին։

Մի ամբողջ ամիս տևեց Արտագերս բերդի պա-

շարումը։ Շապուհը զայրացած թողնում է պաշարումը և գնում Պարսկաստան, մեծ ուրախութիւն պատճառելով Արտագերսի պաշարուածներին, որոնց մէջ, բացի Փառանձեմ թագուհուց, կային հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնեանը, Սահակ Պարթևը, Մեսրոպը, Ռշտունեաց օրիորդ Աշխէնը և ուրիշները։

Մուշեղ Մամիկոնեանը իր զօրքը վերցնում և գնում է Թշնամու եաւիից։ Թաւրիզի մօտակայքում այնպիսի ջարդ է տալիս պարսիկներին, որ Շապուհը՝ գլուխը կորցրած՝ փախչում է, թողնելով հայերի ձեռքին արքայական վրանները, կանանոցը, թագուհուն և քոյր Որմիզդուխտին, որ Մերուժանի նշանածն էր։ Մուշեղը՝ պարսիկ գերիների վրայ կատարում է նոյն եղեռնագործութիւնները, ինչ որ գործել էր Շապուհը հայերի վրայ։ Իսկ կանանց վերաբերմամբ նա վարուում է ոչ Շապուհի պէս, այլ մեծահոգութեամբ և մարդասիրաբար։ Պարսից թագուհուն և միւս կանանց պատուով ուղարկում է Տիզբոն մայրաքաղաքը արքայից արքային, իսկ Որմիզդուխտին պահում է Արտագերսում, որպէս պատանդ, և յանձնում է Փառանձեմ թագուհու խնամակալութեան։

Շուտով իրերի դրութիւնը փոխուում է։ Թագուհու խնդրանօք Մուշեղ սպարապետը գնում է Բիւզանդիոն, ուր Վաղէսին ժառանգել էր Թէոդոս կայսրը, որ աւելի բարեհաճ էր դէպի հայերը։ Պատգամաւորութեան նպատակն էր Փառանձեմ թագուհու և հայ ազգի կողմից խնդրել կայսրին, որ թագաժառանգ Պապին զօրքով ուղարկէ Հայաստան և բաղմեցնէ հօր գահի վրայ։ Թէև սպարապետը բարի գործ չէր գուշակում պատգամաւորութիւնից, բայց գիջեց հայոց թագուհուն։

Առ ժամանակ պատերազմը դադարած էր։ Շապուհը իր զօրքերը տանում է քուշանաց երկիրը պատերազմելու, որովհետև ապստամբել էին պարսից դէմ։ Սամուէլը հեռացել էր պատերազմական տապարիից. հիւանդ էր և ապաքինում էր մի վանքում վանական հայրերի հոգացողութեան տակ։

Մերուժանը գիտէր, որ իր Որմիզդուխտը գտնուում է Արտագերս ամրոցում, միայն սպասում էր յարմար առիթի տիրանալու թէ բերդին և թէ սիրուհուն։ Այդ ժամանակ Արտագերսում մի մեծ դժբախտութիւն պատահեց։ Երևաց սարսափելի ժանտախտը և սկսեց անխնայ կոտորել։ Հազարաւոր մարդիկ զոհ գնացին դարհուրելի համաճարակին։ Դրան աւելացաւ սովը, որ ամեն բան լրացրեց, և վերջ ի վերջոյ յայտնուեց, որ ամբողջ բերդում ողջ մնացել են միայն Փառանձեմ թագուհին, Որմիզդուխտը և երկու նաժիշտներ։ Վերջին հարուածն էլ հասցրեց դաժան Մարդպետը, որ Արշակի օրով դաւաճանեց թագաւորին և պատճառ եղաւ նրա կործանման. այժմ ծառայում էր Շապուհի մօտ։ Նա գիտէր բերդի բոլոր գաղտնի ճանապարհները։ Մտնում է բերդը և տեսնում նրա ամայութիւնը։

Մերուժան Արծրունին՝ Մարդպետից իմանալով, որ բերդում զօրք չկայ, գնում է և առանց դժուարութեան վերցնում է բերդը։ Եւ ուզում է տեսնում։ Որմիզդուխտը նրա առաջ։ Նա պատրաստ էր նրան իր գիրկն առնել, բայց հպարտ օրիորդը արժանացնում է նրան իր աշտամարանքին և դիմելով պարսից սպարապետին, պահանջում է առաջնորդել իրան և ընկերուհիներին եղբօր մօտ մինչև Տիզբոն։ Աւելի մեծ անպատուութիւն չէր կարելի հասցնել դաւաճանին, քան Որմիզդուխտի այդ սպանիչ արհամարհանքը։

Պատերազմը նորոգւում է։ Դաւաճան իշխանները պատերազմական թատերաբեմը տեղափոխել են Արարատեան դաշտավայրը։ Այստեղ ևս նրանք կատարում են միևնոյն աւերմունքը և կանաչ երկիրը դարձնում են ամայի անապատ։ Ահա նրանց ահագին բանակը անթիւ վրաններով։ Մի կողմում շղթայակապ գերիներ են, որոնց սպասում է դաժան մահը։ Միւս կողմում՝ մի բարձր խարոյկ, որ կազմուած է սուրբ գրքերից և շուտով կրակը պիտի լափէ։ Ահա հեռւում դարձեալ մի բուրգ—դրանք մարդկային կառափներ են։

Սամուէլը եկել է հօր մօտ վաղուցւայ նպատակը իրագործելու։ Հայրը տեսնելով, որ նա չափազանց տխուր է, որդուն զբաղեցնելու համար, կազմակերպում է որսորդական արշաւանք Արաքսի ափերում։ Հայր ու որդի առանձնանում են «Իշխանական կղզում», և այնտեղ Սամուէլը փորձում է համոզել հօրը, որ զղջայ և դարձի դայ,—դա գրգռում է հօր զայրոյթը և նա ձեռքը տանում է դէպի սուրը, բայց որդին աւելի ճարպիկ է գտնւում և սպանում է հօրը։

Շուտով տեղի է ունենում մի ճակատագրական և վերջին կռիւ հայերի և պարսիկների մէջ։ Մերուժանի թշնամին այժմ մի կին է—նրա մայրը։ Քաջ ռշտունցիների գլուխ անցած՝ շրջապատել է իր որդու բանակը, պահանջում է ազատել գերիներին։ Որդու պատասխանը—յարձակման հրամանն էր։ Կռիւը գնալով կատաղի կերպարանք էր ստանում։ Սամուէլը հրաշքներ էր գործում. աներևակայելի քաջութեամբ շանթում էր մերթ այս մերթ այն կողմը, և մի խումբ ձիաւորներով զարմանալի արագութեամբ պատառում է գերիներին շրջապատող զինուորների շղթան, որից յետոյ գերիները «փրկութեան ժամը հասաւ» աղաղակելով, փշրում էին կապանքները և ըստանում իրանք էլ կռուել։

Մերուժանի վերքը, որ նա ստացել էր որսի ժամանակ պատանի Արտաւազդի նետից, այժմ նորից բացւում է, և նա պիտի արիւնաքամ լինէր և մեռնէր, եթէ Սամուէլը չկապէր նրա վերքը։

Այնուհետև Սամուէլին տեսնում ենք հայրական տանը, ուր նա հանդիպում է այն ժամին, երբ մայրը մոգերով շրջապատուած՝ գարնան հանդիսաւոր տօնն էր կատարում։ Սամուէլը նախ խնդրում, յետոյ սպառնում է մօրը—հանգցնել զոհարանի կրակը, բայց արժանանում է մօր արհամարանքին, և դժբախտ որդին սպանում է մօրը «այն սրով, որով սպանեց դաւաճան հօրը»։

«Սամուէլը» պատմական տեսակէտից.

Մենք արդէն գիտենք, թէ որքան մեծ դժուարութիւն կայ հայ հեղինակի համար գրել պատմական վէպ ազգի հեռաւոր անցեալից, քանի որ հայ պատմագիրները զլացել են տեղեկութիւններ հաղորդել ժողովրդի կենցաղի մասին։ Մեր պատմութեան այդ մեծ թերութեան վրայ երկար կանգ է առնում Բաֆֆին «Սամուէլի» յառաջաբանում։

Այն հարցին, թէ ինչ է տալիս մեզ հայոց պատմութիւնը, նա պատասխանում է. «Մենք կարդում ենք նրա մէջ մեր թագաւորների, մեր իշխանների անունները, ծանօթանում ենք նրանց ներքին կռիւների և արտաքին պատերազմների հետ. գիտենք, թէ որը որքան տարի տիրեց կամ ինչ լաւ և վատ գործեր կատարեց,—այդ բոլորը գիտենք մենք։ Բայց թէ ինչպէս էր կազմակերպուած նրանց ընտանեկան կեանքը, ինչ սովորութիւններ ունէին, ինչպէս էին հագնւում, ինչ տեսակ տների մէջ էին ապրում, մի խօսքով, իբրև մարդ, նրանց ընտանեկան և հասա-

բակական կենցաղավարութեան մասին մեր պատմութիւնը, եթէ չասեմ խպտաս, կարող եմ ասել, մեծ մասամբ լռում է։ Մեր պատմութեան մէջ գրեթէ բոլորովին մոռացած է ամբոխը։ Մեր պատմագիրները չեն նկատել, որ բացի թագաւորներից և իշխաններից, բացի հոգևորականներից և զինուորներից, Հայաստանում կար և ժողովուրդ, որ ապրում էր, որ իր կեանքն ունէր, որ իր տօները, հանդէսները և ցընծութիւններն ունէր... Մենք չգիտենք, ինչպէս էր ապրում հայ շինականը, ինչ տեսակ էր հագնւում, և ինչ տեսակ զարգացութիւններ ունէր։ Մենք չգիտենք, թէ ինչ էր շինում հայոց արհեստաւորը, ո՞ր երկրների հետ գործ ունէր հայոց վաճառականը, կամ ինչ տեսակ անասուններ էր սնուցանում հայոց խաշնարածը։ Մեր պատմութիւնը լուռ է այդ բոլորի մասին։ Մեր պատմութեան մէջ մոռացած է և մեր ժողովրդի մի նշանաւոր տարրը—կինը։ Մենք ծանօթ ենք մի քանի կանանց անունների հետ միայն, իսկ նրանց կեանքը իր բոլոր մանրամասներով մեզ անյայտ է։ Ի՞նչ էր հայ կինը, որպէս ամուսին, ինչ էր նա, որպէս մայր, ինչ դեր էր խաղում, որպէս ընտանիքի և հասարակութեան անդամ—այդ մենք չգիտենք։ Իսկ առանց կնոջ վէպ կարող չէ լինել. կինն է նրա ոգին և կենդանութիւնը»։

Բաֆֆու այս խոստովանութիւնից յետոյ հասկանալի է, թէ ինչու IV դարի հայոց կեանքի նկարագրութիւնը այնքան չնչին տեղ է բռնում «Սամուէլի» մէջ։ Այստեղ դուրս է բերուած գլխաւորապէս իշխանական դասակարգը։ Առաջին էջերից մեր առջև բացւում է Վահան Մամիկոնեանի Ողական ամրոցը իր փառահեղ դահլիճներով և փարթամ կահաւորութեամբ, որտեղ միահեծան իշխում է Սամուէլի մայր

Տաճատուհին, որ լի տոհմային հպարտութեամբ, փառասէր, պարսից կրօնին և սովորութիւններին հակուած մի կին է։

Բայց ահա և մի ուրիշ ընտանիք, որ առաջինի հակապատկերն է։ Այստեղ տիրապետում է հայրենիքի սէրը, և հալածւած է օտարամոլութիւնը։ Գերդաստանի գլուխը մի հայ մատրօնա է, որ տան դուռը փակում է անարժան որդու առաջ, որ իր դաւաճան որդու դէմ գնում է զօրքով։ Դա Մերուժան Արծրունու ընտանիքն է։

Սրանից երևում է, որ Բաֆֆին քիչ թէ շատ տեղեկութիւններ տալիս է իշխանական դասակարգի մասին։ Սակայն ժողովրդական կեանքից պատկերներ գրեթէ բացակայում են։ Իբրև բացառութիւն, կարելի է բերել մի այսպիսի տեսարան։ Մերուժանը, հայրենական քաղաքում կրած անպատուութիւնից յետոյ, թիկնապահներից լքւած, ահ ու դողի մէջ որոնում էր մի ապահով տեղ։ Մութը պատել էր աշխարհ, իսկ նա գնում էր յոգնած, ջարդւած և քաղցած։ Ճանապարհին տեսնում է հովիւներ։ Նրանք Մերուժանի հովիւներն էին, բայց չճանաչեցին իրանց տիրոջը։ Վասպուրականցի լեռնական հովիւը նրան հրաւիրում է իր տաղաւարը, բերում է հիւրի համար հաց, պանիր, սոխ և խորոված։ Մերուժանը ուտում է մեծ ախորժակով, որովհետև ամբողջ օրը քաղցած էր։ Տաղաւարի շուրջը հաւաքւում են միւս հովիւները, և հետաքրքրական խօսակցութիւն է ընկնում։ Պարզամիտ հովիւները չգիտէին, որ հիւրը Մերուժան Արծրունին է, իրանց տէրը, և նրա հացէին տեղում էին զարհալի կատակներ. որը նրա մասին ծիծաղելի առակ էր պատմում, որը հայ-

հոյում էր, իսկ տաղաւարի տէրը խստիւ դատապարտում էր ուրացող իշխանին։ Հայաստան աւերողը այդ ժամին համբերութեամբ տանում էր իր սեփական հովիւների կծու ծաղրը, կուլ էր տալիս նրանց վիրաւորանքը։ Ահա որքան յեղյեղուկ է մարդկային բախտը։

Աւելի յաջողել է Բաֆֆուն պատկերացնել Հայաստանի քաղաքական դրութիւնը, երբ ազգի լինել կամ չլինելու հարցն էին որոշում հայերը պարսիկների հետ։

Վէպի հերոսը. Սամուէլ.

Սամուէլը նկարագրւած է ոչ այնքան յաջողութիւնների և անգոյն պատկերի տպաւորութիւն է թողնում։ Նրա մէջ կան ինչ որ հակասութիւններ և դանդաղկոտութիւն։

Ճակատագիրը նրա վրայ դրել էր ծանր պարտականութիւն՝ հաւատափոխ և ազգուրաց հօրը դարձի բերել կամ, եթէ հակառակի, կատարել իր դիացածը։ Հօր դաւաճանութեան շնորհիւ նրա ամբողջ ներքին աշխարհը վրդովւած է և պահանջում է վրէժխնդրութիւն։ Բայց միևնոյն ժամանակ նա սիրում է հօրը։ Ուրեմն ինչպէս պիտի վարւէր Սամուէլը։

Պատասխանը շատ պարզ է։ Որքան կարելի է շուտ տեսնւել հօր հետ և, քանի դեռ ուշ չէ, չարիքի առաջն առնել։ Դանդաղկոտութիւնը, վարանումը՝ կարող էր միայն վատ հետևանք ունենալ։ Բայց ինչ էք կարծում, Սամուէլը հէնց այդպէս էլ անում է, չնայած, որ ներկայացել էր շատ յարմար ապիթ տեսնելու հօրը և մտերմական զրոյց անելու նրա հետ։ Նրա մայրը՝ տիկին Տաճատուհին պատրաստել էր փառահեղ շքախումբ ամուսնուն ընդ առաջ գնալու համար։ Սամուէլը, փոխանակ ապաքեղութիւնը ի կատար ածելու, գնում է նախ Ռշտունեաց ամրոցը՝

չքնաղ օրիորդ Աշխէնին տեսնելու։ Տեսութիւնը թէև յաջողւում է, բայց նա շատ թանկ է նստում Սամուէլին։ Երեք հարիւր թիկնապահներից մնում են ընդամենը քառասուն հոգի. մնացեալը անհետանում, կորչում են Ռշտունեաց անտառներում։ Ահա Սամուէլի առաջին սխալ քայլը իր տխուր հետևանքով։

Մինչդեռ նա այսպէս դանդաղում էր, Մերուժան Արծրունին արդէն սկսել էր արիւնով ողողել Հայաստանը։ Տարաբախտաբար, այդպիսի վատ ժամանակում Սամուէլը հիւանդանում է, որի շնորհիւ ստիպւած էր առժամանակ թողնել իր մասնակցութիւնը ազգային շարժման մէջ։ Նա գնում է, վերջապէս, իր պարտականութիւնը կատարելու շատ ուշ։ Նրա հայրը և Մերուժանը ձեռք ձեռքի տւած՝ ամայացրել էին շատ քաղաքներ է գիւղեր և հազարաւոր դիակներ էին թողել իրանց ետևից։ Այլ ևս ինչ նշանակութիւն ունէր Սամուէլի կողմից հօր համոզելը։ Կամ կարելի էր արդեօք համոզել մի դաւաճանի, որի ձեռքերը ներկւած էին հայրենակիցների արիւնով։ Բայց Սամուէլը նոյն իսկ սպանութիւնից առաջ դարձեալ յոյս ունէր, որ կարող էր հօրը համոզել։

Սամուէլը իսկական հերոսի դերի մէջ է միայն վերջում։ Մերուժանի հետ վարած կռւում նա քաջ պատերազմող է, աջ ու ձախ շանթում էր թշնամուն և խորտակելով պահապան զինւորների շղթան, ազատում է բազմաթիւ գերիներին, որոնց սպասում էր դաժան մահը։ Հօր և մօր սպանութիւնը և այդ փառաւոր յաղթանակը կատարւում են շատ արագ, մէկը միւսի ետևից։ Բայց Սամուէլը մեզ զարմացնում է իր հետևեալ արարքով։ Նա, որ առանց տատանւելու, առանց խղճի խայթոցի սպանում է մօրը պարս-

կական տօն կատարելու համար, խնամքով կապում է վիրաւոր Մերուժանի վէրքը, որպէս զի նա արիւնաքամ չլինի։ Խնայում է այն մեծ դաւաճանին, որ Հայաստանը աւերակ դարձրեց։ Նրա մեծահոգութիւնը ներկայ դէպքում անսպասելի և անտեղի էր։ Ծերունի Հարբակը, որ փորձած մարդ էր, դըժգոհութեամբ ասում է. «Ես չեմ հասկանում այս տեսակ գթութիւններ. ինչ է նշանակում կենդանի թողնել վիրաւոր վիշապին»։

Մուշեղ սպարապետը.

Համեմատաբար աւելի յաջող է նկարագրւած հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնեանը։ Մենք ճանաչում ենք նրան իբրև քաջ, հմուտ պատերազմողի, որ նա ցոյց տւեց Թաւրիզի մօտակայքում տեղի ունեցած ճակատամարտի մէջ, երբ թշնամուն հասցրած ջարդը այն աստիճանի զօրեղ էր, որ արքայից արքան՝ գլուխը կորցրած և սարսափահար դիմեց փախուստի, հայերի ձեռքում թողնելով թագուհուն և կանանոցը։

Մուշեղը, Շապուհի նման, հետևում էր իր նշանաբանին՝ «ակն ընդ ական» կամ հայի ասածով՝ «խոտորնակին խոտորնակ»։ Շապուհը նրա հօրը ըսպանեց և նրա կաշուից շինել տւեց պաճուճապատանք։ Նա ևս անում է նոյնը, բայց աւելի մեծ ծաւալով։ Գերի ընկած հարիւրաւոր պարսիկներին նոյն վիճակին է արժանացնում, ինչ որ Շապուհը արեց նախկին հայոց սպարապետին։ Սակայն Մուշեղը թշնամու կանանց վերաբերմամբ ցոյց է տալիս զարմանալի մարդասիրութիւն։ Մինչդեռ Շապուհը հայոց ազնուականների կանանց և մանկահասակ աղջիկներին մերկացրած ցուցադրում էր իր բանակի առաջ և աւելի խայտառակ գործեր կատարում, Մուշեղ Մամիկոնեանը գերւած թագուհուն և ամբողջ

հարեմը արքայական պատւով ուղարկում է Պարսկաստանի մայրաքաղաքը։ Այդ աստիճան մեծահոգութիւն չէր սպասում Շապուհը, որովհետև ինքը այդ տեսակ բան չէր անի։ Ահա ինչու՝ հիացած հայոց սպարապետի վարմունքից՝ հրամայում է նրա հօր պաճուճապատանքը հեռացնել բանտից և Մուշեղի պատկերը քանդակել իր բաժակի վրայ սպիտակ նժոյգի վրայ նստած։

Մուշեղը միևնոյն ժամանակ հմուտ քաղաքագէտ է։ Երբ Փառանձեմ թագուհին համոզում էր նրան գնալ Կ. Պոլիս և կայսրի օգնութեամբ թագաժառանգ Պապին բերել Հայաստան և թագաւորեցնել հօր գահի վրայ, սպարապետը յոռետես կարծիքներ յայտնեց իր պատգամաւորութեան հետևանքների մասին։ Եւ նրա գուշակութիւնը կատարւեց. Փառանձեմը որդու տեսութեանը չարժանացաւ և գերի ընկնելով պարսից ձեռքը, անբախտացաւ։

Մուշեղի գործն էր և քուշանների ապստամբութիւնը պարսից դէմ։ Ցանկանալով առ ժամանակ Շապուհին հեռացնել Հայաստանից՝ մինչև իր վերադառնալը՝ նա այդ բարբարոսներին ոտի է կանգնեցնում Պարսկաստանի դէմ, և այսպիսով հասնում է իր նպատակին։ Պարսից արքան զօրքով գնում է քուշանների ապստամբութիւնը ճնշելու։

Մուշեղ Մամիկոնեանին տեսնում ենք և իր ամբոցում՝ կնոջ և զաւակի հետ հրաժեշտի ժամին, երբ նա հանդիսանում է որպէս սիրող ամուսին և հայր, և միևնոյն ժամանակ որպէս պարտաճանաչ զինւոր, որ թողնելով իր ամենասիրելի էակներին՝ գնում է պատերազմ կամ մահ կամ կեանք գտնելու։

Մերուժան

Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնեանը վաստ չեն նկարագրւած։ Երկուսն էլ դաւաճան և ան-

Վ. Մամիկոնեան

սահման փառասէր են։ Իրանց նպատակներին հասնելու համար, կանգ չէին առնում ոչ մի խոչնդոտի առաջ։ Նրանք դարձել էին սոսոր գործիքներ Շապուհի ձեռքին, որ մտադիր էր ջնջել աշխարհի երեսից հայութիւնը։ Նրանց չարագործութիւններն անթիւ էին։ Բայց նրանք զուրկ չէին և մարդկային արժանաւորութիւնից։ Վահան Մամիկոնեանի մէջ վառ էր ծնողական սէրը դէպի Սամուէլը։ Նրա տխրութիւնը ցրելու համար, կազմում է որսորդական արշաւանք, իսկ եթէ ձեռքը առնում է դէպի սուրը, այդ էլ Սամուէլի սպառնալիքներից յետոյ։ Մերուժանի մէջ ևս երբեմն զարթնում էր խիղճը և սկսում էր հաշիւ տեսնել իր անցեալի հետ։ Բայց իզուր էր կամենում իրան հաւատացնել, որ իր դատաճանութեան պատճառը հայոց թագաւորական գահը չէր, այլ միայն Որմիզդուխտի սէրը։ Անշուշտ երկու հանգամանքներն ևս մեծ դեր են կատարել նրա ապզուրացութեան մէջ։

Կլասիկ հեղինակներիտեսել է իր մի քանի հերոսներին բարձրացնել մինչև աղդեցութ. դասական հերոսների աստիճանը։ Սամուէլը, որի դէմքին ժպիտ չէր փայլում, որ հեղնօրէն և ակնարկներով էր խօսում իր մօր հետ և նրա կոչին գնում է տխուր, գլխիկոր և մելամաղձոտ, Սամուէլը, որ երկար ժամանակ տատանւում էր—սպանել հօրը թէ ոչ,—անկասկած Շէքսպիրի Համլետի պատճէնն է։ Մուշեղ սպարապետի հրաժեշտը իր կնոջ հետ յիշեցնում է Հեկտորի և Անդրոմախէի հրաժեշտը Հոմերոսի «Իլիականի» մէջ։ Երբ Մուշեղը գնում է պատերազմ, նրա մատաղահատ կինը դուրս է գալիս նրա առաջ, իսկ նրա ետևից աղախինը՝ մի մանուկ գրկած։ Հայրը վերցնում է մանկան, սիրում, փայ-

փայփայում է և էլի վերադարձնում։ Մուշեղի ամուսինը աղաչում է, որ չգնայ պատերազմ, իսկ պարտաճանաչ զինուորը պատասխանում է Հեկտորի նման. «Ի՞նչ կանէիր դու, նազելի Սաթենիկ, երբ մի առաւօտ, քո փափուկ անկողնում պարկած, քո խաղաղ քունը կխռովեցնէր կատաղի խուժանի աղմուկը, և դու դեղեցիկ աչքերդ բաց կանէիր, կտեսնէիր քո անարատ առագաստը շրջապատուած աւազակներով... Քո սիրելի Մուշեղին կխլեն օրօրոցից և կդարկեն դեպին... Քո փառաւոր սենեակը կմերկացնեն զարդերից և քեզ ոտաբոբիկ ու հերարձակ կվարէին դէպի Պարսկաստան... Այնտեղ, այն ստրուկների և թշառների աշխարհում, անգութ վերակացուի երկաթեայ մտրակը կքշէր ձեզ՝ ուրիշ գերիների խումբերի հետ՝ դէպի արևակէզ Սուզայի դաշտերը։ Եւ դու քո քնքուշ մատներով քաղհան կանէիր պարսիկների մեկոնի (աֆիոն) մշակութիւնը։ Կանցնէին տարիներ... Այն ժամանակ քո գոռոզ վերակացուն, մատը դէպի քեզ մեկնելով, կասէր ուղեորին. «Դա հատը դէպի քեզ մեկնելով, կասէր ուղեորին. «Դա հատը յոց սպարապետի կինն է և Մոկաց իշխանի աղջիկը»։ Համարեա նոյն տեսարանը, ինչ որ Հոմերոսի պոէմայում, և նոյն խօսքերը, ինչ որ ասում է Հեկտորը իր կնոջը, միայն հայ հեղինակը Մուշեղի խօսքերին հաղորդել է արևելեան գոյներ։

Այստեղ երևում է և Շիլլերի ազդեցութիւնը։ Ռշտունեաց օրիորդ Աշխէնը, որ զօրքի գլուխ անցած հերոսաբար կռւում էր պաշարուած Վանի պարիսպների տակ, Օրլեանի կոյսն է նոյն դերի մէջ։

Չնայած այն պակասութիւններին, որոնց մատնացոյց արեցինք, Սամուէլը և այժմ կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ։ Նրա գեղեցկութիւնը պէտք է որոնել ոչ թէ վէպի ամբողջութեան, այլ նրա «Սամուէլի» արժանիքը

մանրամասնութիւնների մէջ։ Իւրաքանչիւր գլուխ ինքն ըստ ինքեան մի ամփոփ պատմուածք կամ նկարագիր է։ Ինչ որ էլ նկարագրում կամ պատմում է հեղինակը,—լինի դա գեղեցիկ բնութիւն՝ Ռշտունիք, Արարատեան աշխարհ, Պատմոս կղզի, կամ ճակատամարտ, օրինակ, Շապուհի հետ Թաւրիզի մօտակայքում, կամ որևէ դէպք, արկած, ինչպէս օրինակ, Մերուժանը իր հովիւների մէջ,—ամեն տեղ զգացւում է տաղանդաւոր հեղինակի դրոշմ։ Վէպը լի է բազմաթիւ անցքերով, որոնք կամ սարսուռ են ազդում իրանց անսովոր դաժանութեամբ, օրինակ, Շապուհի գաղանութիւնները Զարեհաւանի մօտ, կամ հիացնում, զմայլանք են պատճառում, օրինակ, Ռշտունեաց օրիորդի քաջութիւնը Վանի կռւում, Մուշեղի զարմանալի մեծահոգութիւնը, որ նրան դէր դում է պարսից թագուհուն և կանանոցը ուղարկել արքայից արքային, կամ Փառանձեմ թագուհու հոգեկան հաւասարակշռութիւնը, երբ պաշարած Արտագերս ամրոցում, նրա աչքի առաջ մեռնում էին սովից և ժանտախտից հարիւրաւոր բնակիչներ։

Այստեղ առաքինութիւնը և թէ մարդկային արատները տարբեր չափերի են հասնում։ Ահա, օրինակ, հետևեալ տեսարանը։ Ազգուրաց Մերուժանը մտնում է հայրենի քաղաքը՝ ընտանիքը տեսնելու։ Բայց քաղաքը նրան ընդունում է սևերի և սուգի մէջ։ Զորս կողմ ամայութիւն և սև դրօշակներ։ Ամբողջապէս սևի մէջ է և նրա տունը։ Մայրը փակում է տան դուռը անարժան որդու առաջ և վերնատնից՝ շրջապատած իր հարսով և զաւակներով՝ կշտամբում է նրան, և որդին հեռանում է քաղաքից մօր կշտամբանքի տառապի տակ՝ անարգած և հոգեպէս խորտակուած։

Ինչպէս միւս գրուածքներում, նոյնպէս և «Սամուէլի» մէջ Րաֆֆին մնում է նոյն սուբիէկտիւ գրողը և արծարծում է իր նուիրական գաղափարները։ Մնում է հաւատարիմ իր յայտարարած բանաստեղծական նշանաբանին՝ տալ իդէալներ։

Պատմական վէպերի շարքը լրացնելու համար, յիշենք և «Պարոյր Հայկազն» վերնագրով փոքրիկ վէպը։

Թէ որ աստիճանի մեծ տեղ է բռնում Րաֆֆու գրուածքների մէջ տենդենցը, դրա ապացոյցը կարելի է գտնել վերոյիշեալ վէպիկի մէջ։ Պատմական ճշտութիւնը այստեղ գիտակցաբար զոհ է բերուած հեղինակի գաղափարին։ Հեղինակի նպատակն է իրար հակադրել ազգային և հանրամարդկային սէրը և ցոյց տալ առաջինի գերազանցութիւնը, ուստի նա Պարոյրին և Մովսէս Խորենացուն, հակառակ պատմութեան, դարձնում է ժամանակակից գործիչներ։

Պարոյրը (Պրոյերեսիոս) իր կրթութիւնը ստացել էր Աթէնքում է յունական ոգով։ Երևելի ճարտասանի համբաւ ունէր ամեն տեղ։ Մի անգամ նա գնում է Հռոմ, որպէս հիւր, և այնտեղ նրան ընդունում են ովսաննաներով, արքայական պատիւներ են մատուցանում, մինչև անգամ ի պատիւ նրա կառուցում են Հռոմում արձան՝ հետևեալ փորագրութեամբ «Regina Roma regi eloquentiae»,—«Թագուհին Հռոմ խօսքի թագաւորին»։

Սակայն փառքի զէնիթին հասած հայ ճարտասանը բոլորովին անտարբեր է դէպի իր ազգը։ Նա այն կարծիքի է, որ ծառայելով գիտութեան՝ ծառայում է և ամբողջ աշխարհին—մարդկութեան։ Երկու անգամ նրա մօտ գալիս են Հայաստանից պատգամաւորներ։ Մի անգամ Մովսէս Խորենացին, միւս

անգամ հայոց Հայրապետի կողմից։ Սակայն Պրոյեբեսիոսը մատ մատի չէ խփում, չնայած որ յարմար առիթ էր ներկայացել ազգին բարիք անելու։ Հրաժեշտի ժամին կայսրը հարցնում է, թէ՝ ինչ կուզէր Պրոյերեսիոսը, որ կատարէր։ Երևելի ճարտասանը իր ազգի անունը չէ տալիս, այլ խնդրում է կայսրից Աթէնքի մաքսային հարկերը թեթևացնել։

Խորենացին տխուր վերադառնում է հայրենիք, որտեղ նրան սպասում էր հալածանք իր կրօնակից եղբայրներից։ Նա կրում է ամեն տեսակ տառապանք, բայց իր մահից յետոյ թողնում է «Հայոց պատմութիւնը», մի երևելի յիշատակարան, որով անմահացնում է իր անունը։

Բաֆֆին ունի նաև ուրիշ վաստակներ, օրինակ, «Խամսայի մելիքութիւններ», «Տաճկահայեր», «Հայ կինը և հայ երիտասարդութիւնը» և այլն։ Ունի և թարգմանութիւններ՝ «Ղարաբաղի աստղագէտը», Զուբովի հեղինակութիւն, «Կայէնի կտակը», Զախեր-Մազօխի։ Բացի այդ, զանազան լրագիրների մէջ տպուած են նրա յօդուածները և ֆելիէտօնները։ Դրանց վրայ, իհարկէ, մենք կանգ չենք առնի, որովհետև առանձին կարևորութիւն չեն ներկայացնում։

Եզրափակենք մեր խօսքը Բաֆֆու գրական գործունէութեան մասին։

Ընդհանուր հայեացք։ Բաֆֆին ամենավաստակաւոր հայ հեղինակներից մէկն է և թողել է տասնեակ պատկառելի հատորներ։ Բեղմնաւորութիւնը, իհարկէ, մեծ առաւելութիւն չէինք համարի, եթէ նրա հետ միացած չլինէր նաև հեղինակի տաղանդը։

Բաֆֆին իր նիւթերը վերցնում էր հայի հեռաւոր և մօտիկ անցեալից, ժամանակակից կեանքից. նոյն իսկ հայի ապագան զբաղեցնում էր նրան

(«Վարդանի երազը»)։ Մինչև Բաֆֆու երևալը գրական ասպարիզում՝ մենք շատ աղօտ հասկացողութիւն ունէինք հայութեան գլխաւոր կենտրոնների մասին։ Նա մի շարք գեղարուեստական պատկերների մէջ, որոնք ցրուած են զանազան վէպերում, ներկայացրել է Տաճկահայաստանը իր ճոխ բնութեամբ և ժողովուրդը իր ուրոյն կենցաղով, անտես չառնելով նաև դրացի ազգերը։

Բաֆֆին այն հեղինակներից չէր, որոնք պատկանում են բացառապէս մի ուղղութեան. նրա մէջ հաշտ ապրում էին զանազան ուղղութիւններ՝ նա և՛ ռէալիստ է, և՛ բոմանտիկ և՛ տենդեցիօզ։ Նրա նշանաբանն է՝ «գեղարուեստը կեանքի համար», նրա առաջին պահանջն էր, որ գրուածքը կրթիչ նշանակութիւն ունենայ, որ նա տայ իդէալներ։

Այդ իդէալները մարմնացնելու համար նա ստեղծում էր իր ցանկացած հերոսներին (Ասլան, Սագօ, Կարօ և այլն), նրանց տալիս էր գործունէութեան ծրագիրներ, նրանց բերանով յայտնում էր իր մտքերը։ Ահա ինչու այդ հերոսները դուրս էին գալիս շատ անգոյն և անկենդան։ Բաֆֆուն յաջողւում էին այն տեսակ տիպերը, որոնք վերցուած են իրականութիւնից, գլխաւորապէս բացասական տիպերը, ինչպէս, օրինակ, Մասիսեան, քաւոր Պետրոս, Տէր Թոդիկ, Թոմաս էֆենդի, Դաւիթ Ուրացող և այլն։

Բաֆֆին տենդենցիօզ լինելով հանդերձ՝ միևնոյն ժամանակ վերին աստիճանի սուբիէկտիւ գրող էր։ Հեղինակի ներկայութիւնը, նրա «ես»ը զգացւում է ամեն տեղ։ Նա մեր առաջ կանգնած է իր քարոզներով, վշտերով, իղձերով և յոյսերով։ Նոյն իսկ պատմական անձնաւորութիւնը, օրինակ Ներսէս սրբ-

բազանը «Դաւիթ-բէկի» մէջ, հանդէս է գալիս, որպէս նրա մտքերի թարգման։

Որ տենդենցը, այսինքն հեղինակի աչք ծակող միտումը, նպատակը վնասում է վէպի գեղարուեստականութեան, դա գրական աքսիոմներից մէկն է։ Բայց բանը նրանումն է, որ այդ աքսիոմը կարծես Ռաֆֆու համար չէր։ Նա կարծես գիտակցաբար գեղարուեստականութիւնը զոհ էր բերում հէնց այդ տենդենցի համար, իր նպատակներն իրականացնելու համար։ Ռաֆֆին ինքը գիտակցօրէն որոշել է իր ուղղութիւնը և կատարած դերը «Կայծերի» վերջում հետևեալ խօսքերով. «Բանաստեղծութիւնը (ընդարձակ մտքով) ստեղծում է ժողովրդի համար իդէալներ։ Եթէ ներկայի մէջ չէ գտնում իր իդէալների տիպարները, նա մտնում է պատմութեան խորքը և ժամանակների հնութիւնից դուրս է կոչում իր ցանկացած հերոսներին, և նրանց պատկերները՝ իրանց վսեմ գործերը նկարագրելով՝ դնում է ներկայ սերնդի առջև, որ նրանցից օրինակ առնեն և նրանց նման լինեն։ Նա ստեղծում է և այնպիսի տիպարներ, որոնք ներկայի մէջ դեռ ծնուած չէին, այլ ապագայում պէտք է յայտնուէին։—Նրա սուր աչքերը տեսնում են ներկայի մէջ այդ չտեսնուած տիպարների ամենափոքրիկ նշմարները միայն։ Նա մարգարէի հոգով նախատեսնում է, թէ տարիներից, դուցէ դարերից յետոյ՝ որպէս այդ նշմարները իրանց սաղմնական դրութիւնից կաճեն, կգարգանան, կ'կերպարանագործուեն և կատարեալ ձև ու կազմութիւն կստանան,—և նրանց պատկերները կանխապէս նկարում է և դնում իր ժամանակի հասարակութեան առաջ»։

Այն, ինչ որ Ռաֆֆին ասում է ընդհանրապէս բանաստեղծի մասին, բառացի կերպով կարելի է վերագրել իրան, հեղինակին։ Նրա ամբողջ նշանակութիւնը և կատարած գերը ամփոփուած է հեղինակի գեղեցիկ ձևակերպութեան մէջ։ Այո, «բանաստեղծը» Ռաֆֆին է, որ, եթէ ներկայի մէջ չէր գտնում իդէալների տիպարները, մտնում էր պատմութեան խորքը և ժամանակների հնութիւնից դուրս էր կոչում իր ցանկացած հերոսներին, և նրանց պատկերները՝ իրանց վսեմ գործերը նկարագրելով՝ դնում էր ներկայ սերնդի առջև, որ նրանցից օրինակ առնեն և նրանց նման լինեն։ Ռաֆֆին էր, որ ստեղծում էր այնպիսի տիպարներ, որոնք ներկայի մէջ դեռ ծնուած չէին, այլ ապագայում պէտք է յայտնուէին։ Եւ այսպէս մինչև վերջ։

Պէտք է յիշել նաև, որ Ռաֆֆու գլխաւոր ծառայութիւններից մէկն էլ այն էր, որ իր գրական վաստակներով մեծ զարկ տուեց ընթերցանութեան, ստիպեց կարդալ նոյն իսկ արհեստաւորին և հասարակ մշակին։

Եւ այս բոլորը շնորհիւ նրա տաղանդաւոր գրչին։ Նրա վէպերը խիստ ժամանակակից բովանդակութիւն ունէին, նրա շօշափած հարցերը խիստ հրատապ էին և մօտ իւրաքանչիւր հայի սրտին, նա ինքն էլ հրաշալի պատմող էր և նկարագրութեան մէջ վարպետ։ Ռաֆֆու լեզուն ևս, թէև ազատ չէր օտարաբանութիւններից, իր ժամանակի համեմատ կարելի էր համարել օրինակելի վիպական լեզու՝ հարուստ բառերով և դարձուածներով, իսկ ոճը ճոխ և տեղ տեղ նաև բանաստեղծական։

ՊՈՕՉԵԱՆ

Պերճ Պոչեանը ծնուել է 1837 թ. յունիսի 3-ին Աշտարակ գիւղում։ Նրա հայրը դերձակ էր։ Պերճը (մկրտութեան անունը Յովհաննէս) գրագիտութիւն սովորեց տանը հօր և եղբօր մօտ, յետոյ ինքը տարրական մտաւ տեղական ուսումնարանը, որ բացել էր Էջմիածնի Ժառանգաւորաց դպրոցի նախկին սան Շահնազարեանը։

1849 թ. սովորում էր Մողնու միաբան Մարտիրոս վարդապետի ձեռքի տակ։ Պոչեանը «Յուշիկների» մէջ գովասանքով է խօսում այդ հոգևորականի մասին, որ խաւար տեղում կրթութիւն և լոյս էր տարածում։ Այստեղ նա իւրացնում է մի քանի կրօնական առարկաներ։ 1851 թ. Ներսէս կաթողիկոսի տնօրէնութեամբ նա ընդունւում է որդեգիր Ներսիսեան դպրոցում, որ այդ ժամանակ սկսել էր իր լաւագոյն շրջանը, շնորհիւ Պետրոս Շանշեանի վերատեսչութեան։ 1855 թ. աւարտեց ուսումը և գնաց

հայրենիք, ուր այնուհետև երկու տարի պարապում էր ուսուցչութեամբ։ Միևնոյն ժամանակ Էջմիածնի գործակալի մօտ քարտուղարի պաշտօն էր վարում. գրում էր նաև խնդիրներ գիւղացիների համար։ Շփուելով միշտ ժողովրդի հետ, Պոչեանը հնարաւորութիւն ունեցաւ մօտիկից ծանօթանալու Արարատեան և Արագածոտն գաւառի հայ ազգաբնակութեան կեանքի և զանազան տիպերի հետ։

Մի անգամ Մողնու վանքում Պոչեանին պատահում է Ս. եպ. Զալալեանը, որ Թիֆլիսի թեմի առաջնորդ էր։ Սրբազանը խորհուրդ է տալիս նրան գնալ Թիֆլիս և ինքն էլ խոստանում է նրա համար պաշտօն գտնել։ 1858 թ. Պոչեանը Թիֆլիսում էր և ապրում էր վանքի մի կիսաւեր սենեակում։ Այդ նեղ օրերումն էր, որ նա առաջին անգամ կարդաց «Վէրք Հայաստանին», որի հմայիչ ազդեցութեան տակ գրեց իր անդրանիկ վէպը «Սօս և Վարդիթեր» վերնագրով։

Սովի և գրկանքի օրերը վերջանում են, երբ առաջնորդը ժամանում է Թիֆլիս։ Այնուհետև Պոչեանը ճաշում էր առաջնորդի մօտ և քնում էր վանքի աւելի լաւ սենեակում։ Առաջնորդի միջնորդութեամբ նա ընդունւում է Ն. Տէր-Յակոբեանի նորաբաց պանսիօնը, որպէս վերակացու և հայոց լեզի դասատու։ Ստանում էր ամսական տասներկու ռուբլի, դրա հետ և ընակարան ու ճաշ։

1859 թ. «Մեղու Հայաստանի» լրագրում տպուեց նրա անդրանիկ ոտանաւորը՝ «Առ անձկալին Շուշան՝ դուստր Վարդանայ» վերնագրով։ 1860 թ. սկսած նա աշխատակցում էր «Կռունկ» ամսագրին, վարելով միաժամանակ սրբագրիչի և խմբագրի օգնականի պաշտօն։ Նոյն այդ տարին լոյս տեսաւ

«Կռունկի» մէջ նրա առաջին վէպը «Սօս և Վարդիթեր»։ Խմբագրութեան օժանդակութեամբ նա սովորեց լուսանկարչութիւն, որ յետոյ նեղ օրերին նրան օգնութեան էր հասնում։ Այդ ժամանակ Պռոշեանը Թիֆլիսում եռանդուն գործունէութիւն էր ցոյց տալիս։ Մի քանի անձանց աջակցութեամբ հիմնեց Գայիանեան (ոչ ներկայի) դպրոց։ Ջերմ մասնակցութիւն ունէր և թատրոնական գործում։

1863—1864 թ. նա ուսուցիչ էր Շուշայ թեմական դպրոցում Շանշեանի օրով։ Այստեղ տիկին Հախումեանի աջակցութեամբ հիմնեց օրիորդական դպրոց։ Դրանից յետոյ երկու տարի վարում էր աստանդական կեանք, գործադրելով իր լուսանկարչական արհեստը։ 1867 թ. Պռոշեանի ձեռներէցութեամբ հիմնուեց Ագուլիսում օրիորդաց դպրոց. նոյնպէս նրա ջանքերով հանգանակուեց 25 հազար ռուբլի երկսեռ դպրոցի ապահովութեան համար։

1872 թ. աշխատակցում էր նորածին «Մշակին» և առաջին տարին թղթակցութիւններ էր ուղարկում Երևանից Պահլաւունի ստորագրութեամբ։ 1876 թ. Աստրախանում հիմնեց ծխական դպրոց։ Հետեւեալ տարուանից դարձաւ «Փորձ» ամսագրի սրբագրիչ և աշխատակից. այստեղ տպւում էին նրա վէպերը։ 1879 թ. Պռոշեանը նշանակուեց Երևանեան թեմի և Կարսի շրջանի տեսուչ։ Այդ պաշտօնը նա ստիպւած էր թողնել 1885 թ., երբ փակուեցին հայոց ուսումնարանները։

Եկան դարձեալ նեղութեան օրեր։

Նրա դրութիւնը լաւացաւ, երբ 1887 թ. Ներսիսեան դպրոցում ստացաւ հայոց լեզուի դասեր։ 1889 թ. սկսած նա աշխատակցում էր «Մուրճ» ամսագրին, որտեղ տպւում էին նրա վերջին վէպերը։

1898 թ. Պռոշեանը թողեց մանկավարժական ասպարէզը։ Ի պատիւ նրա երկարամեայ ծառայութեան, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը նրան յատկացրեց 600 ր. կենսաթոշակ։ 1899 թ. կատարուեց նրա 40-ամեայ յոբելեանը, որի առիթով ժողովւած նուիրատուութիւնը ապահովեց հեղինակին մի քանի տարով։

Վերջին տարիները Պռոշեանը կրեց ընտանեկան դժբախտութիւններ։ Առանց այն էլ ծերութիւնից ընկճւած էր։ Բարոյական հարւածները արագացրին նրա մահը, որ տեղի ունեցաւ 1907 թ. նոյեմբերի վերջին։ Թաղուեց Խօջիվանքի գերեզմանատանը։

Պռոշեանի վէպերը.

Պռոշեանը գրում էր երկարատև ընդհատումներով։ 1860 թ. «Կռունկ» ամսագրում տպուեցին նրա «Սօս և Վարդիթերը» և «Վէպ Հայաստանի» վէպից փոխադրած «Ազատի» ողբերգութիւնը։ Այնուհետև նա այլևս ոչինչ չարտադրեց։ Երբ 1876 թ. սկսուեց «Փորձ» ամսագիրը, նա նորից եռանդ ստացաւ և գրեց «Հայի խնդիր», «Կուսածաղիկ» և «Շահէն»։ «Փորձը» դադարելուն պէս՝ Պռոշեանը ևս դրիչը վայր դրեց։ Անցան տարիներ, և նա ոչինչ աչքի ընկնող բան չգրեց։ Իսկ երբ Արասխանեանը հիմնեց «Մուրճ» ամսագիրը, մէկը միւսի յետևից լոյս տեսան Պռոշեանի նոր վէպերը՝ «Ցեցեր», «Բղդէ», «Յունօն»։ 90-ական թուականներին նա գրում էր և մանր պատմւածքներ։

Անցնենք վէպերի քննութեան։

«Սօս եւ Վարդիթեր»։

Պռօշեանը իր անդրանիկ վէպը գրել է Աբովեանի «Վէրք Հայաստանի» գօրեղ ազդեցութեան տակ, ինչպէս երևում է նրա հետևեալ խօսքերից. «Կարդալով մեր նախնեաց պատմութիւնները և գտնելով նրանց մէջ ժողովրդական կեանքի մի քանի նկարագիրը, աչքներիս առաջին ունենալով մեծաքանքար Աբովեանի «Վէրք Հայաստանին», սիրահարուեցանք մեր հարց թողած աւանդութիւնների վրայ և կամենալով ծառայել ազգին, իբրև յանձնէ ելեալ, երգեցինք ըստ մեր տկար կարողութեան մեր հայրենեաց սովորութիւններն, վարք ու բարքն և այլ այսպիսի արտաքին ծէսերը։

Այսպէս ուրեմն, Պռօշեանը սկզբից և եթ որոշում է իր ուղղութիւնը, իրան յայտարարելով ժողովրդական կեանքի երգիչ։ Նա վերցնում է Աբովեանից միայն կենցաղագրական կողմը, իսկ ազգայինը թողնում է։

«Սօս և Վարդիթերի» հիմքում դրուած է մի սիրային արկած։ Բայց նա երկրորդական նշանակութիւն ունի վէպի մէջ։ Հեղինակը բերում է սիրոյ պատմութիւնը, ցանկանալով իր գրածքը ախորժելի դարձնել «սիրելի ազգի թէ մեծին և թէ փոքրին»։ Իսկ Պռօշեանի նպատակն է նկարագրել Աշտարակի կեանքը։

Վէպի մէջ հանդէս է բերուած մի տաք, վառուն սէր, որ բորբոքել էր երկու մատաղ սրտեր։ Այդ սիրահարներն էին՝ Սօս և Վարդիթեր, երկուսն էլ գիւղի հարուստ տներից։ Երբ դեռ ևս ծնողների մէջ համաձայնութիւն չկար, Սօսի համար աշխատում էր նրա ընկեր Գարեգինը, իսկ Վարդիթերի եղբայր Արշաւիրը աշխատում էր համոզել ծնողներին։ Վերջապէս, երկու կողմն էլ համաձայնում են, բայց նշանադրութիւնը յետաձգում են մինչև աշուն, այգեկութից յետոյ։ Սակայն սիրահար զոյգին վիճակուած չէր երջանկութիւն։ Վարդիթերի փոփոխամիտ եղբայրը նոր փեսացու էր գտել քրոջ համար և աշխատում էր խանգարել նշանը, իսկ Սօսի վատթար փեսան, որին փողով կաշառել էր մի ուրիշ աղջկայ տէր, ճիգ էր թափում ետ կացնել Սօսին Վարդիթերից։ Երբ ոչինչ չէ օգնում, նա գնում է Հեթումի տունը, ահագին կռիւ է սկսում, թէ ինչու՞ նրանք ուզում են իրանց աղջկան կապել իր աներոջ որդու վզին։ Այդ անպատուութիւնից յետոյ Վարդիթերի հայրը զայրացած մերժում է Սօսին։ Մինչև այստեղ բոլորը կարող է ճիշտ լինել։ Բայց սիրոյ վերջաբանը բոլորովին անբնական է։

Մերժումը կայծակի պէս շանթահարում է սիրահարներին։ Վարդիթերը, որ հազիւ տասն և մէկ տարեկան աղջիկ էր և աւելի քնքոյշ, չկարողացաւ դիմանալ բարոյական հարուածին, և մեռաւ, հոգեվարքի մէջ ցանկութիւն յայտնելով, որ իրան թաղեն Սօսի հետ։ Իսկ Սօսը հեռանում է հայրենական տանից, երկու շաբաթ սար ու ձորում թափառում, գլխաբաց, ոտաբոբիկ մանչ է գալիս երեք գաղ ձիւնի մէջ և այն էլ ցուրտ ձմրան. ձորը մտնում, լողանում է սառը ջրում, աղուէսների և գայլերի հետ կռիւ է տալիս օրերով։ Վերջապէս, Գարեգինը նրան համոզում, բերում է տուն։ Երկու շաբաթուայ անտանելի կեանքը ձորի սառոյցների մէջ ոչ մի հետք չէր թողել Սօսի առողջութեան վրայ, նոյն իսկ գոյնը չէր փոխուել։ Իսկ երբ տանը լսում է Վարդիթերի

մահը, խոր հոգոց է քաշում, գլուխը Գարեգինի ձեռքի վրայ դնելով, խնդրում է, որ իրան Վարդիթերի մօտ թաղեն, որ իր մօրը մխիթարէ, եղբայրներին ճնաս բարով ասէ, ինքն էլ ուրախ կենայ, յետոյ աչքերը վերև բարձրացնում, աղօթք է անում ու հոգին աւանդում։

Այս անբնական վերջաբանը առաջին անգամ և անհերքելի փաստերով ցոյց տուեց Նալբանդեանը։

Վէպի արժանիքը

Ուրեմն վէպի հետաքրքրական կողմը ոչ թէ սենսեմենտալ սէրն է իր անբնական վախճանով, այլ Աշտարակը իր բնակիչներով։ Այստեղ ընթերցողը կարող է հետևել Աշտարակի առօրեայ կեանքին՝ ըսկսած մարտի 15-ից մինչև հետևեալ տարուայ բարեկենդանը։

Պռոշեանը ամենայն մանրամասնութեամբ նկարագրում է բոլոր եկեղեցական և ժողովրդական տօները՝ Ծաղկազարդ, Թաթախում, Զատիկ, Մեռելոց և այլն. դրա հետ միասին և այն բոլոր հանդէսները, որոնք կապուած են տօների հետ։ Այստեղ հանդէս է գալիս գիւղական կեանքի իւրաքանչիւր աչքի ընկնող երևոյթը՝ նշանագրութիւն, հարսանիք, թաղում, ուխտագնացութիւն, զարճութիւններ և այլն։ Պռոշեանը նկարագրում է և գիւղացոց աշխատանքները դաշտերում և այգիներում, նկարագրում է այգեկութը, օղի քաշելը, գօշաբ եփելը, շուջուխ, ալանի և ձմեռուայ ամեն տեսակ պաշար պատրաստելը։

Վէպի բովանդակութիւնը դրանով չէ սպառւում։ Մեր առաջ կենդանի կանգնած է Աշտարակի ժողովուրդը։ Մենք տեսնում ենք նրան ընտանիքում, հասարակական գործերում, դաշտում և այգում, ամեն տեղ։ Մենք լսում ենք գիւղացոց խօսք ու զրոյցը, նրանց դատողութիւնները, փիլիսոփայութիւնը։

Մենք ծանօթանում ենք զանազան անձնաւորութիւնների հետ, որոնցից իւրաքանչիւրը աչքի է ընկնում իր ուրոյն բնոյթով։ Ահա ունևոր գիւղացի Հեթումը, որ մի ժիր, գործունեայ, նամուսով ծերունի է. հաւատարիմ, ընկերասէր տիրացու վարժապետ Գարեգինը, Վարդիթերի փոփոխամիտ եղբայր Արշաւիրը, փողապաշտ, ատոր և անխիղճ Տիրանը, գործնական Պարէտը, Սօսի և Վարդիթերի խելօք մայրերը։ Հեղինակը Սօսին իդէալացրել է, զարդարել է գեղեցիկ յատկութիւններով. սակայն անդօր է գտնուել ամբողջացնել նրա բնոյթագիրը և իր հերոսին դրել է անբնական վիճակի մէջ։

Այս անձնաւորութիւնների մեծ մասը, եթէ ոչ բոլորը, Պռոշեանը վերցրել է իրականութիւնից։

Պռոշեանը «Սօս և Վարդիթերի» մէջ իսկական ժողովրդի մարդ է. մտածում է, որպէս գիւղացի, խօսում է գիւղացու նման, նրա պէս հաւատում է հրաշքների։ Ս. Գէորգի մասունքը երաշտի ժամանակ դուրս են բերում, անձրև է գալիս։ Տէրտէրի աւետարան կարդալով՝ մահամերձ հիւանդը բժշկւում է։

«Սօս և Վարդիթերը» մեծ նշանակութիւն ունեցաւ Պռոշեանի ապագայ գործունէութեան համար։ Անդրանիկ վէպը մի անգամից որոշեց նրա ուղղութիւնը և պարզեց, թէ ինչումն է կայանում նրա ոյժը, ինչում նրա թոյլ կողմը։ Ստեղծել գեղարուեստական ամբողջութիւն, որ ազատ լինի աւելորդաբանութիւնից, նրա գործը չէր, նրա ոյժից վեր էր։ Բայց երբ նկարագրում էր ժողովրդի կեանքը, նա ուժեղ էր, տաղանդաւոր։ Նա գերազանցօրէն տիրապետում էր աշտարակեցոց բարբառին, գիտէր նրա ամենանուրբ դարձուածները։ Նոյնքան լաւատեղեակ էր նա ժողովրդի բնաւորութեան, աշ-

խարհայեացքին, սնապաշտութեան։ Գիւղացու տունն ու տեղը, նիստ ու կացը, սովորութիւնները, նրա իւրաքանչիւր քայլը կեանքի մէջ—բոլորը լուսանկարչական ճշտութեամբ անդրադարձել է Պռոշեանի նկարագրութեան մէջ։

«Հացի խնդիր»։

«Սօս և Վարդիթերի» մէջ Պռոշեանը Արարատեան նահանգի սովորութիւնների նկարագիրը հասցրել է մինչև Բուն-բարեկենդան։ «Հացի խնդրի» յառաջաբանում նա խոստանում է լրացնել այդ սովորութիւնները և հասցնել մինչև Ծաղկազարդ, որով Հայաստանի գլխաւոր նահանգի տեղական կեանքի պատկերը իր բարբառի, առածների, աւանդութիւնների և ծէսերի հետ ազատած կլինի ժամանակի անհետացնող ժանիքներից։ Օրըստօրէ զանազան ազդեցութեանց ներքոյ կեանքը փոխւում է, և հինը իր բոլոր կազմակերպութեամբ տեղի է տալիս մի նոր կերպարանափոխութեան։ Ներկան անցեալի հետ համեմատելով՝ քսան տարի առաջ եղած սովորութեանց նշոյլն անգամ չի երևում։

Պռոշեանը «Սօս և Վարդիթերի մէջ նկարագրում է 40-ական թւականների Աշտարակը, այժմ «Հացի խնդրի» մէջ սկսելով նոյն թւականներից՝ հասցնում է մինչև 50-ական թւականների վերջերը։

«Հացի խնդիրը», իբրև վէպ, անհամեմատ բարձրը է առաջին վէպից և թերևս լաւագոյնը նրա վէպերի շարքում։

Բովանդակութիւն։ Աշտարակի հարուստ դասակարգի մէջ առաջնակարգ տեղ էր բռնում Խէչանենց

Խէչանի գերդաստանը։ Նա իր հարստութիւնը և կայքը ձեռք էր բերել իր եղբօր հետ միասին ընդհանուր աշխատանքով։ Եղբօր մահից յետոյ ամբողջ կարողութիւնը անցնում է Խէչանին։ Տունը կառավարում էր նրա այրի քոյրը, որ վաղուց չքաւորութեան պատճառով ապրում էր եղբօր տանը իր Հերիքնազ աղջկայ հետ։

Մի բարեկենդան օր գիւղի իշխանները, տէրտէրը և պատւելին քէֆ էին անում տանուտէրի կորան։ Ուստաճարանի սանիկները գալիս են նրանց մօտ բարեկենդանը շնորհաւորելու և վարժապետից հարկ պահանջելու։ Վարժապետը հրամայում է աշակերտներից մէկին երգել։ Երգում է Սմբատը, Ծուիկենց Աղաջանի որդին։ Խէչանը այն աստիճան հիանում է մանուկի երգով, որ նոյն իսկ արտասւում է և հոգեկան զմայլանքի մէջ՝ Սմբատին՝ հօր համաձայնութեամբ՝ նշանում է («բաշիքեարթմա» է անում) իր միւնուճար աղջկայ՝ Հեղնարի հետ։

Այնուհետև Սմբատը դառնում է Խէչանի տան անդամներից մէկը, իսկ Հեղնարի և Հերիքնազի հետ ինչպէս քոյր ու եղբայր։

Հեղնարը հետզհետէ զարգանալով՝ սկսում է հասկանալ, որ ինքը հօր կարողութեան ժառանգն է, և այդ գիտակցութիւնը նրան դարձնում է վերին աստիճանի հպարտ։ Թէև նա չէր կարող պարծենալ իր գեղեցկութեամբ, բայց, իբրև հարուստ ժառանգ, բոլոր ջահէլների ցանկալի հարսնացուն էր և մի տեսակ կուռածաղիկ։ Հեղնարը սիրում էր հարևան Արշակին, որի հետ ամեն օր տեսնւում էր «ղրիջակի» միջոցով, իսկ Սմբատին ատում էր. նրան անարժան էր համարում իրան։ Նա շատ դժգոհ էր, որ հայրը երեք տարեկան երեխային «բաշիքեարթմա» է ա-

բել նոյնպէս մի փոքրիկ երեխայի հետ։

Սմբատը նոյնպէս չէր սիրում Հեղնարին։ Նրա սիրածը գեղեցիկ, խելօք Հերիքնազն էր։ Հերիքնազը փոխադարձաբար սիրում էր Սմբատին, բայց խեղդում էր իր մէջ սէրը, որպէս զի իր քեռու ուխտը կատարի և ինքն էլ ամօթով չմնայ։ Այդ նպատակով նա յորդորում էր Սմբատին Խէչանի և իր հօր ուխտը սրբութեամբ կատարել, իսկ իրան սիրել իբրև քրոջ։ Հեղնարին ևս ամեն կերպ աշխատում էր սառցնել Արշակից, յիշեցնում էր նրա պարտականութիւնը։ Վերջ ի վերջոյ երկու կողմից ևս կայանում է համաձայնութիւն, և նշանակւում է հարսանիքի օրը։ Այն միջոցին, երբ Սմբատը Հեղնարի հետ ձեռք ձեռքի տուած՝ պատրաստւում էին գնալ եկեղեցի, պսակը խանգարւում է։ Եասաուլ Մարգարը երկու հրամանագիր է յանձնում տանուտէրին և քահանային։ Մէկը մովրովից էր, միւսը Էջմիածնի գործակալից։

Պսակի խանգարման պատճառը ուրիշ ոչ ոք չէր, եթէ ոչ միկիտան Սաքօն, որը Սև Ջրի գլխին մովրովի ապարանքի մօտ ունէր մի գինեվաճառանոց։ Ամբողջ գաւառում յայտնի կեղեքիչ էր և գաւառական կառավարչին, նրա օգնականին և միւս պաշտօնեաներին պար էր ածում ձեռքի վրայ։ Նա վաղուց էր աչքը դրել Խէչանի հարստութեան վրայ, որին տիրանալու համար անհրաժեշտ էր տիրանալ նախ և առաջ նրա աղջկան։ Պսակը խափանելուց յետոյ՝ նա փորձ է անում մտերմանալ Խէչանի ընտանիքի հետ, և ուղարկում է նրա մօտ խնամախօս՝ տանուտէրին։ Բայց ազնիւ ծերունին նրան բացէիբաց մերժում է, յայտնելով, որ եթէ եօթը կոյր աղջիկ էլ ունենայ, մէկը նրան չի տալ։ Սաքօն մի ուրիշ միջոցի է դի-

մում։ Իր փողով Խէչանի համար գնում է մեդալ, որի գինը մի պօլիմպէրիալ էր։ Բայց դա միայն զայրացնում է անփառասէր Խէչանին, մանաւանդ որ Սաքօն իր գրպանից էր վճարել։ Երբ այդ ևս չէ օգնում, Սաքօն ցոյց է տալիս իր մի յատկութիւնը, որ նա աւազակների ընկեր էր։ Նա մի ծրագիր է կազմում, որով պիտի զեկավարէին աւազակները— գիշերային յարձակում Խէչանի տան վրայ և Հեղնարի առևանգում։ Բարեբախտաբար, սրիկայի ծրագիրը օդն է ցնդում։ Աւազակներից մէկը սպանւում է յարձակման ժամանակ, մնացածը փախչում են։

Հետևեալ օրը գալիս է մովրովը և սկսում է հարց ու փորձ։ Սակայն քննութիւնից երևում է, որ նա եկել էր նախապատրաստուած, որովհետև ամենևին ուշադրութիւն չդարձրեց Հերիքնազի խօսքերի վրայ, որ խոստովանեց իր յանցանքը։ Մովրովը հրամայում է կալանաւորել Խէչանին. իր հետ տանում է Սև Ջուր և բանտարկում։

Միկիտան Սաքօին հէնց այդ էր հարկաւոր։ Զոհը նրա ձեռքումն էր, ազատ ել ու մուտ էր անում Խէչանի մօտ։ Խորամանկ լեզուով Սմբատին իր կողմն է գրաւում, յաճախում է Խէչանի ընտանիքը, սուտ խոստումներով յոյսեր է տալիս, և այսպիսով կամաց կամաց Խէչանի հարստութիւնը տեղափոխում էր իր գրպանը։ Մնում էր վերջացնել այդու գործը, բայց մի ձախորդութիւն խանգարում էր։

Անակնկալ յայտնւում է կառավարութիւնից ուղարկւած քննիչը, որը մի արդարադատ պաշտօնեայ էր։ Նրա գալը իրարանցում առաջացրեց գաւառական ծառայողների մէջ, և շատերը տուժեցին։ Տուժեց և մեր ծանօթ մովրովը, որ իր թուլութեան շնորհիւ լայն ասպարէզ էր բացել միկիտան Սաքօի

հարստահարութեան առաջ։ Քննիչը առ ժամանակ մովրովին հեռացնում է պաշտօնից, կնքում է դատարանը և պատւիրում է նրան գնալ Երևան, որտեղ պիտի կատարւէր գործերի քննութիւնը։

Սաքօն շտապում է իր գլխի ճարը տեսնել. վաճառում է գինետունը և առևտուրը վերջացնում, «մինչև որ սէլաւը անցնի»։

Երևանի ճանապարհին Սաքօն և Սմբատը պատահում են իրար։ Սմբատը սկսում է նրան պախարակել, որ նա է Խէչանի բռնելու պատճառը, նա է Խէչանի գերդաստանի դժբախտութեան պատճառը։ Սաքօն հակառակն է ասում և աշխատում է հաւատացնել, որ իր գլխաւոր հոգսը և մտածմունքը Խէչանի ազատութիւնն է և նրա ընտանիքի բախտաւորութիւնը։ Բայց Սմբատը իր հաւատը կորցրել էր դէպի միկիտանը։

Դրանից յետոյ Սաքօն թշնամացաւ Սմբատի հետ։ Մի փորձ արեց սպանել աւազակների ձեռքով, բայց անպտղ ելք ունեցաւ յարձակումը։ Երբ երկուսն էլ գնում էին Երևանում, Սաքօն հասկացրել էր պահապաններին, որ նրան չթողնեն քննիչի մօտ։ Իսկ ինքը Խէչանի այգու գործն էր առաջ տանում։ Սմբատին յաջողւում է տեսնւել քննիչի հետ, որի առաջ նա մերկացնում է միկիտանի բոլոր չարագործութիւնները։ Միևնոյն ժամանակ եասաուլ Մարգարն էլ իր գիտցածն է պատմում քննիչին Սաքօի մասին։ Նրա սիրտը լցած էր վրէժխնդրութեամբ, որովհետև Սաքօին էր համարում մեղաւոր, որ ինքը խաբւելով նրանից՝ պատճառ դարձաւ Աշտարակի մի պատւաւոր գերդաստանի դժբախտութեան։ Այն միջոցին, երբ քննիչը Սմբատի և եասաուլ Մարգարի հետ գնում էին բանտը Խէչանին ա-

զատելու, այնտեղ էր Սաքօն։ Ծերունին դողդոջ ձեռքով պատրաստւում էր ստորագրել իր այգու կալւածագիրը, երբ մտնում են քննիչը և միւսները։ Միկիտանը սատանայի պէս անհետանում է։ Նրան երկար փնտրում են—չեն գտնում։ Յետոյ միայն նրան պատահում է Մարգարը Պարսկաստանում։ Նա ընդունել էր մահմեդականութիւն և մօլլայի պաշտօն էր կատարում մի պարսկական գիւղում։ Տեսնելով իր նախկին ծանօթին, Սաքօն հասկանում է նրա նպատակը և զրգռելով խուժանին նրա դէմ՝ սպանել է տալիս։

Խէչանը վերադառնում է հայրենի օջախը հալումաշ եղած և ուժասպառ։ Նրա առաջ բացւում է մի տխուր տեսարան։ Աղջիկը մահամերձ հիւանդ, քոյրը և Հերիքնազը բոլորովին յուսահատւած, համարեա սգի մէջ։

Հեղնարի մէջ մեծ յեղաշրջում էր կատարւել։ Նախկին հպարտ աղջիկը դարձել էր անճանաչելի։ Մահից առաջ նա բաց է անում իր սիրտը։ Իրանց գերդաստանի դժբախտութեան պատճառը համարում է նախ իրան, որ չէ ուզեցել իր հօր խօսքը կատարել և նշանածին թողած՝ սիրել է հարևան Արշակին։ Յետոյ մեղադրում է նաև հօրը և հօրաքրոջը, որ երես են տւել իրան և հսկողութիւն չեն ունեցել. մեղադրում է և Սմբատին ու Հերիքնազին՝ մէկին, որ իր աչքով տեսել է իր նշանածին օտար տղի հետ խօսելիս, չէ թքել ու հեռացել, այլ ընդհակառակը, սէրն աւելացել է, իսկ Հերիքնազն էլ մեղաւոր է, որ իմացել է նրա և Արշակի մէջ եղած սէրը և հօրը չէ ասել։ Վերջում Հեղնարը խնդրում է հօրից օրհնել Սմբատին և Հերիքնազին, որովհետև Աստւած է կամենում, որ նրանք միանան։

Հետևեալ օրը Խէչանենց տանից երկու դաղաղ էին տանում՝ մէկը Մարիամի, միւսը Հեղնարի։ Մի շաբաթից յետոյ Խէչանը մեռնում է իր աղջկայ թարմ դամբարանի վրայ։

Շուտով կատարւում է Սմբատի և Հերիքնազի հարսանիքը։

Սաքո. Սաքօն, վէպի հերոսը, Պուշեանի ամենայաջող տիպերից մէկն է և վերցրած է իրականութիւնից։

Սև ջրի մօտ կար մի ապարանք, ուր կենում էր գաւառի կառավարիչը, կամ մովրովը, ինչպէս նրան անւանում էր ժողովուրդը։ Այնտեղ ապրում էին և նրա օգնականը, գրագիրները և եասաուլները։ Այնտեղ էր և դիւանատունը։ Այդ շինութեան դիմաց՝ Սև ջրին աւելի մօտ գտնւում էր միկիտան Սաքօի գինետունը, որը գիւղից հեռու լինելով՝ ծառայում էր նաև իջևան-հիւրանոց։

Մենք չգիտենք Սաքօի անցեալը։ Բայց հեղինակի մի քանի ակնարկից երևում է, որ նա տաս-տասներկու տարեկան հասակից քաշշ էր գալիս այս կամ այն գինետան դռներին և արդէն մանկական հասակում ճարպիկ գողի համբաւ ունէր և ոչ ոք չէր վստահանում նրան երկար պահել իր մօտ։ Շփւելով տգէտ և ստոր բարոյականութեան տէր մարդկանց հետ, ոչ մի բարի օրինակ չտեսնելով իր շուրջը, մանուկը բնականաբար պիտի իւրացներ այն ամենը, ինչ որ տեսնում էր՝ սկսած գողութիւնից մինչև չարագործութիւն։

Դրանից յետոյ մենք տեսնում ենք Սաքօին արդէն բոլորովին կազմակերպւած և իր իսկական դերում։ Նրա մէջ աչքի էր ընկնում բնական խելք, առողջ դատողութիւն, ուժեղ կամք։ Նա շատ լաւ ճանաչում էր մարդկանց թոյլ կողմերը։ գիտէր վարել

ամեն մէկի հետ նրա հասարակական դիրքի, աստիճանի և կարողութեան համեմատ։ Նա ունէր զարմանալի լեզու, որով կարողանում էր գրաւել այցելուների համակրութիւնը. նրա քաղցր վարուեցողութիւնը, նրա ճարտար լեզուն ամենքին յայտնի էր։ Ահա այդ յատկութիւնների շնորհիւ նա դարձաւ մովրովի «երկու աչքի լոյսը», և այդ պատճառով բարձրացաւ ժողովրդի աչքին։ Գիւղացիները միշտ գործ էին ունենում մովրովի հետ՝ որը գանգատ, որը խնդիր, մի խօսքով, ամեն մէկը մի գարդ ունէր, և բոլորը դիմում էին Սաքօին, որովհետև նա մովրովի ամենամօտ անձն էր և նրանից շատ բան էր կախւած։

Սակայն իր բոլոր ընդունակութիւնները և փորձառութիւնը նա ծառայեցնում էր իր անձնական շահերին։ Նրա կեանքի նպատակը, նրա իդէալը հարստութիւնն էր, փողը։ Հարստութեան համար նա մոռանում էր խիղճ և ամօթ, նրա համար սուրբ էին ամեն տեսակ միջոցներ։ Ապօրինի թղթեր ձեռք բերել և չհաստութեան պատրւակով օրինաւոր պսակը խափանել, յետին թւով գրել մուրհակներ, աւազակների ձեռքով աղջիկ փախցնել և մարդ սպանել, անմեղներին մաշել բանտերում նրանց հարստութիւնը ծծելու համար, թոյլ տալ ամեն տեսակ օրինազանցութիւն, հարստահարութիւններ,—այդ բոլորը յատուկ էր Սաքօին։

50-ական թւականներին Արևելեան պատերազմի ժամանակ Սաքօի բախտը բանեց, և նա մտաւ իր իսկական դերի մէջ։ Հարստանալու ժամանակ էր։ Ով չուստ, նա կուշտ։ Իսկ հարստանալու ճանապարհներ շատ կային։ Հարկաւոր էր, օրինակ, զօրքի համար գիւղերից ցորեն հաւաքել։ Սաքօն մովրովի հետ խօսքը մէկ արած՝ եասաուլներին վերցնում և առատ

հունձ անելով անցնում էին գիւղից գիւղ։ Սաքօն ամեն գիւղում ունէր լրտեսներ։ Մովրովից առաջ գընում էր գիւղը և հող պատրաստում։ Ժողովրդի առաջ մովրովին նկարագրում էր իբրև շատ խիստ մարդու, որ հակառակութեան դէպքում եասաուլներին հրամայում էր ռօզգի տալ։

Ցորեն գնելը գիւղերում կապւած էր մեծ անգթութիւնների հետ։ Վայ այն աղքատին, որ ցորեն չունէր,—գուրս էին բերում նրա վերջին եզը, վերջին պղինձը։ Այդպիսի դէպքերում շատ անգամ գործ էր տեսնում մտրակը և աքացին։ Ամեն տեղ աշխատում էին որոշած քանակից վերցնել աւելի շատ ցորեն, և այդ աւելին պատկանում էր մովրովին, Սաքօին և միւս ծառայողներին։

Սաքօն ոչ մի գիւղում ամօթով չմնաց. ում բան հասաւ կամ ոչ, նա իրանը ստացաւ։ Եթէ ուրիշ բան չէր լինում, վերցնում էր հաւեր։ Պռոշեանը հեգնօրէն ասում է. «Սաքօի գործ դրած խելացի հնարքի շնորհիւ, այս տարի շատ ընտանիք երեխայոց ձեռքերը բռնած՝ սկսան ողորմութիւն հաւաքել»։

Պատերազմի ժամանակ մովրովը մի ուրիշ եկամուտ ևս ունէր, որ բաժանում էր Սաքօի հետ։ Ով ցանկանում էր ստանալ մեդալ որևէ ծառայութեան համար, պիտի վճարէր մի «պօլիմպերիալ», բայց ոչ նորը, այլ 184... թուականի, որ կրկնապատիկ արժէք ունէր, քան նորը։ Եւ այսպիսով մեդալ ստացողը երկու անգամ աւելի էր վճարում, իսկ այդ աւելին մնանում էր մովրովի և Սաքօի գրպանը, որովհետև Սաքօն իր ժամանակին բաւական «պօլիմպերիալ» էր ժողովել։

Այս բոլոր կեղեքումներին քննիչը վերջ տւեց, գոնէ առժամանակ։ Մովրովը իր արժանի պատիժը

ստացաւ։ Պաշտօնից զրկւեց և ընդ միշտ անբախտացաւ։ Բարոյապէս պատժւեց և Սաքօն։ Իր կաշին ազատելու համար, հեռացաւ հայրենիքից և օտար երկրում փոխեց հաւատը, ուրացաւ ազգը և դարձաւ մօլլա մի պարսիկ գիւղում. այնտեղ նա համակրութիւն չգտաւ։ Նա այն աստիճան բարոյապէս ընկած էր, որ սպանել է տալիս եասաուլ Մարգարին, որ այնքան ծառայութիւն էր արել այդ ապերախտին։ Կարելի է ասել, որ Սաքօն նաև մովրովի անկման պատճառ եղաւ, որովհետև մովրովը ինքն ըստ ինքեան անհամարձակ, նոյն իսկ երկչոտ մարդ էր, իսկ եթէ նա սկսեց այնպիսի լայն չափերով գործադրել կաշառակերութեան սիստեմը, դա շնորհիւ Սաքօի. նա էր իրօք տօն տւողը, ոգևորողը, նրա հետ էր բաժանում կաշառքը և այլ եկամուտները։

Խէչանենց Խէչանը Սաքօի հակապատկերն է։ Խէչան. Այդ պատկառելի ծերունին իր անձը դրել էր իր գերդաստանի և աղքատների համար, մինչդեռ Սաքօն ամեն ինչ զոհում էր իր անձնական շահերին։

Խէչանը ներկայացուցիչ է գիւղի հարուստ, իշխանաւոր դասակարգի։ Իբրև աշխատասէր գիւղացի, մշակում էր այգիները, զբաղւում էր տնային գործերով, մի խօսքով պարապ չէր նստում։ Եղբօր մահից յետոյ գործերը բարդւեցին նրա վրայ։ Խէչանը յիշեցնում է Բաֆֆու տանուտէր Խաչօին, այն տարբերութեամբ, որ նա խառնւում էր համայնական գործերի մէջ, իսկ Խէչանը՝ ընդհակառակ խուսափում էր։ Պատճառն այն է, որ վերին աստիճանի նուրբ խղճի տէր մարդ էր. վախենում էր մի գուցէ սխալմունքով դանձանակի և մոմի փողից մի սև գրօշ խառնի նրա գրպանի սև փողերի հետ ու ծախսի, չէ՞ որ նրա հալալ դատածը կհարամի, և

տունը կքանդվի. ինչ պատասխան պիտի տար Աստծուն։ Ահա որքան հեռու էր նա փառասիրութիւնից. յիշենք, որ նոյն իսկ մեդալը չուրախացրեց նրան։

Խէչանի գեղեցիկ յատկութիւններից մէկն էր նրա անսահման հիւրասիրութիւնը։ Նրա տան դռները բաց էին ամենքի առաջ՝ ճանապարհորդների, որոնք գիշերն Աշտարակում մնալու համար ծանօթ չունէին, աղքատների, որոնք մի գդալ տաք կերակուր չէին կերել, պաշտօնական գործերով եկած մարդկանց և աստիճանաւորների առաջ։ Նրա տանն էին պատսպարւում նոյն իսկ երեսփոխի և տանուտէրի տանն ինջած հիւրերը։ Խէչանը ուրախ էր ամենքին ընդունել, միայն թէ նրան հանգիստ թողնէին և չընտրէին ոչ երեցփոխ, ոչ տանուտէր։ Խէչանը միևնոյն ժամանակ բարութեան տիպար էր. աղքատ ընտանիքների հարկը շատ անգամ նա էր տալիս։

Գիւղամիջում Խէչանը մեծ պատիւ էր վայելում ոչ միայն իր հարստութեան, այլ և իր ազնիւ, խոհեմ բնաւորութեան համար։ Վերին աստիճանի գոբովագութ հայր էր, սիրում, փայփայում էր իր «ճար ու ճրագ» աղջկան, մինչև անգամ երես էր տալիս շատ սիրելուց։ Ոչ միայն աշտարակեցի ծնողները, այլ և շրջակայ գիւղացիները աչքները անկել էին Խէչանի աղջկայ վրայ, որ պիտի ժառանգեր հօր հարստութիւնը։ Բայց նա մի սխալ գործեց, որ հիմք դարձաւ ընտանիքի կործանման։ Դա այն վնասակար սովորութիւնն է, որ ընդունուած էր գիւղերում, այն է՝ «բաշիքեարթման»։ Ծնողները շատ անգամ որոշում էին իրանց զաւակների ճակատագիրները նրանց մանկական հասակում, պատահում էր և ծնունդից առաջ։ Սակայն այստեղ Խէչանը մեղաւոր

չէր։ Իրրև տղէտ, անապաշտ գիւղացի, հաւատացած էր, որ երեք տարեկան Հեղնարին բաշիքեարթման անելով վեց տարեկան մանուկի հետ, մի սուրբ և աստուածահաճոյ գործ էր կատարում։ Իր սխալը նա հասկանում է շատ ուշ, աղջկայ մահուան վերջին վայրկեանին։ Ջնայած իր զառամեալ հասակին, Խէչանը քրիստոնէական համբերութեամբ տանում է իր տառապանքը նոյն իսկ բանտում։

Մենք կանգ չենք առնի միւս անձնաւորութիւնների վրայ։ Բոլորն էլ գիւղական դէմքերի յաջող նկարագիրներ են, թէև մի քանիսը իդէալացրած են, օրինակ, Հերիքնազը. զարմանալի է թւում, թէ ինչպէս մի մանկահասակ, սիրով վառուած աղջիկ կարողանում է խեղդել իր մէջ ներքին կրակը, խորունկ սէրը դէպի Սմբատը։ Հսկայ կամք և ոյժ պիտի ունենար։ Հեղնարը նոյնպէս վատ չէ գծագրուած, միայն անբնական է թւում նրա սիրոյ վերածնունդը՝ զսակի խանդարման պատճառով։

Հետաքրքրական տիպ է և Ցաքուլը, որ ճշմարտախօս է և բողոքող. պախարակում է տանուտէրին և գիւղին ապօրինի գործերի համար, ամեն մէկի պակասութիւնը անվախ երեսովն է տալիս։ Բայց նրան լսող չկայ, նրա խօսքը մնում է ձայն բարբառոյ յանապատի։

«Հացի խնդիրը» կարելի է դնել Պռոշեանի լաւագոյն վէպերի շարքում։ Ունի հարուստ բովանդակութիւն և կարդացւում է հետաքրքրութեամբ։ Հեղինակը երկու նպատակ է դրել իր առաջ՝ մի կողմից, ներկայացնել 40-ական և 50-ական թւականների Աշտարակը իր լուսաւոր և մութ կողմերով, միւս կողմից՝ ցոյց տալ «բաշիքեարթման» կոչուած նշա-

Վէպի արժանաւորութ. և պակասութիւնները.

նադրութեան վատ հետևանքները։ Վէպի արժանաւորութիւններից են և մի շարք յաջող բնոյթագրերը, որոնց մէջ իրանց բելիէֆ գծագրութեամբ աչքի են ընկնում միկիտան Սաքօն և նահապետ Խէչանը։

Աշտարակեցոց բարբառը, որին գերազանց ծանօթ է Պռօշեանը, հանդէս է գալիս այստեղ իր բոլոր ճոխութեամբ։ Հեղինակի լեզուն դեռ ևս չէ կըրում իր վրայ ժամանակակից լրագրական լեզուի ազդեցութիւնը։

«Հացի խնդրի» գլխաւոր պակասութիւնը կազմում են աւելորդաբանութիւնները, այն ամենը, ինչ որ անմիջապէս կապւած չէ վէպի հետ, թէև առանձին վերցրած՝ ինքն ըստ ինքեան հետաքրքրական են։ Այդպիսի հատւածներ են հեղինակի դատողութիւնները այս կամ այն խնդրի առիթով, որոնք երբեմն խրատի ձև են ստանում, կամ որ և է ժողովրդական աւանդութիւն։ Այստեղ, օրինակ, աւելորդ է «Այդը գեօլ» վերնագրով գլուխը, աւելորդ են հեղինակի դատողութիւնները մարդկային խղճի մասին, մի ուրիշ տեղ երևանցոց հիւրասիրութեան մասին, և այսպէս յաճախ ընդհատւում է վէպը, որ դանդաղեցնում է գործողութիւնը և մոցնում ձանձրոյթ։

Միւս վէպերում պատահում են և ուրիշ թերութիւններ, օրինակ, հոդեբանական սխալներ, սնհաւատալի անցքեր և այլն, որոնք վէպերի վերլուծման ժամանակ հետզհետէ կպարզւեն։

«Հացի խնդրի» մէջ այդպիսի պակասութիւններ սակաւ են։

«Կուածաղիկ».

«Կուածաղիկը» պատմական վէպի մի փորձ է, որ Պռօշեանը գրել է դարձեալ Աբովեանի զօրեղ ազդեցութեան տակ։ Միայն նրանք վերցրել են տարբեր ժամանակաշրջաններ։ «Վէրք Հայաստանի»ի մէջ դուրս է բերւած Արարատեան գաւառը անցողական շրջանում, XIX դ. առաջին երեսնամեակում, իսկ «Կուածաղիկի» հեղինակը վերցրել է XVIII դ. վերջերը։

Յառաջաբանում Պռօշեանը գրում է. «Իմ ցանկութիւնս էր սրանից մի դար առաջ իմ քաղցր հայրենիքում գտնւած յիշատակներն անմահացնելու, որոնց մէջ գլխաւոր տեղերից մինն անպատճառ պատկանելու էր Հայոց ազգի գլուխ երջանկայիշատակ Ներսէս Ե. իմ հայրենակից Աշտարակեցի կաթողիկոսի մանկահասակ անմեղ տարիներին»։

Վէպի աղբիւրների մասին գրում է. «Գրաւոր աղբիւրներն ես քաղել եմ Սիմէօն բաղմաշխատ կաթողիկոսի տպւած աշխատութիւններից և, պ. Յարութիւն Շահազիզեանցի շնորհիւ, Ներսիսի գրութիւններից։ Իսկ իբրև անսպառելի աղբիւր, եղել են իմ մանկութենէ մինչև վերջին տարիներս Աշտարակի՝ իմ ծննդեան տեղի՝ ծերունիներից լսածներս, որոնցից շատերը խորին ծերութեան հասած՝ ականատես են եղել շատ իրողութիւնների»։

Այնուհետև հեղինակը աւելացնում է, որ նա իր կողմից թոյլ է տւել ստեղծել նոր արկածներ և նոր անձեր և որ ժամանակագրութեան ճշտութիւն չէր ուզեցել և չէր կարող պահպանել։ Նոյն իսկ Ներսիսի ծննդեան տարին հաստատապէս յայտնի չէ։

«Կուսածաղիկի» հետաքրքրությունը կայանում է նրանում, որ մի կողմից մենք ծանոթանում ենք մեր նշանավոր հոգևորականի մանկության և պատանեկան տարիների հետ և, միւս կողմից, Աշտարակի կեանքի հետ, երբ նա գտնւում էր մահմեդական լծի տակ։

Բովանդակությունն.

«Կուսածաղիկի» մէջ Պռոշեանը հանդէս է բերում Շահազիզեան-Կամսարական նշանաւոր տոհմի երեք շառաւիղը։

Առաջինը՝ Գէորգ խալֆան, որ Աշտարակի ամենահարուստ և պատուաւոր իշխաններից մէկն էր, որից պատկառում էին կաթողիկոսը և պարսից իշխանները. իսկ հայրենակիցները պաշտում էին նրան։ Գիւղում ոչինչ չէր կատարւում առանց Գէորգ խալֆայի։ Գէորգ խալֆան էր հանդիսանում միջնորդ ժողովրդի կողմից սարդարի առաջ։ Նա անչափ բարի և առատ էր. նրա տան բարիքը վայելում էին բոլոր խեղճերը և քաղցածները։ Նա որդի չունէր և միշտ կարօտ մնաց որդու, բայց ամբողջ գիւղին և գաւառին հայրութիւն էր անում։ Խորիշանը նրա արժանի ամուսինն էր, նրա օգնականը ընտանեկան կառավարության մէջ, Աշտարակի կանանց թագն ու պսակը և որբերի գորովագութ մայրը։

Շահազիզեան-Կամսարական տոհմի միւս շառաւիղն էր տէր Յարութիւնը, որ նոյնքան համակրելի անձնաւորութիւն էր, որպէս Գէորգ խալֆան։ Աստուածասէր, բարեպաշտ հոգևորականի մի տիպար։ Զը նայած իր զառամեալ հասակին, տակաւին պահպանել էր երիտասարդական աշխուժութիւն։ Նա ևս յայտնի էր իր բարութեամբ։ Ամեն օր նրա տանը տասնեակ օտարականներ էին կերակրւում, որբեր խնամւում։ Տիրուհի Սուսամբարը յետ չէր մնում իր

ամուսնուց բարեգործության մէջ և նրա հետ հաւասար մասնակցում էր որբերի խնամակալության մէջ։

Դրանք Ներսէս V կաթողիկոսի ծնողներն էին։

Գէորգ խալֆայի և տէր Յարութիւնի հակապատկերն էր Շահազիզեան տոհմի երրորդ ներկայացուցիչը՝ Ղևոնդ աղան, որ յայտնի էր իր փառասիրությամբ և ընչասէր հոգով։ Նրա հարստանալու միջոցն էր թալանը, որ նա սարքում էր իր չարության գործակից տէր Մելիքսէթի հետ և սարդարի համաձայնությամբ։ «Քոչի» լուր տարածելով Աշտարակում, ստիպում էին բնակիչներին թողնել տուն ու տեղ և քոչել։ Նրանք պատսպարւում էին Ծիրանաւոր եկեղեցում։ Շփոթմունքի ժամանակ պարսիկ սարւազները վրայ էին տալիս դէպի գիւղը և սկսում իրանց թալանը։

Ղևոնդը անտանելի էր և իբրև ամուսին։ Համատիւորը մի խելացի և բարի կին էր, Պռոշեանց իշխանական տոհմից, բայց դժբախտ էր, մանաւանդ այն պատճառով, որ զաւակ չունէր։ Սակայն Տէրը նրան տալիս է մի աղջիկ, երբ նա հեռւում է Նախիջի Մանուկի կնոջ օրինակին։ Նախիջի Մանուկը, որ նոյնպէս հին, բայց աղքատացած ցեղից էր, տասներկու տարի է պսակւած էր Շուշանի հետ, բայց որդի չունէր։ Շուշանը յոյսը կտրելով զանազան գրբացներից և ֆալչիներից, դիմում է Աստծուն։ Սուրբ Կիրակին շատ ամուլ կանանց մուրազը կատարել էր. նրա մուրազն էլ կ'կատարի։ Այդ յուսով Շուշանը սկսում է մի ամբողջ տարի չորեքշաբթի և կիրակնամուտ օրերը գնալ ուխտ Սուրբ Կիրակի և մոմ վառել։ Դրանից յետոյ նա ունենում է մի տղայ, որի անունը դնում է Վարդ։ Ղևոնդի ամուսինը

Շուշանի հետ ուխտ է կապում, որ եթէ Աստուած իրան տղայ տայ, նուիրէ վանքին, իսկ եթէ աղջիկ, նշանէ Վարդի հետ։ Սուրբ Կիրակին կատարում է Համասփիւռի փափագը, տալով նրան մի աղջիկ, որի անունը դնում է Մանուշակ իր մօր անունով։ Ղևոնդ աղի տանը ապրում էր պառաւ Սանդուխտը, որը մօր նման սիրում էր Մանուշակին, և նա էր, որ գիւղի մօտ Տախտակակապ կոչուած այրում Համասփիւռի ուխտը կատարեց, Մանուշակին նշանեց Վարդի հետ։ Մայրը առայժմ իր ամուսնուց ծածկում էր նախրչի Մանուկի կնոջ հետ արած ուխտը։

Ղևոնդի և տէր Մելիքսէթի այս անգամւայ սարքած «քօչը» մեծ օգուտ չուներ ոչ Ղևոնդին, ոչ պարսիկ սարուազներին, որովհետև աշտարակեցիք իրանց թանկագին իրերը թագցրել էին Ծիրանաւոր եկեղեցու պահարանում, իսկ սարվազների յարձակմանը քաջ դիմադրութիւն ցոյց տուին գիւղի պահապանները («արանչիները»)։ Դրան աւելացաւ և մի մեծ անյաջողութիւն, որ Ղևոնդի սիրտը դողով լցցրեց։ Նա սարդարին խոստացել էր ընծայել մի «ոսկի գութան», որ մեծ համբաւ ունէր գիւղում և գանուում էր Գեարանենց տանը։ Բայց տունը սարուազների ձեռքով տակն ու վրայ արին, գութանը չը գտնուեց։ Երևաց, որ «ոսկի գութանը» այլաբանական մտքով է գործ ածուել։ 70 տարեկան նահապետը բացատրում է, որ դա փայտէ գութան էր ժանգոտած երկաթէ խոփով։ «Հէնց էն ա, որ մեզ համար ոսկի ա բերում», ասում է ծերունին։ Ղևոնդը հաւատացրել էր սարդարին, որ իր աչքերով տեսել էր ոսկի գութանը, ահա ինչու այնքան վախենում էր։ Սակայն խանը այս անգամ ներում է Ղևոնդին և տէր Մելիքսէթին, իսկ Գէորգ խալֆային պատուիրում է

գնալ, դադարեցնել «քօչը» և բնակիչներին յետ բերել իրանց տները։

Այս դէպքից յետոյ Ղևոնդի մէջ մեծ փոփոխութիւն է կատարուում։ Նա թողնում է իր չարութիւնները, սկսում է զբաղուել իր ընտանեկան և կալուածային գործերով, մի խօսքով, դառնում է անճանաչելի։ Գիւղացիք պարզ տեսնում էին, որ Ղևոնդը կարգին մարդ է դարձել, նրան մինչև անգամ ընտրում են տանուտէր։ Նա սկսում է աւելի քաղցր վարուել իր ամուսնու հետ և աւելի սիրել աղջկան։ Օգտուելով Ղևոնդի լաւ տրամադրութիւնից, Համասփիւռը յայտնում է իր ուխտը։ Երբ նա իմանում է, որ Մանուշակը նշանուած է Վարդի հետ, ինքն ևս համաձայնում է։ Այնուհետև Վարդը և Մանուշակը դառնում են խաղընկերներ։ Այդ ժամանակ աւագակները վիրաւորում են նախրչի Մանուկին, որ ստիպուած էր երկու ամիս ծառայել անկողնին։ Շուշանը գիշեր ցերեկ նրա մօտից չէր հեռանում, կտրել էր քունը, մոռացել ուտելը։ Ինքոյշ կազմուածքը չդիմացաւ նեղութիւններին, և նա մեռաւ։ Նրանից յետոյ վախճանուում է և Համասփիւռը, որի մահը մի տեսակ նահատակութիւն էր Ղևոնդի նման անգութ բռնակալի ձեռքից։

Աշտարակի խաղաղութիւնը շուտով խանգարուեց տէր Մելիքսէթի շնորհիւ, որ աշտարակցիների ժանտախտն էր, որից ամենքը խորշում էին։ Նրա մէջ զարթել էր չար նախանձը։ Ղևոնդին տանուտէր ընտրեցին, իսկ իրան աւագ քահանայութիւն չուզեցին տալ, բաւական համարելով տէր Յարութիւնին։ Թող այժմ տեսնեն նրա ոյժը։ Չարութիւնների ասպարէզը նրան էր մնացել։ Նա գնում է սարդարի մօտ «Ղևոնդի քարն անտակ հորը գցելու»։ Շնորհիւ նրա

ամբաստանութեան, խանը սարսափներով բերել է տալիս իր մօտ Ղևոնդին և նրան ենթարկում է ֆալախայի տանջանքներին։ Ճիպոտների հարուածների տակ՝ արիւնաթաթախ ոտներով դեռին ընկած, հողին էր քսում իր երեսը և օրհնում իր տիրոջ կեանքը։ Դրա փոխարէն նա ստանում է խանի ներումը և մի խալաթ։

Այժմ Ղևոնդ աղան վերադառնում է Աշտարակ աւելի անգութ, քան թէ առաջ, որովհետև սարդարից ստացել էր նոր լիազօրութիւններ։ Վրաց Հերակլ թագաւորը գալիս էր զօրքով Երևանի վրայ, ուստի խանը հրամայել էր զօրաժողով անել նաև Աշտարակում։ Ղևոնդի առաջին գործն է լինում կանչել տէր Մելիքսէթին և հրամայել՝ վաղ առաւօտեան պարսից սարսազներին ետևից զցած՝ մտնել գիւղացոց տները, ամեն մէկից զինուոր հանել, էլ չհարցնել մեծ ու փոքրը, հարուստ ու աղքատը, պսակուածը և անպսակը. «բոլորին քշել տաւարի պէս և Թորոսենց կալումը հաւաքել»։

Ղևոնդը իր տանն ևս ցոյց տուեց իր դարմանալի անգթութիւնը, այս անգամ իր հարազատ աղջկայ հետ։ Հօր տեսնելուն պէս՝ Մանուշակը, մինուճար աղջիկը, կարօտով նետւում է նրա գիրկը. իսկ նա աչքերը ոլորելով հրում է իրանից։ Աղջիկը դէն է ձգում հօրից ստացած չոր միրգը և ասում. «Ես էլ քեզ չեմ սիրում»։ Այդ խօսքերը ցնցուցին հօր սրտի մէջ և ամբողջ գիշերը նրան չէին թողնում քնել։ Աղջիկը դարձաւ հօր համար խղճի խայթոց։

Յետոյ մի ուրիշ չար միտք է յղանում այդ հրէշը։ «Մինթէ դիւրի որդին տանուտէր Ղևոնդի փեսան պիտի լինի,—ոչ», վճռում է նա, և իր չար դիտաւորութիւնը ի կատար ածում հետևեալ օրը։ Զօրաժողովի ժամանակ սարսազների ձեռքով սպանել է տալիս դդիր Մանուկին, իսկ նրա որդին ազատւում է, որ զայրացնում է չարագործին։

Տէր Յարութիւնը որդեգրում է Վարդին։ Նրա մօտ գալիս է Ղևոնդը Մանուշակի ձեռքից բռնած և խնդրում է, որ նա իր աղջկան վերցնի իր հովանաւորութեան տակ. նա կամենում էր աչքից հեռու պահել իր հոգեկան տանջանքների առարկան։ Տէր Յարութիւնը դրան էլ ուրախ էր։ Նա ինքը երկու որդի ունէր, որոնցից մեծը Թորոսն էր, երկու էլ որդեգիրներ ունէր՝ Վարդը և Մանուշակը։ Նա ոգեւորւում է մանուկների կրթութեան գործով և իր տան մէջ մի սենեակը դարձնում է ուսումնարան։ Ճիպոտը, իհարկէ, տէր հօր դաստիարակութեան մէջ մեծ դեր էր կատարում, որովհետև նա այն համոզման էր, որ «օրհնեալ է փայտն, որով լինի արդարութիւն»։

Վիպական անցքերի վայրը մի առ ժամանակ տեղափոխւում է Երևան։ Պուշկինը ներկայացնում է մեր առաջ Երևանի բերդը պաշարուած վրաց Հերակլ թագաւորի զօրքերով։ Թագաւորը առաջարկում է Հիւսէին-Ալի խանին անձնատուր լինել. խանը երեք օր ժամանակ է խնդրում։ Հակառակ կողմերի միջնորդներ հանդիսանում են Սիմէօն կաթողիկոսը և Գէորգ խալֆան։ Հաշտութեան պայմաններն հետեւեալն էին։ Պարսիկները հանդիսատ պիտի թողնէին հայերին. նշանակուած հարկից աւելի ոչինչ չպիտի պահանջեն. իրաւունք չպէտք է լինի հայ աղջիկ քաշելու. բայրամի ժամանակ ամանով ոսկի բերելը վերանայ. Էջմիածնի վանքն ազատ պիտի լինի իր ուխտին՝ խաներին ընդունելուց և որոշեալ ընծաներ տալուց. վանքերի կալուածքները հաստատ դարձայով

(կալաձագրով) յետ տալին իրանց և ոչ մի պարսիկ իշխան իրաւունք չունենայ զանազան պատրուակներով յետ խլել։ Կաթողիկոսի մասին ասած է, որ նա ազատ է, եթէ ինքը կամենայ, գնալ տեսութեան իր մեծափառ սարդարին։ Հաշտութեան պայմանները ընդունուում են, և Հիւսէին-Ալի խանը խոստանում է ամենը կատարել։ Երկու օրից յետոյ վրաց Հերակլ թագաւորը իր զօրքերը ուղարկում է Վրաստան, իսկ ինքը կաթողիկոսի խնդրանքով՝ երեք հարիւր շքախմբով գնում է Էջմիածին, ուր նա Սիմէօն կաթողիկոսի և Էջմիածնի միաբանութեան կողմից արժանավայել պատիւներ վայելելով, չորրորդ օրը ճանապարհ է ընկնում Աշտարակ։ Այստեղ Հերակլը իր երեք հարիւր մարդկանցով հիւրասիրւում է Գէորգ խալֆայի տանը։ Թագաւորի առաջ բերում են մի քանի երեխաներ, որոնց թւումն էր Թորոսը, ապագայ Ներսէսը։ Ինքը տարեկան մանուկի խելօք, իմաստուն պատասխաններից թագաւորը զարմացած և հիացած է. «Այս երեխան մեծ յոյսեր է խոստանում», ասում է Հերակլը։ Նա հեռանում է Աշտարակից քաղցր յիշողութիւններ տանելով իր հետ մանաւանդ Գէորգ խալֆայի և հանճարեղ մանուկի մասին։

Նրանից յետոյ գալիս է Աշտարակ Սիմէօն կաթողիկոսը։ Նրան ընդունում են զգեստաւորուած քահանաները, ժողովուրդը և Գէորգ խալֆան։ Քիչ յետոյ գալիս է Ցուշի գիւղի մեծ մօլլան կաթողիկոսի գալուստը շնորհաւորելու։ Երկու տարբեր կրօնների ներկայացուցիչների հանդիպումը շատ բնորոշ է։ Ցոյց է տալիս, թէ ո՞ր աստիճանի խոնարհութեան էր հասել հայը պարսկական լծի տակ, որ նոյն իսկ կաթողիկոսը այնքան խոնարհութեամբ էր պատասխանում մօլլի հարցերին և մի քանի քայլ յետ էր մնում

նրանից, այնպէս որ՝ մօլլան է «հրամայում», որ նա իր հետ հաւասար ման գայ։ Աշտարակեցոց բախտից, մօլլան շուտով հեռանում է, որովհետև նրան շտապ կանչել էր Երևանի մեծ մուշտէիդը։

Երբ հանդուցեալ տէր Յարութիւնի որդի Թորոսը դառնում է ութ տարեկան, տիրուհի Սուսամբարը, իր ուխտի համաձայն, նրան ուղարկում է Էջմիածին. այդ պահանջն արել էր և Սիմէօն կաթողիկոսը Աշտարակում եղած ժամանակ։ Ծերունի Փիլիփոսը Թորոսին տանում է Էջմիածին և, յանձնելով նրան Գալուստ եպիսկոպոսին, ինքը վերադառնում է։ Բայց աշխոյժ մանուկը մի օր էլ չէ դիմանում վանական մթնոլորտին։ Նրա մտքից չէր հեռանում իր սիրելի ծննդավայրը, և հետևեալ օրը նա արդէն Աշտարակումն էր։ Թէև մայրն ուրախանում է որդուն տեսնելով, բայց շտապում է նորից յետ ուղարկել։ Սիմէօն կաթողիկոսին այնքան հիացնում են Թորոսի խելքը և հասուն դատողութիւնները, որ նրան որդեգրում է, անունը դնում Ներսէս։ Այնուհետև նա ապրում էր վեհարանում կաթողիկոսի հովանաւորութեան տակ. միևնոյն ժամանակ յաճախում էր ուսումնարանը։

Վրաց թագաւորի հետ հաշտութիւն կապելուց յետոյ, սարդարը գալիս է Էջմիածին և իջնում է վեհարանում։ Վանքը ստիպւած էր ահագին ծախսեր անել խանի բազմաթիւ մարդկանց կերակրելու համար։ Հիւսէին-Ալի խանին յայտնի էր, որ ուխտաւորների մէջ կայ մի գեղեցիկ աղջիկ։ Նրան ձեռք բերելու համար դիմում է Նաղի բէկի օգնութեան։

Այդ բոլորը Ներսէսը լսում է դրան ետևից և մի ակնթարթում լուրը տեղ է հասցնում, և այսպիսով չարիքը խափանւում է։ Սարդարի կողմից Էջմիածին

ուխտ գալը իսկապէս մի պատրուակ էր։ Դրա մէջ խառն էր տէր Մելիքսէթի մատը։ Նա էր գրգռել խանի ախորժակը գեղեցկուհու նկարագրութեամբ. Նրա խորհրդով էր խանը իջել վեհարանում։ Երբ սարդարն իր նպատակին չէ հասնում, շտապում է էջմիածնից հեռանալ մի երազի ազդեցութեան տակ։ Քնած ժամանակ նրա աչքը կծում է մի կարիճ, իսկ նրան երազում թւում է, որ դա ս. Գէորգն է իր նիզակը ցցել նրա աչքի մէջ։

1780 թ. վախճանւում է Սիմէօն կաթողիկոսը. նրան յաջորդում է Ղուկասը։ Նոր Վեհապետը նոյնպէս իր հովանաւորութիւնը տարածում է տիրացու Ներսէսի վրայ նրա արտակարգ ընդունակութիւնների համար։

Սակայն ազատասէր պատանին չէր կարողանում հաշտւել վանական միջավայրի հետ։ Նրա ուշ ու միտքն իր հայրենիքն էր, նրա ցնորքը Մանուշակն էր։ Նա մտածում էր նրա հետ պսակւել և դառնալ քահանայ։ Այդ նպատակը նրան քաշում է նորից դէպի հայրենիք։

Ներսէսը դեռ չգիտէր, թէ որ աստիճանի էր հասել Վարդի և Մանուշակի փոխադարձ սէրը։ Նա համոզւում է դրանում, ներկայ լինելով մի սիրային տեսարանի։ Այնուհետև նախկին ընկերները դառնում են սխերիմ ախոյեաններ, իսկ Մանուշակը նրանց կռուածաղիկը։

Տէր Մելիքսէթը դեռ չէր թողել իր դարշելի ադարքները։ Այժմ նա Ղևոնդի միջոցաւ աղջկան էր ուզում դարձնել ֆարրաշբաշու հարեմի զարդը։ Թուրքերի յարձակումը չէ յաջողւում՝ շնորհիւ Վարդի բռնաւոյքներին։

Տէր Մելիքսէթը Վարդին կործանելու համար,

հաւատացնում է Ղևոնդին, որ նա էր կամեցել Մանուշակին փախցնել, և ահա այդ երկու չարագործների հրամանով թուրքերը բռնում են Վարդին և աչքերը կապած՝ տանում են մինչև Տաճկաստանի սահմանը և այնտեղ արձակում։

Վարդը մի քանի ժամանակ «ս. Կարապետի ուխտաւորի» անւան տակ չարքաշ կեանք վարելուց յետոյ, տեսնելով, թէ ինչպիսի խեղճ ու անտէր դրութեան մէջ են հայերը, վճռում է աւազակային խումբ կազմել։ Անունը փոխում է Վարդան։ Շուտով Աջամ Վարդանի քաջագործութիւնների համբաւը տարածւում է քրդական ցեղերի մէջ և սարսափ ազդում. իսկ հայերն, ընդհակառակ, երեք տարի ազատ շունչ քաշեցին։

Սակայն Աշտարակի երկու ժանտախտները վերջի վերջոյ կրում են իրանց պատիժը։ Ներսէսը տասնեակ զինւած ընկերների հետ սպանում են նրանց մի ձորում։ Այնուհետև իւրաքանչիւր անցորդ իր պարտքն էր համարում մի քար գցել Ղևոնդի և տէր Մելիքսէթի գերեզմանի վրայ։

Վարդի անհետանալով Ներսիսի ճանապարհը լայնացաւ։ Գէորգ խալֆայի շնորհիւ, Ներսիսի և Մանուշակի նշանադրութիւնը յաջողւում է։ Բայց Սուսամբար տիրուհին պայման է դնում որդու առաջ, որ նա, իր ուխտազանցութիւնը քաւելու համար, գնայ ս. Կարապետ ուխտ։ Նշանւելուց յետոյ տիրացու Ներսէսը չորս ընկերներով ճանապարհ են ընկնում դէպի սուլթան ս. Կարապետ։ Տաճկաստանում նրանք ընկնում են քրդերի ձեռքը, և մաղից էր կախւած նրանց կեանքը, եթէ մի ակնթարթում գրոհ չտար կարիճների մի մեծ խումբ և վեց քրդերին էլ սրի չանցնէր։ Ներսիսի և նրա ընկերների փրկիչը

Վարդն էր իր քաջերով։ Միայն նա իր անունը ծաւծուկ պահեց ուխտաւորներից. խոստացաւ միայն Ներսիսին աշնան այցելել Աշտարակ և նրա հիւրը լինել։

Ահա վէպի վերջաբանը։ Տէր Յարութիւնի տունը թնդում է ուրախութեամբ։ Ներսիսի և Մանուշակի պսակն է կատարւում։ Նոյն այդ օրը յայտնւում է ս. Կարապետ գնացող ուխտաւորների փրկիչը իր ընկերներով։ Ամէն տեղ նրանց գովքն են անում։ Ոչ ոք չկարողացաւ ճանաչել Վարդանին։ Կար միայն մէկը, որի սիրտը վկայեց իր Վարդի մերձաւորութիւնը և ուշաթափւելով ընկաւ իր սիրածի ձեռքերի վրայ այն վայրկեանին, երբ քահանան ուզում էր ձեռք ձեռքի տալ։ Դա Սանդուխտ տատի սրտո�ն էր, և նա բացականչեց. «Մեռնիմ սուրը Կիրակու ոտի տակին. ես որ ասում էի՝ գրածը ջնջւիլ չի՞»։ Ներսէսը իր կողմից ներողութիւն է խնդրում Մանուշակից, որ ինքը բռնութեամբ էր ուզում տիրել նրա սրտին, իսկ այժմ միացնում է նրանց ձեռքերը։

«Կուսածաղիկը» պատմակ. տեսակէտ.

«Կուսածաղիկի» մէջ պատմական անցքերը շատ չնչին տեղ են բռնում։ Գլխաւոր անցքն է վրաց Հերակլ թագաւորի արշաւանքը Երևանի խանութեան վրայ, որը տեղի է ունենում շատ տարօրինակ կերպով։ Սարդարի կողմից մենք չենք նկատում ոչ մի դիմադրութիւն, մինչդեռ յետոյ Երևանեան խանները յամառ կռիւներ էին մղում աւելի ուժեղ տերութեան հետ, որպէս Ռուսաստանը։ Ներկայ պատերազմում Հիւսէյն-Ալի խանը մի հատ գնդակ չէ արձակում թշնամու դէմ և վրաց թագաւորի առաջարկած պայմանները անփոփոխ ընդունում է. այսպիսով նա ցոյց է տալիս իր զարմանալի երկչոտութիւնը։ Անհասկանալի է նաև պատերազմի շարժառիթը։

Վրաց թագաւորը բազմաթիւ զօրքով գնում է պատերազմելու Պարսկաստանի դէմ, ոչ թէ որովհետև հաշիւներ ունէր այդ տէրութեան հետ, կամ ուզում էր մի կտոր հող խլել, այլ հայերին պարսից լծից ազատելու նպատակով։ Ո՞րտեղից առաջացաւ Հերակլ թագաւորի մէջ այդ աստիճանի հայասիրութիւն։

Պատմական անձնաւորութիւնները նկարագրւած են նոյնպէս բաւական անգոյն, օրինակ, Հերակլը, Հիւսէյն-Ալի խանը։ Համեմատաբար աւելի յաջող է Սիմէօն կաթողիկոսը, որը Պուշեանի գրչի տակ հանդիսանում է որպէս ազգի արժանի հովւապետ։ Նա ոչ միայն հոգևորական էր, այլ և քաղաքագէտ, գիտէր ում հետ ինչպէս վարւել։ Նրա յարաբերութիւնները խանների և բէկերի հետ մտերմական էին. նա հեռւում էր այնպիսի քաղաքականութեան, որին հետևում էին ռուս իշխանները թաթարական լուծի ժամանակ. աշխատում էր շահել կառավարիչների սիրտը հլու հպատակութեամբ, ընծաներով և ասիական շողոքորթութեամբ, որի շնորհիւ նա փոխադարձաբար վայելում էր նրանց յարգանքը։ Սիմէօն կաթողիկոսը սիրում էր կարգ ու կանոն, ճշտապահութիւն։ Աշխատում էր աւերակ վանքերի փոշիների տակից հանել ձեռագիրներ և այլ պատմական յիշատակարաններ, ազատել նրանց կորստից։ Նա ինքը սիրում էր մատենագրութիւն և թողել է «Ջամբռ» վերնագրով աշխատութիւնը։ Նրա ջանքերի շնորհիւ Էջմիածինը ձեռք բերեց մի քանի գիւղեր, այգիներ և վարելահողեր։ Նրա հիմնարկութիւնն էր թղթի կործարանը։ Ծերութեան հասակում ևս նա սնխոնջ աշխատող էր։

Վէպի մէջ մեծ դեր է կատարում Ներսէս Աշտարակեցին, որի մանկութիւնը և պատանեկան տա-

րինները նկարագրում է մեր առաջ Ռուշեանը։ Սակայն Ներսիսի բնոյթագիրը դուրս է եկել ոչ այնքան յաջող։ Որ նա կարող էր ի բնէ օժտուած լինել արտակարգ ընդունակութիւններով, դրանում չկայ ոչինչ անբնական, և նրա մի քանի գծերը, օրինակ, մտաւոր անկախութիւնը, ընդգծուած է նրա բնաւորութեան մէջ։ Բայց անբնականը Ներսիսի նկարագրութեան մէջ այն է, որ Ռուշեանը նրան վերագրում է այնպիսի մտքեր և դատողութիւններ, որ մարդ ձեռք է բերում բազմաթիւ կենսական փորձերից յետոյ։ Ութ—ինը տարեկան մանուկը ասում է Հերակլ թագաւորին. «Թէ որ դու լաւ թագաւոր ես, ինչի՞ ես մեր գիւղը թուրքի ձեռքին թողնում. մենք մեղք չենք, էս ինչ է մեր հալը»։ Հերակլը առաջարկում է հայերին գաղթել Վրաստան, մանուկը պատասխանում է. «Մեր գիւղը թողնենք, ուրիշ տեղ գնանք, վեր դցենք շինած տուն, այգի, մուլք, մեր Ծիրանաւորը, մեր ժամերը, մեր Մողնու ս. Գէորգը ու գնանք օտար աշխարհ»։ Նոյնպէս հոգեբանական սխալ պէտք է համարել և նրա վարմունքը պսակի ժամանակ, երբ նա այնքան թանգ գնով ձեռք բերած կուսածաղիկը այնքան դիւրութեամբ վերադարձնում է իր ախոյեանին։ Այդ վարմունքը կարելի էր բացատրել նրա երախտագիտութեամբ, որովհետև նա իր կեանքի համար պարտական էր Վարդին։ Բայց հաղիւ թէ երախտիքի զգացումը աւելի զարգացած լինէր նրա մէջ, քան թէ սէրը։

Սակայն չէ կարելի ժխտել «Կուսածաղիկ» վէպի պատմական նշանակութիւնը։ Այստեղ մենք գտնում ենք, ինչ որ բացակայում է, օրինակ, «Դաւիթ բէկի» մէջ,—ժողովրդի կեանքը։ Կենցաղագրական կողմը այստեղ առաջնակարգ տեղ է բռնում։ Ռուշեանը

մեզ ծանօթացնում է որոշ դարեշրջանի հայ ազգաբնակութեան հետ, որ ապրում էր Արարատեան աշխարհի գիւղօրայքում, ներկայացնելով մեր առաջ լուսանկարչական ճշտութեամբ մի շարք կենցաղագրական և համայնական պատկերներ։ Այստեղ դարձեալ հանդէս է գալիս գեղջուկը իր նիստ ու կացով, իր աշխարհայեացքով, իր խաւար և պայծառ կողմերով։ Հետաքրքրական է նաև հայերի յարաբերութիւնները տիրապետող տարրի հետ, հայերի մտաւոր, բարոյական և անտեսական վիճակի ն՝արագիրը։

«Կուսածաղիկի» գլխաւոր արժանիքը կազմում է դարձեալ ժողովրդական կեանքի նկարագիրը և Արարատեան հարուստ բարբառը, որի մէջ հեղինակը վերստին ապացուցում է իր գերազանց հմտութիւնը և գիտողական ոգին։ Գալով վէպի անձնաւորութիւններին, մենք արդէն բովանդակութիւնից ծանօթացանք շատերի հետ և այլևս աւելորդ է վերադառնալ այդ խնդրին։ Միայն հարկաւոր է շեշտել Ռուշեանի տիպեր նկարագրելու առանձնայատկութիւնը՝ մէկին իդեալացնել, օր. Գէորգ խալֆան, միւսին չափազանց ստորացնել, օր. տէր Մելիքսէթը։ Կանայք գրեթէ բոլորը վերին աստիճանի համակրելի են։ Վէպի հերոսուհին, Մանուշակը, այնքան էլ որոշ տիպ չէ։

Գեղարուեստական տեսակէտ.

Այստեղ ևս կրկնւում են Ռուշեանի թերութիւնները, նախ՝ ժողովրդական աւանդութիւններ և հաւատալիքները, որոնց տեղը չէ վէպի մէջ, օրինակ, «Արդար Դաւիթը», «Կատուն Քրիստոսի աղլուին է», «Ընկնաւորը» և այլն. բացի այդ, պակաս չեն փնտրում վէպի գեղարուեստական ամբողջութեան նաև հեղինակի դատողութիւնները, խրատական տօնը և միջամտութիւնը։ Այդ բոլոր աւելորդաբանութիւններ-

ը միայն ծանրաբեռնում են վէպը և ձանձրոյթ մտցնում նրա բովանդակութեան մէջ։ Շատ բան ինքն ըստ ինքեան հետաքրքրական է, իբրև ժողովրդական մտքի արտադրութիւն, բայց ոչ վէպի մէջ, ուր նրանք բոլորովին անտեղի են։

Որ Պռոշեանը իր բոլոր էութեամբ տոգորուած է ժողովրդական ոգով և ժողովրդի նման հաւատում է հրաշքների, երևում է հեռաւեալ դէպքերից։ Երկու ամուլ կանայք, Շուշանը և Համասփիւռը, երկար տարիներից յետոյ որդի են ունենում ուխտ գնալով ս. Կիրակի։ Նախրչի Մանուկի կնոջ տեսած երազը անմիջապէս կատարւում է նրա ամուսնու վրայ։ Վէպի վերջաբանը արդարացնում է ժողովրդական առածը՝ «Ճակատի գրածը չի ջնջւիլ»։

Պռոշեանը իր վէպերի մէջ դուրս էր բերում Աշտարակի կեանքը։ Բայց 90-ական թուականներին գրած վէպերի մէջ հանդէս են գալիս հարևան գիւղերը՝ Օշական, Կարբի և Սևանայ լճի շրջակայքը։

«Ցեցկը». Պռոշեանի բոլոր վէպերի հիմքում դրած է սէր. նոյնը տեսնում ենք և «Ցեցերի» մէջ։ Սակայն այստեղ սէրը երկրորդական տեղ է բռնում։ Այստեղ հանդէս է գալիս գիւղի հասարակական կեանքը։ Հեղինակի նպատակն է՝ ցոյց տալ, թէ շատ անգամ ինչպիսի վնասակար մարդկանց ձեռքն է անցնում գիւղի կառավարութիւնը և դա ինչպէս ազդում է գիւղացոց վիճակի վրայ։ Պռոշեանը մերկացնում է տանուտէրի, դատաւորների և միւս պաշտօնեաների գործունէները, խարազանում է ցեցերին, նրանց կաշառակերութիւնը և խարդախ արարքները։

Բովանդակութիւն

Վէպի կենտրոնական անձնաւորութիւններից մէկն է Խուզօն, որ ունի երկու փափագ՝ ընտրել տանուտէր և հարուստ Բարսեղի աղջկան պսակել իր

որդու հետ և այսպիսով նրա հարստութիւնից պատկառելի բաժին ստանալ։ Նա ունի մի զօրեղ աջակից—Բալասան աղան, որը Օ... գիւղում կարևոր պաշտօն ունի և հեղինակաւոր անձնաւորութիւն է ամբողջ գաւառում։ Բալասան աղան խոստանում է Խուզօին տանուտէր ընտրել, եթէ նա իր որդու ամուսնութիւնից յետոյ ընծայէ իրան Բարսեղի այգիներից մէկը։ Ջնայած, որ կեղծ ստորագրութիւններով կարողանում են բաւական ձայներ հաւաքել, բայց այնուամենայնիւ տանուտէր ընտրւում է գիւղական շահերի պաշտպան Արտեմ Սերգէիչը կամ Արտօն, իսկ Խուզօն ընտրւում է օգնական։ Բայց նրա մէջքին կանգնած է Բալասան աղան։ Կարելի է երևակայել գիւղացիների զարմանքը, երբ տանուտէրի պաշտօնում հաստատւում է Խուզօն։ Գիւղացոց օրը սևանում է։

Տանուտէր Խուզօն, Բալասան աղան և գրագիր Գնթունին կազմում են մի տեսակ եռապետութիւն և դառնում ժողովրդի գլխին իսկական պատիժ։ Կեղեքումները, կաշառակերութիւնը անագին ծաւալ են ստանում։ Բայց ինչպէս «Հայի խնդրի» մէջ, այստեղ ևս գալիս է քննիչը և մերկացնում է նրանց բոլոր գործունէները։ Բալասան աղան կաթւածահար է լինում. Խուզօն հեռացւում է պաշտօնից. Գնթունին փախչում է Տաճկաստան։

Ծանօթանանք գլխաւոր անձնաւորութիւնների հետ։ Բալասան աղան պաշտօնեայ է և գիւղում ունի մի փառահեղ ապարանք։ Եղել է գրագիր։ Պատերազմի ժամանակ զօրքին մատակարարում էր մթերքներ և այդ ճանապարհով մեծ հարստութիւն դիզեց։ Այժմ բախտի բերմամբ ձեռք էր բերել իշխանութիւն, որ նա սակայն չարն էր գործ դնում։ Բալասան

Բալասան աղա

աղան փողապաշտ, կաշառակեր և յայտնի վաշխառու էր։ Անբնակայելի տոկոսներով հարստահարում էր պարտապաններին, անագին կոյտ մուրհակներ ունէր։ Պարծենալով ասում էր. գաւառումը գիւղ չկայ, որ իրան պարտ չլինի. Վաղարշապատ, Աշտարակ, Եղուարդ, Փարպի, Բիրական, Շարուր, Դարալագեազ— բոլորը նրա «ճորտերն» են։ Կեղեքում էր անխտիր ամենքին։ Այդ բաւական չէ։ Գիւղացիներից էր առնում իր պաշարը՝ գինին, օղին, մրգեղէնը, մեղր, բրինձ, ցորեն։ Իր պաշտօնավարութեան մէջ նա դեկավարւում էր ոչ այնքան օրէնքով, որքան իր կամայականութեամբ։ Իր ցանկացած մարդկանց տանուտէր և դատաւոր ընտրելու համար չէր խորշում նոյն իսկ կեղծ ստորագրութիւններից։ Խառնւում էր գիւղացոց ընտանեկան գործերում, անիրաւաբար խանգարում օրինաւոր պատկը։ Նրա մատը խառն էր մինչև անգամ մարդասպանութեան մէջ։

Խուդօ

Խուդօն նոյնպէս ստոր արարած էր՝ շողոքորթ, քծու և խորամանկ։ Տանուտէր դառնալու համար յանձն է առնում ամեն տեսակ անիրաւութիւններ։ «Դու ինձ գլաւնի շինի, ասում է նա Բալասան աղին, տես ինց եմ տարի չբոլորած՝ շղշկան մանէթներն առաջիդ կիտում»։ Բացի փողից նա խոստանում է և «հազարներ արժող» այգի։ Նրա աչքը Ալէքենց Բարսեղի հարստութեան վրայ էր։ Աշխատում էր նրա մինուճար աղջկան պսակել իր որդու հետ, թէև մէջ տեղ չհասութիւն կար և, բացի այդ, Բարսեղի աղջկան սիրում էր Պետրոսենց Գալօի որդի Սամփսոնը և արդէն երկու կողմից ծնողները համաձայնութիւն էին տուել։ Բայց Խուդօի համար արգելք չկայ։ Իր նպատակին հասնելու համար, Բալասան աղին այգի է խոստանում, իսկ Գալօի որդու

նշանադրութիւնը խանգարելու համար, սովորեցնում է քահանային չհասութեան պատրւակով արգելել նշանադրութիւնը։ Նա իր թշնամիների հետ կռւում էր ամենատոր միջոցներով, օրինակ, երբ նրա որդուն մերժեցին և Սօնային խոստացան տալ Գալօի որդի Սամփսոնին, նա կրակ է տալիս Գալօի գոմն ու մարագը։ Երբ հաստատւում է պաշտօնի մէջ, դառնում է գիւղի պատուհասը։ Անխիղճ դատավարութիւն, ծեծ, բանտարկութիւն, կոռ ու բէգար, ապօրինի տուգանքներ—նրա սովորական գործերն էին։ Խուդօի տանուտէրութեան օրով, ասում է Պռոշեանը, սակաւ մարդիկ մնացին, որոնց փողը չմտաւ կարճ միջոցում Խուդօի գրպանը։ Արդար ես, մեղաւոր ես, միևնոյն է, դու էլ, քո հակառակորդն էլ պարտական էք տալ։

Գնթունի

Նոյնքան հակակրելի տիպ էր Գնթունին, Խուդօի գրագիրը։ Դա վանեցի պանդուխտ էր։ Եկաւ գիւղը ցնցոտիների մէջ, որպէս աղքատ, բայց շատ շուտով նա տնատէր է դառնում և հաւաքում է այնքան փող, որ սկսում է շահով տալ թուրքերին։ Գնթունին ընդունակ էր ամեն տեսակ ստորութեան՝ կեղծ մուրհակներ և կալւածագրեր պատրաստել, առանց խղճի խայթոցի զրպարտել անմեղներին, մատնութեան գիմել, բանտարկել տալ, դրդել գէպի սպանութիւն և յանցանքը ձգել անմեղ մարդու վրայ։ Միևնոյն ժամանակ նա այնպիսի խաբեբան էր, որ հատը չկար։ Իրան անւանում էր Հայրիկի աշակերտ և շահագործում «հայ եղբօր» անունը։ Շնորհիւ իր եռասիրութեան, դատարանի հետամտութիւնից անձը փրկելու համար, ընտանիքը թողնում է անտէր և ինքը փախչում Տաճկաստան։ Հասկացող մարդիկ նրան շատ շուտ ճանաչեցին և անունը դրեցին «խաչագող»։

Դրական անձնաւորութ.

Գիւղի աւերիչ ցեցերին Պոշեանը հակադրում է համակրելի անձանց, որպիսին էր, օրինակ, Արտեմ Սերգէիչը կամ աւելի յայտնի Արտո անունով։ Կրթուած մարդ էր, աշխարհ տեսած, վարժ խօսում էր ռուսերէն։ Նա իր երիտասարդութեան թարմ ոյժը գործադրել էր իր հայրենի ծննդավայրից դուրս, այսօր խոհականութեան և փորձառութեան տարիներում նա մեծամեծ ծառայութիւններ էր անում իր «մանկութեան օրօրանին»։ «Այսօր իշխանութիւնից հրաման եկաւ, Արտեմ Սերգէիչն է կատարելու ձև ցոյց տուողը»։ Վաղը մի գործակալ, մի առաջնորդ, մի պատուելի հիւր այցելեց, Արտեմ Սերգէիչն է հիւրասիրում, պատուում։ Նա իր ընտանիքում էլ պատուական մարդ էր։ Նա ոչ միայն իր սեփական կնոջն էր ջան ասում, ջան լսում, ուրիշների հետ էլ միևնոյն էր։ Վերին աստիճանի անկեղծ էր։ Նրան էլ ամենքը սրտանց սիրում և յարգում էին։ Արտեմ Սերգէիչն էր գիւղի անդրանիկ տանուտէրը, որին ընտրել էին միաձայն։ Իր այդ պաշտօնում նա մեծ ծառայութիւն մատուցեց իր ծննդավայրին։ Գիւղի փողոցները մաքրեց, ժողովուրդն ազատեց ցեցերից, կաշառակեր տանուտէրներից, աղքատին խեղդող գըզիրներից և այսպէս մի շարք բարեփոխութիւններ մտցրեց գիւղում։

Կրթուած և համակրելի անձնաւորութիւններից էր Սիսակը, գիւղի միակ օրինաւոր դրագիրը։ Նոր էր վերադարձել գիւղը Գէորգեան ճեմարանից՝ աչքերի հիւանդութեան պատճառով։ Նա միշտ պաշտպան էր հանդիսանում հասարակական շահերին։ Նա բերել էր տալիս դրքեր և լրագիրներ։ Սկզբում ամենքը խուսափում էին Սիսակից, բայց յետոյ ընտելացան և մինչև անգամ իրանք էին խնդրում, որ իրանց

համար կարդայ նորութիւններ։ Սիսակը նոր սերնդի ներկայացուցիչ է և գիւղական ժողովրդի մէջ քաղաքակրթութիւն տարածող մի ռահվիրա։

Հետաքրքրական անձնաւորութիւն է և Մելիք-Բաղալը, որին Պոշեանը վերաբերում է համակրութեամբ։ Նրա թուլութիւնն այն էր, որ իր նախկին տանուտէրութեան ժամանակ կաշառք էր վերցնում. միւս թուլութիւնը—որ նա առանց ուշունցի չէր կարող ապրել։ «Արշալոյսից մինչև վերջալոյս շարունակ ուշունց էր դուրս գալից բերանից»։ Դրանից դուրս Մելիք-Բաղալը «բարեսիրտ էր, զարճախօս և գիւղի սիւներից մէկը»։

«Ցեցերը» իր արժանաւորութեամբ կարող է մրցել «Հացի խնդրի» հետ, որովհետև բովանդակութիւնը դրուած է հասարակական հողի վրայ, հարուստ է յաջող նկարագրուած անձնաւորութիւններով, և հեղինակը ինքն էլ բողոքողի և քննադատի դերի մէջ է։ Բայց, իհարկէ, այս վէպն էլ ազատ չէ թերութիւններից։ Այստեղ էլ կան աւելորդաբանութիւններ, շատախօսութիւն և խճողուած գործողութիւններ։

«Բ ղ ղ հ».

Վէպի հետաքրքրական կողմը հերոսի տիպն է։ Դա մի հասարակ մանրավաճառ էր, որ ամենաստոր դրութիւնից բարձրացաւ մինչև հարստութեան բարձր աստիճանը։ Բղդէն իր մի քանի յատկութիւններով Սաքօի հատ ու կտորն էր։ Անշուշտ Պոշեանը այդ ի նկատի ունեցել է և նրանց մի անդամ իրար հանդիպեցնում է։

Հեղինակը մեր առաջ պատկերացնում է այն մի-

ջավայրը, ուր կազմակերպել է Բղդէի բնաւորութիւնը, և սկսում է մանկութիւնից։

Բղդէ. Սկզբում Բղդէն շրջիկ մանրավաճառ էր (չարչի)։ Նրա առաջին աշխատանքը—երեք կոպէկ—նրան եօթերորդ երկինքն է տանում. այդ սև փողը նա սուրբի պէս պահում էր, որպէս հիմք ապագայ հարստութեան։ Բղդէն հետզհետէ գործը ընդարձակում էր։ Մի քանի տարուց յետոյ Կարբու շրջակայքում գիւղ չկար, որտեղ նա պարտապաններ չունենար։ Նրանցից ամսական տոկոսներ էր վերցնում։ Շատ անգամ պարտքի փոխարէն դուրս էր քաշում ադքատի վերջին շորը, երեխաների հացը կտրում էր, մեծ ջնասներ էր տալիս միւս մանրավաճառներին։ Բղդէն երբ դեռ պատանի էր, ապրանքը վերցնում էր Ջհուդ Աղաջանի խանութից, իսկ յետոյ գործ ունէր Երևանի հետ։

Բաղդի բերմամբ Բղդէն զանգակատանը գտնում է մի կոյտ ոսկի, որ մի փոքրիկ հարստութիւն էր։ Այնուհետև նա աւելի ընդարձակեց իր գործը։ Կարբի գիւղում բայց արեց մի մեծ խանութ, որ մրցում էր առաջնակարգ խանութների հետ։ Որքան Բղդէի փողը շատանում էր, այնքան աւելի ընչասէր էր դառնում։ Նրա հարստութիւնը եռապատկուեց 50-ական թուականների պատերազմի ժամանակ, երբ նա ցորենի կապալով էր զբաղուած։ Այնուհետև Բղդէն սկսեց առատանաբար բարձրանալ և շրջապատող մարդկանց աչքում։ Նրա գործունէութիւնը սկզբնական շրջանում ամենքը նրան ծաղրում էին, նոյն իսկ երեխաները, մանաւանդ որ մարմնով էլ այլանդակ էր։ Իսկ այժմ նա վայելում էր գիւղացոց յարգանքը և դարձել էր Խօջա Բաղդասար։

«Բղդէի» մէջ կայ մի սիրային պատմութիւն։

Դեռ ևս պատանեկան հասակում Բղդէն սիրահարուած էր իր տիրոջ՝ Ջհուդ Աղաջանի աղջկայ վրայ, բայց չէր համաձակւում նոյն իսկ մի ակնարկ անել։ Մի անգամ նա տեսնում է գեղեցիկ Շողիկին լողանալիս ս. Յովհաննէսի աղբիւրում, որ հրաշագործութեան համբաւ ունէր ժողովրդի մէջ։ Կուսական մերկ, չքնաղագեղ մարմինը Բղդէին խելքից հանում է։ Հարստանալով նա աւելի համարձակութիւն է ձեռք բերում։ Մի անգամ, երբ Շողիկը ջրի էր գնում, նա մօտենում է և խօսք բաց անում իր ամուսնութեան մասին։ Բանը նրանում է, որ Ջհուդ Աղաջանի աղջիկը և Բասինենց Սահակը (Սհօ) փոխադարձաբար սիրում էին իրար և ծնողների համաձայնութեամբ նշանուած էին։ Բղդէն սկսում է նրան համոզել, որ Սահակին թողնի ու իրան առնի, ու սկսում է ամեն տեսակ բարիք խոստանալ։ Սակայն աղջիկը խորշում է անճոռնի մարդուց և իր նշանածին փառաբանում։

Բղդէն օձի նման պահանջ էր զգում իր թոյնը թափելու։ Եւ թափում է։ Գլխաւոր խոչնդոտներն էին Շողիկի հայրը և նշանածը։ Նրանց կործանելու համար ընտրում է մի սատանայական միջոց։ Յորդորում է թուրք աւազակներին գրոհ տալ ս. Գէորգի վանքի վրայ, հաւատացած, որ զիւղացիք կգնան կռուելու և նրանց մէջ կլինեն Ջհուդ Աղաջանը և նրա փեսան։ Այն ժամանակ ամեն մէկին մի գնդակ բաւական էր։ Յարձակումը տեղի է ունենում։ Շողիկի հայրը մահանում է, իսկ նշանածը երկու ամիս վերքից տանջուելուց յետոյ հոգին աւանդում է։ Խոչնդոտներից ազատուելով, Բղդէն էլ նազ չէ անում. խնամախօսներ է ուղարկում աղջկայ տունը։ Մինչդեռ մայրը Բղդէի անունը լսել չէր ուզում, աղջիկը առ երես համաձայնում է, բայց մաքուրը

պահում է մի սարսափելի վրէժ։

Հասնում է պսակի անաւոր խորհրդի ժամը։ Տէր Յակոբը խօսքն ուղղելով դէպի Նորափեսան՝ հարցրեց Մաշտոցի խօսքերով. «Որդեակ իմ, մինչև ի մահ տէր ես»,—«Տէր եմ», պատասխանեց Բղդէն։—«Իսկ դու, որդեակ, մինչև ի մահ հնազանդ ես»,—«Հնչ մի ժամանակ», երեսի թանձր քօղը յետ ձգելով՝ գոչեց Շողիկը։ Ու սկսում է մի կրակոտ, երկար ճառ, որին յաջորդեց քահանայի յանդիմանութիւնը։ Բայց Շողիկը, ինչպէս ասում են, ամօթը վեր էր դրել. կորզեց իր գլխի զարդերը, իր բերանը փակող շղարշը և Բղդէին շպրտեց, հետն էլ թքեց երեք անգամ նրա երեսին, երկու ամուր ապտակ ևս հասցնելով, հաստատ քայլերով դուրս գնաց եկեղեցուց։ Այսպէս առաւ նա իր հօր և նշանածի արեան վրէժը։

Շողիկի վախճանը չափազանց եղերական էր. բազկատարած և գլխիվայր ցած ձգեց իրան զանգակատան ահագին բարձրութիւնից։

Անբնականը վէպի մէջ.

Բղդէն, իբրև վերին աստիճանի բացասական տիպ, նկարւած է յաջող։ Բայց պատկերի ամբողջութեանը վնասում է նրա մի անհեթեթ արարքը։ Պռոշեանը մեզ հաւատացնում է, որ Բղդէն ոսկու կոյտը գտել է մատուռի զանգակատանը և ոսկու պահապանները եղել են բոռերը («իշամեղուները»), և այդ բոլոր դէպքը դրւած է խորհրդաւորութեան մէջ։ Երևանի ճանապարհին նրան պատահում է մի անծանօթ և յանձնում է Բղդէին մի եռանկիւնի ծալած թուղթ, ասելով. «Մի լաւութիւն արած կլինես, եթէ այս թուղթը տանես դնես ձեր եկեղեցու զանգակատան լուսամուտի վրայ»։ Անծանօթը յայտնում է և այն, որ թուղթը իրան յանձնել

է մի խոպահանցի հայ և խնդրել ուրիշի ձեռքով հասցնել Կարբու զանգակատունը։

Աւելի անբնականը և ծիծաղելին Շողիկի վարմունքն է։ Ո՞վ է տեսել կամ լսել, որ գիւղացի նորահարսը պսակի ժամանակ անի այն, ինչ որ Շողիկն արեց,—որ թքէ իր նշանածի երեսին և ապտակներ տայ։ Անբնական է նրա բարձրանալը զանգակատան գլուխը։ «Դա աղջիկ չէ, սատանայ է», ասում էին ամեն կողմից, որովհետև չէին հաւատում, որ մարդու որդին կարող է հայելու պէս կոկ պատը բարձրանալ։ Մանաւանդ անբնական է Շողիկի ճառախօսութիւնը։

«Յունօն».

«Յունօն» Պռոշեանի վերջին խոշոր վէպն է, որ տպւեց 1900 թ. «Մուրճ» ամսագրում։

Անցքերը տեղի են ունենում Վայոց Ձորի (Դարալագեազ) և Զանգեզուրի սար ու ձորում։ Հեղինակը պատմում է դէպքերը, որպէս ականատես։ Ինքն իր աչքով տեսել է Յունօին, հետը խօսել է, տեսել է նրա ընտանիքը, եղել է քուրդ Հասօի վրանում։ Բոլոր անցքերը պատահում են Պռոշեանի ճանապարհորդութեան ժամանակ, երբ նա դուրս գալով Նորայրէից՝ Դարալագեազի վրայով և Գեղամայ լճի ափերով գնում է Սիւնիք, Տաթև և կրկին վերադառնում։ Ձորերում նա հանդիպում է Յունօին, որ յայտնի էր Նազո անունով և վտանգաւոր տեղերում ուղեկցում էր նրան։

Ակամայ աւազակ

Յունօն սովորական աւազակներից չէ։ Նա արդար մարդկանց ճանապարհը չէր կորում, մազին չէր

դիպչում, մինչև անգամ օգնութեան էր հասնում վտանգի ժամանակ։ Բայց նա կարում էր այն մարդկանց ճանապարհը, որոնք սովոր են տներ քանդել, տաւար փախցնել, անխիղճ տոկոսներ վերցնել։ Այդ յատկութիւնների համար գիւղացիք նրա արևոմն էին երդւում։ Յունօի անունը սարսափ էր ազդում թուրք աւազակների վրայ, որոնց ոտը նա կտրել է Դարալագեազի ձորերից։

Բայց ինչը դրդեց խաղաղ գիւղացուն աւազակ դառնալ։—Աննման Գիւլօն, որի սիրոյ համար Յունօն մատաղ արեց իր ընկերին և ընկաւ սար ու քար։

Երջանիկ էր Յունօն։ Ո՛չ։ Որքան ազնիւ սիրտ ունենար, այնուամենայնիւ նա աւազակ էր և մարդասպան, միշտ անհանգիստ գերդաստանի համար և սեփական կեանքն էլ վտանգի մէջ։ Մի օր էլ Յունօն թողնում է աւազակութիւնը և իր անձը մատնում արդարադատութեան։

Վէպի արժանիքը

Պռոշեանը «Յունօի» մէջ դուրս է բերում մի նոր աշխարհ։ Առաջին երեսներից զգում ես Գեղամայ լճի ախորժելի հովը, լեռների զովութիւնը և հովիտների թարմ կանաչը։ Զգում ես, որ Արարատեան արևակէզ տափաստանում չես այլևս, այլ գեղատեսիլ ծովի ափին, խորունկ ձորերում և լեռների գագաթների վրայ։

Այստեղի ազգաբնակութիւնն էլ զանազանւում է Արարատեան ժողովրդից, մարդիկ էլ ուրիշ տեսակ են։ Ահա հէնց ինքը Յունօն։ Մի հասարակ գեղջուկ՝ նիհար մարմնով, բայց ունի առիւծի սիրտ և թագաւորում է լեռներում։ Նրա ընկերներն էլ մի մի հսկաներ էին։ Ո՞վ էր նեղ ժամանակ Յունօին օգնութեան հասնում։—«Զանաւար Պողոսը», որի բռնուցքը հինգ տարեկան երեխայի գլխի չափ էր. յօնքերը

«ցախաւելի չոփեր»։ Ո՞ւմ դէմ էր ուղղած նրանց գնդակների տարափը —Սուլէյման բէկի նման աւազակի և գիւղացոց արիւնը ծծող կեղեքիչների դէմ։

Ժողովուրդն էլ այստեղ ապրում էր իր ուրոյն կեանքով և սովորութիւններով։ Նա սիրում է աւազակ Յունօին, որովհետև քաջ էր և վատ մարդկանց հոգեհանը. ներում էր տէրտէրի արբեցողութեան ախտը, որովհետև ժողովրդասէր էր և «զարտիմանդ», համարձակախօս։ Մտէք ջուրդ Հասօի վրանը, որպէս հիւր, ամենաընտիր դառը ձեզ համար կմորթի։ Մտէք հայ գիւղացու օջախը, և դուք նրա «ազիզ» հիւրն էք, աչքի վրայ տեղ ունիք, ամենափափուկ բարձը ձեզ համար է պահուած։

Ամեն անգամ, երբ Պռոշեանը նկարագրում է ժողովրդի կենցաղը, վարք ու բարքը, նա բառիս բուն նշանակութեամբ վարպետ է և ունի միայն մի մրցակից՝ «Վէրք Հայաստանի» հեղինակին։

Յունօն թէև յաջող է նկարագրուած, իբրև ազնիւ աւազակի տիպ, բայց դարձեալ ազատ չէ հոգեբանական թերութիւնից։ Նրա մէջ յեղաշրջումը կատարւում է շատ անակնկալ և հոգեբանօրէն բացատրուած չէ։ Յեղաշրջումից առաջ Յունօն պէտք է կրած լինէր հոգում երկարատև դրամա։

Վէպի ընթացքում դրա նշոյլն էլ չենք տեսնում։ Միայն մի օր երկար մենախօսութիւնից յետոյ վրճռում է գնալ և իրան մատնել դատաւորներին։ Բայց այդպիսով նա իրան զրկում է մի այնպիսի էակից, որի համար ընկերոջը սպանեց և աւազակ դարձաւ։ Ի՞նչպէս կարող էր այդպիսի խղճալական քայլ անել մի լեռնական և այնպիսի ժամանակ, երբ ընտանիքը վտանգից ազատուած էր և գտնւում էր ապահով տեղում։ Նրա անձնուրացութիւնը բնական կլինէր այն

գէպքում, եթէ նրա դերդաստանը կալանաւորէին և ինքը գնար, անձնատուր լինէր։

Միւս գրածքները

Մենք կանգ չենք առնի «Շահէն» և «Սկիզբն երկանց» վէպերի վրայ, որովհետև երկուսն էլ անյաջող գործեր են։

Պռոշեանը գրում էր նաև մանր պատմուածքներ, թէև շատ սակաւ։ Նրանք ազատ են խոշոր վէպերի թերութիւններից՝ աւելորդաբանութիւնից։ «Մեր Խէչօն» մի տեսակ վերջաբան է «Յունօի»։ այստեղ դուրս է բերուած Յունօի նման մի աւազակ ծերութեան հասակում։ «Նա» պատկերը գրած է վանեցի պանդուխտների կեանքից։ «Ախցիզչի» վերնագրով պատմուածքի մէջ մի գիւղացի, ցանկանալով գիւղն ազատել վատ աքցիզչուց, սխալմամբ սպանում է մի ուրիշ պաշտօնեայի, որը ժողովրդի սիրելին էր։ «Միքէլ աղէնց Աբդիւլը» տենդենցիոզ գրածք է։ Պռոշեանը կամենում է ապացուցել, որ Թուրքը ապերախտ է լինում։ Դրա համար նա պատմում է հետևեալ դէպքը։ Լօռեցի Միքէլ աղան բարի և ողորմած մարդ լինելով՝ մի օսմանցու որը մանուկի վերցնում է իր մօտ, և նա դառնում է ընտանիքի անդամներից մէկը։ Որովհետև աչքաբաց և ժիր տղայ էր, նրան ամենքը սիրում էին։ Ռուս-տաճկական պատերազմի ժամանակ Միքէլ աղան վերցնում է իր հետ Աբդիւլին և ձիով ճանապարհ ընկնում դէպի Ալէքսանդրապոլ։ Նա կամենում էր այնտեղ ստուգել պատերազմի լուրը։ Ճանապարհին դերերը փոխւում են։ Աբդիւլը պահանջում է, որ Միքէլ աղան իր ծառան դառնայ և գնա Կ. Խանից, հակառակ դէպքում կենդանի չէր մնայ։ Նոյն առաջիկայ գիւղում Միքէլ աղայի մի ակնարկով Թուրքին կալանաւորում են։ Այդպիսի դէպք կարող էր տեղի ունենալ, իբրև բացառութիւն։ Նոյն իսկ հայը կարող է այդպէս ապերախտ լինել։ Ուրեմն ազգութիւնն այստեղ նշանակութիւն չունի։

Պռոշեանի հեղինակութիւններից պէտք է յիշատակել նաև «Յուշիկները»։ Դա հեղինակի ինքնակենսագրութիւնն է, որ նա հասցրել է մինչև 60-ական թուականները։ Այստեղ, ի միջի այլոց, կարելի է գտնել տեղեկութիւններ մի քանի հայ գործիչների մասին, օրինակ՝ Աբովեանի, Ներսէս Աշտարակեցու և Շանշեանի։

Պռոշեանի լրագրական յօդուածներից ուշադրութեան արժանի է «Հայոց թատրոնի սկզբնաւորութիւնը Թիֆլիսում», որը շատ կարևոր նիւթեր է պարունակում հայկական թատրոնի պատմութեան համար։

Պռոշեանը աշխատել է նաև թարգմանական գրականութեան մէջ և տուել է տասնեակ թարգմանական գրածքներ։

Ընդհանուր հայեացք

Պռոշեանը բեղմնաւոր հեղինակ էր, բայց սահմանափակ տաղանդով։ Նրա վէպերի գլխաւոր պակասութիւնը կայանում է նրանում, որ նա երբէք չէր տալիս գեղարուեստական ամբողջութիւն։ Նա գիտէր յօրինել հետաքրքրական սիւժէներ՝ հարուստ արկածներով, բայց ընթերցողի ուշադրութիւնը պահել սկզբից մինչև վերջ լարած դրութեան մէջ, կենտրոնացնել իր վրայ, նա անկարող էր։ Ամենահետաքրքրական տեղում—կտեսնէք՝ կարեց պատմութեան թելը, որպէս զի մի քանի էջերի վրայ կամ նոյն իսկ ամբողջ գլխում սատմէ մի ժողովրդական աւանդութիւն, մի աւ ակի անցեալը կամ իր սեփական կարծիքը և դատողութիւնները։ Այդպիսի հատուածներ ծանրաբեռնում են գրածքը, դան-

դաղեցնում են գործողութիւնը և ձանձրոյթ պատճառում։ Ձանձրոյթ պատճառում են նաև երկար ու բարակ խօսակցութիւնները։ Այդ բոլոր աւելորդաբանութիւնները վնասում են գրուածքի ամբողջութեան, և իրօք, Պուշկինի վէպերում գեղարուեստական ամբողջութիւնը պակասում է։ Դա առաջ է գալիս հեղինակի գրական կրթութեան թերութիւնից։ Մինչդեռ Աբովեանի դրոշմը խոր հետք է թողել նրա գրուածքների վրայ, ռուսաց և եւրոպական հեղինակների ընթերցանութեան հետքեր բնաւին չեն երևում նրա վէպերի մէջ։ Ըստ երևութին նրա ընթերցանութիւնը եղել է շատ սահմանափակ։ Դպրոցից ևս նա չէր կարող դուրս բերել գրական գիտութիւններ և գեղարուեստական ճաշակ։ Տաղանդը պահանջում է զարգացման համար սնունդ, որից նա զուրկ էր։

Պուշկինի վէպերը թոյլ են իրանց ամբողջութեամբ, բայց մանրամասնութիւնները գեղեցիկ են։ Նրա վէպերը լիքն են գիւղական կեանքի բազմազան տեսարաններով, որոնցից իւրաքանչիւրը ինքն ըստ ինքեան իրական կեանքից մի ամփոփ պատկեր է։ Գիւղացու տուն ու տեղը, վարք ու բարքը, սովորութիւնները, նշանադրութիւն, հարսանիք, տօնախմբութիւններ—բոլորը անդրադարձել է Պուշկինի վէպերի մէջ լուսանկարչական ճշտութեամբ։ Վէպերի մէջ հանդէս են գալիս նոյնպէս մի շարք պէսպէս գիւղական տիպեր, գրական և բացասական, բոլոր դասակարգերի ներկայացուցիչները՝ տանուտէր, դատաւոր, քահանայ, երկրագործ, արհեստաւոր, վաճառական, հարուստ և աղքատ և այլն։

Պուշկինի գործերում բերած անձնաւորութիւնները մեծ մասամբ վերցրած են կենդանի օրինակներից, որոնցից շատերը նրան ծանօթ էին. բայց հեղինակը

նրանց փոփոխում էր իր նպատակների համաձայն՝ մէկին իդէալացնում, միւսին նկարում աւելի թանձր գոյներով։ Պուշկինի նկարագրած գիւղական տիպարները ընդհանրապէս յաջող են իրական—հոգեբանական տեսակէտից, թէև հեղինակը երբեմն թոյլ էր տալիս հոգեբանական սխալ, չափազանցութիւններ և անբնականութիւն, օր. Սօսի և Վարդիթերի անբնական վախճանը, Ներսիսի անտեղի հրաժարականը Մանուշակից պսակի ժամին, գեղջկուհու թուք ու մուրը և ապտակները իր նշանածին՝ դարձեալ պսակի ժամանակ։

Պուշկինի բացասական տիպերից յիշենք՝ Սաքօն, Քաւտառենց տէր Մելիքսէթը, Ղևոնդ աղան, Բալասան աղան, Խուդօն, Գնթունին և այլն. գրական տիպերից՝ Սիմէօն կաթողիկոս, Ներսէս Աշտարակեցի, Գէորգ խալֆա, տէր Յարութիւն, Խէչանենց Խէչան և այլն. իսկ կանանցից՝ Խորիշան, Համասփիւռ, Սուսամբար, Հերիքնազ, Հեղնար և այլն։

Գալով Պուշկինի լեզուին, նա ոչնչով աչքի չէր ընկնում. ժամանակակից գրական լեզուն էր և իր վրայ կրում էր լրագրի ազդեցութիւն. խառն էր և ժողովրդական տարրերով։ Բայց ուրիշ բան էր ժողովրդական բարբառը, որ գրուած էր վէպերի հիմքում։

Այստեղ Պուշկինը Աբովեանի մրցակիցն էր. երկուսն էլ գերազանցօրէն տիրապետում էին իրանց մայրենի լեզուին՝ մէկը Քանաքեռի, միւսը՝ Աշտարակի։

Պուշկինը տալիս էր աշխարհ կեցող բարբառի բոլոր նրբութիւնները և հաճն ու ոտը։ Ժողովրդի

ստեղծագործութեան բոլոր արտադրութիւնները՝ առածներ, աւանդութիւններ, նախապաշարում, հաւատալիք—բոլորը նրան քաջ յայտնի էր։ Ով ցանկանում է հիմնաւոր տեղեկութիւն ունենալ աշտարակեցիների մասին, նրա վէպերից աւելի լաւ աղբիւր չէ կարող գտնել։

Պռոշեանի ծառայութիւններիցն է և այն, որ նա Բաֆֆու հետ միասին իր վէպերով մեծ զարկ տուեց ընթերցանութեան։

ԱԴԱՄԵԱՆ

---

3. ԹԱՏՐՈՆ ԵՒ ԴՐԱՄԱ

(1872 թ.—1879 թ., 1879 թ.—1882 թ.)

Երբ 1872 թ. մեղանում սկսեց նոր մտաւոր շարժում, թատրոնը ոչ միայն չկենդանացաւ, այլ, ընդհակառակ, աւելի արագ սկսեց գլորուել։ Եթէ 1874—76 թ. մանէիք թատրոն, դուք պիտի ապշէիք, տեսնելով ձեր շուրջը սոսկալի ամայութիւն, հանդիսականների փոխարէն՝ թափուր աթոռներ։

Մի այսպիսի դրութիւն էր տեղծուել։ «Քանդած օջախից» յետոյ Սունդուկեանն այլ ևս ոչինչ չէր գրում։ Ամերիկեանը յուսահատուած Թիֆլիսից, տա-

լես է իր հրաժեշտի ներկայացումը («Աւազակներ») և գնում է Կ. Պոլիս իր բախտը որոնելու։ Դերասանական խումբը, որ առաջնակարգ ոյժի հեռանալով մեծ կորուստ ունեցաւ, մնացել էր շւարած։ Ներկայացումները շատ անգամ ծախսերը չէին ծածկում։ Երբեմն հարկ էր լինում յետաձգել։ Ինորոշ է հետեւեալ դէպքը։ Յօգուտ տաճկահայ սովեալների տրւելիք ներկայացումը (1875 թ.) երկու անգամ յետաձգւում է, որովհետեւ տոմսակներ շատ սակաւ էին վաճառւում։ Ներկայացումը կայանում է միայն երրորդ անգամ, և այն էլ շնորհիւ Աբ. Յովհաննիսեանի, որ յանձն է առնում տոմսակներ տարածել։ Բայց այդ էլ չէ օգնում։ Սովեալների օգտին տրւած ներկայացումը հազիւ կարողանում է ծախսը ծածկել։

Ինչպէս յայտնի է, թատերասրահի սառնութիւնը սաստիկ ազդում է դերասանների տրամադրութեան վրայ և սառցնում է նրանց խաղը։ Լրագրական յօդւածների մէջ յաճախ կարելի էր կարդալ, թէ այս ինչ ներկայացումը «սառն անցաւ», «տաղտկալի էր», «ժողովուրդ քիչ կար»։ Եւ այսպէս, սառնութիւնն անցնում էր հասարակութիւնից դէպի բեմ և բեմից դէպի հասարակութիւն։

Թատրոնի առաջադիմութեան նախանձախնդիր անձինք, իհարկէ, ուզում էին թատրոնի անկումը։ Ամենից շատ դժգոհ էին դերասանները, որովհետեւ ներկայացումների յաջողութիւնից էր կախւած նրանց ապրուստը։ 1875 թ. Զմշկեանի բենեֆիսին կայացած ներկայացման առթիւ «Մեղու Հայաստանի» լրագրի բեցենզենտը գրում է. «Դահլիճը, ըստ սովորութեան, դատարկ էր, և հարցրեցի թէ մեր տաղանդաւոր դերասանը կարողանար իր ծախսը հանել... Հայոց ներկայացումների ճակատագիրը այդ է և դեռ երկար ժամանակ այդ կլինի»։ Զմշկեանն էլ գրում է, որ մեր դերասանական խումբը ոյժից ընկած է։

Թատրոնի տարտամ վիճակը առիթ էր տալիս երգիծական յարձակումների։ Կ. Տէր-Աստուածատրեանը «Մեղու Հայաստանի» լրագրում զետեղել է մի սրամիտ ոտանաւոր Թատրոնի ընկած վիճակի մասին։ Ահա մի քանի հատուածներ։

«Քընէ, քընէ, հայոց թատրոն տարաբախտ,
Քո քընելու դարըն արդէն հասել է...
Մի վրհատիր, որ բիւր անգամ պարտերում,
Ո՜հ, լրատիւն էր համօրէն խոր տիրած ..
Եւ աթոռոց անկիւնները, մէջերքում
Երկու երեք մարդիկ էին նստոտած։
Դերասաններ ոստ անդ սփռեալ տարագիր,
Պիէսներրդ զոհ են դարձել մրկների...

—

Ո՞ւր է գրթոտ հայրենասէր այն մարդը,
Որ հայարար արթուցանէ քեզ քնից,
Որ հասկանայ քո վիճակը, քո դարդը
Եւ քեզ փրրկէ այդ սրտառուչ վիճակից։
Երևի թէ այս դարը քո դարը չէ...
Այժմ քընէ, մինչև փողը արթուցիչ
Յանկարծ կը դայ քեզ այդ քընից կը կանչէ,
Եւ նա կընի քո բարեգութ ազատիչ»։

Թատրոնի տխուր վիճակը դարձել էր հոգածութեան առարկայ։ «Մեղու Հայաստանին» և մանաւանդ «Մշակը» յաճախ զբաղւում էին այդ խնդրով։ Քննւում էին թատրոնի անկման պատճառները և առաջարկւում վերականգնելու միջոցներ։ «Մշակի» մի յօդւածում («Հայոց թատրոն») ասւած է. «Մենք տեսնում ենք մի շատ անմխիթար երևոյթ։ Վերջին ժամանակ հայոց ներկայացումներին շատ սակաւ հանդիսականներ են լինում, և, ինչպէս լսում ենք, ներկայացումները երբէք այնքան դատարկ չեն,

որքան այժմ»։ Դրա պատճառը յօդուածագիրը դտնում էր ոչ թէ ժողովրդի սառնութեան մէջ, այլ նրանում, որ պատմական և ինքնուրոյն պիէսները տեղական կեանքից դրաւում էին, երբ նորութիւն էին, այժմ նրանք այլ ևս չեն հետաքրքրում. իսկ «ժողովուրդը սիրում է միշտ նորութիւն»։ «Մշակն» իր կողմից առաջարկում էր եւրոպական և ռուսաց բեմերատուաբից թարգմանել այնպիսի պիէսներ, որոնք իրանց ժամանակակից բովանդակութեամբ ընդհանուր կրթական նշանակութիւն ունին։ Զմշկեանն էլ առաջարկում էր փող հաւաքել և հայկական թատրոն շինել։

Թատրոնը տակաւին չվերականգնեց, և դրութիւնն աւելի վատթարացաւ։ «Մշակը» նորից վերադարձաւ այդ հարցին։ Արծրունին իր մի ֆելիէտոնում («Մշակ», 1876 թ. № 1) յայտնում է այն միտքը, որ թատրոնի անկման պատճառը մի կողմից այն է, որ Թիֆլիսում անչափ շատացել են փուչ զարճութիւնները (ցիրկ, կին-հրէշ, գազանանոց, բախտ գուշակող գերմանուհի, դիմակաւոր պարահանդէսներ և այլն), միւս կողմից այն, որ մեր դերասանական ոյժերը և պիէսները չեն աշխատում թարմացնել։ Հետևաբար, եզրակացնում է Արծրունին, հասարակութիւնը մեղաւոր չէ, եթէ անտարբեր է դէպի թատրոնը։ Զմշկեանն, ընդհակառակ, բոլոր մեղքը գցում էր հասարակութեան վրայ։ Նա ասում է, որ մենք եւրոպական մաքով հասարակութիւն չունինք, որ մեր երիտասարդութիւնը սիրում է աւելի թեթև և փուճ զարճութիւններ, որ նա հայերէն չգիտէ և չէ [illegible]ում սովորել, նոյնպէս և օրիորդներն ու տիկ[illegible]

Թատրոնի [illegible]ատամ վիճակը տեղ մինչև

1878 թ.։ Մենք գիտենք, թէ դա ինչ նշանաւոր տարեթիւ է. 61-դ յօդուածը սկզբում ոգևորութիւն առաջացրեց ազգի մէջ, աւելացրեց ամենքի եռանդը և կենդանութիւն մացրեց գործունէութեան բոլոր ասպարէզներում։ Ահա այդ ժամանակ էր, որ թատրոնը ևս կենդանացաւ և ոտքի կանգնեց։ 1879 թ. սկզբից լրագրների մէջ յաճախ լուրեր էին երևում կազմակերպող թատրոնական ընկերութեան մասին, գրւում էին առաջնորդողներ թատրոնի նշանակութեան մասին։ Արծրունին իր մի շարք յօդուածների մէջ («Մեր ապագայ թատրոնը» և այլն) խօսում է թատրոնի վեհ նշանակութեան մասին և դերասանի կոչումը համեմատելով խմբագրի և ուսուցչի կոչման հետ, առաջարկում է խմբի համար հրաւիրել կրթուած դերասաններ և դերասանուհիներ։

Կազմւում է թատրոնական ընկերութիւն, որը իր կողմից ընտրում է մանաժողով հետևեալ անդամներից՝ Գր. Արծրունի (որ շուտով հրաժարւեց), Գ. Սունդուկեան, Ալ. Մանթաշեան, Եսայի Փիթոյեան, Նապոլէոն Ամատունի, Աբ. Յովհաննիսեան։ Մանաժողովի նախագահ ընտրւում է իշխան Ն. Ամատունի, իսկ պատուաւոր նախագահ իշխան Եազոն Թումանեան։ Այս հեղինակաւոր անձանց մասնակցութիւնը թատրոնի վերանորոգման մէջ երաշխաւորում էր գործի յաջողութիւնը։

Եւ գործը եռում էր։ Նախնական պատրաստութիւններ էին տեսնւում։ Արծրունին ձեռնարկել էր նոր թատրոնական շինութեան՝ իր սեփական տան մէջ։ Զմշկեանը թատրոնական մանաժողովի կողմից գնացել է Կ. Պոլիս դերասաններ և դերասանուհիներ հրաւիրելու։

1879 թ. օգոստոսի սկզբ[illegible] օլսեցի դերասան-

ները Թիֆլիս էին։ Ամառուայ վերջում խումբն արդէն կազմ և պատրաստ էր։ Պատրաստ էր և Արծրունու նորաշէն թատրոնը։ Սակայն թատրոնական ընկերութիւնն անյարմար գտաւ այնտեղ ներկայացումներ տալ և գերադասեց Ամարային թատրոնը։ Թատրոնական վարչութեան անսպասելի վարմունքը սաստիկ զայրացրեց Արծրունուն, և, իհարկէ, ամենայն իրաւամբ, որովհետև նա ահագին ծախսեր էր արել շէնքի կառուցման վրայ։ Դրանից յետոյ Արծրունին թշնամական դիրք բռնեց դէպի նորակազմ թատրոնական ընկերութիւնը, սկսեց կծու լեզու բանեցնել նրա անդամների վերաբերմամբ, նոյն իսկ զեկավարներին անուանեց «իդիոտներ» և խորհուրդ տուեց, որ բեժիսեօր հրաւիրեն «կինոներին»։ Նա սկսեց յարձակուել նաև պօլսեցի դերասանների վրայ, սկսեց պախարակել բեպերտուարը։ Արծրունու թշնամական վերաբերմունքի մէջ խառն էր վիրաւորուած ինքնասիրութիւնը, որի շնորհիւ նրա յարձակումները խիստ թունաւոր էին։ Նա հասաւ այնպիսի ծայրայեղութեան, որ Աղամեանի մէջ չէր կամենում տեսնել, գոնէ սկզբում, տաղանդ։ Չնայած Արծրունու կրքոտ յարձակումներին, նրա կռիւը, այնուամենայնիւ, գաղափարի և սկզբունքների կռիւ էր։ Մենք այժմ աւելի լաւ ենք հասկանում նրա յարձակումների նշանակութիւնը. նա համարեա միակ անձն էր, որ նորակազմ թատրոնի մեծագոյն աղմուկի և արտաքին փայլի տակ տեսնում էր փտութեան ոգեմեր։

Պօլսից եկած և տեղական ոյժերից կազմուած խումբը բաղկացած էր հետևեալ անձերից. օր. Աստղիկ, օր. Սիրանոյշ [illegible]. Սաթ. Զմշկեան, օր. Վարդուհի, օր. Մէլիք [illegible]. պ. Գևորգ Աղամեան, Գ. Զմշկեան, Սարգ[illegible] Աւալեան, Մանդինեան,

Տէր-Դաւթեան, Սաֆրազեան, Սարգսարեան, Մատինեան, Ազայեան, Մէլիքեան, Զարգեղեան, Մէլիք-Ադամեան և Ղազարեան—ընդամենը 19 հոգի։

Այս խմբի մէջ չկար Ամերիկեանը, թատրոնի սկզբնաւորութեան առաջնակարգ դերասանը և առաջին նահատակը։ Թոքախտից հիւծուած և յետին աղքատութեան մէջ ատրճանակի գնդակով վերջ էր տուել իր չարքաշ կեանքին և հանգիստ գտել Խօջիվանքի գերեզմանատանը։

Նոր թատերախումբը և կոմիտէի մի քանի անդամները սեպտ. 2-ին օրհնել են տալիս Ամերիկեանի թարմ գերեզմանը, և իշխան Ամատունին իր դամբանական ճառի մէջ դրատում է վաղաթառամ արտիստին։

Հետևեալ օրը նոր խումբը Ամարային թատրոնում տուեց առաջին ներկայացումը՝ «Սէր առանց համարման» ծայրէիծայր լեցուն և ոգևորուած դահլիճի առաջ։ Եւ այսպիսի յաջողութեամբ խումբն սկսեց առաջին սեզօնը, տալով շաբաթական երկու ներկայացում, և ամեն անգամ լի թատրոնում, որովհետև ամեն ինչ նոր էր՝ թէ խումբը և թէ բեպերտուարը։

«Մեղու Հայաստանի» լրագրի բեցենզենտը (Իւնիւս) երկար յօդուածներ էր գրում ներկայացումների մասին. մեծ գովասանքներ էր շռայլում Աստղիկի և Սիրանոյշի հասցէին, աւելի համակրութեամբ էր խօսում Զմշկեանի, քան թէ Աղամեանի մասին, որն այդ ժամանակ դեռ մեծ հռչակ չունէր, բայց խուլ մրցում կար երկուսի մէջ։ Սակայն շատ շուտով համակրութիւն ձեռք բերեց հասարակութեան մէջ։ Նրա բենեֆիսին («Կոյր») թատրոնում [illegible] գցելու տեղ չը կար»։ Վրացի դերասան Մեսի[illegible]ամեանին նուիրեց

ոսկեզօծ պսակ վրաց դերասանական խմբի կողմից։ Առաջին սեզօնը վերջացաւ չտեսնուած յաջողութեամբ։ Միայն մի անգամ, յունիսի 12-ի 47-րդ ներկայացումից յետոյ Թատրոնի դիրեկտոր Սբ. Յովհաննիսեանի և Ադամեանի միջև տեղի ունեցաւ անախորժ ընդհարում, որից յետոյ Ադամեանն առժամանակ հրաժարուեց դերեր կատարելուց։

Երկրորդ սեզօնն սկսուեց 1880 թ. սեպտ. 4-ին։ Խմբի մէջ մի քանի փոփոխութիւններ էին մտել։ Ա. Յովհաննիսեանը գնացել էր Կ. Պոլիս և հրաւիրել նոր ոյժեր—Գարագաշեան քոյրեր և Մնակեան։ Իսկ տեղացիներից աւելացել էին տ. Շամիրամ, Աւալեան։ Տ. Ս. Զմշկեան, պ. Զմշկեան և Ա. Մանգինեան պիտի մասնակցէին միայն ըստ հարկի պահանջման։

Սէզօնի առաջին ներկայացումն էր Դիւմայի «Թէրէզա» վերնագրով դրամատ, իսկ երկրորդը՝ «Ալպեան հովուուհի»։ Առաջին ներկայացման թատրոնը լի էր, իսկ երկրորդին մեծ մասը դատարկ, չնայած, որ օր. Վ. Գարագաշեանը պիտի երևար առաջին անգամ։ 1881 թ. սկզբում լրագրութեան մէջ երբեմն տրտունջներ էին յայտնուում թատրոնի դատարկութեան և ժողովրդի անտարբերութեան մասին։ Դերասանական խմբի մէջ սկսել էին կուսակցական պառակտում և ինտրիգներ։ Ինչ որ չարագուշակ ոգի էր սաւառնում հայկական թատրոնի վրայ, և նրա ապագան, ըստ երևութին, վտանգի մէջ էր։ Այժմ աւելի յաճախ էին լսում դժգոհ ձայներ ներկայացուած պիէսների մասին. ոմանք գտնում էին, որ նրանք փչացնում են գեղասիրական ճաշակը։ Չնայած այս բոլոր աննպաստ հանգա[illegible]ին, թատրոնը դեռ ևս կանգուն էր։ Ադամ[illegible] բենեֆիսին ստացաւ դափնեայ պսակ և [illegible]։ Դրան յաջորդում են և

միւս դերասանների և դերասանուհիների յաջող բենեֆիսները։

Յունիսի 1-ին կայացաւ թատրոնական ընկերութեան ընդհանուր ժողովը, ուր ներկայ էին 20 անդամներ։ Մանաժողովի տուած հաշուից երևաց, որ անցեալ 1880 թ. սեպտեմբերին ընկերութեան գանձարանում եղած է 1400 ր., իսկ այժմ մօտ 2000 ր., բացի շարժական կայքից։ Տարուայ ընթացքում արդիւնք 21 հազար, իսկ ծախք 19 հազար։ Յետոյ ընտրուեցին իշխան Ն. Ամատունի թատրոնի կառավարիչ, Վ. Մութաֆեան, Ա. Յովհաննիսեան, Ս. Արծրունի և Գ. Սունդուկեան յանձնաժողովի անդամներ։

1881 թ. սեպտ. 3-ին սկսուեց երրորդ թատերաշրջանը «Կատերին Հովարդ» պիէսի ներկայացումով։ Այժմ խմբի մէջ էր և տիկին Հրաչեան, որին հրաւիրել էր իշխան Ամատունին, անձամբ գնալով Կ. Պոլիս։ Մի քանի հեռացած դերասանների և դերասանուհիների տեղ աւելացել էին օր. Մարի-Նուարդ, տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան, Փառանձեմ, պ. Սանջակ, Տէր-Գրիգորեան և այլն։ Առաջին ներկայացման բեմ դուրս եկաւ տ. Հրաչեան, որը փառաւոր ընդունելութիւն գտաւ ոգևորուած հանդիսականներից։ Այնուհետև Հրաչեան դարձաւ խմբի առաջնակարգ ոյժերից մէկը և միևնոյն ժամանակ հասարակութեան սիրելին։

Սակայն Ադամեանի և տիկին Հրաչեայի նման տաղանդաւոր արտիստների ներկայութիւնը խմբի մէջ անկարող եղաւ ապահովել թատրոնի ապագան։ Յաճախորդների թիւը օր աւուր նուազում էր։ «Մեղու Հայաստանի» լրագրի մի առաջնորդողը նախատեսնում է թատրոնի անկում, որի պատճառը համարում էր անյարմար պիէսներ և դերերի սխալ բաժանումը։ Թատրոնական գործին վնասեց նոյնպէս

այն խռովութիւնը, որ բուն էր դրել ընկերութեան անդամների և դերասանական խմբի մէջ։ Մելպոմենէի տաճարը դարձել էր կուսակցական պայքարի և գծուծ ինտրիգների ասպարէզ։ Վարչութեան անդամներից մի քանիսն հեռացան, միւսներն ամեն բոլոր պատրաստ էին հեռանալու։ Ամենքը ձանձրացել էին, ոչ ոք չէր մտածում թատրոնի ապագայի մասին։

Իշխան Ամատունին վարչական ժողովում յայտնում է, որ մի քանի հազար բուբլի դեֆիցիտ է գոյացել և որ ինքը արդէն յոգնած է և հրաժարւում է վերընտրելուց։ Միևնոյն ժամանակ առաջարկում է գործն յանձնել, մանաւորապէս փոխարէն, մասնաւոր անձի, մի անտրպրենիօրի։ Դրանից յետոյ թատրոնի վարիչներից մէկը, Ս. Արծրունին յայտարարեց «Մեղու Հայաստանի» լրագրում, որ «թատրոնը մեռաւ 5000 ր. դեֆիցիտով»։

Թատրոնական կոմիտեսը երեք տարուայ գործունէութիւնից յետոյ դադարեցրեց իր գոյութիւնը։ Դերասանները հողմահալած խաշնի պէս ցիրուցան եղան։ Պոլսեցիք վերադարձան իրանց հայրենիք։ Ադամեանն սկսեց ներկայացումներ տալ գաւառներում և Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում, ամեն տեղ քաղելով թափնիներ և արժանանալով դուսաց լուրջ մամուլի ոգևորած փառաբանութեան։ Ադամեանի մասին գրում էին պանեգիրիկներ, նրան համեմատում էին երևելի արտիստների հետ՝ Պոսարտի, Բառնայի և Սալվինիի։ 80-ական թուականներին մի շարք ներկայացումներ տուեց Մոսկուայում, որոնց ներկայ էր տողերիս հեղինակը։ «Օթելլօի» ներկայացման առիթով «Рус. Вѣд.» [illegible] կրը գետեղեց մի բեցենզիա, որտեղ ասած է [illegible] սխանձի տեսարանում» ինքը Սալվինին կար[illegible]ն նախանձել։

Դժբախտաբար, վաղաժամ մահը (1891 թ. յունիսին) խորտակեց հայ հանճարը և արգելեց նրան հռչակուել նաև Եւրոպայում։

Տեղական դերասանները ներկայացումներ էին տալիս անջատ ոյժերով։ Առաջիկայ աշնան միացան, և սկսեց թատրոնական կեանքի մի նոր, բայց անփառունակ շրջան։

Մեր թատրոնի այս եռամեայ փայլուն շրջանը (1879—1882 թ.) ունէր իր դրական և բացասական կողմերը։

Անկարելի է ժխտել, որ այս թատերաշրջանը մի որոշ կուլտուրական դեր կատարեց։ Նախ՝ հայ հասարակութիւնը, որ վաղուց ի վեր զրկուած էր վսեմ զարգացումներից, այժմ հնարաւորութիւն ունէր շաբաթը երկու անգամ այդպիսի զարգացումներ վայելել։ Այժմ բեմից սկսեց հնչել մաքուր գրական լեզու, որի փոխարէն մինչև այդ լսում էր թիֆլիսեցոց բարբառը, և հանդիսականներից շատերը, մանաւանդ բարձր դասակարգից, առաջին անգամ մայրենի լեզուի քաղցրութեան ճաշակն առան, նոյն իսկ հայերէն սովորելու նախանձախնդրութիւն զարթնեց։ Հայ հասարակութիւնը մինչև այդ տեսել էր շնորհալի դերասանների խաղը, բայց այժմ առաջին անգամ տեսաւ այնպիսի երևելի, արտակարգ տաղանդ, ինչպէս Ադամեանն էր, այնպիսի տաղանդաւոր կանացի ոյժեր, ինչպէս Աստղիկ, Սիրանոյշ և Հրաչեա այնպիսի հրաշալի կոմիկներ, ինչպէս Տէր-Դաւթեան և Մնակեան։ Միւս կողմից՝ հասարակութիւնն առաջին անգամ տեսաւ բեմի վրայ այնպիսի դասական գործեր, ինչպէս «Համլետ», «Շեյ[illegible] «Խելքից պատուհաս» և այլն։ Բայց ահա և բա[illegible]կան կողմերը։

Նախ և առաջ բեմերտու[illegible]նչով էր սնուում

հայ հասարակութեան ճաշակը այս երեք տարեայ ընթացքում։—Ֆրանսիական թեթև բեսպերտուարով։ Այն ժամանակ, երբ բէալիզմը արքայօրէն թագաւորում էր Ռուսաստանի և Եւրոպայի գրականութեան մէջ, հայկական բեմը ողողւում էր ուշացած բոմանտիզմի արտադրութիւններով, որոնց մէջ կային աղմուկ և շարժում, ցնցող տեսարաններ, մի խօսքով, այն ամենը, ինչ որ կարող էր ջղերի վրայ ազդել և ոչ թէ մարի կամ հոգու։ Այն կեանքը, որ ներկայացւում էր բեմի վրայ, բոլորովին խորթ էր, ոչինչ չէր ասում հայի սրտին։ Այստեղ չէր կարող խօսք լինել հոգեբանական վերլուծման և վեհ գեղարուեստի մասին, այլ սկզբից մինչև վերջ արհեստականութիւն, պատահականութիւն և թիւրիմացութիւններ։ Նոյն իսկ պիէսների վերնագիրներից կարելի է տեսնել, թէ ինչ բովանդակութիւն ունէին այդ մելոդրամաները։ Ահա մի շարք անուններ. Սրեան բիծ, Փարիզի աղքատներ, Կողոպտուած փոստ, Հարստահարուած առաքինութիւն, Լիոնի սուրհանդակը, Կոյր, Մի կնոջ տանջանքը, Հայրասպան, Գաղտնիք անդլիական պալատի, Կովերլէյի սպանումը, Մայրական սէր, Լապտերավառ հարսանիք, Կեղծ մազեր, Սիմուէլի կոմսուհին, Բաղդատի իշխանուհին, Մանկական դող և այլն և այլն։

Այդ ահագին բեսպերտուարից, որի մէջ մտնում էին մօտ 60 պիէսներ, հազիւ կարելի լինէր ընտրել 12—15 հատ բաւարար և ճաշակն, օր. Համլետ, Աւազակներ, Ֆին, Խելքից պատուհաս, Արդիւնաւոր պաշտօն և այլն։ [illegible] ոյն բեսպերտուարը համարեա մոռացւած էր [illegible] աւ էին երևում բեմի վրայ Սունդուկեա[illegible]ը և պատմական ողբերգութիւններ։ Ս[illegible]նում երևացին միայն երկու

ինքնուրոյն պիէսներ՝ Մուրացանի «Ռուզան» վերնագրով պատմական ողբերգութիւնը և Քիշմիշեանի կոմեդիան, «Օրիորդ Բերոյեան» վերնագրով։ Առհասարակ ինքնուրոյն բեսպերտուարը բաւական արհամարհւած էր։ Թիֆլիսի բարբառը վիրաւորում էր պոլսեցի դերասանների ճաշակը։

Ֆրանսիական մելոդրամաները, որոնք սկզբում հիացնում էին հանդիսականներին և անագին հասարակութիւն գրաւում, հասկացող մարդկանց սրտովը չէին և զայրոյթ էին յարուցանում։ Լսւում էին բողոքներ, որոնք գնալով սաստկանում էին։ Նոյն իսկ «Մեղու Հայաստանին», որի համախոհների ձեռքումն էր թատրոնի ղեկավարութիւնը, որը խօսք չէր գտնում ներկայացումներն ըստ արժանւոյն գովելու և մասնաժողովի մասին ասում էր, թէ նա «ոչինչ չէ խնայում թատրոնի պայծառութեան համար», այժմ փոխել էր իր լեզուն և բողոքում էր «անյարմար» պիէսների դէմ, պնդելով, որ նրանք փչացրին ժողովրդի ճաշակը, և նոյն իսկ նախազուշակեց թատրոնի անկումը։

Բայց խիստ էր մանաւանդ «Մշակի» բողոքը։

Արծրունին սկզբից և եթ հակառակ դիրք բռնեց դէպի թատրոնական կոմիտեաը։ Երբ յայտնի եղաւ, որ կոմիտեաը վճռել է Պոլսից հրաւիրել դերասաններ, նա տպեց «Մշակի» մէջ մի առաջնորդող, «Մենք չենք հաւատում» վերնագրով։ Այստեղ Արծրունին զարմանք է յայտնում, որ տեղական ոյժերի փոխարէն պոլսեցի դերասաններ են հրաւիրում. նա դէմ էր, որ «մեր նոր և ինքնուրոյն կերպով զարգացող ոյժերը խառնւեն օտար և խորթ, մեր բնաւորութեան անհամապատասխ[illegible]ն և գուցէ մեզանից դերազանց ոյժերի հետ»։ Ե[illegible]սեցի դերասանները և դերասանուհիները եկա[illegible]կաւեցին ներկայա-

ցումները, Արծրունին անհիւրընկալ զանուեց նրանց վերաբերմամբ։ Սկզբում նրանց խաղը համարում էր «արհեստական» և «անբնական»։ Յետոյ սկսեց աւելի խիստ վերաբերուել։ «Դոն-Կարլոսի» ներկայացման առթիւ գրում է. «Շիլլերի Դոն-Կարլոսի պէս կլասիկային գրուածք աղաւաղելն—դա անասելի յանդգնութիւն է»։ Ֆելիէտոնների մէջ յարձակւում էր Ադամեանի վրայ և նրան համարում էր «միջակ ընդունակութիւնների տէր մի դերասան» և «չափից դուրս արհեստական, անբնական»։ Նա ընդունում էր, որ ինքը խիստ է Ադամեանի վերաբերմամբ, բայց նա այդպէս չէր վերաբերուի, եթէ նրան «տաղանդ», «հանճար» չհամարէին։ Տէր-Դաւթեանին աւելի բարձր էր դասում. «Եթէ հայ թատրոնական մշտական խմբի մէջ կայ մի ընդունակութեան տէր մարդ, մի բնածին տաղանդ, դա պ. Տէր-Դաւթեանն է»։

Արծրունին խիստ դատապարտում էր և բեմերտուաբը երկու իրար յաջորդող առաջնորդների մէջ։ Նա գովում էր 60-ական թուականները, որովհետև այն ժամանակ կար ինքնուրոյն թատերագրութիւն, իսկ այժմ—բոլորը թարգմանական է և անյարմար մեր կեանքին։ Այն ժամանակ բեմալ ուղղութիւն էր տիրում, իսկ այժմ բօմանտիկ։ Արծրունու յարձակումների մէջ թերևս կար անձնական հակակրանք և կիրք, բայց նրանց հիմքում այնուամենայնիւ գրուած էր անհերքելի ճշմարտութիւն բեմերտուարի վերաբերմամբ, որովհետև հասկացող մարդիկ միաձայն պնդում էին, որ ֆրանսիական թեթև, անմիտ բեմերտուարը փչացրել է թատրակութեան ճաշակը։

ՊՐՈՖԿՈՄԻՏԵՏ
ՍՍՍՌ

ՆԿԱՏԻԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

էջ	տող	տպված է	պէտք է լինի
10	7	XVIII դ.	XIX դ.
14	14	յուզակաւորութիւն	յուզարկաւորութիւն
43	22	անդրանիկը	անդրանիկը
67	22	անարդար	անարդար
77	22	տջ	աջ
85	32	բացառական	բացասական
101	1	թէև	
108	1	պաշարումնը	պաշարումը
118	27	Անգրօմախէի	Անդրօմախէի
146	7	դեռ ևս	դեռ ևս այնքան
168	13	տալիս	տալիս
173	8	դարտիմանդ	դարդիմանդ
173	27	զրկում	զրկում
189	26	Հրաչեա	Հրաչեայ

ՀՀ Ազգային գրադարան
NL0373279

64.469

891.9909
С-27